4651

Ե. ԲՈՒՐՋԱԼՈՎ

ԲԱԳՎԻ ՔՍԱՆՎԵՑ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԸ

ՔԱՂՀՐԱՏ

9(47.925)
Բ-97

Арм.
3-30082
24 JAN 2006

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՔ.

9(47.924)
Բ-97

Ե. ԲՈՒՐՋԱԼՈՎ

ԲԱԳՎԻ ՔՍԱՆՎԵՑ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԸ

Гос. Публичная Б-ка
Инв. № 10475

ՊԵՏՀՐԱՏ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ • 1939

4631

11.03.2013

Э. БУРДЖАЛОВ
ДВАДЦАТЬ ШЕСТЬ
БАКИНСКИХ КОМИССАРОВ
Армгиз—Издательство полит. литературы
Ереван, 1939

4 44-87

«ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԱՆՄՈՌԱՆԱԼԻ, ՀԵՐՈՍԱԿԱՆ ԷՋԵՐ ԳՐԵՑԻՆ ԱԴՐԲԵՋԱՆԻ ԱՇԽԱՏԱՎՈՐԱԿԱՆ ՄԱՍՍԱՆԵՐԸ ՅԵՎ ՆՐԱՆՑ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐ՝ ԱԶԻԶԲԵԿՈՎԸ, ՋԱՓԱՐԻՁԵՆ, ՇԱՀՈՒՄՅԱՆԸ, ՖԻՈԼԵՏՈՎԸ, ՎՈՐՈՆՔ ԻՐԵՆՑ ԱՐՅՈՒՆՈՎ ՆՎԱՃԵՑԻՆ ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ, ԱԴՐԲԵՋԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ»։

(Ընկ. ընկ. Ստալինի և Մոլոտովի ողջույնից՝ Ադրբեջանում խորհըրդային իշխանություն հաստատվելու 15-ամյակի առթիվ)։ «Պրավդա» 1935 թ. 30/XII։

I

Բաքվի 26 կոմիսարների կյանքը սերտորեն կապված է ԽՍՀՄ պրոլետարական Մեծ հեղափոխության պատմության հետ: Ադրբեջանի կենտրոնում—Բաքվում կանգնեցնելով պրոլետարական դիկտատուրայի դրոշը, նրանք հերոսաբար կռվում էին՝ Անդրկովկասում և ամբողջ Ռուսաստանում սոցիալիստական հեղափոխության հաղթանակի համար:

Այդ պայքարը տեղի էր ունենում դասակարգային և ազգային հակասությունների ծայր. խճճվածության հանգամանքներում: Ընկեր Ստալինը գրում էր. «Ռուսաստանի Ֆեդերացիայի բոլոր ծայրերկրներից Անդրկովկասը, թվում է, ամենաբնորոշ անկյունն է ազգային կազմի հարստության և բազմազանության իմաստով: Վրացիներ ու ռուսներ, հայեր ու ադրբեջանական թաթարներ, թյուրքեր ու լեզգիներ, ինգուշներ ու ոսեր, չեչեններ ու աբխազներ, հույներ և կումիկներ—այս է Անդրկովկասի յոթ-միլիոնանոց բնակչության ազգային բազմազանության ամենևին վոչ սպառիչ պատկերը... Անդրկովկասի մի այլ, վոչ պակաս բնորոշ գիծը նրա տնտեսական հետամնացությունն է: Յեթե չհաշվենք Բաքուն, յերկրամասի այդ արդյունաբերական ոազիսը, վորին շարժողը գլխավորապես արտասահմանյան կապիտալն է, ապա Անդրկովկասը ներկայացնում է մի ագրարային յերկիր, վորն ունի քիչ թե շատ զարգացած առևտրական կյանք՝ ծովափերում, և զուտ ճորտատիրական կացութաձևի տակավին ամուր մնացորդներ՝ կենտրոնում»[1]:

Բաքուն յերկրամասի արդյունաբերական ոազիսն է: Ընկեր Ստալինի այս խոսքերը լավ են վորոշում նավթային հսկայական քաղաքի՝ վորպես Անդրկովկասում պրոլետարական հեղափոխու-

1 Ստալին, Անդրկովկասի հակահեղափոխականները սոցիալիզմի դիմակի տակ, «Правда», № 55, 1918 թ.:

թյան դրոշակակրի՝ դերը։ Բաքվում կան խոշորագույն նավթահանքեր և գործարաններ, Կասպից ծովում՝ կարևորագույն նավահանգիստ, հեղափոխական հարուստ անցյալ ունեցող 100-հազարանոց բազմազգ պրոլետարիատ։

«Բաքուն՝ զարգացած, բարձր կազմակերպված կապիտալիզմի խոշորագույն կենտրոնն է, վորը հազարավոր թելերով կապված է համաշխարհային բանկային կապիտալի հետ,

Բաքուն հեղափոխական պրոլետարների, պրոլետարական կազմակերպվածության, դասակարգային սուր պայքարի քաղաք է։

Բաքուն ազգային հակասությունների ամենաբարդ հանգույցն է, հակասություններ, վոր օգտագործում է բուրժուազիան բանվորներին և գյուղացիներին անջատելու համար, պրոլետարական շարքերը կազմալուծելու համար և նրանց միջավայրը մանր-բուրժուական ազդեցություններ մտցնելու համար,

Բաքուն սև վոսկու քաղաք է, դեպի վորը ագահությամբ իր հայացքն է ուղղում համաշխարհային իմպերիալիզմը, Բաքուն—Կովկասի այդ մարգարիտը—վերածելով կռվախնձորի իմպերիալիստական խմբերի միջև» (Միկոյան)[1]։

Բաքվի պրոլետարիատը Ռուսաստանի բանվորական շարժման պատմության մեջ գրավում է առաջին տեղերից մեկը։ Բաքվի բոլշևիկյան կազմակերպությունը ստեղծվեց, աճեց և կոփվեց ընկեր Ստալինի անմիջական ղեկավարությամբ։ Ընկեր Ստալինի ղեկավարության շնորհիվ Բաքուն վերածվեց լենինյան կուսակցության անխորտակելի ամրոցի։ «Մեծ Լենինի մերձավորագույն զինակից—ընկեր Ստալինի պատվաստած բոլշևիկյան պանծալի տրադիցիաները Բաքվի պրոլետարիատին առաջ մղեցին հեղափոխության հաղթանակի համար, պրոլետարիատի դիկտատուրայի համար, սոցիալիզմի հաղթանակի համար պայքարող առաջավոր մարտիկների շարքերը»[2]։

1917 թ. Փետրվարյան հեղափոխության լուրը Բաքվի պրոլետարներն ընդունեցին միտինգների և ժողովների հզոր ալիքով։ Մարտի 3-ին Բաքվում տեղի ունեցավ միօրյա վիթխարի գործադուլ ի պատիվ հաղթանակած հեղափոխության։ Մարտի 6-ին Պիտերի և Մոսկվայի օրինակով կազմակերպվեցին Բանվորների

[1] «Заря Востока» № 218, 1928 թ. սեպտեմբերի 20։

[2] Լ. Բերիա, Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունների պատմության հարցի շուրջը, էջ 133, ՀամԿ(բ)Կ Կենտկոմի Կուսհրատ, 1937 թ., հայ. հրատ. էջ 175։

դեպուտատների խորհուրդը և Զինվորների դեպուտատների խորհուրդը։

Փետրվարյան հեղափոխությունից հետո աքսորի զանազան կետերից Բաքու վերադարձան բոլշևիկյան կազմակերպության հիմնական աշխատողները, վորոնք յերկար տարիներ աշխատել եյին այստեղ ընկեր Ստալինի ղեկավարությամբ։

Մարտի 8-ին Բաքու ժամանեց Ստեփան Շահումյանը։ Բաքվի բանվորները լավ եյին ճանաչում Ստեփան Շահումյանին։ Պայքարի և աշխատանքի 10 տարիներ կապում եյին նրան պրոլետարական Բաքվի հետ։ Բանվորները Շահումյանին հեռակայորեն ընտրեցին խորհրդի նախագահ, յերբ նա մեկնում եր իր աքսորավայրից։ Այդ ցույց եր տալիս, թե ինչ մեծ հեղինակություն եր վայելում Շահումյանը։

Ստեփան Գևորգի Շահումյանը ծնվել է 1878 թվին Թիֆլիսում։ Ռեալական ուսումնարանի հինգերորդ դասարանից արդեն Շահումյանն ակտիվորեն մասնակցում եր աշակերտական հեղափոխական կազմակերպություններին։ Ուսումնարանն ավարտելով նա մտավ Ռիգայի պոլիտեխնիկական ինստիտուտը։ Այստեղ նա դարձավ սոցիալ-դեմոկրատական խմբակների ակտիվ աշխատող։ Հեղափոխական շարժման մեջ մասնակցելու համար 1902 թվին Շահումյանին հեռացրին ինստիտուտից և աքսորեցին Կովկաս։ Մի տարի հետո նա մեկնեց արտասահման։ Ընկնելով Բեռլին, Շահումյանը յեռանդով սկսեց սովորել։ Դրա հետ մեկտեղ նա շատ ժամանակ եր հատկացնում բանվորական շարժմանը ծանոթանալուն, հաճախ այցելելով միտինգներն ու բանվորական ժողովները, վորոնք տեղի եյին ունենում Բեռլինի ամենահեռավոր շրջաններում։

1903 թվին Շվեյցարիայում Շահումյանն առաջին անգամ հանդիպեց Լենինին։ Հենց այդ տարին հրավիրվեց ՌՍԴԲԿ II համագումարը։ Հանդիպումը Լենինի հետ և II համագումարի վորոշումները վորոշեցին Ստեփանի կյանքի ուղին։ Նա դարձավ բոլշևիկ, ամբողջ կյանքում հավատարիմ լինելով լենինյան մեծ դրոշին։ 1904 թվին վերադառնալով Անդրկովկաս, Շահումյանն աշխատում եր Թիֆլիսի բոլշևիկյան կազմակերպության մեջ։ Ընկեր Ստալինի ղեկավարությամբ նա անհաշտ պայքար սկսեց վրացական մենշևիկների և հայկական նացիոնալիստների դեմ, յերկրամասի բանվորներին և աշխատավորներին համախմբելով բոլշևիզմի ինտերնացիոնալ գծի շուրջը։

Շահումյանը մտնում եր ՌՍԴԲԿ Կովկասյան Միութենական

կոմիտեյի կազմի մեջ և խմբագրում էր «Кавказский Рабочий листок»-ը (1905 թ. նոյեմբեր—դեկտեմբեր) և «Պրոլետարիատի կռիվ» («Борьба пролетариата») հայկական լրագիրը:

1906 թվին Շահումյանը ՌՍԴԲԿ IV համագումարի պատվիրակ է՝ Երևանի կուսակցական կազմակերպության կողմից: Ընկեր Ստալինի հետ միասին Շահումյանը համագումարում յեռանդով մերկացնում էր Անդրկովկասի պատվիրակության մեծամասնություն կազմող մենշևիկների քաղաքականությունը: Բոլշևիկյան ֆրակցիան Շահումյանին առաջադրեց մանդատային հանձնաժողովի անդամ: Այստեղ Շահումյանը դաժան կռիվ մղեց մենշևիկների դեմ, պաշտպանելով բոլշևիկյան յուրաքանչյուր մանդատը:

1907 թվին ՌՍԴԲԿ V համագումարում Շահումյանը ներկայացնում էր Բորչալուի կազմակերպությունը: Պայքարը մենշևիկների դեմ շարունակվում էր, բայց այժմ գերակշռությունն արդեն բոլշևիկների կողմն էր: Ընկերներ Ստալինն ու Շահումյանը յելույթներում և համագումարին արած հայտարարություններում բացահայտեցին մենշևիկների քաղաքականության լիբերալ-բուրժուական էությունը և նրանց մանր-բուրժուական բնությունը:

1907—1911 թվականներին Շահումյանն աշխատում էր Բաքվում՝ ընկեր Ստալինի ղեկավարությամբ: Շահումյանը լայնորեն օգտագործեց լեգալ հնարավորությունները: Նա բանվորական շարժման պատմությունից դասախոսություններ էր կարդում, հեղափոխական մարքսիզմի անդուլ պրոպագանդա յեր մղում, ակտիվորեն մասնակցում էր նավթարդյունաբերողների հետ ունենալիք խորհրդակցության շուրջը ծավալված կամպանիային: Միևնույն ժամանակ Շահումյանը ղեկավարում էր անլեգալ ժողովները և հանդիսանում էր «Бакинский пролетарий», «Бакинский рабочий», «Гудок» և ուրիշ ընդհատակյա բոլշևիկյան լրագրերի խմբագիրներից մեկը:

Շահումյանը ջանադրությամբ ուսումնասիրում էր մարքսիզմ-լենինիզմը, լավ գիտեր ռուս և օտար գրականությունը, շատ էր գրում ռուսերեն և հայերեն լեզուներով: Բայց նա կաբինետային գիտնական չէր: Շահումյանը պատկանում էր Լենինի և Ստալինի դաստիարակած պրոֆեսիոնալ հեղափոխականների սերնդին: Նա բոլշևիկ մարտիկ էր, վորը ղեկավարի, մարդու, ընկերոջ սքանչելի հատկություններ ուներ: Վորքան ավելի մոտիկից էին ճանաչում նրան շրջապատողները, նրանց առաջ այնքան ավելի յեր յերևան գալիս նրա հարուստ օժտված նատուրան: Շահումյանը տակտով, արտաքնապես հանգիստ, ուղղամիտ և անկեղծ մարդ էր: Համեստ, իրեն նկատմամբ պահանջկոտ, ուրիշների նկատմամբ ուշադիր, նա ամբողջովին նոր մարդ էր դառնում, յերբ խոսքը սկզբունքների մասին էր գնում: Նրա յերկաթե տրամաբանությունը, նուրբ և թունավոր հումորը ջախջախում և վոչնչացնում էին հակառակորդին: Այդ րոպեներին Շահումյանի մտածկոտ աչքերը վառվում էին զայրույթով, նուրբ դիմագծերը փոխվում էին, ձայնը դառնում էր սուր:

Մութ գիշերներին բանվորների մոտ հավաքույթների և ժողովների յեր գալիս այդ հանգիստ և հաստատակամ մարդը: Շահումյանը բանվորների հետ զրուցում էր պարզորեն: Նա չէր սիրում բարձր, դատարկ ֆրազներ: Նրա ճառերի պաֆոսը հիմնված էր ներքին խոր համոզմունքի վրա: Բանվորները հավատում էին Ստեփանին, նրանք սիրում էին նրան պարզության, ճշմարտասիրության համար, թշնամիների և նրանց գործակիցների նկատմամբ ունեցած անողոքության համար, պայքարի ընկերների նկատմամբ ունեցած նրբազգացության և սիրո համար:

Ցարական վոստիկանությունը բազմաթիվ անգամներ խլում էր Շահումյանին Բաքվի պրոլետարիատի միջավայրից:

1911 թվի հոկտեմբերին Բաքվում հավաքվեց Պրագայի կուսակցական կոնֆերենցիան գումարելու համար կազմված՝ Ռուսաստանի կազմակերպական հանձնաժողովը Սերգո Որջոնիկիձեյի գլխավորությամբ: Շահումյանն այնտեղ ներկայացնում էր Բաքվի կազմակերպությունը: Բայց հանձնաժողովի աշխատանքի յերկրորդ օրը Շահումյանը ձերբակալվեց: Այս կապակցությամբ հանձնաժողովն իր աշխատանքը տեղափոխեց Թիֆլիս: Ձերբակալությունից մի քանի ամիս հետո ընկ. Շահումյանին աքսորեցին Աստրախան: Այստեղ նա մնաց յերկու տարի, ակտիվ կերպով աշխատելով տեղական կուսակցական կազմակերպության մեջ: Շահումյանը Բաքու վերադարձավ 1914 թվի սկզբին:

Բուռն վերելք էր ապրում այն ժամանակ բանվորական շարժումը: Բոլշևիկները համարձակորեն գլխավորեցին շարժումը: Շահումյանը դարձավ Բաքվի 1914 թվի հունիսյան գործադուլի ղեկավարը: Այնուհետև վրա հասան իմպերիալիստական սպանդի ծանր օրերը: Բայց Շահումյանի ղեկավարած Բաքվի բոլշևիկները այն ժամանակ էլ շովինիստական մոլուցքի պայմաններում շարունակում էին իրենց հեղափոխական գիծն անցկացնել:

Նրանք կարգի գցեցին տպարանը, պրոկլամացիաներ և կոչեր էին տպագրում և յեռանդուն պայքար մղեցին պատերազմի և շովինիզմի դեմ: 1915 թվին ընկ. Շահումյանի ղեկավարությամբ Բագվում կայացավ Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունների խորհրդակցությունը: Նա բոլշևիկյան պարզ վորոշումներ ընդունեց պատերազմի, ընթացիկ մոմենտի և այլ հարցերի շուրջը:

Ընկ. Շահումյանը մի շարք տարիների ընթացքում նամակագրություն ուներ Լենինի հետ: Այդ նամակագրությունը նվիրված եր գլխավորապես ազգային հարցին: 1914 թվի մայիսի 19-ին Շահումյանին գրած նամակում Լենինը նրան խնդրում եր գրել ավելի հաճախ և առաջարկում եր միասին մշակել «ազգերի իրավահավասարության և ազգությունների իրավունքները պաշտպանելու» օրենքը՝ այն Պետական Դումա մտցնելու համար: Ցարական պահնորդական բաժանմունքը Շահումյանի մասին գրում եր. «Գործակալության վերջին տեղեկությունների համաձայն՝ Շահումյանը համարվում ե Կովկասի ամենազարգացած և ամենափորձված կուսակցական աշխատողներից մեկը, վորի հետ կապված են բոլոր շրջանները և արտասահմանում ապրող կուսակցական անձերը: Նա համոզված բոլշևիկ ե և հայտնի Լենինի կողմնակիցն ե, վորի հետ և նամակագրություն ունի»:

1916 թվին վոստիկանությունը բռնեց Շահումյանի նամակը, վորի մեջ նա լիովին միանում եր պատերազմի հարցում Լենինի ունեցած դիրքին: Շահումյանը ձերբակալվեց. 10 ամիս նա նստեց բանտում: Ակներև հանցանշաններ չկային, բայց Շահումյանին նորից աքսորեցին Բագվից, այս անգամ Սարատով: Սակայն չանցավ յերեք ամիս, վոր Փետրվարյան հեղափոխությունն ազատեց Շահումյանին: Նա անհապաղ մեկնեց Բագվի պրոլետարների մոտ: Ճանապարհին Շահումյանն իմացավ, վոր ինքն ընտրվել ե Բագվի խորհրդի նախագահ:

Մի քիչ ավելի ուշ Բագու վերադարձավ կազմակերպության մյուս ղեկավար աշխատողը—Ալյոշա Ջափարիձեն: Նա աշխատել եր այստեղ ընդհատակի տարիներին՝ ընկեր Ստալինի ղեկավարությամբ և այն ժամանակից ի վեր սերտ կապ եր պահպանում Բագվի պրոլետարների հետ:

Պրոկոփի (Ալյոշա) Ջափարիձեն ծնվել ե 1878 թվին Քութայիսի նահանգում: Վաղ մանկության հասակում զրկվելով հորից, նա ճաշակեց կարիքը և քաղցը, բայց համառորեն շարունակում

եր սովորել սկզբում Սացխենիսի ուսումնարանում, այնուհետև Թիֆլիսի ուսուցչական ինստիտուտում: Այստեղ, Թիֆլիսում, սկսվեց Ջափարիձեյի ակտիվ քաղաքական կյանքը: Նա մտավ անլեգալ խմբակը և այնտեղ գլխավորեց յերիտասարդ մարքսիստների խումբը: 1898 թվին Ջափարիձեն մտավ սոցիալ-դեմոկրատական կուսակցության մեջ: Նրա առաջ բացվեց հեղափոխական գործունեյության լայն ասպարեզը:

1900 թվին Ջափարիձեն ակտիվ մասնակցություն ունեցավ մայիսմեկյան ցույցի նախապատրաստման մեջ և Թիֆլիսի յերկաթուղային արհեստանոցների բանվորների գործադուլի մեջ, վորը կազմակերպել եր ընկեր Ստալինը: Ալյոշա Ջափարիձեն գործադուլային կոմիտեյի անդամ եր, խմբագրում եր պրոկլամացիաներ, կազմակերպում եր բանվորներին: Միայն 17-րդ որը՝ չտեսնված ռեպրեսիաներից և սովից ուժասպառ յեղած բանվորները հարկադրված յեղան դադարեցնել գործադուլը: Բայց չնայած դրան, Ջափարիձեն հաստատ կերպով հավատում եր առաջիկա հաղթանակին: «Այս գործադուլում ավելի շատ հաղթանակ կա, քան թե պարտություն,—ասաց նա գործադուլային կոմիտեյի վերջին նիստում:—16-որյա համերաշխ գործադուլը, կազմակերպության ազդեցությունը հազարավոր մասսաների վրա—մի՞թե սա վոչ-հեռու ապագայի մեր հաղթանակի յերաշխիքը չե»: Հենց նույն տարին ցարական կառավարությունը Ջափարիձեյին առաջին ձերբակալման յենթարկեց: Նրան նստեցրին Մետեխի բերդը և, 11-ամսյա բանտարկումից հետո, նա աքսորվեց Հայրենիք:

1901—1904 թվականներին Ջափարիձեն աշխատում եր Քութայիսի կուսակցական կազմակերպության մեջ: Նրա ղեկավարությամբ եր ընթանում Քութայիսի ծխախոտագործների գործադուլը: Ընկ. Ջափարիձեն Իմերեթա-Մինգրելիայի կուսակցական կոմիտեյի անդամ եր, իսկ հետագայում ընտրվեց Կովկասի միութենական կոմիտեյի անդամ:

1904 թվին կուսակցությունն ընկ. Ջափարիձեյին ուղարկեց Բագու աշխատանքի: Այստեղ, Բագվի պրոլետարիատի շրջանում, յերևան յեկան Ջափարիձեյի հսկայական ընդունակությունները: Ալյոշան տաղանդավոր կազմակերպիչ-մասսովիկ ե: Նա գնում ե բուն բանվորների մեջ, սերտ կապեր ե ստեղծում, կազմակերպում և գլխավորում ե մասսայական շարժումը: Ալյոշան կոլեկտիվ պայմանագրի համար մղվող պայքարի ակտիվ մասնակիցն ե, նավթարդյունաբերական բանվորների միության քար-

տուղարը, իսկ փաստորեն ղեկավարն է։ Ալյոշան Բաքվի կոմիտեյի անդամ է, բոլշևիկյան լրագրերի աշխատակից։ Անսպառ յեռանդը, հեղափոխական կրքոտությունը, բանվորների շահերը ջերմորեն պաշտպանելը նրան դարձրին մասսաների իսկական առաջնորդը և սիրելին։ Ջափարիձեն հազվադեպ էր հանդիստ խոսում։ Նրա վառ, սրամիտ ճառը միշտ համակված էր լինում մեծ զգացմունքով։ Նա ամբողջովին շարժման մեջ էր։ Սև խոշոր աչքերն այրվում էին, սուր խոսքերը հնչում էին վորպես կոչ և պայքարի էին հանում։ Բոցավառ Ալյոշան կարծես թե լրացնում էր իր հանդիստ բարեկամին՝ Ստեփան Շահումյանին։

Ջափարիձեն բոլշևիկյան կուսակցության III համագումարի պատվիրակ էր։ Արտահայտվելով կուսակցության ագիտացիոն-պրոպագանդիստական աշխատանքի հարցի շուրջը, Ալյոշան համագումարի հատուկ ուշադրությունը դարձրեց այն բանի վրա, վոր անհրաժեշտ է լայնորեն թաթարական լեզվով գրականություն հրատարակել, առանձնապես գյուղացիների համար։ Նա առաջարկում էր ուժեղացնել աշխատանքը գյուղում։ Սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների մեջ բանվորների և ինտելիգենցիայի հարաբերությունների հարցի շուրջը Ջափարիձեյի արտասանած ճառը ցույց էր տալիս նրա անդրդվելի հավատը դեպի բանվոր դասակարգի ուժն ու հզորությունը։

«Զարմանում եմ, յերբ ասում են, թե կոմիտեականներ լինելու ընդունակ բանվորներ չկան,—ասում էր նա։—Ընդհակառակը, նրանք այնպիսի քանակությամբ են, վոր հնարավորություն չկա բոլորին կոմիտեյի մեջ մտցնելու...»[1]։ Լենինը համագումարի ուշադրությունը դարձրեց այս վերին աստիճանի արժեքավոր ճառի վրա։

Մի անգամ Ալյոշան մնաց գիշերելու Բալախանում մի բանվորի բնակարանում։ Գիշերը, յերբ բոլորը պառկեցին, նա հարցրեց իր յերիտասարդ հարևանին՝ «Քնա՞ծ ես»։—«Վոչ»,—պատասխանեց նա։ «Դու լսո՞ւմ ես—յերգում է նավթաքաշ բանվորը»։—«Լսում եմ»։—«Դու գիտե՞ս, թե ինչի մասին է նա այդպես ջանասիրաբար յերգում։ Այն մասին, վոր իր աչքերն արդեն հոգնել են, վոր ինքը վատ է տեսնում ժելոնկան, վոր վատ և չար գործակատարը բղավում է իր վրա, իսկ ինքը չի կարող պատասխանել նրան։ Լավ է յերգում։ Դու դեռ յերիտասարդ ես։ Չես

---

1 ՌՍԴԲԿ III համագումարի արձանագրությունները, եջ 345։

հասկանում նավթաքաշների նշանակությունը։ Հետո կիմանաս։ Սիրի՛ր նրանց...»

1908 թվին Ջափարիձեն ձերբակալվեց և աքսորվեց Ռոստով։ 1908—1910 թվականներին նա աշխատում էր Դոնի Ռոստովում, ղեկավարում էր Դոնի կուսակցական կազմակերպությունը։ 1910 թվին Ալյոշան նորից ձերբակալվեց և աքսորվեց Վելիկի Ուստյուգ։ Աքսորից հետո, 1913 թվին, Ջափարիձեն վերադարձավ Թիֆլիս, վորտեղ անհաշտ պայքար էր մղում մենշևիկների դեմ, ամեն կերպ ամրապնդելով բոլշևիկյան կազմակերպությունը։ Սկսված իմպերիալիստական պատերազմի կապակցությամբ Ջափարիձեն յեռանդուն ինտերնացիոնալ պրոպագանդա յեր մղում։ 1915 թվին մատնվելով պրովոկատորի կողմից, Ալյոշան ձերբակալվեց և աքսորվեց Յենիսեյսկի նահանգը։ Բայց Ջափարիձեյին շուտով հաջողվեց փախչել Պետրոգրադ։ Այստեղ նա առաջադրանք ստացավ՝ բոլշևիկյան աշխատանք տանել Կովկասյան բանակի զինվորների մեջ։ Ջափարիձեն անհապաղ մեկնեց ֆրոնտ։

1916 թվին Բաթումով անցնելով նա բնակություն հաստատեց Տրապիզոնում, վորտեղ մեծ աշխատանք ծավալեց Կովկասյան բանակի մեջ։ Այստեղ Ալյոշան իմացավ Փետրվարյան հեղափոխության հաղթանակի մասին։ Բաքվի բոլշևիկյան կազմակերպությունը նրան Բաքու կանչեց։ Ալյոշան ուրախությամբ մեկնեց այնտեղ, վորպեսզի իրեն համար հարազատ տարերքում, նավթագործ բանվորների շրջանում, շարունակի հեղափոխական պայքարը։ Գնացքում Ջափարիձեն հանդիպեց մի ծանոթի։—«Գնում եմ Բաքու հեղափոխություն անելու»,—ասաց նրան Ալյոշան։—«Ի՞նչպես, մի՞թե այն չի արված»,—տարակուսեց խոսակիցը։—«Վոչ, դուք կլսեք մի ուրիշ, իսկական բանվորական հեղափոխության մասին։ Հսկայական ուժեր են հասունացել և շուտով կհորդեն։ Միքանի ամսվա բան է»։

Ընկ. ընկ. Շահումյանի և Ջափարիձեյի հետ մեկտեղ Բաքվի կազմակերպության մեջ խոշորագույն դեր էր խաղում ադրբեջանական ժողովրդի լավագույն զավակ Մեշադի Ազիզբեկովը։

Ազիզբեկովը ծնվել է 1876 թվին։ Նրա մայրը չքավոր գեղջկուհի յեր։ Հայրն ուներ տնայնագործական մի փոքրիկ ձեռնարկություն։ Տաս տարեկան հասակում Մեշադին զրկվեց հորից։ Սկսվեցին գոյության համար մղվող կռվի ծանր տարիները։ Մեշադին միջոցներ չուներ, թերի յեր սովորում, բայց նրան ղեկավարում էր մի համառ միտք—սովորել։ Յեվ իսկապես, նրան հա-

ջողվեց ավարտել ռեալական ուսումնարանը և 1893 թվին մտնել Պետերբուրգի պոլիտեխնիկական ինստիտուտը: Դասերով և պատահական աշխատանքով մի կերպ յոլա գնալով, Մեշադի Ազիզբեկովը համառորեն տիրապետում եր գիտությանը: Ազիզբեկովի բնավորության հիմնական գծերը—նրա ազնվությունը, ուղղամտությունը, ընկերական կարեկցությունը—նրան մեծ սեր և հարգանք եյին վաստակում ինստիտուտի ուսանողների շրջանում: Դեռ Պետերբուրգում Ազիզբեկովը դարձավ հեղափոխական շարժման ակտիվ մասնակից:

1895 թվին ուսանողուհի Վետրովան, վորին նստեցրել եյին Պետրոպավլովսկի բերդը, չդիմացավ ժանդարմների ծաղրածանակին, իր վրա նավթ լցրեց և այրվեց: Ուսանողների մեջ զայրույթի և բողոքի ալիք բարձրացավ: Նրանք վորոշեցին Իսաակյեվսկի մայր յեկեղեցում հոգեհանգիստ կատարել: Հավաքվեց 10 հազար ուսանող: Ազիզբեկովի կոչով մուսուլման ուսանողները միացան իրենց ընկերներին, բայց քաղաքապետը արգելեց հոգեհանգիստը: Մի րոպե յեկեղեցում լռություն տիրեց, և հանկարծ լսվեց Ազիզբեկովի հուզված ձայնը՝ «Տերտեր չկա, քաղաքացիական հոգեհանգիստ կատարենք»: Այս բացականչությանը ձայնակցեցին բոլոր կողմերից, լսվեց յերգեցողություն, և ուսանողները հզոր ցույցով փողոց դուրս յեկան: Կովկասցի ուսանողների առջևից գնում եր Ազիզբեկովը: Վոստիկանությունը հարձակվեց ցուցարարների վրա: Ազիզբեկովը ձերբակալվեց: Յերբ Մեշադին արդեն 4-րդ կուրսումն եր, նրան ձերբակալեցին յերկրորդ անգամ:

Ինստիտուտն ավարտելուն պես Ազիզբեկովը վերադարձավ Բաքու և աշխատում եր վորպես ինժեներ: Նրա բնակարանը դարձավ մի կենտրոն, ուր գալիս եյին ադրբեջանական չքավորները՝ օգնություն խնդրելու: Ազիզբեկովը լսում եր, միջնորդում եր, նրանց պաշտպան եր կանգնում: Միաժամանակ նա օգտագործում եր իր կապերը՝ ընդհատակյա աշխատանք ծավալելու համար: Նա ղեկավարում եր «Հումմեթ» («Յեռանդ») կազմակերպությունը, վորը ստեղծվել եր 1904 թվին ընկեր Ստալինի նախաձեռնությամբ՝ Բաքվի բոլշևիկների կազմակերպությանը կից՝ ադրբեջանցի աշխատավորների մեջ աշխատանք տանելու համար:

Ազիզբեկովը մեծ դեր խաղաց 1905—1907 թվականների հեղափոխության մեջ: Շատ լավ հասկանալով, վոր ցարիզմը և ազգային բուրժուազիան գիտակցաբար են հայ-թյուրքական կոտորած

առաջացնում, վորպեսզի խեղդեն Բաքվի բանվորների հեղափոխական շարժումը, Մեշադին ամեն կերպ ձգտում եր խափանել այն: Նա անձնազոհաբար շրջագայում եր քաղաքի ամենավտանգավոր շրջանները, ադրբեջանցիների և հայերի յեղբայրացման կոչ անելով, մերկացնելով ցարիզմի պրովոկացիոն քաղաքականությունը: Ցասկոտ ճառով եր նա յելույթներ ունենում հոգևորականության և ունևոր դասակարգերի դեմ:

1906 թվին Ազիզբեկովը ադրբեջանցի բանվորներից կազմակերպեց «Знамя свободы» մարտական դրուժինան: Դրուժինան յեռանդով պայքարում եր ցարական կառավարության ջարդերի և բռնությունների դեմ. Ազիզբեկովը հաջող կերպով զուգակցում եր լեգալ և ընդհատակյա աշխատանքը: 1912 թվին նրան ընտրեցին քաղաքային դումայի անդամ: Դուման ճնշող մեծամասնությամբ կազմված եր բուրժուազիայի ներկայացուցիչներից: Դումայի ամբիոնից միայն Մեշադի Ազիզբեկովի ձայնն եր համարձակ հնչում ի պաշտպանություն աշխատավորների շահերի: Ազիզբեկովը կազմակերպում եր ընդհատակյա հանդիպման վայրեր, պահում եր գրականությունը և զենքը: Մեծ օգնություն ցույց տվեց նա Իրանի աշխատավորներին՝ պարսկական շահի դեմ նրանց մղած ազատագրական պայքարում: Ազիզբեկովը պարսկական սոցիալ-դեմոկրատական «Ադալյաթ» կուսակցության կենտկոմի անդամ եր, զենք և գրականություն եր տեղափոխում Իրան և հատկապես Ենզելի յեր գնում այդ աշխատանքը կազմակերպելու համար:

Ադրբեջանի բանվորների և աշխատավորների շրջանում Ազիզբեկովը վիթխարի հեղինակություն եր վայելում: Բոլշևիկյան հաստատակամություն և անդրդվելիություն, ինքնազոհություն, անսահման նվիրվածություն պրոլետարական ինտերնացիոնալիզմին—սրանք են Ազիզբեկովի բնորոշ գծերը: Մուսուլմանական ժողովներում ի՛նչքան հաճախ եր յերևան գալիս անվեհեր Մեշադին: Ինժեների վերարկուով և գլխարկով նա յելնում եր մի վորևե բարձրության վրա և արտասանում եր ցարիզմը և նացիոնալիստական բուրժուազիային մերկացնող իր ճառերը, ամենևին չշփոթվելով, վոր ամբոխի մեջ կար վոտից-գլուխ զինված իր հակառակորդների մի զգալի քանակություն:

Բաքվի կազմակերպության ղեկավարող կորիզի մեջ մտնում եր նաև բոլշևիկ-բանվոր Իվան Ֆիոլետովը: Ֆիոլետովի կյանքը վառ կերպով արտացոլեց Բաքվի պրոլետարների հերոսական պայքարը: Նա ծնվել ե 1884 թվին Տամբովի նահանգի գյուղացու

ընտանիքում և 12 տարեկանից սկսել է իր աշխատավորական կյանքը: Դեռևս պատանի հասակում Ֆիոլետովը յեկավ Բաքու և մտավ Նոբելի մեխանիկական արհեստանոցը: Արդյունաբերական վիթխարի քաղաքը գյուղացի յերիտասարդին ներգրավեց իր հորձանուտի մեջ: 1900 թվին Ֆիոլետովը մտավ ՌՍԴԲԿ շարքերը: 1903 թվին բոլշևիկ դարձավ: Սկսվեց բոլշևիկ Ֆիոլետովի՝ դըժվարություններով և փորձություններով լեցուն պանծալի կյանքը:

Բանտն ու աքսորը շատ անգամ եյին Ֆիոլետովին խլում Բաքվի պրոլետարիատի շրջանից, բայց նա նորից վերադառնում եր մուժ ծխոտված վիշկաները, արհեստանոցները, գործարանները, Բաքվի բանվորների մոտ, վորոնք նրա համար մերձավոր և հարազատ եյին դարձել: Ձերբակալությունները, խուզարկությունները, բանտերն ու աքսորները չեյին թուլացնում նրա կամքը: Ընդհակառակը, ամեն անգամ նոր յեռանդով եր նա անցնում ընդհատված աշխատանքին:

Ֆիոլետովին առաջին անգամ ձերբակալեցին 1903 թվին՝ հուլիսյան գործադուլին ակտիվորեն մասնակցելու համար: Տարվա վերջին ժանդարմները նորից յեկան նրա հետևից: Նախազգուշացված լինելով ընկերների կողմից, Ֆիոլետովը կարողացավ թաքնվել: Ուրիշի անձնագրով յերկար թափառելուց հետո նա աշխատանքի մտավ Գրոզնիում: Հեղափոխական գործունեությունը վերսկսվեց—նորից ժողովներ, անլեգալ գրականություն, թերթիկներ և նորից... վոստիկանություն: 1904 թվի վերջին Ֆիոլետովը ձերբակալված է: Նա բանտարկյալներին պայքարի յե հանում ընդդեմ բանտային սոսկալի պայմանների: Նրանք հացադուլ են հայտարարում: Ութերորդ որը գիտակցությունը կորցրած վիճակում Ֆիոլետովին հիվանդանոց են տանում: Բանտից նրան ազատում է 1905 թվի հեղափոխությունը:

1906 թվին Ֆիոլետովը Բաքվումն է: Բաքվի բոլշևիկները լայնորեն ոգտագործում են լեգալ հնարավորությունները: Ֆիոլետովն ակտիվ մասնակցություն է ունենում նավթարդյունաբերական բանվորների միության կազմակերպելուն և մեծ աշխատանք է տանում հանքերում: 1908 թվին—նոր ձերբակալություն և աքսոր Վոլոգդայի նահանգը: Այստեղ Ֆիոլետովը հսկայական յեռանդով ձեռնամուխ է լինում ինքնուսուցման գործին: Նա պարապում է մաթեմատիկայից, պատմությունից, քաղաքատնտեսությունից... Վորպես աքսորյալների գաղութի ավագ՝ Ֆիոլետովը կազմում է խմբակներ, վարում է ժողովներ, փող է հավաքում

44.87

փախուստներ կազմակերպելու համար: Աքսորի տարիները իզուր չանցան, Ֆիոլետովը հետագայում միջնակարգ դպրոցի քննություն տվեց: Տաղանդավոր ինքնուս բանվորը լավ տվեց բոլոր առարկաները, բայց կտրվեց...կրոնից: Ֆիոլետովը հաճախ կատակում եր այդ «անհաջողության» առթիվ:

1914 թվից Ֆիոլետովը նորից աշխատում եր Բաքվում: Բաքվի հանքերում և գործարաններում նա մեծ հեղինակություն եր վայելում: Բանվորները ջերմագին սիրում եյին նրան: Նա մեծացել եր նրանց հետ միասին: Նրանք հավատում եյին նրան: Յերբ նավթարդյունաբերողների դեմ մղվող ծանր պայքարում հարկավոր եր լինում պաշտպանել պրոլետարիատի շահերը, բանվորներն ամենից առաջ դնում եյին Վանյա Ֆիոլետովի թեկնածությունը, նրան անփոփոխ կերպով ներկայացուցիչ ընտրելով զանազան հանձնաժողովներում: Նրանք Ֆիոլետովին առանձնահատուկ ջերմ վերաբերմունք եյին ցույց տալիս: «Վանիչկա»—այսպես եյին անվանում բանվորները Ֆիոլետովին:

Փետրվարյան հեղափոխությունից կարճ ժամանակ անց Բաքու յեկավ Անաստաս Միկոյանը, վորը միանգամից դարձավ Բաքվի կազմակերպության առավել ակտիվ աշխատողներից մեկը: Նա ընդամենը 22 տարեկան եր: Ընկեր Միկոյանն իր հեղափոխական գործունեությունն սկսեց 1915 թվին: Եջմիածնի հոգևոր ճեմարանում նա կազմակերպեց բոլշևիկյան խումբ: Այդ խումբը կապվեց Թիֆլիսում հրատարակվող՝ հայկական սոցիալ-դեմոկրատական «Պայքար» լրագրի հետ և վճռական պայքար սկսեց դաշնակների դեմ: Միկոյանն ակտիվորեն աշխատակցում եր այդ լրագրին: Հենց վոր Փետրվարյան հեղափոխությունը կատարվեց, Միկոյանը դուրս պրծավ ճեմարանի խեղդող պատերի միջից և մեկնեց Թիֆլիս, իսկ այնուհետև Բաքու: Այստեղ, Բաքվի ինտերնացիոնալ պրոլետարիատի շրջանում ծավալվեց նրա բազմակողմանի գործունեությունը: Նա գրում եր հոդվածներ, հանդես եր գալիս ռուսերեն և հայերեն լեզվով զեկուցումներով ու դասախոսություններով, կուսակցական և խորհրդային աշխատանք եր տանում և հրացանը ձեռքին մարտնչում եր պրոլետարիատի դիկտատուրայի համար: Բաքվի բանվորները շուտով ճանաչեցին Միկոյանի անհաշտելիությունը թշնամիների հանդեպ, նրա հետևողական ինտերնացիոնալ գիծը, նրա նվիրվածությունը հեղափոխական գործին:

Համախմբելով և կազմակերպելով պրոլետարիատին,

Բաքվի բոլշևիկները՝ Համառուսաստանյան ապրիլյան կոնֆերենցիայի վորոշումների և Լենինի ու Ստալինի ցուցումների հիման վրա մեծ աշխատանք եյին տանում մասսաների մեջ: Ինչպես և մի շարք այլ քաղաքներում, Փետրվարյան հեղափոխությանը հաջորդած սկզբնական ժամանակները Բաքվի բոլշևիկները փոքրամասնության մեջ գտնվեցին:

Իմպերիալիստական պատերազմի տարիներին ձերբակալությունները և աքսորները պրոլետարական շրջանից շատ բոլշևիկներ և առաջավոր բանվորներ խլեցին: Եսերները, մենշևիկները, նացիոնալիստները պատերազմի կապակցությամբ ծավալեցին իրենց պրոպագանդան, մասսաների գիտակցությունը թունավորելով բուրժուական շովինիզմի թույնով: Խիստ փոխվեց Բաքվի պրոլետարիատի կազմը: Շատ նոր բանվորներ լցվեցին նրա շարքերը: Այս ամենը յերևաց Փետրվարյան հեղափոխությունից հետո առաջին իսկ օրերին:

Չնայած վոր ընկ. Շահումյանն ընտրվել եր խորհրդի նախագահ, խորհրդի անդամների մեծամասնությունը հավատաց եսեր-մենշևիկյան լիդերներ Սահակյանի, Այոլլոյի, Սադովսկու և այդ ամբողջ դավաճանական կամպանիայի դեմագոգիական ճառերին: Խորհուրդը գտնվեց եսեր-մենշևիկների ձեռքին, վորոնք ամեն կերպ աջակցում եյին հակահեղափոխական բուրժուազիային:

Տեղական բուրժուազիան միավորվեց վորպես դաշնակների և մուսավաթիստների բուրժուա-նացիոնալիստական կուսակցություններ: Մուսավաթիստների կուսակցության մեջ ծվարեցին ադրբեջանական կապիտալիստները, բեգերն ու խաները. դաշնակների կուսակցության մեջ—հայկական կապիտալիստները և կուլակները: «Համազգային» շահերը պաշտպանելու անվան տակ յերկու կուսակցությունն էլ եսերների ու մենշևիկների ոգնությամբ փորձում եյին իրենց ազդեցությանը յենթարկել ադրբեջանցի և հայ աշխատավորներին:

Միայն բոլշևիկներն եյին անհաշտ պայքար մղում բոլոր բուրժուական կուսակցությունների դեմ: Բարձր պահելով սոցիալիստական հեղափոխության դրոշը, նրանք բանվորների և աշխատավորների լայն մասսաներին համախմբում եյին Լենինի—Ստալինի հեղափոխական գծի շուրջը:

Բաքվի կուսակցական կոմիտեն աշխատանքի մեջ քաշեց բոլոր ակտիվ ուժերին, պրոպագանդիստներին և ագիտատորներին բաշխեց բոլոր շրջանների: Բոլշևիկները գնում եյին ձեռնարկությունները, ժողովներն ու միտինգները, համբերությամբ պարզաբանելով բանվորներին տեղի ունեցող դեպքերի իսկական իմաստը և բոլշևիկների քաղաքականությունը:

Շատ կարևոր եր աշխատանք տանել ադրբեջանական պրոլետարիատի և գյուղացիության մասսաներում: Մուսավաթիստներին հաջողվեց իրենց ազդեցությունը տարածել ադրբեջանական բնակչության շրջանում: Նրանք ստեղծեցին ազգային կոմիտեների ցանց, ոգտագործելով դրանք իրենց հակահեղափոխական նպատակների համար: Մուսավաթիստներն առանձնապես ամրացան Ադրբեջանի գավառներում:

Պրոլետարական Բաքուն թույլ եր կապված ադրբեջանական գյուղի հետ: Ինչպես նշում եր ընկ. Միկոյանը, Բաքվի նավթային արդյունաբերությունը հենվում եր «վոչ-տեղական բնակչության բանվորների պրոլետարական կադրերի վրա, վորոնք խորը արմատներով կապված չեյին ադրբեջանական գյուղի հետ»[1]: Այստեղ եյին փոխադրվում Պովոլժյեյի ռուս գյուղացիները, հայերը, իրանցիները, լեզգիները... Ադրբեջանի գավառներում պրոլետարիատի կադրերը չափազանց փոքրաթիվ եյին: Գյուղում համարյա համատարած անգրագիտությունն եր տիրում: Գյուղացիության կազմակերպվածությունն ու գիտակցականությունը ցածր եր: Այս ամենից ոգտվելով, Ադրբեջանի գավառներում նոր իշխանության ապարատում բուն եյին դրել խաները, բեգերը, կուլակները, ցարական չինովնիկները, վոստիկաններն ու ժանդարմները:

Եսերներն ու մենշևիկները ցարիզմի մեծապետական քաղաքականություն եյին վարում: Նրանք Բաքվի խորհուրդն ամեն կերպ սահմանազատում եյին ադրբեջանցի բանվորներից, փաստորեն նրանց տալով մուսավաթիստների ձեռքը: Միայն բոլշևիկները համարձակ կերպով տարան իրենց հեղափոխական լոզունգները ադրբեջանական բանվորների և գյուղացիների մասսաների մեջ:

«Հումմեթը» Մեշադի Ազիզբեկովի ղեկավարությամբ լայնորեն ծավալեց իր գործունեյությունը: «Հումմեթի» մեջ իսկ բուն եր դրել նացիոնալիստական ինտելիգենտների խումբը: Այդ խումբը խոչընդոտում եր ադրբեջանական մասսաներում տարվող աշխատանքի զարգացմանը և արգելակում եր Ադրբեջանի բանվոր-

[1] Միկոյան, Խորհրդային իշխանության 10 տարին Ադրբեջանում, «Бакинский Рабочий» № 98, 1930 թ.:

ների և բոլոր աշխատավորների ինտերնացիոնալ համախմբումը: Բայց այդ խմբի ջանքերի հակառակ՝ աշխատանքը ծավալվում էր: Ընկ. Ազիզբեկովին օգնում էին բոլշևիկ բանվորներ Կազի Մամեդը, Սարդարովը և ուրիշները:

Մասսաների համար մղվող պայքարում հսկայական դեր էր խաղում բոլշևիկյան մամուլը: Ապրիլի 22-ին (նոր տոմարով մայիսի 5-ին), բանվորական մամուլի օրը, Բաքվի կոմիտեն սկսեց հրատարակել իր լրագիրը: Այդ լրագիրը լույս տեսավ «Бакинский Рабочий» հին վերնագրով: «Бакинский Рабочий»-ն հրատարակվում էր 1906—1908 թվականներին: Նրան այն ժամանակ ղեկավարում էր ընկեր Ստալինը: Լրագիրը բարձր էր պահում բոլշևիզմի դրոշը և հսկայական հեղինակություն ու բանվորների սերն էր վայելում:

Առաջին համարը լույս տեսնելուց 11 տարի անց «Бакинский Рабочий»-ն նորից վերածնվեց: Լրագրի խմբագիր հաստատվեց Ստեփան Շահումյանը: Նա շատ ուժ էր նվիրում լրագրին: Ուշ գիշերին, տպարանում, փոքր սեղանի մոտ, գրաշարական կասսաների և մեքենաների մոտ կարելի յեր տեսնել Ստեփանի փոքրինչ կորացած մարմինը, վորը թեքված էր առաջնորդողի կամ հերթական համարի նյութի վրա: Շահումյանը լրագրի գործը մարտականորեն էր վարում: «Бакинский Рабочий»-ի յուրաքանչյուր համարում նա մերկացնում էր հակահեղափոխական բուրժուազիայի և նրա սպասավորների քաղաքականությունը, բանվորների և աշխատավորների մասսաներին համախմբելով և նախապատրաստելով գալիք սոցիալիստական հեղափոխության համար:

Շատ կարևոր էր նույնպես ադրբեջաներեն լեզվով լրագիր հրատարակելը: Հեղափոխության առաջին օրերից բոլշևիկները ձգտում էին իրականացնել այդ: Վերջապես, հասավ լրագրի լույս տեսնելու օրը: Հուլիսի 3-ին ադրբեջաներեն լեզվով լույս տեսավ «Հումմեթ» լրագրի առաջին համարը: «Бакинский Рабочий»-ն ջերմորեն ողջունեց «Հումմեթի» լույսընծայումը: «Կցանկանանք յեռանդ և հաջողություն «Հումմեթի» մեր ընկերներին: Նրանց հաջողությունը մեր սեփական հաջողությունն է: Բոլոր ազգերի բանվորների շահերը սերտորեն կապված են իրար հետ: Մուսուլման բանվորների լուսավորումը անհրաժեշտ է նաև հենց ռուս բանվորների համար, հանուն ընդհանուր նպատակների, հանուն ընդհանուր բանվորական գործի պայքարելու հա-

մար»[1]: «Հումմեթի» լույսընծայումը մեծ նշանակություն ուներ: Մուսավաթական «Աչիգ-սոզ» լրագրին այսուհետև դիմակայում էր բոլշևիկյան «Հումմեթը», և վորքան էլ տեխնիկապես կատարյալ չեր բոլշևիկյան շաբաթօրյա փոքր լրագիրը՝ բուրժուանացիոնալիստական սոլիդ օրգանի համեմատությամբ, նա կատարում էր իր խնդիրը:

Ընդլայնելով իրենց կապերը մասսաների հետ, Բաքվի բոլշևիկները առաջ քաշեցին բանվորներին և աշխատավորներին առանձնապես հուզող հարցեր: Բոլշևիկների նախաձեռնությամբ պայքար սկսվեց հանուն կոլեկտիվ պայմանագրի: Ապրիլի վերջին բանվորների դեպուտատների Խորհուրդը կազմեց կոլեկտիվ պայմանագիր մշակող հանձնաժողով: Հանձնաժողովի գլուխ կանգնեց Ալյոշա Ջափարիձեն: Բաքվի բանվորների կենսական պահանջների համար մղվող պայքարում նա յեռուն գործունեություն զարգացրեց:

Նրա հետ միասին այդ պայքարում մեծ մասնակցություն էյին ունենում Ի. Ֆիոլետովը և Մ. Բասինը: Բոլշևիկ Մ. Բասինը պրոֆեսիոնալ շարժման ակտիվ աշխատող էր: 1914 թվին նա Բաքվի հայտնի գործադուլի կազմակերպիչներից մեկն էր: Այդ գործադուլը ջախջախումից հետո Բասինն անլեգալ վիճակի անցավ, բայց վոչ մի րոպե չդադարեցրեց պայքարը: Իմպերիալիստական պատերազմի տարիներին նա ակտիվ աշխատանք էր տանում տպագրիչների և կար անողների պրոֆմիությունները կազմակերպելու գծով: Փետրվարյան հեղափոխությունից հետո Բասինը, վորը սերտորեն կապված էր բանվորական մասսաների հետ, նոր յեռանդով ձեռնամուխ յեղավ իր սիրած աշխատանքին: Նա մեծ դեր էր խաղում նավթարդյունաբերական բանվորների միությունը վերակազմելու գործում և 1917—1918 թվականներին Բաքվի բանվորների պայքարի կազմակերպիչներից մեկը հանդիսացավ:

Բաքվի խորհրդի նիստերում, հանքագործարանային կոմիտեների, համաձայնողական հանձնաժողովի կոնֆերենցիայում ամենուրեք, վորտեղ դրված էր կոլեկտիվ պայմանագրի հարցը, բոլշևիկները պաշտպանում էյին մինչև վերջը պայքարելու անհրաժեշտությունը: Բայց Բաքվի խորհուրդը գնում էր էսէռների և մենշևիկների հետևից: Ընկ. Շահումյանը վճռական պայքար էր մղում Խորհրդի էսէր-մենշևիկյան մեծամասնության դեմ: Էսէր-մենշևիկների լիդերները օգտվեցին դեպքից, վորպեսզի ազատվեն

[1] «Бакинский Рабочий» № 25, 1917 г.

իրենց համար անցանկալի նախագահից: 1917 թվի մայիսի 11-ին բանվորների խորհրդի և զինվորների դեպուտատների խորհրդի միաձուլման ժամանակ խորհրդի նախագահ ընտրվեց էսէր Սահակյանը: Խորհրդի մեծամասնությունը հաշտվողական քաղաքականություն էր վարում, նավթարդյունաբերողների հետ միանալու կոչ անելով: Հենվելով էսէր-մենշևիկների աջակցության վրա, կապիտալիստները համառորեն դիմադրում էին, լկտիաբար մերժելով բանվորների բոլոր պահանջները: Կապիտալիստների հետ վարած բանակցությունները ձգձգվում էին և վոչ մի արդյունքի չէին հասցնում: Հենց այսպես էր նաև ուրիշ հարցերի լուծման վիճակը:

Բաքվում հեղափոխությունից հետո չարունակվում էր գոյություն ունենալ քաղաքային ցենզային դուման, նավթարդյունաբերողների, տնատերերի և խոշոր առևտրականների դուման: Բոլշևիկները պահանջում էին անհապաղ վերընտրել դուման և քաղաքային սահմանագծին միացնել բանվորական շրջանները: Դումայի նիստում Մեշադի Ազիզբեկովը հայտարարում էր, վոր իր ժամանակն ապրած դուման պետք է տեղը զիջի դեմոկրատիային. բայց քանի վոր նա այդ չարեց, «մենք ինքներս ենք յեկել ամբողջ գործը մեր ձեռքը վերցնելու»: Գործադիր կոմիտեյում Ալյոշա Ջափարիձեն ասում էր, թե քանի վոր ցենզային դուման ամուր կպած է իր տեղերին, հարկավոր է անհապաղ վերակազմել այն:

Բոլշևիկների պահանջները հանդիպեցին Բաքվի բանվորների համակրանքին և բուրժուազիայի կատաղի դիմադրությանը: Հանքային ռայոնները քաղաքին միացնելը նշանակում էր դումայի ամբողջ կերպարանքի փոփոխում: Ահա թե ինչու դրա դեմ միասնական ֆրոնտով դուրս յեկան ռուսական, ադրբեջանական և հայկական կապիտալիստները:

Բոլշևիկների պայքարը բուրժուազիայի և նրա գործակալների դեմ՝ կատաղի զայրույթ առաջացրեց կապիտալիստական բանակում: Դեռ հուլիսյան որերից առաջ բուրժուական լրագրերը սիստեմատիկ հալածանք սկսեցին բոլշևիկների դեմ: Նրանց դեմ զինվեցին բոլոր բուրժուական ուժերը—մուսավաթիստները, դաշնակները, կադետները, էսէրները, մենշևիկները: Բաքվի առաջավոր բանվորներն ու զինվորները խորապես վրդովված էին այս հալածանքից: Հունիսի 9-ին Կասպիական ընկերության բանվորների ժողովում յելույթ ունեցավ Անաստաս Միկոյանը: Նրա զեկուցման առթիվ բանվորներն ընդունեցին բողոքի բանաձև, վորն



Ս. ՇԱՀՈՒՄՅԱՆ



Պ. ՋԱՓԱՐԻՁԵ

ուղղված եր բուրժուական մամուլի կեղծ հերյուրանքների և բոլշևիկներին զրպարտելու դեմ: Բանվորները կոչ արին բոյկոտ հայտարարելու տեղական բուրժուական «Բագու», «Կասպի» և ուրիշ լրագրերին: Բայց այդպիսի վորոշումներ ընդունում եյին Բագվի աշխատավորների առավել գիտակից ջոկատները, իսկ մեծամասնությունը դեռ հավատում եր հաշտվողական և նացիոնալիստական կուսակցություններին:

Բոլշևիկների հալածանքն առանձնապես ուժեղացավ հուլիսյան օրերին:

Ընկեր Շահումյանը հուլիսյան օրերից քիչ առաջ վերադարձել եր Պետրոգրադից, վորտեղ ակտիվ մասնակցություն ուներ Խորհուրդների I Համառուսական համագումարի աշխատանքներում: Բոլշևիկյան ֆրակցիայի անունից նա համագումարում հաշտության բանաձև եր առաջարկում և պաշտպանում եր այն: Ընկ. Շահումյանը Պետրոգրադում հանդիպել եր Լենինի և Ստալինի հետ: Ն. Կ. Կրուպսկայան գրում ե, վոր «Շահումյանին, վորը Բագվի պրոլետարիատի շրջանում հսկայական ազդեցություն ուներ, մենք արդեն վաղուց ճանաչում եյինք... Յեվ 1917 թվին Իլյիչը ուրախ եր Շահումյանին տեսնելուն և նրա հետ ընդհուպ այն բոլոր հարցերի մասին խոսելուն, վորոնք այնպիսի սրությամբ եյին այն ժամանակ դրվում բոլշևիկների առաջ»: Պետրոգրադից ընկ. Շահումյանը Բագու հաղորդեց Պիտերի բանվորների ու զինվորների այն վիթխարի ցույցի մասին, վորը տեղի յեր ունեցել հունիսի 18-ին: Ի պատասխան դրան Բագվի կուսակցական կոնֆերենցիան վողջույն ուղարկեց Պետրոգրադի բոլշևիկների կոմիտեյին և շնորհավորեց նրա տարած հաղթությունը:

Հուլիսի 5-ին ընկ. Շահումյանը Բագվի խորհրդի նիստում զեկուցեց հուլիսյան դեպքերի մասին: Չնայած վոր ստույգ ինֆորմացիա չկար, իսկ բուրժուական մամուլը կեղծ տեղեկություններ եր հաղորդում դեպքերի մասին, ընկ. Շահումյանը, գիտենալով բանակում և յերկրում տիրող ընդհանուր դրությունը, դրության ճիշտ գնահատականը տվեց: Նա հայտարարեց, վոր Պիտերի բանվորների և զինվորների յելույթն իր համար անակնկալ բան չե: Հույս հայտնելով, վոր հեղափոխական նոր շարժումը իշխանությունը կտա բանվորների և զինվորների ձեռքը, նա վողջունեց Պիտերի պրոլետարիատի և կայազորի յելույթը:

Ընկ. Շահումյանի զեկուցումը՝ բուրժուազիայի և նրա սպասավորների բանակում գայրույթի պոռթկում առաջացրեց: Պետ-

բոգրադի հուլիսյան ցույցի պարտությամբ թևավորված՝ համաձայնողականները ամբողջ հակահեղափոխական բուրժուազիայի հետ միասին հարձակման անցան պրոլետարիատի վրա: Լրագրերում և փողոցներում, խորհրդի նիստերում և միտինգներում նրանք լկտիաբար զրպարտում էին բոլշևիկներին, կոչ անելով պրոլետարիատի լավագույն ներկայացուցիչների ֆիզիկական դատաստանն անելու:

Բայց Բաքվի բոլշևիկներն իրենց չկորցրին: Նրանք հանդիստ կերպով շարունակում էին առաջ գնալ, հավատացած լինելով իրենց գործի ճշտությանը:

Բաքվի խորհրդի նիստում՝ էսեր-մենշևիկյան հռետորների դեմագոգիական ճառերով տաքացած զինվորների մի խումբ փորձեց բռունցքներով հարձակվել Ալյոշա Ջափարիձեյի գլխավորած մի խումբ բոլշևիկների վրա, վորը կանգնած էր դահլիճի մուտքի մոտ: Ի պատասխան դրան Ալյոշան իրեն հատուկ դյուրաբորբոքությամբ վեր յելավ մի ինչ-վոր վոչ-մեծ բարձրության վրա և վեր բարձրացրած ձեռքով, պարզ արտասանելով յուրաքանչյուր բառը, իր ձայնով ծածկելով ամբոխի ճիչերը, ասում էր նրան, վոր կանցնի շատ քիչ ժամանակ և նա կհասկանա, վոր միայն բոլշևիկներն են աշխատավորական մասսաների իսկական պաշտպանները:

Շահումյանն ասում էր, վոր մեր կուսակցությունը «ցեխը կկոխեն և թունավոր զրպարտանքով կծածկեն: Մեր թշնամիները և նրանց սպասավորները—մենշևիկները բոլոր ուժերը կգործադրեն, վորպեսզի խաբեն բանվորներին և չթողնեն հետևելու մեզ: Իսկ մենք այնուամենայնիվ կգնանք մեր ուղիով, և վոչ մի ցեխ չի կանգնեցնի մեզ: Բանվորները կգան մեր հետևից»[1]:

II

Ի պատասխան բուրժուական հակահեղափոխության հարձակման՝ Բաքվի բոլշևիկները բանվորներին կոչ էին անում «պահպանել անդորրությունը, ավելի սերտորեն համախմբվել իրենց կուսակցության շուրջը, հետամնաց ընկերներին պարզաբանել տեղի ունեցող դեպքերի իմաստը և կանչել նրանց առաջվա պես վճռական պայքար մղելու հակահեղափոխության դեմ»[2]: Բոլշևիկների այս կոչը կենդանի արձագանք գտավ Բաքվի պրոլետարիատի շրջանում:

[1] «Бакинский Рабочий» № 234, 1928 г.
[2] «Бакинский Рабочий» № 29, 1917 г.

Հուլիսյան օրերի և հաջորդ դեպքերի օրինակով մասսաները համոզվում էին, վոր մենշևիկների և էսերների քաղաքականությունը տանում է դեպի հակահեղափոխության հաղթանակը: Մի շարք գործարանների և հանքերի բանվորները պահանջում էին իշխանությունը տալ խորհուրդների ձեռքը: Ազատության հրապարակում կազմակերպվում էին բողոքի միտինգներ ընդդեմ ժամանակավոր կառավարության և հաշտվողականների հակահեղափոխական քաղաքականության:

Հուլիսի 30-ին հավաքվեց Բաքվի բոլշևիկների կոնֆերենցիան: Նա ջերմորեն վողջունեց բոլշևիկյան կուսակցության VI համագումարը, վորը բոլոր խոչընդոտների հակառակ այն ժամանակ աշխատում էր Պետրոգրադում: Ծափահարությունների փոթորկի տակ կոնֆերենցիան ընդունեց Ստեփան Շահումյանի առաջարկությունը՝ վողջույն ուղարկել համագումարին և «Рабочий и Солдат» լրագրին, հակահեղափոխականների կողմից ջախջախված «Правда»-յի ժառանգորդուհուն:

Բաքվի բոլշևիկները կուսակցության VI համագումար ուղարկեցին Ալյոշա Ջափարիձեյին: Նա ակտիվ մասնակցություն էր ունենում համագումարի աշխատանքներում: Պետրոգրադում, Սերգո Որջոնիկիձեյի բնակարանում, Ալյոշան հանդիպեց ընկեր Ստալինին, և նրանք յերեքով յերկար զրուցում էին Անդրկովկասի և ամբողջ յերկրի ընդհանուր դրության մասին:

VI համագումարը բոլշևիկյան կուսակցության Կենտրոնական կոմիտեյի անդամ ընտրեց ընկ. Շահումյանին և Կենտկոմի անդամության թեկնածու ընտրեց ընկ. Ջափարիձեյին: Օգոստոսի 5-ին, համագումարից անմիջապես հետո, պլենումն ընտրեց Կենտկոմի նեղ կազմ՝ ընկեր Ստալինի գլխավորությամբ: Կենտկոմի նեղ կազմի մեջ մտավ ընկ. Շահումյանը: Կենտկոմը նրան կանչեց Պետրոգրադ և սահմանեց, վոր Կովկասում պետք է հերթով գտնվեն Կենտրոնական կոմիտեյի ներկայացուցիչներ ընկ. ընկ. Շահումյանն ու Ջափարիձեն:

Կատարելով կուսակցության VI համագումարի վորոշումները, Բաքվի բոլշևիկները կազմակերպեցին Յերիտասարդության միություն: Օգոստոսի մի տաք օր Ղուբինջիի տպարանում Շահումյանը «Бакинский Рабочий»-ի համար հերթական առաջնորդող էր գրում: Սեղանի վրա ընկած էր հենց նոր ստացված հաղորդագրությունը՝ Պետրոգրադի յերիտասարդության շարժման մասին: Անսպասելիորեն տպարան մտավ Ալյոշա Ջափարիձեն,

վորը վերադարձել էր կուսակցության VI համագումարից։ Նա մեծ վոգևորությամբ պատմեց Պետրոգրադի «Մոդերն» կրկեսում տեղի ունեցած՝ յերիտասարդության միտինգի մասին, վորտեղ իրեն հաջողվել էր ներկա գտնվել։ «Ի՜նչ խանդավառություն էր թագավորում նրանց մեջ։ Վորքա՜ն ուժ էր յերևում այդ հազարավոր մարտիկների մեջ, բանվորների այդ յերեխաների մեջ»։ Ջափարիձեյի հետ ունեցած խոսակցությունից հետո Շահումյանը փոքրիկ թերթիկի վրա գրեց մի հայտարարություն՝ ՌՍԴ(բ)ԲԿ Բաքվի Կոմիտեյին կից՝ յերիտասարդության կազմակերպության առաջին հավաքի մասին, վոր այստեղ ևեթ մտավ լրագրի հերթական համարի մեջ։ «Թող այս սկիզբը լինի»,—ասաց Շահումյանը։

Բաքվի կոմիտեյին կից՝ յերիտասարդության կազմակերպությունը միավորեց սովորող յերիտասարդ բոլշևիկների մի խումբ. Նրա նախագահ ընտրվեց Ստեփան Շահումյանի վորդի Սուրենը։ Ակտիվ մասնակցություն էր ունենում նաև նրա յերկրորդ վորդին՝ Լևոնը։ 1917 թվի աշնանը կազմվեց բոլշևիկյան յերիտասարդության մի խումբ տպագրիչների մեջ։ 1918 թվի սկզբին յերկու կազմակերպությունները միավորվեցին։ Ստեղծվեց «Բաքու քաղաքի և նրա ռայոնների բանվորական յերիտասարդության ինտերնացիոնալիստական միությունը», վորը դրեց Բաքվի և Ադրբեջանի կոմյերիտական կազմակերպության հիմքը։

Կուսակցության VI համագումարում դրված էր Բաքվի «Հումմեթի» աշխատանքի հարցը։ Ջափարիձեն համագումարին պատմեց, թե ինչպես 1904—1905 թվականներին ծագեց «Հումմեթ» կազմակերպությունը և ինչու Բաքվի բոլշևիկները պահպանեցին այդ կազմակերպությունը նոր հեղափոխության ժամանակաշրջանում։ Նա հայտարարեց, վոր «Հումմեթը» կարդարացնի վստահությունը և անձնազոհաբար կծառայի՝ մուսուլման բանվորների մեջ դասակարգային ինքնագիտակցություն մտցնելու և նրանց՝ ռուս պրոլետարիատի հետ միավորելու գործին։ Համագումարի նախագահությունը վողջունեց «Հումմեթին» վորպես առաջին բոլշևիկյան կազմակերպությանը, «վորը սոցիալ-դեմոկրատական ուսմունքը տարավ մուսուլմանական մասսաների մեջ»։ Համագումարը ՌՍԴԲԿ Կենտկոմին առաջարկեց նյութական և ամեն տեսակի այլ աջակցություն ցույց տալ «Հումմեթին»։

Կուսակցության VI համագումարից հետո «Հումմեթի» գործունեյությունը նշանակալիորեն ընդլայնվեց։ Բալախանու ռայոնի՝ «Հումմեթի» անդամների ժողովը, լսելով Ազիզբեկովի զեկուցումը, միացավ բոլշևիկների համաքաղաքային կոնֆերենցիայի բանաձևին և ընտրեց կազմակերպական հանձնաժողով՝ ռայոնական կազմակերպությունը ձևավորելու համար։ Բալախանուց անմիջապես հետո «Հումմեթի» կազմակերպություններ ստեղծվեցին նաև ուրիշ ռայոններում։ «Հումմեթիստ» բոլշևիկներն անհաշտ պայքար էյին մղում ադրբեջանական բուրժուազիայի նացիոնալիստական քաղաքականության դեմ։ Նրանք հանդես էյին գալիս ընդդեմ մուսուլմանական ազգային ձևավորումների, վոր ստեղծել էյին կապիտալիստներն ու կալվածատերերը։ Նրանք մերկացնում էյին մուսավաթիստների գլխավորած՝ մուսուլմանական կազմակերպությունների կոմիտեյի դերը։

Ազիզբեկովի և այլ «հումմեթիստների» ճառերը բողոքներ էյին առաջացնում բուրժուա-նացիոնալիստական բանակում։ Ազիզբեկովին մեղադրում էյին այն բանում, վոր նա ուզում է պառակտում մտցնել ադրբեջանական «միասնական» ժողովրդի մեջ։ Բայց այդպիսի «մեղադրանքները» չէյին կարող շփոթեցնել բոլշևիկներին։ «Հումմեթիստները» գիտեյին, վոր միայն իրենք էն ադրբեջանական ժողովրդի իսկական ներկայացուցիչները, ի հակադրություն նրա մի բուռ չարանենգ կեղեքողների, վորը գլխավորում էր «Մուսավաթ» կուսակցությունը։

Մասսաների մեջ Բաքվի բոլշևիկների տարած աշխատանքն իր արդյունքներն էր տալիս։ Բոլշևիկյան ազդեցության աճումը յերևաց կոռնիլովականության դեմ պայքարելու որերին։ Օգոստոսի 30-ին կայացավ Բաքվի խորհրդի նիստը։ Խորհրդի անդամներից միայն 100 մարդ հավաքվեց, դրա փոխարեն նիստին ներկայացան բանվորների և զինվորների, գործարանային և հանքային հանձնաժողովների, նավային, վաշտային և այլ կոմիտեների անդամների մոտ հազար ներկայացուցիչ։ Գործարաններից, հանքերից, զորանոցներից նրանք մարտական տրամադրություններ բերին։ Եսերների և մենշևիկների քաղաքականությունը մերկացնող բոլշևիկների ճառերը ժողովը դիմավորում էր ծափահարությունների փոթորկով։ Այդ ժողովն ընդունեց բոլշևիկների բանաձևը և առաջարկեց՝ խորհրդի գործկոմին կից ստեղծել հակահեղափոխության դեմ պայքարող կոմիտե։

Այդ առաջին դեպքն էր, վոր Բաքվի խորհուրդն ընդունում էր բոլշևիկյան բանաձև։ Ահա թե ինչու շարժվել սկսեց ամբողջ հաշտվողական բանակը։ Սեպտեմբերի 1-ին կայացավ խորհրդի

փակ նիստը: Հրաժարվելու պատրվակով էսէր-մենշևիկյան գործկոմն այնտեղ ձեռք բերեց օգոստոսի 30-ի վորոշման վերացումը: Այն ժամանակ բանվորներն ու զինվորները պահանջեցին անհապաղ վերընտրել հաշտվողական խորհուրդը: Դեռ օգոստոսի 30-ի նիստում Ֆիոլետովը վերընտրությունների հարց բարձրացրեց: Այժմ բոլշևիկներն այդ հարցով գնացին մասսաների մեջ, և նրանց ճնշման տակ խորհուրդն ստիպված եր ընդունելու բոլշևիկների առաջարկը: Սկսվեց նախընտրական աշխույժ կամպանիան: Հենց այդ ժամանակ Բագու յեկավ կազմակերպության հին աշխատող Յա. Զևինը:

Յակով (Պավել) Զևինը ծագում եր Գոմելի նահանգի Կրասնոպոլյե գյուղի մանր առևտրականի ընտանիքից: Հայրն ուզում եր նրան տեղավորել առևտրական գործերում, բայց դրանից բան դուրս չեկավ: Յերբ ընտանիքը տեղափոխվեց Յեկատերինոսլավի նահանգի Կամենսկոյեն, 15-ամյա Յաշան կապվեց Կամենսկոյեյի գործարանի բանվորների հետ, նրանց միջոցով գրականություն եր ձեռք բերում, մասնակցում եր նրանց հավաքույթներին: Հոր խանութում նա պահում եր անլեգալ բրոշյուրներ և պրոկլամացիաներ: 1905 թվի նոյեմբերին՝ ցույցին մասնակցելու համար Զևինը դաժանորեն ծեծվեց սևհարյուրյակայինների կողմից և ձերբակալվեց: 1907 թվին Զևինը տեղափոխվեց Բագու: 1908 թվին Յակովն աքսորվեց Վոլոգդայի նահանգը: Սկզբի ժամանակները Զևինը մենշևիկ եր: Բայց աքսորում արդեն նա սկսեց մերձենալ բոլշևիկների հետ: 1911 թվին Զևինը գնաց արտասահման: Փարիզում նա սովորում եր Լենինի կազմակերպած՝ Լոնժյումոյի կուսակցական դպրոցում, այնուհետև մասնակցում եր Պրագայի կուսակցական կոնֆերենցիային: Լենինյան դպրոցը և Պրագայի կոնֆերենցիան վերջնականապես վորոշեցին Զևինի հետագա ուղին:

Արտասահմանից վերադառնալով՝ Զևինն աշխատում եր Ռուկրաինայում, ապա նորից ձերբակալվեց և աքսորվեց: 1915 թվին Զևինը՝ Պավել Նիկիտիչ Կուզմին ազգանունով յեկավ Բագու, վորտեղ դարձավ բոլշևիկյան կազմակերպության ակտիվ աշխատող: Զևինը գնում եր հանքից-հանք, գործարանից-գործարան, վերականգնելով կուսակցական կապերը, ժողովներ և խմբակներ կազմակերպելով, ամրացնելով Բագվի բոլշևիկյան կազմակերպությունը: Վոչ վոք չգիտեր Զևինի իսկական անունը, բայց բոլորը ճանաչում եյին անխոնջ կազմակերպիչ «ընկեր Պավելին»,

վորն ամեն ժամանակ շարունակ գնում եր բանվորների հավաքույթներին և ժողովներին:

1916 թվին Զևինը ձերբակալվեց: «Ա՛, ընկե՛ր Պավել, վերջապես ահա մենք ձեզ հետ ծանոթացանք»,—ասաց նրան ժանդարմը, ուրախ շփելով ձեռները: Միայն այն ժամանակ հայտնի դարձավ Զևինի իսկական անունն ու ազգանունը: Զևինին նորից աքսորեցին, այս անգամ Իրկուտսկի նահանգը: Նա աքսորի ճանապարհին, Ռյազանումն եր, յերբ պայթեց Փետրվարյան հեղափոխությունը: Զևինն ազատվեց, յեկավ Մոսկվա, վորտեղ աշխատում եր Մոսկվայի բանվորների դեպուտատների խորհրդում:

Վերադառնալով Բագու, Զևինը մեկեն ակտիվ աշխատանքի մեջ մտավ: Ընկ. ընկ. Բասինի և Ստուրուայի հետ նա կազմեց Բագվի նոր խորհրդի դեպուտատների հրահանգը: Այդ հրահանգը լայնորեն տարածվում եր մասսաների մեջ: Այդ՝ բոլշևիկների հիմնական նախընտրական փաստաթուղթն եր:

Կոռնիլովշչինայի ջախջախման որերին սկսված հեղափոխական վերելքն արտահայտվեց նաև Բագվի բանվորների տնտեսական պայքարի վրա: Բոլշևիկները բանվորներին կոչ եյին անում կապերը խզել հաշտվողական տակտիկայի հետ: «Բագվի բանվորները նորից կտրած տաշտակի առաջ են,—գրում եր Ջափարիձեն,—իսկ չէ վոր անցել է արդեն 6 ամսից ավելի— և ի՞նչ ամխաներ... Հարկավոր է նախ և ամենից առաջ հաղթահարել հաշտվողականությունը, ազատվել բանվորական շարժման այդ խոցից»[1]:

Սեպտեմբերի 18-ին կայացավ հանքա-գործարանային համաժողովների կոնֆերենցիայի նիստը: Նախագահում եր ընկ. Ջափարիձեն, քարտուղար ընտրվեց ընկ. Բասինը: Կոնֆերենցիան մերժեց հաշտվողական քաղաքականությունը: Նա իր նիստերը հայտարարեց անընդհատ և վերջին ուլտիմատումը ներկայացրեց նավթարդյունաբերողներին: Զորս որ անց—սեպտեմբերի 22-ին, ստանալով ձեռնարկատերերի բացասական պատասխանը, կոնֆերենցիան ընդունեց բոլշևիկների առաջարկությունը—սեպտեմբերի 27-ից ընդհանուր գործադուլ հայտարարել: Գործադուլային կոմիտեյի նախագահ ընտրվեց Ալյոշա Ջափարիձեն:

Բոլշևիկները ձգտում եյին գործադուլին տալ հզոր և կազմակերպված բնույթ: «Պատերազմը հայտարարված է,—գրում եր Ջափարիձեն,—Բագվի բանվորները ամբողջ Ռուսաստանի առաջ

[1] «Бакинский Рабочий» № 53, 1917 г.

ապացուցեցին իրենց տոկունությունը, այժմ պետք է ապացուցեն իրենց կազմակերպվածությունն ու դիսցիպլինան»[1]։

Գործադուլային կոմիտեն վորոշում ընդունեց ջրմուղի, նավթամուղի, ելեկտրական կայանի, հիվանդանոցների, յերկաթուղիների, կապի միջոցների և այլնի աշխատանքի մասին։ Սահմանվեց՝ գործադուլի ժամանակ միտինգներ և ժողովներ գումարելու կարգը։

Մինչդեռ Բաքվի պրոլետարիատը բոլշևիկների ղեկավարությամբ գործունարար պատրաստվում եր գործադուլին, եսեր-մենշևիկյան լիդերները վերջին ջանքերն եյին անում այն վիժեցնելու համար։ Դրա համար Թիֆլիսից ժամանեց մենշևիկ Գեգեչկորին։ Ոգտագործելով վերջին րոպեները, եսերներն ու մենշևիկները մի նիստից մյուսն եյին վազում, վորպեսզի «խաղաղություն» հաստատեյին թշնամական կողմերի միջև։ «Ամբողջ ժամանակ, քանի դեռ դուք պատրաստվում եք գործադուլի,—ասում եր մենշևիկ Ի. Ռամիշվիլին սեպտեմբերի 26-ին հանքա-գործարանային հանձնաժողովի կոնֆերենցիայի նիստում,—յես վարում եմ իմ հին հաշտվողական քաղաքականությունը, վորը ձեզ բոլորիդ վաղուց հայտնի յե և վորը ձեզ միշտ դուր չի յեկել։ Դուք ինձ թղավում եք կոչել, յերբ յես ձեզ խնդրում եմ գործադուլ չանել... Մի՛ վախենաք, վոր յես ուզում եմ վիժեցնել ձեր գործադուլը։ Յեթե յես կարողանայի այդ անել, կանեյի իսկույն»։

Վոչ մի բան չեր կարող կոտրել Բաքվի բանվորների միաբանությունը։ «Մեր կոչը մնաց ձայն բարբառո հանապատի»,—ասում եր Գեգեչկորին։ Կոնֆերենցիան ընդունեց Ալյոշա Ջափարիձեյի առաջարկությունը—ընդունել, վոր գործադուլը հայտարարված է, և ամեն միջոցի դիմել, վորպեսզի նշանակված ժամանակ այն սկսվի կազմակերպված ձևով։

Վեց որ—սեպտեմբերի 27-ից մինչև հոկտեմբերի 2-ը—շարունակվեց Բաքվի պրոլետարիատի ընդհանուր գործադուլը։ Բաքվի գործարաններում և հանքերում մեռավ կյանքը։ Ամբողջ բանվորական քաղաքը պաշտպանեց նավթահաններին։ Գործադուլն անցնում եր կազմակերպված։ Ամենուրեք պահպանվում եր լիակատար կարգ և անդորրություն։ Գործադուլային կոմիտեյի կարգադրությունները կատարվում եյին անառարկելիորեն։ «Ընկերնե՛ր։ Ձեր հեղափոխական դիսցիպլինան և տոկունությունը հիացնում է բոլորին—նշում եր գործադուլային կոմիտեն։—Մենք

[1] «Бакинский Рабочий» № 57, 1917 г.

յերջանիկ ենք հղելու ձեզ այն վողջույնը, հաղթանակի ցանկությունները և ոժանդակության խոստումները,—վոր մենք անընդհատ ստանում ենք բանակի և նավատորմի զանազան մասերից, արհեստակցական միություններից և զանազան անձերից»[1]։

Գործադուլային կոմիտեն բանվորներին կոչում եր կայուն և համախմբված լինել։ «Ձեր թշնամիները քնած չեն։ Նրանք ճիգ ու ջանք են թափում ճեղքելու ձեր ամուր շարքը։ Զհամարձակվելով բացահայտորեն կատարելու իրենց զզրելի աշխատանքը, նրանք, վորպես դավաճաններ, գաղտնաբար են գործում։ Նրանք սուտ լուրեր են տարածում, վորպեսզի շփոթեցնեն ձեզ։ Աչալուրջ յեղեք։ Իմացե՛ք, վոր ամեն տեղ, մեր ամբողջ ֆրոնտում թագավորում է վոգևորությունը։ Այլացեղ միասնական պրոլետարական ընտանիքը մեզ համար յերկաթե ձեռքով հաղթանակ է կռում»[2]։ Գործադուլային կոմիտեն իրավացի յեր։ Բանվորների համախմբվածությունն ու կազմակերպվածությունը, բոլոր աշխատավորների կողմից նրանց ցույց տված աջակցությունն ապահովեցին գործադուլի հաջողությունը։ Բոլշևիկյան հաստատուն ղեկավարությունը հաղթանակի հասցրեց։ Նավթարդյունաբերողներն ընդունեցին բանվորների առաջարկը և համաձայնվեցին գործադրության դնել կոլեկտիվ պայմանագիրը։ Կենտրոնական գործադուլային կոմիտեն շնորհավորեց Բաքվի պրոլետարիատի տարած հաղթանակը և հայտարարեց, վոր հոկտեմբերի 3-ի ցերեկվա ժամը 12-ից գործադուլը համարվում է ավարտված։

Գործադուլը վերջանալուց յերկու որ հետո յեկավ Ժամանակավոր կառավարության աշխատանքի մինիստր մենշևիկ Գվոզդյովը։ Նա գործադուլը խեղդելու առաջադրանք ուներ, բայց ուշացավ։ Նա ստիպված յեղավ Բաքվի բանվորներից լավ պատասխան լսել։ «Մենք գործադուլն ավարտեցինք առանց ձեզ,—ասաց Ջափարիձեն,—բայց յեթե դուք նույնիսկ գործադուլի ժամանակ գայիք, ապա այն ժամանակ էլ ձեր դերը զերոյի կհավասարվեր... Ներկա հեղափոխական ժամանակում պետության գլուխ պետք է կանգնեն վոչ թե միջնորդ դրասենյակները, այլ իսկական դեմոկրատիայի վրա հենվող ուժեղ և վճռական հեղափոխական իշխանությունը»[3]։

Բաքվի սեպտեմբերյան գործադուլը մեծ նշանակություն

[1] «Известия Бакинского Совета» № 147, 1917 г.

[2] Նույն տեղում։

[3] «Бакинский Рабочий» № 62, 1917 թ. հոկտեմբերի 6-ին։

ումներ: Նա նշանակում եր էսէռների և մենշևիկների հաշտվողական քաղաքականության կրախ: Բոլշևիկյան կուսակցության կենտրոնական կոմիտեն վողջունեց «Բաքու քաղաքի հեղափոխական պրոլետարիատին, վորը բաց մարտում հաղթեց կազմակերպված կապիտալին»[1]:

Հենց այդ օրերին բոլշևիկների Կենտկոմը բոլոր կուսակցական կազմակերպություններին առաջարկում եր յեռանդագին պատրաստվել բուրժուազիայի հետ ունենալիք վճռական գոտեմարտին: Շահումյանը կանչվեց Պետրոգրադ և ներկա յեր Կենտկոմի սեպտեմբերի 15-ի նիստին, յերբ առաջին անգամ քննարկվում եյին Լենինի նամակները զինված ապստամբության մասին: Նա ակտիվ մասնակցություն եր ունենում լենինյան դիրեկտիվներն իրականացնելու համար մղվող պայքարին: Սեպտեմբերի 21-ին բոլշևիկյան ֆրակցիայի անունից Շահումյանը հանդես եր գալիս Համառուսաստանյան Դեմոկրատական Խորհրդակցությանը. Հոկտեմբերի 2—3-ին Շահումյանը ղեկավարում եր Թիֆլիսում տեղի ունեցող՝ Կովկասի բոլշևիկյան կազմակերպությունների I համագումարը: Կենտկոմի ցուցումներից յելնելով՝ համագումարը նշեց Կովկասի բոլշևիկների տակտիկան պրոլետարական հեղափոխության համար մղվող պայքարում: Նա նախազգուշացնում եր, վոր բուրժուազիան և նրա սպասավորները առանց մարտի չեն հանձնի իրենց դիրքերը: Համագումարը ջերմագին վողջունեց Բաքվի բանվորներին՝ սեպտեմբերյան գործադուլի հաղթանակի կապակցությամբ և առաջարկում եր նոր ճակատամարտերի պատրաստվել:

Սեպտեմբերի և հոկտեմբերի ընթացքում բոլշևիկների ազդեցությունը Բաքվում շարունակում եր ամրանալ: Ֆաբրիկա-գործարանային հանձնաժողովի կոնֆերենցիան ընդունեց ընկ. Զևինի առաջարկած բանաձևը: Այդ բանաձևը պահանջում եր ամբողջ իշխանության անցումը խորհուրդներին, կալվածատիրական հողերի կոնֆիսկացիա, բանվորական վերահսկողության կազմակերպում, պետական նշանակություն ունեցող խոշոր ձեռնարկությունների ազգայնացում: Միայն 7 հոգի քվեարկեցին այդ բանաձևի դեմ:

Բոլշևիկները մեծ հաջողությունների հասան զինվորների շրջանում: Եսեր-մենշևիկյան ղեկավարները բոլշևիկներին չեյին թողնում զորանոցները և արգելում եյին նրանց գրականության

[2] «Рабочий путь» № 29, 1917 г.

տարածումը, բայց բոլշևիկները հաղթահարեցին այդ արգելքները: Սեպտեմբերին Բաքվի կայազորում արդեն բոլշևիկյան ազդեցությունը տիրում եր: Ազատության հրապարակում տեղի ունեցող՝ զինվորների միտինգները պահանջում եյին «համաձայնությունների քաղաքականության լիկվիդացիա» և «ամբողջ իշխանությունը խորհուրդներին հանձնել»:

Հոկտեմբերի կեսին Բաքվի խորհրդի ղեկավարությունն անցավ բոլշևիկներին: Խորհրդի՝ հոկտեմբերի 13-ի նիստում էսէռներն ու մենշևիկները պահանջում եյին պրապորշչիկ Ավագյանին հանել գործկոմի կազմից: Ավագյանը բոլշևիկ չեր, բայց կտրուկ կերպով հանդես եր գալիս համաձայնողականների դեմ: Ազատության հրապարակում նա կազմակերպում եր զինվորների բազմամարդ միտինգներ, բողոքելով ընդդեմ բուրժուազիայի հետ դաշինք կնքելուն: Ահա թե ինչու նրան այնպես ատում եյին էսեր-մենշևիկյան լիդերները: Նրանք հայտարարում եյին, վոր հրաժարական կտան, յեթե Ավագյանը չհեռացվի գործկոմից: Խորհուրդն ընդունեց գործադիր կոմիտեյի հրաժարականը: Մեշադի Ազիզբեկովի, Բասինի, Շահումյանի և ուրիշ բոլշևիկների ճառերը ջերմ համակրանքի հանդիպեցին:

Հենց նույն օրը յերեկոյան կազմվեց ժամանակավոր գործադիր կոմիտե: Նրա նախագահ ընտրվեց Ստեփան Շահումյանը: Հոկտեմբերի 15-ին հավաքվեց խորհրդի նիստը՝ գործարանային և հանքային հանձնաժողովների, վաշտային և նավային կոմիտեների ներկայացուցիչներով: Այդ նիստն իրեն հայտարարեց ընդլայնած խորհրդի կոնֆերենցիա, վորն իրավազոր է այսուհետև մինչև խորհրդի նոր ընտրությունները: Բաքվի ընդլայնած խորհուրդն ընտրեց՝ խորհուրդների Համառուսաստանյան յերկրորդ համագումարի պատվիրակներ և հայտարարեց, վոր անհրաժեշտ է խորհրդային իշխանություն հաստատել: Նա մատնանշեց, վոր «անհրաժեշտ է իշխանությունը խլել ժողովրդի թշնամիներից և տալ այն հենց ժողովրդի ձեռքը ի դեմս բանվորների, զինվորների և գյուղացիների դեպուտատների Խորհուրդների»[1]:

Գլխավորելով խորհուրդը, բոլշևիկներն իրենց ձեռքն առան նաև նրա՝ «Известия Бакинского Совета» լրագրի ղեկավարությունը: Համաձայնողական դեղին թերթուկից «Известия»-ն վերածվեց մարտական հեղափոխական լրագրի: Հոկտեմբերի

[1] «Бакинский Рабочий» № 67, 1917 г.

24-ին, այն օրը, երբ Հեռավոր Պետրոգրադում սկսվեց զինված ապստամբությունը բուրժուազիայի հետ՝ խորհուրդների իշխանության հաստատելու համար, «Известия Бакинского Совета»-ն գրում էր. «Չքավորագույն գյուղացիների ստրկացված, սովահար մասսաների, հեղափոխական զինվորների, նավաստիների և բանվորների ամբողջ համակրանքը, ամբողջ սերը Խորհուրդների կողմն է... Ամբողջ իշխանությունը պետք է անցնի ժողովրդի հսկայական, ճնշող մեծամասնության օրգաններին — Խորհուրդներին...»[1]:

Պրոլետարական Մեծ հեղափոխության նկատմամբ ունենալիք վերաբերմունքի հարցը Բաքվի խորհրդի նիստում քննարկվում էր հոկտեմբերի 31-ին: Բանվորներն ու զինվորներն այդ նիստում պահանջում էին անհապաղ աջակցել Պետերբուրգի ընկերներին և ամբողջ իշխանությունը հանձնել խորհուրդներին: Բոլշևիկները մտցրին մի բանաձև, վորն ընդունվել էր ձայների ճնշող մեծամասնությամբ: «Բաքվի ռայոնի Բանվորների և Զինվորների դեպուտատների ընդլայնված Խորհուրդը,—ասվում էր ընդունված բանաձևի մեջ,—մնալով Խորհուրդների իշխանության անհրաժեշտության և կոալիցիոն կառավարությանն անվստահություն տածելու մասին իր ունեցած նախկին վորոշման հողի վրա, ինչ վորոշմամբ վոր Խորհուրդը Պետերբուրգ համագումարի ուղարկեց իր պատվիրակներին, Պետերբուրգում և ամբողջ Ռուսաստանով մեկ տեղի ունեցող այս պայքարում վորոշակիորեն կանգնում է ստեղծվող ժողովրդական նոր իշխանության կողմը»[2]: Խորհուրդն իրեն խնդիր դրեց Բաքվում խորհրդային իշխանություն հաստատել և առաջարկեց անհապաղ մշակել խորհրդի գործադիր կոմիտեյի կողմից ամբողջ իշխանությունը վերցնելու նախագիծը:

Նոյեմբերի 2-ին Բաքվի խորհուրդը քննարկում էր այդ նախագիծը: Բուրժուական սպասավորները—մենշևիկները, էսերները ու դաշնակներն ի նշան բողոքի ընդդեմ խորհրդային իշխանության հաստատելուն դեմոնստրատիվ կերպով հեռացան խորհրդի նիստից: Բայց խորհրդի անդամների ճնշող մեծամասնությունը մնաց աշխատելու, արհամարհանքով պատասխանելով դավաճանների հեռանալուն: Շահումյանն ասաց, վոր մի խումբ ինտելիգենտների հեռանալը չի թուլացնի, այլ կամրացնի հե-

[1] «Известия Бакинского Совета» № 169, 1917 г.

[2] «Известия Бакинского Совета» № 175, 1917 г.

ղափոխությունը: Նա բանվորներին և զինվորներին կոչ արեց ավելի սերտորեն համախմբվելու գործկոմի շուրջը: Բուռն ծափահարություններով պատասխանեց Բաքվի խորհուրդն իր ղեկավարի խոսքերին:

Մյուս օրը Բաքվի խորհրդի Գործկոմը մի կոչով դիմեց բանվորներին և քաղաքի ամբողջ բնակչությանը: Նա հայտարարեց, վոր խորհուրդը վորոշել է իշխանությունն իր ձեռքը վերցնել: Գործադիր կոմիտեյի նպատակն է ամենից առաջ ամեն կերպ աջակցել նոր բանվորա-գյուղացիական կառավարությանը, պայքարը քայքայման և չարաշահման դեմ և քաղաքում հեղափոխական կարգ մտցնել: «Խորհուրդը հայտարարում է դրա հետ մեկտեղ, վոր նա անողոքաբար կպատժի հակահեղափոխական ելույթների ամեն տեսակի փորձերը մեր քաղաքում:

Կոչ ենք անում ձեզ, քաղաքացիներ, հանգիստ լինել և աջակցել իշխանության նոր հեղափոխական օրգաններին:

Կեցցե՛ Պետերբուրգի հեղափոխական պրոլետարիատն ու կայազորը: Կեցցե՛ նոր հեղափոխական կառավարությունը Լենինի գլխավորությամբ:

Կեցցե՛ Խորհուրդների իշխանությունը»[1]:

Բոլշևիկները բանվորներին և աշխատավորներին կոչ էին անում անողոք պայքար հայտարարել խորհրդից հեռացած մի խումբ մատնիչներին և դավաճաններին: Մենշևիկներն ու էսերները խորհրդի փոխարեն փորձում էին ստեղծել մի նոր կենտրոն,—նրանք կազմակերպեցին հասարակական անվտանգության կոմիտե: Այդ կոմիտեն Բաքվի հակահեղափոխության գլխավոր շտաբն էր: Մենշևիկ Ցրոլովի միջոցով՝ հակախորհրդային աշխատանքի համար կապիտալիստներից միջոցներ ստանալով, կոմիտեն լույս ընծայեց «Известия»-ն և կոչով դիմեց բնակչությանը, նրան կոչ անելով չենթարկվել խորհրդային իշխանությանը: Քաղաքում տարածվեցին մեծ քանակությամբ հակահեղափոխական թերթիկներ: Բայց բոլշևիկների հաստատուն դիրքը կոտրեց այդ դիմադրությունը: Մասսաների մեջ պարտություն կրելով, էսերների, դաշնակների և մենշևիկների լիդերները վերադարձան խորհուրդ: Հասարակական անվտանգության կոմիտեն ցրվեց: Նրանից հետո լիկվիդացիայի ենթարկվեց հասարակական կազմակերպությունների կոմիտեն:

Այն ժամանակ բուրժուազիան իր կենտրոնը փոխադրեց նոր

[1] «Бакинский Рабочий» № 76, 1917 г.

ընտրված քաղաքային դուման և ազգային խորհուրդները: Դումայի ընտրություններին՝ հոկտեմբերի 29-ին հանքային ռայոնները չէյին մասնակցում: Ձայների մեծամասնությունն ստացան բուրժուական կուսակցությունները: Դուման հրաժարվում էր ճանաչելու բանվորա-գյուղացիական կառավարությանը և բողոքում էր խորհրդի կողմից իշխանությունը խլելու դեմ: Դումայում «սրտառուչ» միաբանությամբ էյին հանդես գալիս ադրբեջանական և հայկական բուրժուազիայի ղեկավարները, առաջարկելով իշխանությունը ստեղծել քաղաքային դումայի և ազգային խորհուրդների ներկայացուցիչներից: Մենշևիկները միացան այդ առաջարկությանը, և այն ընդունվեց դումայի կողմից: Բաքվում նորից բուրժուական իշխանություն ստեղծելու այս փորձերից վոչինչ չստացվեց: Բուրժուազիան անզոր դուրս յեկավ խորհուրդներից իշխանությունը լեգալ ճանապարհով խլելու:

Սակայն Բաքվի խորհուրդն էլ դեռ քաղաքի լիիշխան տերը չէր դարձել: Առաջվա պես քաղաքային դումայի ձեռքում էյին գտնվում միլիցիան, ֆինանսները, պարենային գործը և այլն, իսկ ազգային խորհուրդները սեփական զինված ուժեր ունէյին: Բանվորների և զինվորների դեպուտատների Խորհրդի ներսում գործում էյին եսերները, մենշևիկները, դաշնակները, մուսավաթիստները:

1917 թվի դեկտեմբերին տեղի էյին ունենում Բաքվի խորհրդի վերընտրությունները: Բանվորների մասսաները պաշտպանում էյին խորհրդային իշխանությունը: Եսերները, դաշնակներն ու մուսավաթիստները ջանում էյին հարմարվել այդ տրամադրություններին: Նախընտրական ժողովներում նրանք իրենց ձևացնում էյին խորհրդային իշխանության կողմնակիցներ: Բանվորների և զինվորների մի մասը հավատաց նրանց: Բանվորների, զինվորների և նավաստիների դեպուտատների Խորհրդի մեջ բոլշևիկների կողքին ընտրվեցին եսերներ, մուսավաթիստներ, դաշնակներ և մենշևիկներ: Նրանք խորհրդի մեջ մտան ամենևին վոչ պրոլետարիատի դիկտատուրան պաշտպանելու համար, այլ նրա համար, վորպեսզի խարխլեյին այն ներսից: Եսերների ղեկավար Սահակյանն ուղղակի ասաց. «Մենք պետք է գնանք բոլշևիկների ստեղծած բոլոր հիմնարկությունները և այնտեղ վարենք մեր վարքագիծը»:

Ընկ. Միկոյանը նշում էր. «Բաքվի խորհրդի մեջ յեղած անկայուն մեծամասնությունը, նրա շրջանում նացիոնալիստական

կուսակցությունների, ինչպես դաշնակցության և մուսավաթի առկայությունը և մի շարք այլ պատճառներ հնարավորություն չտվին Բաքվի խորհուրդը Բաքվի իսկական և ամբողջական տերը դարձնելու: Չնայած իշխանությունը Բաքվի Խորհրդի ձեռքումն էր, սակայն մենշևիկներն ու եսերներն ունէյին մեր դեմ պայքարելու և ագիտացիայի հենց այնպիսի հնարավորություն, ինչպիսին վոր ունէյին առաջ: Մյուս կողմից—դաշնակցության և մուսավաթ նացիոնալիստական կուսակցություններն իրենց գործողություններում անսահման ազատություն ունենալով, իրենց ուժերը հավաքում, զինում և կազմակերպում էյին՝ ադրբեջանցի-թյուրքերի և հայերի միջև ազգային կոտորածի համար»[1]:

Բաքվի խորհուրդը չէր կարող խափանել բոլոր այդ ուժերի հակահեղափոխական գործունեությունը՝ առանց համառ զինված գոտեմարտի: Քայլ առ քայլ ամրապնդելով խորհրդային իշխանությունը Բաքվում, Բաքվի բոլշևիկները պատրաստվում էյին առաջիկա զինված բախումներին: Միաժամանակ նրանք յեռանդուն պայքար էյին մղում ամբողջ Ադրբեջանում և Անդրկովկասում խորհրդային իշխանություն հաստատելու համար:

Ադրբեջանի գավառներում իշխանությունը հոկտեմբերից հետո էլ տեղական կալվածատերերի ձեռքումն էր գտնվում: Նրանք իրենց իշխանությունն ոգտագործում էյին ամենից առաջ նրա համար, վորպեսզի խեղդեն ադրբեջանական գյուղացիության դասակարգային պայքարը: Հողի մասին խորհրդային իշխանության դեկրետի լուրը թափանցեց գյուղը: Գյուղացիներն սկսում էյին հասկանալ, վոր իրենք խաբված են իշխանության տեղական և անդրկովկասյան որգանների կողմից: Մինչև վերջին աստիճանի քայքայման և չքավորության հասնելով, նրանք ապստամբեցին ադրբեջանական ժողովրդի չարաննենգ կեղեքողների—բեկերի և խաների դեմ:

1918 թվի հունվարին Գանձակի նահանգում, վորտեղ առավել խոշոր բեկերի և խաների բներն էյին, շարժումն արագորեն ընդգրկեց գյուղացիական մասսաներին: Այդ՝ գյուղացիների դաժան վրեժն էր իրենց դարավոր կեղեքման համար: Նրանք այրում էյին կալվածատիրական կալվածքները, մորթում էյին բեկերի ընտանիքներին, վերցնում էյին նրանց գույքը: Կալվածատիրական հողերը խլելու ագիտացիան գյուղացիների մեջ մղում էյին

[1] «Բաքվի բոլշևիկների կազմակերպությունը 17—18 թվերին», «Из прошлого» ժողովածու, 1923 թ., էջ 32:

բոլշևիկ—«հումմեթիստները»։ Բայց շարժումն ամբողջովին տարերային բնույթ էր կրում։

Ստեփան Շահումյանը 1918 թվի հունվարին ապստամբության ռայոններումն էր։ Նա շատ էր զրուցում գյուղացիների հետ, տեղեկություններ հավաքեց կալվածատիրական հողատիրության և գյուղացիական շարժման մասին և դրանք հետագայում հրապարակեց մամուլում։ Շահումյանը նշում էր, որ շարժմանը անհրաժեշտ է տալ մեծ գիտակցականություն և կազմակերպվածություն, «բոլոր հողերի կոնֆիսկացիայի և դրանք գյուղացիական կոմիտեների տնօրինությանը հանձնելու»[1] խնդիր դնելով։

Հունվարի 31-ին Շահումյանը կոչով դիմեց Անդրկովկասի մուսուլմանական պրովինցիաների գյուղացիական բնակչությանը։

«Յեղբա՛յր—գյուղացինե՛ր։ Հասել է ժամը, երբ դուք պետք է ձեր վրայից վերջնականապես թոթափեք կալվածատեր-հողատերերի, խաների, բեկերի, աղալարների դարավոր լուծը... Բանվորա-գյուղացիական կառավարության անունից ես ողջունում եմ ձեր զարթոնքը և ձեր պայքարը։ Հողը պետք է պատկանի ժողովրդին, և այն, ինչ դուք հիմա կվերցնեք, ոչ ոք ուժ չի ունենա խլելու ձեզանից»[2]։

Սակայն Բաքվի պրոլետարիատը չկարողացավ գլխավորել այդ շարժումը և ադրբեջանական գյուղացիության հետ զոդում հաստատել։ Ադրբեջանական կալվածատերերին հաջողվեց ճնշել գյուղացիական ապստամբությունները և անդրկովկասյան ամբողջ հակահեղափոխության աջակցությամբ շարժումը ազգամիջյան կռվի փոխարկել։

III

Անդրկովկասի հակահեղափոխությունը գլխավորեցին վրացական նացիոնալ-մենշևիկները։ Քանի դեռ Ռուսաստանում գոյություն ուներ կալվածատերերի և կապիտալիստների կառավարությունը, նրանք կոչ էին անում պաշտպանելու այն և սահմանափակվում էին սեպարատիզմից, բայց բավական էր միայն, որ հաղթանակեր բանվորների և գյուղացիների հեղափոխական կառավարությունը, որ անդրկովկասյան բուրժուազիան և նրա սպասավորները բռնեին Խորհրդային Ռուսաստանից անջատվելու ուղին։ Նրանք կազմեցին այսպես կոչված Անդրկովկասյան կոմիսարիատ։

[1] «Кавказский Вестник СНК» № 1, 1918 թ. հունվարի 31-ին։

[2] Նույն տեղում։

Դա իրենից ներկայացնում էր Անդրկովկասի բոլոր բուրժուական կուսակցությունների մի բլոկ, որը կազմակերպվել էր խորհրդային իշխանության դեմ պայքարելու համար։ Ընկեր Ստալինը գրում էր. «Անդրկովկասյան կոմիսարիատը իր՝ Խան-Խոյսկու և Խասմամեդովի պես թաթարական բեկերով՝ մի կողմից, և Ժորդանիայի ու Գեգեչկորու պես վրացական ազնվական ինտելիգենտներով՝ մյուս կողմից, այդ հակախորհրդային կոալիցիայի կենդանի մարմնացումն է»[1]։

Կապերը խզելով Խորհրդային Ռուսաստանի հետ, Անդրկովկասյան կոմիսարիատն ամեն կերպ օգնում էր Դոնի և Կուբանի հակահեղափոխական ուժերին—Կալեդինին, Կարաուլովին և Ընկ. և դաշինք կնքեց օտարերկրյա բուրժուազիայի հետ։ Ինտերնացիոնալ խորհրդային իշխանությանը պատերազմ հայտարարելով, նա բռնեց ակտիվ նացիոնալիզմի ուղին։ Անդրկովկասյան կոմիսարիատի թևի տակ ամրապնդվում էին ազգային խորհուրդները։ Գլուխ էր բարձրացնում ադրբեջանական, հայկական և վրացական բուրժուազիայի և կալվածատերերի մարտնչող նացիոնալիզմը։ Անդրկովկասը գլորվում էր հակահեղափոխության և յերկպառակտչական պատերազմների անդունդը։

Բաքվի պրոլետարիատը համառ պայքար մղեց Անդրկովկասի հակախորհրդային կոալիցիայի դեմ։ «Հեղափոխական պրոլետարական Բաքուն,—գրում էր ընկեր Ստալինը,—որը Հոկտեմբերյան հեղափոխության առաջին իսկ օրերից ճանաչեց Խորհրդային իշխանությունը և անխոնջ պայքար է մղում Անդրկովկասյան կոմիսարիատի դեմ, քնելու չէր թողնում Անդրկովկասի պրոլետարիատին, նրան վարակիչ օրինակ և կենդանի փարոս ծառայելով, որը լուսավորում է դեպի սոցիալիզմ տանող ուղին»[2]։

Բաքվի բանվորների պայքարը համակրանք էր գտնում Անդրկովկասի աշխատավորական մասսաների մեջ։ Արագորեն աճում էր բոլշևիկների ազդեցությունը Կովկասյան բանակի զինվորների շրջանում, Թիֆլիսի և ուրիշ քաղաքների կայազորներում։

Դեկտեմբերին Թիֆլիսում նիստ ուներ Կովկասյան բանակի յերկրորդ համագումարը։ Կես տարի առաջ, առաջին համագու-

[1] «Правда» № 55, 1918 г.

[2] Ստալին, «Անդրկովկասի հակահեղափոխականները սոցիալիզմի դիմակի տակ»։ «Правда» № 56, 1918 թ.։

մարում բոլշևիկներն իրենցից ներկայացնում էին մի փոքրիկ խումբ, վորի հետ չէին ուզում հաշվի նստել: Այժմ, բանակի երկրորդ համագումարում, բոլշևիկներն ամենաբազմամարդ ֆրակցիան էին: Նրան գլխավորեց Ստեփան Շահումյանը: Համագումարը բացեց եսեր Դոնսկոյը: Նրան նախագահ էին նշում: Բայց նա չկարողացավ վերջացնել իր ներածական ճառը, վոր լսվեց Ստեփան Շահումյանի հանդիստ և հաստատուն ձայնը. «Այս մարդու վրա բանվոր դասակարգի մատնիչի մեծագույն հանցանք է ծանրացած: Նա դավադրության մեջ է մտել Կալեդինի և մյուս հակահեղափոխականների հետ: Այս պատմական րոպեյին, յերբ վորոշվում է Անդրկովկասում խորհրդային իշխանության լինելու կամ չլինելու հարցը, մեր շրջանում այսպիսի մատնիչը չի կարող հանդուրժելի լինել վոչ մի րոպե»[1]: Շահումյանին պաշտպանեց համագումարի ձախ թևը, և Դոնսկոյը, քաթանի նման գունատված, իջավ ետրադայից:

Ստեփան Շահումյանը համագումարում հրապարակեց մի շարք փաստաթղթեր, վորոնք լիովին հաստատում էին անդրկովկասյան իշխանությունների մասնակցությունը Հյուսիսային Կովկասի հակահեղափոխությանը: Համագումարը խիստ դատապարտեց Անդրկովկասյան կոմիսարիատի և Կովկասյան բանակի երկրամասային խորհրդի քաղաքականությունը: Համագումարն արտահայտվեց յերկրում անհապաղ խորհրդային իշխանություն ստեղծելու օգտին: Համագումարն ընտրեց Կովկասյան բանակի յերկրամասային խորհուրդ 100 հոգուց. նրանցից 52-ը պատկանում էին բոլշևիկներին և նրանց համակիրներին: Եսեր Դոնսկոյի փոխարեն յերկրային խորհրդի նախագահ ընտրվեց բոլշևիկ Գրիգորի Կորգանովը: Բանակի յերկրային նոր խորհուրդը Ժողովրդական Կոմիսարների Խորհրդին հայտարարեց, վոր ամեն կերպ կպաշտպանի խորհրդային իշխանությունը և՝ խաղաղության, հողի, բանվորական վերահսկողության մասին յեղած նրա դեկրետները:

Ընկ. Շահումյանն առաջարկում էր օգտագործել այդ ուժերը՝ Անդրկովկասում խորհրդային իշխանություն հաստատելու համար մղվող պայքարում: Դեկտեմբերի 6-ին նա հաղորդում էր Պետրոգրադ՝ ընկեր Ստալինին, վոր կայազորի մեծամասնությունը բոլշևիկների կողմն է: Շահումյանը մատնանշում էր, վոր

[1] «Бакинский Рабочий» № 214, 1925 թ. սեպտեմբերի 20-ին:

զորքերի և Բաքվի խորհրդի օգնությամբ կարելի յե տապալել հակահեղափոխական Անդրկովկասյան կոմիսարիատը:

Սակայն վրացական նացիոնալ-ուկլոնիստների ղեկավարող խումբը—Մախարաձեն, Ոկուջավան, Մդիվանին և մյուսները,—վորը հետագայում բացահայտորեն անցավ թշնամու բանակը, այն ժամանակ արդեն իր գործողություններով օգնում էր անդրկովկասյան հակահեղափոխությանը: Նա հանդես էր գալիս խորհրդային իշխանության համար զինված պայքար մղելու դեմ և հրաժարվեց Կովկասյան ֆրոնտի հեղափոխական զինվորներին Անդրկովկասում հակախորհրդային կոալիցիան տապալելու համար օգտագործելուց: Այդ խումբը Թիֆլիսի զինանոցը փաստորեն տվեց մենշևիկներին և նրանց պահանջով ցրեց Թիֆլիսի կայազորի պատգամավորական ժողովը: Նացիոնալ-ուկլոնիստների դավաճանական տակտիկայի պատճառով Վրաստանի բոլշևիկները չկարողացան օգտագործել հեղափոխական բարենպաստ սիտուացիան՝ իշխանությունը խլելու համար: Թիֆլիսի հենակետերն իրենց ձեռքն առան վրացական նացիոնալ-մենշևիկները:

Բայց Կովկասյան բանակի նոր յերկրային խորհուրդ ստեղծելը խառնում էր մենշևիկների խաղաթղթերը: Ահա թե ինչու, հենց վոր համագումարի պատվիրակները ցրվեցին տեղերը, մենշևիկներն ու եսերները, Թիֆլիսի խորհրդի օգնության վրա հենվելով, ինքնագլուխ կերպով իրենց հայտարարեցին բանակի յերկրային խորհուրդ, խլեցին շենքը և միջոցները: Բանակի խորհրդի հեղափոխական մեծամասնությունը շարունակում էր հաստատորեն կանգնած լինել իր դիրքին: Թիֆլիսում անհրաժեշտ հենարան չունենալով, նա իր աշխատավայրը տեղափոխեց Բաքու, «վորի պրոլետարիատն ու կայազորը ամբողջ իշխանությունը վերցրեց իր ձեռքը և ճանաչեց Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը»:

Եսեր-մենշևիկները չսահմանափակվեցին Կովկասյան բանակի յերկրային խորհուրդը գավթելով: Սպասվում էր զորացրում: Կովկասյան բանակի հեղափոխական զինվորները «պետք է անցնեյին Թիֆլիսի, հակախորհրդային կոալիցիայի մայրաքաղաքի միջով: Նրանք բոլշևիկների ձեռքում կարող էին Անդրկովկասի կոմիսարիատի գոյության համար լուրջ սպառնալիք լինել»[1]: Բուրժուազիան ահ ու դողով սպասում էր, թե յերբ զինվորները զենքը ձեռքներին կշարժվեն ֆրոնտից, մյուս կողմից, նա Կով-

[1] Ստալին, Անդրկովկասի հակահեղափոխականները սոցիալիզմի դիմակի տակ: «Правда» № 55, 1918 թ.:

կասյան բանակի զենքն ուզում էր օգտագործել իր ազգային զորամասերը զինելու համար։ Անդրկովկասյան կոմիսարիատը և յերկրային կենտրոնը վորոշեցին զինաթափել Կովկասյան բանակի զինվորներին։

Շամխոր կայարանի ռայոնը՝ յերկաթուղու գծի վրա գրոհագնացք ուղարկվեց։ Մուսավաթիստների զինված բանդաների հետ միասին հունվարի 7—10-ին նա հարձակվեց անցնող զինվորական էշելոնների վրա։ Հազարավոր զինվորներ գազանաբար գնդակահարվեցին մենշևիկ-մուսավաթական բանդաների կողմից։ Անակնկալ դավաճանական հարձակմանը դիմադրություն ցույց տալով, դիակների սարեր թողնելով, էշելոնները ճեղքում, առաջ էյին անցնում՝ Բաքվի ուղղությամբ։

Շամխորի գնդակահարության դեմ աշխատավորական մասսաների մեջ զայրույթի ալիք բարձրացավ։ «Ռուսաստանի Հանրապետության Կենտրոնական Կառավարության անունից,—գրում էր Ստեփան Շահումյանը,—յես բողոքում եմ այդ չլսված չարագործության դեմ։ Թափվում է այն զինվորների անմեղ արյունը, վորոնք յերեք տարվա ընթացքում անձնազոհությամբ պաշտպանում էյին Կովկասի սահմանները, ճակատամարտի դաշտում և Հայաստանի քաղաքներում թողնելով իրենց տասնյակ-հազարավոր յեղբայրներին, անգթորեն հափշտակվում է Ռուսաստանի Հանրապետությանը պատկանող զենքը։ Այս ծանր վոճրագործության մեղավորները չեն կարող անպատիժ մնալ»[1]։ Փաստերը ձեռքին՝ Շահումյանը մերկացրեց արյունալի դեպքերի մեղավորներին—Անդրկովկասյան կոմիսարիատի և յերկրային կենտրոնի ղեկավարներին—վրացական մենշևիկներ Ժորդանիային, Ռամիշվիլուն ու Ընկ. և ադրբեջանական խաներին ու բեկերին—Ջիաթխանովին, Ռուստամբեկովին, Ուսուբեկովին և ուրիշներին։

Մեկնելով Թիֆլիս, Ստեփան Շահումյանը ընկավ Շամխորի արյունալի դեպքերի ռայոնը։ Յերկաթուղային հաղորդակցությունը կտրված էր, և այն գնացքը, վորով նա գնում էր, բռնվեց Գանձակ կայարանում։ Կայարանը և քաղաքը լիքն էյին զինված մուսավաթական բանդաներով, վորոնք ուղղվում էյին Շամխորի և Ջեղամի կողմը։ Զորս կողմը արյան, վառոդի և պրովոկացիաների մթնոլորտ էր տիրում։ Շահումյանին հայտարարեցին, թե իբր զինվորների էշելոնները յենթադրում են հարձակվել քաղաքի վրա։ Շահումյանը պատասխանեց, վոր յերաշ-

[1] Ստեփան Շահումյան, Հոդվածներ և ճառեր, էջ 99։

խավորում է խաղաղ կերպով, առանց վորևէ եքսցեսների զինվորական էշելոնները Բաքու անցկացնել։ Նա փորձ արեց այդ նպատակով ճեղքել-անցնել զինվորների մոտ, բայց կայարանին մոտեցած գնացքը այն վագոնով, վորը Շահումյանը մտադիր էր օգտագործել ուղևորման համար, բռնվեց մուսավաթիստների բանդայի կողմից։

Այդ ժամանակ մոտեցավ յերկաթուղային մի բանվոր և Շահումյանին խորհուրդ տվեց անհապաղ հեռանալ կայարանից։ Շահումյանը գնաց քաղաք։ Գանձակը նման էր զինվորական բանակի։ Քաղաքի հայկական և ադրբեջանական մասի սահմանի վրա զինված մարդիկ էյին նստած։ Հաճախ հրացանաձգություն էր տեղի ունենում։ Ռիսկի յենթարկելով կյանքը, Շահումյանն անցավ քաղաքի հայկական մասը։ Այստեղ նա մնաց մի քանի օր, խորհրդակցություն ունեցավ տեղական բոլշևիկների հետ, հանդես էր գալիս ժողովներում, մերկացնելով մենշևիկների, մուսավաթիստների և դաշնակների հակահեղափոխական քաղաքականությունը։

Շահումյանը վորոշեց ինչ էլ վոր լինի ճեղքել-անցնել Թիֆլիս։ Բայց բոլոր ճանապարհները փակված էյին։ Մնում էր մի հնարավոր յելք—անցնել հարավային լեռնաշղթայով, Գանձակի և Ղազախի գավառներով։ Շահումյանն ընտրեց այս վտանգավոր, բայց միակ ուղին։ Վայրին լավ ծանոթ մի քանի մարդ պատրաստակամություն հայտնեցին ուղեկցել նրան։ Հունվարի 13-ին Շահումյանը ճանապարհ ընկավ։ Այս ամբողջ դժվարին ճամբան ձիերով և վոտքով տևեց տասը օր։ Մի քանի անգամ Շահումյանը և նրա ուղեկիցները գնդակոծման էյին յենթարկվում, բայց նրանց հաջողվեց Թիֆլիս հասնել։ Այստեղ Շահումյանն իմացավ իր նոր նշանակման մասին։

Դեկտեմբերի 16-ին Ժողկոմխորհը քննարկեց Կովկասի դրությունը։ Զեկուցեց ընկեր Ստալինը։ Նրա առաջարկությամբ Ժողկոմխորհը վորոշեց Ստեփան Շահումյանին նշանակել Կովկասի գործերի արտակարգ կոմիսար։ Դեկտեմբերի 18-ին ստորագրվեց մանդատը.

Վ կ ա յ ա կ ա ն

Սույն մանդատը ներկայացնող, բոլշևիկների կուսակցության Կենտրոնական Կոմիտեյի անդամ, Բանվորների և Զինվորների դեպուտատների Բաքվի Խորհրդի Նախագահ Ստեփան Շա-

հումյանը նշանակված է Կովկասի գործերի ժամանակավոր Արտակարգ Կոմիսար, մինչև Կովկասում յերկրային Խորհրդային իշխանության կազմվելը:

Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի
Նախագահ Վ. Ուլյանով (Լենին):
Ազգությունների Գործերի Ժողովրդական
Կոմիսար Ի. Ջուղաշվիլի-Ստալին:

Հենց նույն նիստում Ժողկոմխորհը վորոշեց Ստեփան Շահումյանի տրամադրության տակ դնել 500 հազ. ռուբ.: Փողը և Շահումյանի մանդատը հանձնվեցին կովկասյան հայտնի բոլշևիկ մարտիկ ընկ. Կամոյին: Մեծ դժվարություններով նա դրանք անցկացրեց այն տերիտորիայով, վորը գրավված եր սպիտակգվարդիական գեներալների կողմից, և հասցրեց Թիֆլիս, հանձնելով դրանք Շահումյանին:

Հունվարի 22-ին Ստեփան Շահումյանն անցավ Կովկասի գործերի կոմիսարի պարտականությունների կատարմանը: 1918 թ. հունվարի 31-ին լույս տեսավ «Кавказский Вестник СНК»-ի № 1-ը խորհրդային իշխանության դեկրետներով և Կովկասի բանվորներին ու գյուղացիներին ուղղված կոչով: «Խորհրդային իշխանությունը Կովկասում պետք է ստեղծվի անհետաձգելիորեն»,—գրում եր Շահումյանը:— Միայն այդ իշխանությունը «սերտորեն միավորվելով Ռուսաստանի խորհրդային կենտրոնների և Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի հետ՝ վերջ կդնի Կովկասի հակահեղափոխությանը և յերկրամասի բանվորական ու գյուղացիական բնակչությանը կտանի դեպի պայծառ ապագան, դեպի սոցիալիզմի թագավորությունը»[1]:

Ընկեր Ստալինը նշում եր, վոր դեպքերի ընթացքը կործանեց Անդրկովկասի հակահեղափոխականների բոլոր հաշիվները: «Ֆրոնտից վերադարձած՝ անդրկովկասյան զինվորները գյուղերում ագրարային հեղափոխություն տարածեցին: Վառվում եյին մուսուլմանական և վրացական կալվածատերերի դաստակերտները: Ճորտատիրական մնացորդների հիմքերը վճռական գրոհի յենթարկվեցին «բոլշևիկացած» գյուղացի-զինվորների կողմից... Հյուսիսից յեկող և բանվորներին նոր նվաճումներ բերող հեղափոխությունը բնականաբար Անդրկովկասի պրոլետարիատին բարձրացնում եր նոր պայքարի: Մենշևիկյան հակահեղափոխու-

1 «Кавказский Вестник СНК» № 1, 1918 թ. հունվարի 31-ին:

Совѣтъ Народныхъ
Комиссаровъ
Петроградъ
«12» Декабря 1917 г.
№ 305
87

УДОСТОВѢРЕНІЕ.

Предъявитель настоящаго мандата, членъ Центральнаго Комитета Партіи Большевиковъ, Предсѣдатель Бакинскаго Совѣта Рабочихъ и Солдатскихъ Депутатовъ, Степанъ Шаумянъ назначенъ временнымъ чрезвычайнымъ Комиссаромъ по Дѣламъ Кавказа впредь до образованія краевой Совѣтской власти на Кавказѣ.

Предсѣдатель Совѣта
Народныхъ Комиссаровъ В. Ульяновъ (Ленинъ).

Управляющій Дѣлами

Народный Комиссар по делам национальностей
И. Джугашвили-Сталин

թյան հենարան՝ քնած Թիֆլիսի բանվորներն անգամ սկսեցին հեռանալ Անդրկովկասյան կոմիսարիատից, արտահայտվելով Խորհրդային իշխանության օգտին»[1]:

Այսպիսի պայմաններում Անդրկովկասյան կոմիսարիատը մենշևիկների գլխավորությամբ բռնեց սպիտակ տեռորի ուղին: Գեգեչկորին հատուկ զեկուցում տվեց «Ս. Շահումյանին Կովկասի գործերի արտակարգ կոմիսար հայտարարելու կապակցությամբ քաղաքում հնարավոր եքսցեսների մասին»: Անդրկովկասյան կոմիսարիատը Շահումյանին առաջարկեց 24 ժամվա մեջ թողնել Անդրկովկասի սահմանները, սպառնալով ձերբակալությամբ: Այնուհետև Անդրկովկասյան կոմիսարիատը փակեց «Кавказский Рабочий», «Բրձոլա», «Բանվորի Կռիվ» բոլշևիկյան լրագրերը: Մենշևիկները կնքեցին նրանց խմբագրությունները, դրասենյակները և տպարանները: Մի քանի բոլշևիկներ ձերբակալվեցին, վրացի բոլշևիկների համար յեկան այնպիսի օրեր, վորպիսիք կես տարի առաջ, հուլիսյան դեպքերից հետո, հարկադրված յեղան ապրելու Պետրոգրադի բոլշևիկները:

Թիֆլիսի և ամբողջ Անդրկովկասի բանվորները խիստ բողոքով հանդիպեցին Անդրկովկասյան կոմիսարիատի ռեպրեսիաները: Թիֆլիսի յերկաթուղային արհեստանոցների մոտ 2 հազար բանվորները յերկարատև ծափահարություններով վողջունեցին Ստեփան Շահումյանին: Լսելով նրա զեկուցումը, նրանք միաբանորեն ընդունեցին, վոր Անդրկովկասյան իշխանության քաղաքականությունը «բուրժուա-կալվածատիրական համաձայնեցման քաղաքականություն է, վորը Ռուսաստանում արդեն ջընջված է Հոկտեմբերյան հեղափոխությամբ և իր գոյությունը շարունակում է միայն Անդրկովկասում»[2]:

Փետրվարի 10-ին Ալեքսանդրյան այգում տեղի ունեցավ բողոքի վիթխարի միտինգ ընդդեմ բոլշևիկյան լրագրերը փակելու և ձերբակալությունների: Բանվորների և զինվորների ճառերը, վորոնք լիքն եյին ատելությամբ դեպի հակահեղափոխական Անդրկովկասյան կոմիսարիատը, անհանգստացրին մենշևիկներին: Միտինգը հրջապատվեց, և բանվորների անզեն մասսան վայրենաբար գընդակահարվեց մենշևիկյան ջոկատի կողմից: Ինչպես հետո պարզվեց, փնտրում եյին Շահումյանին, բայց նա այնտեղ չեր: Դրա

[1] «Известия ВЦИК» № 72, 1918 г.

[2] «Кавказский Рабочий» № 21, 1918 г.

փոխարեն մենշևիկյան դահիճներն իրենց ձեռքերը ներկեցին բանվորների և զինվորների արյունով:

Հենց նույն օրը, փետրվարի 10-ին Ալեքսանդրյան այգում ճարճատող հրացանների և թնդանոթների նվագակցության տակ հանդիսավորությամբ բացվեց այսպես կոչված Անդրկովկասյան սեյմը: Նա կազմված եր Սահմանադիր ցրված ժողովի անդամներից—մենշևիկներից, մուսավաթիստներից, դաշնակներից, եսերներից ու կադետներից և իրենից ներկայացնում եր բանվորների և գյուղացիների չարանենգ թշնամիների հավաքածու: Սեյմի ցուցումներով գյուղացիական շարժումը ճնշելու համար ուղարկվում եյին պատժիչ արշավախմբեր: Նրանք անգթորեն հրկիզում եյին ամբողջ գյուղեր և գնդակահարում եյին հազարավոր գյուղացիների: Սեյմի թողտվությամբ ամբողջ Անդրկովկասում ազգամիջյան արյունահեղ կռիվ բորբոքվեց: Անդրկովկասի հակահեղափոխականներն ազգամիջյան սպանդով ուզում եյին խեղդել աշխատավորների դասակարգային պայքարը և ամրացնել իրենց դիկտատուրան: Հենց այս նպատակով նրանք սերտ կապ հաստատեցին միջազգային իմպերիալիզմի հետ:

Ընկեր Ստալինը նշում եր, վոր Կովկասի ագրարային հեղափոխությունը ցույց տվեց անդրկովկասյան «կառավարության» կտրվածությունը «իր» մասսաներից: «Գլխովին ջախջախված «ազգային կառավարությունները» «հարկադրված» եյին «իրենց» բանվորների և գյուղացիների դեմ դիմելու Արևմուտքի իմպերիալիստների, ամբողջ աշխարհի մանր ազգությունների դարավոր կեղեքիչների ու շահագործողների օգնությանը:

Այսպես սկսվեց տարբերկրյա միջամտության և ծայրամասերի օկուպացիայի շրջանը,—մի շրջան, վորը մի ավելորդ անգամ ել մերկացրեց «ազգային» ու մարզային «կառավարությունների» հակահեղափոխական բնույթը»[1]:

Իմպերիալիստական գիշատիչների յերկու խումբն ել—գերման-թուրքականը և անգլիականը—ամեն կերպ ձգտում եյին իրենց ձեռքը գցել Անդրկովկասը և հատկապես նավթային Բաքուն: Անդրկովկասի անջատումը Ռուսաստանից, Կովկասյան ֆրոնտի քայքայումը, իմպերիալիստական խմբավորումների գործակալներ՝ մուսավաթիստների, դաշնակների, եսերների ու մենշևիկնե-

[1] Ստալին, Մարքսիզմը և ազգային-գաղութային հարցը, եջ 55: Հայ. հրատ. եջ 89, 1938 թ.:

րի գործողությունները բարենպաստ պայմաններ եյին ստեղծում իրենց պլանների իրականացման համար։

Թուրքական իմպերիալիստները գործում եյին մուսավաթիստների ոգնությամբ։ Նրանք յենթադրում եյին իրենց յենթարկել Անդրկովկասը, Հյուսիսային Կովկասը և նույնիսկ Թուրքեստանը, պայմանով, վոր իրենց տիրապետությունները տարածվեյին մինչև Աֆղանստան։ Թուրքերը ձգտում եյին Ասիայում խաղալ հենց այն դերը, ինչ Յեվրոպայում փորձում եր խաղալ Գերմանիան։ Նրանք վորոշեցին, վոր իրենց պլաններն իրականացնելու համար մոմենտն ամենահարմարն է։

Անդրկովկասյան կոմիսարիատը զինադադար կնքեց Թուրքերի հետ, բայց համառորեն հրաժարվում եր ճանաչել Բրեստ-Լիտովսկի հաշտության պայմանագիրը, վորն ստորագրել եր Խորհրդային իշխանությունը։ Սեյմը վորոշեց ինքնուրույնորեն հաշտություն կնքել Թուրքիայի հետ։ Մարտի 1-ին Տրապիզոնում սեյմի պատվիրակությունն սկսեց հաշտության բանակցությունները։ Բանակցությունները տևեցին մի ամբողջ ամիս, բայց հաշտություն տեղի չունեցավ։ Թուրքերն սկսեցին հարձակվել, խլելով Արդահանը, Ղարսը և Բաթումը, սպառնալով Անդրկովկասի մնացած կետերին։

Անդրկովկասյան սեյմի ղեկավարները բողոքով հանդես յեկան։ Նրանք բարձրաձայն բղավում եյին, վոր չեն թողնի Անդրկովկասը թուրքական պրովինցիա դարձնել։ Նրանք հայտարարում եյին, վոր թուրքերին անդրկովկասյան սահմանից հետ կշպրտեն։ Բայց այդ ամենը մնաց դատարկ դեկլարացիա։ Մուսավաթիստները հրաժարվեցին այդ պատերազմի մեջ մասնակցություն ունենալուց, իսկ մենշևիկներն ու դաշնակները արագորեն անարգ գործարքի մեջ մտան թուրքական իմպերիալիզմի հետ։ Գերմանական և թուրքական իմպերիալիստները պահանջով ապրիլի 9-ին նրանք Անդրկովկասի «անկախություն» հռչակեցին։ Սեյմի պատվիրակներից մեկն ուղղակի ասաց, վոր դա նշանակում է «անցում ի ստրկություն Թուրքիայի»։ Թուրքիան անհապաղ ճանաչեց այդպիսի «անկախությունը»։ Բաթումում վերսկսվեցին հաշտության բանակցությունները։

Արդեն այն ժամանակ պարզ եր, թե ինչ հիման վրա յեր տեղի ունեցել համաձայնությունը։ Թուրքական իմպերիալիստները և անդրկովկասյան կառավարությունը պայմանավորվեցին լիկվիդացիայի յենթարկել իրենց տարաձայնությունները, վորպեսզի

համատեղ արշավ կազմակերպեն հեղափոխական Բաքվի—Անդրկովկասում խորհրդային իշխանության պատվարի դեմ։ Առանձին բերկրանքով եյին վողջունում այդ համաձայնությունը մուսավաթիստները։ Նախքան անդրկովկասյան պատվիրակության Բաթում մեկնելը մուսավաթիստ Ռասուլբեկովը խոսում եր՝ Արևելքից բոլշևիկների հարձակման մասին և վոր «չկա այլ յելք, քան ոտարերկրյա միջամտության դիմելը, տվյալ դեպքում մենք կարող ենք ուրախանալ հանգամանքների այսպիսի յերջանիկ զուգադիպությունից, վոր արտաքին այն ուժը, վորը պետք է գա այստեղ, մեր բարեկամական և յեղբայրական ուժը՝ Թուրքիան կլինի»։

Անդրկովկասի «անկախություն» հռչակելու որը սեյմի անդամներից մեկը գուշակեց թուրքական իմպերիալիզմի և նրա «անկախ» դաշնակիցների գործողությունների գլխավոր ուղղությունը։ «Դուք պատերազմով կգնա՞ք Բաքվի վրա»—հարցրեց նա, դիմելով մուսավաթիստներին։ Ի պատասխան լսվեց՝ «Կգնանք»։—«Դուք կգնաք նվաճելու Բաքուն և դրանով կկատարեք առաջին իմպերիալիստական ակտը… բայց դուք այն չեք կարողանա ինքներդ կատարել, և հարկադրված կլինեք կատարելու Թուրքիայի ոգնությամբ, դուք թուրքական զորքերի ոգնությամբ կգնաք նվաճելու Բաքուն…»[1]։

Անդրկովկասյան կոմիսարիատի և սեյմի ղեկավարները միայն թուրքական իմպերիալիստների հետ չէ, վոր գործարքի մեջ եյին մտնում։ Կապերը խզելով Խորհրդային Ռուսաստանից և պատերազմ հայտարարելով պրոլետարական Բաքվին, նրանք Անդրկովկասը տալիս եյին մի այնպիսի գիշատչի ստրկացմանը, վորպիսին Գերմանիան եր։

Գերմանական իմպերիալիստներն ուզում եյին զավթել Անդրկովկասը, Ուկրաինան, Հյուսիսային Կովկասը, վորպեսզի, Խորհրդային Ռուսաստանի շուրջը թշնամական ողակ ստեղծելով, խեղդեյին խորհրդային իշխանությունը և Ռուսաստանը դարձնեյին գերմանական իմպերիայի գաղութներից մեկը։ Անդրկովկասում նրանց հրապուրում եյին հումքային հսկայական ռեսուրսներն ու ամենից առաջ Բաքվի նավթը։ Վերջապես, Անդրկովկասը նրանք դիտում եյին վորպես բազա՝ Արևելքում իրենց վիթխարի դիտավորություններն իրականացնելու համար։ «Հարկավոր է մեզ համար առմիշտ ամրացնել Բաքվի և Պարսկաստանի վրայով դե-

[1] «Пролетарская Революция» № 11, 1924 г.

պի Միջագետք ու Արաբիա տանող ամենաանվտանգ ուղին»,— ասում էր գերմանական ռազմամոլների ներկայացուցիչը:

Այսպիսի լայն նպատակներ նշելով, Գերմանիան, սակայն, չէր կարող Անդրկովկաս տեղափոխել ռազմական խոշոր ուժեր: Այդ պատճառով նա փոքր ինչ այլ ճանապարհներով էր գործում: Գերմանական իմպերիալիստներն իրենց դաշնակցուհի—սուլթանական Թուրքիային էին հրում Անդրկովկասում ակտիվ գործողությունների: Գերմանիայի աջակցությամբ Թուրքիան սկսեց հարձակումը Անդրկովկասի վրա: Հարձակումը հաջող էր: Այդպիսի մոմենտին Թիֆլիս ժամանեց գերմանական գերագույն հրամանատարության միսիան: Նրա ղեկավար գեներալ ֆոն Կրեսսը խոստացավ Անդրկովկասը «պաշտպանել» Թուրքերի հետագա կորզումներից, դրա փոխարեն պահանջելով Գերմանիային հանձնել յերկաթուղիների շահագործումը և Անդրկովկասի վրա գերմանական հովանավորություն հայտարարել: Երբ Բաթումի հաշտության կոնֆերենցիայում բանակցությունները կանգնեցին փակուղու առաջ, վրացական մենշևիկները դիմեցին գերմանական իմպերիալիստների օգնությանը: Լյուդենդորֆը ողջունեց մենշևիկների դիմումը: «Այդ մեզ տալիս էր Կովկասյան հումքին Թուրքիայից անկախ մոտենալու հնարավորություն, ինչպես նաև Թիֆլիսի միջով անցնող յերկաթգծի վերահսկողությունը»,—ասում էր նա:

Գերմանիայի «միջնորդությունը» հետագայում վերջացավ նրանով, վոր նա Անդրկովկասի մեծ մասը իր գաղութի վերածեց: Գերմանիան իր հովանավորության տակ առավ «դեմոկրատական» Վրաստանը: Այնտեղ մտան կայսերական Գերմանիայի զորքերը: Վրացական մենշևիկներ՝ Ջխենկելին, Գեգեչկորին և ուրիշները գնացին Բեռլին, վորպեսզի գերմանական կայսրին հավատացնեին իրենց խորը նվիրվածությունը:

Հենց նույն ժամանակ Անդրկովկասում ակտիվ կերպով գործում էր անգլիական իմպերիալիզմը: Անգլիան վախենում էր, վոր Գերմանիան ու Թուրքիան կխլեն Բաթում—Բաքու յերկաթգիծը, կգրավեն Բաքվի նավթային ռայոնի հսկայական պաշարները և շատ կմոտենան Թուրքեստանի բամբակին, իսկ այնտեղից նաև Հնդկաստանին: Այնինչ Կովկասի և Միջին Ասիայի գրավումը անգլիական իմպերիալիստների նվիրական յերազանքն էր:

Խորհրդային Բաքվի դեմ պայքարելը մտավ ընդդեմ պրոլետարիատի դիկտատուրայի՝ Անտանտի ինտերվենցիայի պլանի մեջ: 1917 թվի դեկտեմբերին Անգլիայի և Ֆրանսիայի պայմանա-

գիրը բաշխում էր նրանց միջև գործողությունների ռայոնները: Ուրիշ կետերի հետ մեկտեղ անգլիական իմպերիալիստներին էր տրամադրվում Կասպից ծովը—Բաքուն: Անգլիական լրագրերը գրում էին, վոր չի կարելի սահմանափակվել Սիբիր կամ Մուրմանսկ զորքեր ուղարկելով, անհրաժեշտ է խոշոր ուժեր պատրաստել՝ դրանք Հյուսիսային Պարսկաստանում և Կովկասում ոգտագործելու համար: «Հնարավոր է, վոր այդ ուղղությունը կարևորագույնն է դաշնակիցների համար»:

1918 թվի սկզբից Անգլիան ակտիվ գործողությունների անցավ: Միջագետքում նա ուներ մինչև 90 հազ. զինվոր, բայց սիրտ չէր անում թուլացնել այդ բանակը: Բանը սահմանափակվեց նրանով, վոր Անդրկովկաս ուղարկվեց անգլիական ռազմական մի միսիա գեներալ Դենստերվիլի գլխավորությամբ: Նրա տրամադրության տակ դրվեց սպաների և զինվորների մի փոքր խումբ, ավտոմեքենաներ և միքանի հարյուր հազար ֆունտ ստեռլինգ փողով: Հունվարի 27-ին Դենստերվիլը շարժվեց դեպի Պարսկաստան, վորպեսզի այնտեղից ծովային ճանապարհով Բաքու հասներ:

Փետրվարի 11-ին Դենստերվիլի ավտոմեքենաները հասան Համադան, 16-ին Ղազվին, 18-ին՝ Ենզելի: Այնտեղ Դենստերվիլը անսպասելի արգելքի դեմ առավ: Ենզելիում էր գտնվում բոլշևիկորեն տրամադրված ռուս զորքերի կայազորը և քաղաքի գործերը կառավարում էր ռազմա-հեղափոխական կոմիտեն: Զինվորների յերկհազարանոց ամբոխը շրջապատեց անգլիացի «հյուրերին»: Դենստերվիլը հարկադրված յեղավ ներկայանալ հեղկոմ: Այնտեղ նրան արգելեցին խորհրդային Բաքու անցնելու վորևէ փորձ անել:

Անգլիական գեներալը սկզբում այնուամենայնիվ յենթադրում էր ճեղքել-անցնել Բաքու, բայց հեռագրային և հեռախոսային գիծը, նավերը, նավթամթերքները—այս ամենը հեղկոմի տնորինության տակ էր: Նավահանգիստը խնամքով պահպանվում էր: Ափերի մոտ կանգնած էր հրետաձիգ նավակը, վորը պատրաստ էր ուզած րոպեին կրակ բանալ: Այսպիսի պայմաններում Դենստերվիլը վորոշեց նահանջել: Փետրվարի 20-ի լուսաբացին անգլիացիները դուրս հանեցին իրենց ավտոմոբիլները և, գողունի կերպով, փախան Ենզելիից: Փետրվարի 25-ին նրանք վերադարձան Համադան: Այստեղ, Պարսկաստանի հին քաղաքում, Դենստերվիլը վորոշեց հիմնավորվել, վորպեսզի, ամրապնդվելով, Անդրկովկաս սողոսկելու նոր փորձ աներ:

Բաղդադից ոժանդակ ուժեր սպասելով, Դենստերվիլը կապվեց Պարսկաստանում մնացած ռուսական զորքերի մնացորդների հետ: Գեներալ Բարաթովը նրան հանձնեց արժեքավոր ռազմական գույք, պարենի և խարի պաշարներ, տրանսպորտ, հեռագրային սարքավորում և այլն: Դենստերվիլը իրեն մոտ ծառայության ներգրավեց խորհրդային Բաքվից փախած ռուս սպաներին, վորոնք նրան ինֆորմացիա եյին տալիս Բաքվի դեպքերի մասին: Սպաներից միքանիսին նա առաջադրանքներով հետ ուղարկեց Բաքու:

1918 թվի մարտին անգլիական եքսպեդիցիայի վիճակը խիստ վատացավ: Պարսկաստանից գնացին ռուսական վերջին զորքերը: Մնում եր գնդապետ Բիչերախովի կազակային ջոկատը, բայց նա ևս մտադիր եր Ռուսաստան վերադառնալ: Իսկ այդ ժամանակ Պարսկաստանը բռնված եր «ջանգալիյցիների» շարժումով, վորն ուղղված եր անգլիացիների դեմ: Դենստերվիլին մնում եր միակ մի հույս—Պարսկաստանում պահել Բիչերախովի ջոկատը: Այդ հաջողվեց: Դենստերվիլի և Բիչերախովի միջև կնքվեց մի գաղտնի պայմանագիր, վոր ինքը Դենստերվիլին անվանում եր գերազանց: Բիչերախովը համաձայնվում եր չհեռանալ Պարսկաստանից և առանց անգլիացիների համաձայնության վոչ մի գործողություն չձեռնարկել: Իսկ անգլիացիները դրա փոխարեն նրան խոստանում եյին ֆինանսական աջակցություն ցույց տալ:

Բիչերախովը ծախվեց անգլիական իմպերիալիստներին: Նրանց գլխավոր նպատակն եր՝ հարձակում նախապատրաստել խորհրդային Բաքվի վրա: Դաշնակիցների առաջին ռազմական գործողությունը Ղազվինից դեպի Կասպից ծով տանող ուղին մաքրելն եր:

IV

Մինչդեռ միջազգային իմպերիալիզմը և անդրկովկասյան հակահեղափոխությունը պատրաստվում եյին գավթել պրոլետարական Բաքուն, Բաքվի խորհուրդն անշեղորեն ընդլայնում և ամրապնդում եր իր իշխանությունը: Զնայած այլ կուսակցությունների նշանակելի ազդեցությանը, Բաքվի խորհուրդը ղեկավարում եյին բոլշևիկները: Ընկ. Ստեփան Շահումյանի Թիֆլիս մեկնելու կապակցությամբ հունվարի 13-ին խորհրդի նիստում դրվեց խորհրդի նախագահի հարցը: Տրվեց մի թեկնածություն—Ալյոշա Ջափարիձե: Ծափերի տարափի տակ Ջափարիձեն գրավեց նախագահի տեղը: Փոքրիկ ներածական ճառում նա ասաց, վոր իր լավագույն տարիներն անց ե կացրել Բաքվի պրոլետարիատի շրջանում, մասնակից ե յեղել նրա և՛ հաղթանակներին, և՛ պարտություններին: Ջափարիձեն խորհրդին հավաստիացրեց, վոր բոլոր ուժերը կգործադրի՝ արդարացնելու համար Բաքվի բանվորների վստահությունը:

Ամրապնդելով և ընդլայնելով իր իշխանությունը, Բաքվի խորհուրդը սիստեմատիկորեն սահմանափակում եր քաղաքային դումայի գործունեյությունը: Խորհուրդն իր վրա վերցրեց ֆինանսական հարցի լուծումը: Նա կենտրոնից փող ստացավ և բաշխեց այն, Բաքվի բոլոր բանկերում նշանակելով իր կոմիսարներին:

Բաքվի խորհուրդն իր ձեռքն առավ պարենավորման գործը: Սկզբում խորհրդին կից կազմվեց 4 բանվորից և 3 զինվորից պարենավորման հանձնաժողով, վորը պետք ե վերահսկեր գոյություն ունեցող պարենային կազմակերպությունների աշխատանքը: Բայց պարենային վարչության ղեկավարները փաստորեն սաբոտաժի եյին յենթարկում հանձնաժողովի աշխատանքը, չարաշահումներ եյին թույլ տալիս, խափանում եյին հաստատ նորման և սակագները: Անդրկովկասի պարենային կազմակերպությունները փոխեցին հացի բեռների ուղղությունը, վորպեսզի «Բաքվի խորհրդին սովով ստիպեն ճանաչելու Անդրկովկասյան կոմիսարիատը»: Այսպիսի պայմաններում խորհուրդը վորոշեց, վոր չի կարելի միայն վերահսկողությամբ սահմանափակվել: Մարտի 4-ին Ջափարիձեն հայտարարեց, վոր ամբողջ պարենային գործն այսուհետև խորհրդի ձեռքն ե անցնում:

Բաքվի խորհուրդն անցավ դատական հին որգանների լիկվիդացիայի գործին: Մշակվեց հեղափոխական տրիբունալի կանոնադրությունը: Եսերներն ու մենշևիկները փրփուրը բերաններին յելույթ եյին ունենում խորհրդի նիստում, պաշտպանելով հին դատարանը և դեմ դուրս գալով տրիբունալի կանոնադրությանը: Նրանք բղավում եյին, վոր վոտնահարվում ե ազատությունը, վոր չեն նախատեսվում իրավական նորմաները և այլն: Բայց խորհուրդը մերժեց բուրժուական պաշտպանների առաջարկությունը և հաստատեց Հեղափոխական տրիբունալի կանոնադրությունը, վորը մշակել եյին բոլշևիկները: Միաժամանակ Բաքվի խորհուրդը վորոշեց իրեն յենթարկել միլիցիան: «Անթույլատրելի յե, վորպեսզի վորևիցե զինված ուժ գտնվի ուրիշ որգանի տեսչության տակ»,—ասում եր Ջափարիձեն:

Բաքվի խորհուրդը զբաղվում եր նաև բանվորների տնտեսա-

կան դրության հարցերով։ Կոլեկտիվ պայմանագրի վերջնական խմբագրության համար կազմված հանձնաժողովում տեղի էին ունենում կատաղի վեճեր, վորոնք վոչ մի արդյունքի չէին հասցնում։ Բաքվի խորհուրդը վորոշեց նավթարդյունաբերողներին ստիպել դադարեցնելու սաբոտաժը և ճանաչելու կոլեկտիվ պայմանագիրը։ Խորհուրդը հրատարակեց պայմանագիրը վորպես պարտադիր վորոշում այն խմբագրությամբ, վոր առաջարկում էին բանվորները, և հայտարարեց արտադրության վրա բանվորական վերահսկողություն սահմանելու մասին։ Բայց դրանից հետո էլ նավթարդյունաբերողները շարունակում էին սաբոտաժի յենթարկել խորհրդի վորոշումները։ Ինժեներների և տեխնիկների միության մեջ ծվարած բուրժուական մասնագետների վերնախավն ամեն կերպ ոգնում էր իր տերերին։ Այդ վերնախավը հայտարարեց, վոր վերահսկողության մասին դեկրետի դեմ կկռվի բոլոր միջոցներով, «ընդհուպ մինչև բոլոր ինժեներների և տեխնիկների կոլեկտիվ հեռանալը՝ բոյկոտ հայտարարելով այդ միջոցին չենթարկված անձերին»։

Արդեն այն ժամանակ բարձրացվեց խորհրդի տնտեսական քաղաքականության կենտրոնական հարցը—նավթային արդյունաբերության ազգայնացման հարցը։ Ընկեր Ֆիոլետովը հայտարարեց, վոր «յեթե արդյունաբերողները չեն համաձայնվի մեր պահանջներին, ապա այն ժամանակ մենք ինքներս մեր ձեռքը կվերցնենք հանքերի կառավարումը»։ Սակայն ազգայնացում իրականացնելն այն ժամանակ հնարավոր չէր։ Ինչպես և ուրիշ հարցերում, Բաքվի խորհուրդը չէր կարող նավթային արդյունաբերության մեջ լիիրավ տեր լինել, քանի դեռ նրա կողքին շարունակում էին գոյություն ունենալ քաղաքային դուման, ազգային խորհուրդները և Բաքվի բուրժուազիայի այլ հենակետերը, քանի դեռ Բաքվի խորհուրդը չուներ սեփական զինված ուժ։

Բաքվում խորհրդային իշխանությունն ամրապնդելու համար մղվող պայքարում հսկայական դեր էր խաղում բոլշևիկյան մամուլը։ «Бакинский Рабочий» լրագիրը, Բաքվի բոլշևիկների մարտական օրգանը, Բաքվի պրոլետարիատի հսկայական սերն էր վայելում։ 1918 թվի սկզբից լրագրի պատասխանատու խմբագիրն էր Արսեն Ամիրյանը։

Արսեն Ամիրյանը ծնվել է 1881 թվին Բաքվում և այստեղ անցկացրել համարյա իր ամբողջ կյանքը։ Գիմնազիական նստարանից Ամիրյանը ընդհատակյա քաղաքական խմբակների անդամ է։ Լինելով Կիևի համալսարանի ուսանող, նա ակտիվ կերպով

աշխատում էր ուսանողական շարժման մեջ։ 1902 թվին ուսանողական անկարգություններին մասնակցելու համար Ամիրյանը հեռացվեց համալսարանից։ Այդ ժամանակվանից նա ամբողջովին նվիրվեց հասարակական-գրական աշխատանքին։ 1910 թվին Արսեն Ամիրյանը մտավ բոլշևիկյան կուսակցության մեջ և այն ժամանակվանից մնում էր լենինյան կուսակցության հավատարիմ մարտիկը։ Ամիրյանը տաղանդավոր հեղափոխական ժուռնալիստ էր։ Համաշխարհային պատերազմի տարիներին հայկական մամուլում նա զետեղեց շովինիզմի դեմ ուղղված մի շարք փայլուն հոդվածներ, վորոնց մեջ մերկացնում էր հայկական բուրժուազիայի իմպերիալիստական էությունը և բացահայտում էր հայկական դաշնակցական ինտելիգենցիայի լակեյական բնությունը։

Ամիրյանը սակավ էր յելույթ ունենում ժողովներում և կազմակերպիչ ու հռետոր չէր։ Նրա տրիբունան լրագիրն էր։ Ամիրյանը չէր սիրում պերճախոս ֆրազներ և խորամիտ նախադասություններ։ Նա գրում էր յեռանդուն, սուր, պարզ լեզվով։ Խոր իմաստով և ներքին կրակով լեցուն նրա կարճ ֆրազներն անվանելիորեն էին ազդում ընթերցողի վրա։ «Бакинский Рабочий»-ն նա վարում էր բոլշևիկյան անհաշտելիության վոգով։ Հեղափոխական ի՛նչ կրքոտությամբ էր հարձակվում Ամիրյանը բուրժուական նացիոնալիստների վրա, զզվելի դավաճանների և մատնիչների—էսէռների ու մենշևիկների վրա։ Ի՛նչ անխորտակելի ուժով էր նա մերկացնում Անդրկովկասի կոմիսարիատի և սեյմի ղեկավարներին։ «Մոլեգին Արսեն»,—ասում էին նրա մասին։

Մեծ դեր էր խաղում նաև մյուս լրագիրը—«Известия Бакинского Совета»-ն։ Նրա խմբագիրն էր Սուրեն Հովսեփյանը, ընդունակ և լավ պատրաստված մի ընկեր։ Հովսեփյանը ծնվել է 1890 թվին Գանձակում։ Հաջող ավարտելով գիմնազիան, նա մտավ Մոսկվայի համալսարանը։ Ուսանողական կյանքի ժամանակաշրջանում Հովսեփյանը Մոսկվայի բոլշևիկյան կազմակերպության ակտիվ աշխատողն է։ 1913 թվին—բոլշևիկյան «Правда» լրագրի և «Просвещение» ժուռնալի աշխատակիցն է։ 1914 թվին Հովսեփյանը մոբիլիզացիայի յենթարկվեց բանակ և ուղարկվեց Պարսկաստան։

Փետրվարյան հեղափոխությունից հետո Հովսեփյանը վերադարձավ Գանձակ, վորտեղ ակտիվ կերպով աշխատում էր տեղական բոլշևիկյան կազմակերպության մեջ։ 1918 թվի սկզբին Բաքվի խորհուրդը Հովսեփյանին նշանակեց «Известия Бакинского

Совета»-յի խմբագիր: Սուրեն Հովսեփյանը բոլշևիկորեն էր ղեկավարում «Известия»-ն: Մի անգամ չէ, որ էսերներն ու մենշևիկները հարձակվում էին նրա վրա «լրագրի բոլշևիկյան ուղղության» համար, բայց հատկապես այդ՝ լավագույն գովասանք էր Հովսեփյանի համար:

Բոլշևիկյան կուսակցության ցուցումներին հետևելով, յերկու լրագիրն էլ առանձին համառությամբ դնում էին խորհրդային զինված ուժեր ստեղծելու հարցը: Առանց դրան Բաքվի խորհուրդը չէր կարող տիրել իշխանության ամբողջ լիակատարությանը և ձեռնամուխ լինել սոցիալիստական միջոցառումներն իրականացնելու գործին:

Դեռ 1917 թվի դեկտեմբերին Բաքվի խորհրդի զինված ուժի հարցը դրվեց առանձին սրությամբ: Սկսվեց զորացրումը: Այն զինվորները, վորոնց վրա էին հենվում բոլշևիկները Հոկտեմբերին հաջորդող առաջին ամիսներին, ցրվում էին իրենց տները, իսկ Կարմիր գվարդիան դեռ կազմակերպման ստադիայում էր գտնվում: Սակայն 1918 թվի սկզբին դրությունը փոխվեց: Կովկասյան բանակի յերկրորդ համագումարից հետո, 1917 թվի դեկտեմբերի վերջին օրերին, բանակի ռազմա-հեղափոխական կոմիտեն տեղափոխվեց Բաքու: Նա իրեն յենթարկեց Բաքվի կայազորը և ամբողջ յեռանդով ձեռնամուխ յեղավ Կարմիր բանակի կազմակերպման գործին:

Կովկասյան բանակի ՌՀԿ նախագահը Գ. Կորղանովն էր: Նա ծնվել է 1886 թվին Թիֆլիսում: Քութայիսի գիմնազիայում լինելու ժամանակ Գրիշա Կորղանովը ծանոթացավ հեղափոխական մարքսիզմին: Ցույցին և աշակերտների գործադուլին մասնակցելու համար Կորղանովին հեռացրին գիմնազիայի 8-րդ դասարանից: Նա տեղափոխվեց Բաքու, միջնակարգ դպրոցի էքստերն քննություն տվեց, իսկ այնուհետև մտավ Մոսկվայի համալսարանի պատմաբանասիրական ֆակուլտետը, միաժամանակ շարունակելով հեղափոխական գործունեությունը: 1911—1912 թվականներին Կորղանովը կրեց զինապարտությունը ցարական բանակի հրետանային մասերում, 1912 թվին վերադարձավ ուսման: 1914 թվին համալսարանն ավարտելուց հետո Կորղանովին նորից մոբիլիզացիայի յենթարկեցին բանակ և ուղարկեցին կովկասյան ֆրոնտ: Կովկասյան բանակի զինվորների շրջանում նա հեղափոխական պրոպագանդա յեր մղում, պարզաբանելով համաշխարհային սպանդի իսկական նպատակները:

Հենց վոր Փետրվարյան հեղափոխությունը կատարվեց, Կորղանովը հեղափոխական բանակային կազմակերպությունների գլուխ անցավ: 1917 թվի մայիսին զինվորները նրան վորպես պատգամավոր ուղարկեցին Թիֆլիս՝ Կովկասյան բանակի առաջին համագումարին, վորտեղ նա ղեկավարում էր բոլշևիկյան ֆրակցիան: Ֆրակցիան փոքրաթիվ էր, նրան հետապնդում և հալածում էին էսերներն ու մենշևիկները: Բայց Կորղանովը համարձակ կերպով մերկացնում էր բուրժուազիային և նրա սպասավորներին, պահանջելով իշխանության անցումը պրոլետարիատի և չքավորագույն գյուղացիության ձեռքը: Կորղանովը խիստ բողոքում էր, յերբ էսեր-մենշևիկները, իրենց ձեռքը վերցնելով յերկրամասային խորհուրդը, նրան մասնակցելուց հեռացրին բանակի հեղափոխական մասի ներկայացուցիչներին: Միքանի ամսից հետո դրությունը փոխվեց: Կովկասյան բանակի յերկրորդ համագումարից հետո յերկրամասային խորհրդի նախագահ ընտրվեց Գրիգորի Կորղանովը:

Բաքու տեղափոխվելու ժամանակից սկսած Կորղանովը բոլոր ուժերը տալիս էր Կարմիր բանակ ստեղծելուն, ռազմական մեծ ընդունակություններ հայտաբերելով: Համարձակ մարտիկ և ղեկավար, միշտ առաջավոր գծով գնացող, կոմունիզմի գործին անսահմանորեն նվիրված, բոլշևիկ, համեստ և ուշադիր ընկեր— Գրիգորի Կորղանովը զինվորների շրջանում արժանի հեղինակություն և հարգանք էր վայելում: Թուրքական-մուսավաթիստական բանդաների դեմ մղված զինված պայքարում Կորղանովը ղեկավարում էր խորհրդային զորքերի բոլոր մարտական գործողությունները, անընդհատ գտնվելով ֆրոնտում:

ՌՀԿ քարտուղարը բոլշևիկ Իվան Մալիգինն էր: Նա Պյատիգորսկում գտնվող 113-րդ պահեստային գնդի զինվոր էր: Հեղափոխության առաջին ամիսներին ընկ. Անջիևսկու հետ միասին Մալիգինը՝ Պյատիգորսկի բոլշևիկյան կազմակերպության և բանվորների ու զինվորների դեպուտատների տեղական խորհրդի կազմակերպիչն ու ակտիվ աշխատողն էր: 1917 թվի ամառվանից Մալիգինն աշխատում էր Գրոզնիում, բոլշևիկների շուրջը համախմբելով նավթի քաղաքի աշխատավորներին: Վորպես Գրոզնի քաղաքից տրված պատվիրակ նա մեկնում է Պետրոգրադ՝ մարզային խորհուրդների ներկայացուցիչների համառուսաստանյան խորհրդակցությանը: Վերադառնալով, Մալիգինը զեկուցեց կոռնիլովյան խռովության մասին: Զեկուցումը դիմավորվեց յերկա-

րատև ծախահարություններով, և Գրոզնու խորհուրդն ընդունեց Մալիգինի առաջարկած բոլշևիկյան բանաձևը:

Մալիգինը մասնակցում էր Կովկասյան բանակի առաջին և յերկրորդ համագումարների աշխատանքներին: Մալիգինի ճառը առաջին համագումարում՝ շարադրում էր բոլշևիկյան տակտիկայի հիմունքները: Նա մերկացրեց «հեղափոխական պրոգրեսիվ բուրժուազիայի մասին» յեղած մենշևիկյան թեզը և կոչ արեց «ստեղծել մեծամասնություն, այսինքն՝ պրոլետարիատի և գյուղացիության դրած իշխանություն»: Յերկրորդ համագումարում Մալիգինին ընտրեցին Կովկասյան բանակի ՌՀԿ-ի անդամ: Փոխադրվելով Բաքու, Մալիգինը մեծ աշխատանք էր տանում Կարմիր բանակի կազմակերպման գործում, միաժամանակ աշխատակցելով բոլշևիկյան մամուլում: «Бакинский Рабочий»-ի էջերում հաճախ կարելի յեր տեսնել «Զինվոր Մալիգին» համեստ ստորագրությամբ հոդվածներ: Մալիգինը գրում էր զանազան հարցերի շուրջը, բայց ամենից ավելի Կարմիր բանակ ստեղծելու մասին: «Քաղաքացիական պատերազմի նոր ֆրոնտը,—գրում էր Մալիգինը փետրվարի 20-ի «Бакинский Рабочий»-ի մեջ,—պահանջում է նաև նոր բանակ—դասակարգային բանակ: Այդ բանակի հիմքը պետք է լինեն քաղաքային բանվորները, վորպես առավել կազմակերպվածներ և գիտակիցներ, և գյուղերից այն գյուղացիները, վորոնք արդեն գիտակցել են, վոր անհուսալի յե իրենց բարեկեցությունը կապիտալի տիրապետության օրով կառուցելը... Հարկավոր է շտապ աշխատանք տանել սոցիալիստական բանակ կազմակերպելու գծով»[1]:

Խորհրդային կարմիր զորամասերը նոր եյին կազմավորվում, բայց հին զինվորների մի մասը մնաց ծառայելու նոր զորքերում: Զինվորներից մեկը պատմում էր, թե ինչպես Բալաջարի կայարան, վորտեղ կուտակվել եյին ֆրոնտից վերադարձող էշելոնները, յեկել եյին Բաքվի խորհրդի ներկայացուցիչները: «Շտապ կերպով թռուցիկ միտինգ գումարեցին, վորտեղ մեզ հաղորդեցին, վոր Բաքվում խորհրդային իշխանություն է հաստատված... Յեվ յերբ մեզ առաջարկեցին մտնել Կարմիր գվարդիայի շարքերը, ճակատայինները սկսեցին միահամուռ կերպով ցուցակագրվել»: «Մենք բոլորս, վոր հենց նոր եյինք վերադարձել ֆրոնտից, մեր կաշվի վրա կրել եյինք քիթուպռունգ ջարդելը և ստորացումը Նիկոլայան վոսկեուսադրավորների կողմից,

[1] «Бакинский Рабочий» № 40, 1918 թ. փետրվարի 20:

ընկանք միանգամայն այլ իրադրության մեջ, մի իրադրության, վորտեղ բոլորը վոչ թե խոսքով, այլ գործով ընկերներ եյին: Կարծես թե կարդալով մեր մտքերը, Շահումյանը միշտ հիշեցնում էր մեզ. «Դուք այժմ հին բանակի զինվորներ չեք, այլ ձեր իսկ բանվորա-գյուղացիական բանակի մարտիկներ»[1]:

Կարճ ժամկետում Բաքվում կազմավորվեցին նոր զորամասեր՝ բոլշևիկյան դրուժինա, ինտերնացիոնալ գունդ, մի քանի մարտկոց, հեծյալ հարյուրյակ, Կարմիր գվարդիայի ջոկատներ: Հրամանատարական կազմի կադրեր պատրաստելու համար կազմակերպվեց հատուկ հրահանգչական դպրոց: Նրա աշխատանքը ղեկավարում էր բոլշևիկ Սոլնցևը: Սոլնցևը սպա յեր: Նա 28-րդ հրաձիգ դիվիզիայի վաշտի հրամանատար էր: Այդ վաշտի զինվորները պատմում եյին, թե ինչ քիչ էր նմանվում Սոլնցևը մյուս սպաներին: Միշտ զգայունորեն և հոգատարությամբ վերաբերվելով զինվորներին, նա նրանց մտերիմը և սիրելին էր: Յերբ բորբոքվեց հեղափոխությունը, Սոլնցևը հաստատապես հայտարարեց. «Յես ձեզ հետ եմ, ընկերներ, յես բանվորների և գյուղացիների կողմն եմ», և կանգնեց բոլշևիկների շարքերում: Սոլնցևը տված խոսքին հավատարիմ մնաց:

1918 թվի կեսերին Բաքվի խորհրդային զինված ուժերը հաշվվում եյին արդեն 6 հազար մարդ: Ստեփան Շահումյանը նշում էր, վոր «մի ինչ-վոր յերկու-յերեք ամսվա ընթացքում Կովկասյան բանակի Ռազմա-հեղափոխական կոմիտեն ամենայեռանդուն աշխատանք ծավալեց... Յերբ մենք մեզ իշխանություն հայտարարեցինք, ապա մենք չունեյինք վոչ մի հրացան, վորպեսզի Կարմիր գվարդիա և Կարմիր բանակ ստեղծեյինք: Միայն ՌՀԿ-ի ջանքերի շնորհիվ մենք տիրեցինք ռազմական ապարատին, և միայն այդ բանը մեզ հնարավորություն տվեց մեզնից ուժ ներկայացնելու»:

Կարմիր բանակ ստեղծելով, Բաքվի խորհուրդը վճռական գոտեմարտի յեր պատրաստվում: Անդրկովկասի բոլոր քաղաքներից միայն Բաքուն էր բարձր պահում խորհուրդների կարմիր դրոշը: Հակախորհրդային կոալիցիային հաջողվեց զավթել համարյա մնացած ամբողջ յերկրամասը: Հակահեղափոխականները Անդրկովկասն անջատեցին Խորհրդային Ռուսաստանից և սերտ դաշինք կնքեցին գերմանո-թուրքական իմպերիալիզմի հետ: Թիֆլիսը—յերկրամասի գլխավոր քաղաքը—նրանց ձեռքումն էր

[1] «Бакинский Рабочий» № 214, 1925 թ. սեպտեմբերի 20:

գտնվում։ Այդպիսի պայմաններում Շահումյանի ղեկավարած՝ Անդրկովկասի բոլշևիկները իբրև իրենց կարևորագույն խնդիր դնում եյին խորհրդային իշխանության ամրացումը Բաքվում։ Դրանից եր կախված ամբողջ յերկրամասում պրոլետարական հեղափոխության բախտը։ Շահումյանը վորպես Կովկասի գործերի արտակարգ կոմիսար իր գործունեյության կենտրոնը տեղափոխեց Բաքու։ 1918 թվի փետրվարի 14–ին Լենինը Ստեփան Շահումյանին գրում եր․

«Թանկագին ընկե՛ր Շահումյան։

Շատ շնորհակալ եմ նամակի համար։ Մենք հիացած ենք ձեր հաստատակամ և վճռական քաղաքականությամբ։ Կարողացեք միացնել դրան ամենազգույշ դիվանագիտություն, վորն, անպայման, թելադրվում ե ներկայիս դժվարագույն դրությամբ,—և մենք կհաղթենք։

Դժվարություններն անսահման են․ առայժմ մեզ փրկում են միայն իմպերիալիստների միջև գոյություն ունեցող հակասություններն ու կոնֆլիկտները և պայքարը։ Կարողացեք ոգտագործել այդ կոնֆլիկտները—առայժմ պետք ե դիվանագիտություն սովորել։ Լավագույն վողջույններ և ցանկություններ և վողջույն բոլոր բարեկամներին»[1]։

Փետրվարի վերջին Շահումյանը վերադարձավ Բաքու։ Նա հարկադրված յեղավ թաքնվել վրացական մենշևիկների հետապնդումից։ Նա փոխեց իր արտաքին տեսքը․ սափրվեց և զինվորի շինել հագավ։ Թուրքական էշելոնների հետ միասին Շահումյանը յեկավ Բաքու։ Մի խումբ զինվորների հետ նա՝ գործկոմի նիստի ժամանակ մտավ Բաքվի խորհրդի շենքը։ Կարմիր-գվարդիականների պահակը ժամապահ եր կանգնած։ Շահումյանն ուզեց մտնել Ջափարիձեյի կաբինետը, վորտեղ նիստ կար։ Բայց նրան ներս չթողին։ Նա ավելի մոտ յեկավ կարմիր-գվարդիականներին և հարցրեց․ «Բայց մի՞թե դուք ինձ չճանաչեցիք։ Չե՞ վոր յես Շահումյանն եմ»։ Շահումյանն իսկապես անճանաչելի յեր։

Յերբ ընկեր Շահումյանը մտավ Ջափարիձեյի սենյակը, նիստը վերջանալու վրա յեր։ Նեղվածք եր, վորովհետև մեծ քանակությամբ մարդիկ եյին հավաքվել։ Շահումյանը յերկու զինվորի հետ ներս մտավ և կանգնեց դռան մոտ։ Վոչ վոք նրա վրա ուշադրություն չդարձրեց։ Ջափարիձեն նստած եր կողքը դեպի դռան

[1] Լենին, հ. XXII, եջ 254։ Հայ. հրատ. եջ 325։

տրած և ուզում եր քվեարկել մտցված առաջարկությունը։ Այդ ժամանակ խոսք ուզեց Շահումյանը։ Ջափարիձեն դեմքով շուռ յեկավ Շահումյանի կողմը և, ճանաչելով Շահումյանին, վազեց ու գրկեց նրան։ Ժողովը մի րոպե հուզվեց։ Ջափարիձեն անմիջապես խոսքը տվեց Շահումյանին։

Բաքվի բանվորներն ու աշխատավորները բերկրանքով դիմավորեցին Շահումյանի վերադարձը։ Ի դեմս նրա նրանք վողջունում եյին կենտրոնական խորհրդային կառավարությունը, բողոք արտահայտելով Անդրկովկասի կոմիսարիատի և սեյմի հակահեղափոխական քաղաքականության դեմ։ Փետրվարի 26–ին Շահումյանը հանդես յեկավ Կասպիական ռազմական նավատորմի ժողովում։ Նավաստիները վողջունեցին Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի գործունեյությունը և կոչ արին պաշտպանել նրա իշխանությունը «վորպես բանվոր և գյուղացիական դասակարգի միակ հենարանն ու պաշտպանությունը»[1]։

Մարտի 2–ին Բաքվի խորհրդի նիստում Շահումյանը զեկուցեց Անդրկովկասում տիրող քաղաքական դրության մասին։ Խորհուրդը Շահումյանին դիմավորեց յերկարատև ծափահարություններով և նրան ընտրեց Բաքվի խորհրդի պատվավոր նախագահ։

Բաքվի խորհուրդը վորոշեց․ «ոգնության գալ ամբողջ Անդրկովկասի յեղբայրական բանվոր դասակարգին ու գյուղացիությանը և նրանց հետ մեկտեղ տապալել սեյմի հակահեղափոխական և հանցագործ իշխանությունը»։ Բաքվի խորհուրդը խնդիր դրեց՝ «Բաքուն վերածել Անդրկովկասում խորհրդային իշխանության համար պայքարելու հենակետի»։ «Խորհուրդը հայտարարում ե, վոր ինքն իրենից չի թաքցնում Բաքվի պրոլետարիատի դրության ամբողջ դժվարությունը Բաքու քաղաքում, վորը Անդրկովկասի սեյմի իշխանությունը չճանաչող միակ կետն ե Անդրկովկասում։ Բաքուն հակահեղափոխական իշխանության վոտնձգությունից, բանվորների, զինվորների ու նավաստիների դեպուտատների Բաքվի խորհուրդը ջախջախումից պաշտպանելու համար անհրաժեշտ ե Խորհրդային իշխանության հետագա ուժեղացում և ամրապնդում, ինչին կարելի յե հասնել, մի կողմից, Բաքվում բանվորական վերահսկողության մասին, Բաքվի նահանգում հողի մասին մի շարք դեկրետներ կիրառելով և այլն... Անհրաժեշտ ե Խորհրդի շուրջն ստեղծել ռեալ ուժ և, հենվելով

[1] «Бакинский Рабочий» № 50, 1918 թ. մարտի 6(19)։

Ռուսաստանի հեղափոխական իշխանության և Հյուսիսային Կովկասի խորհուրդների վրա, պաշտպանել իրեն և իր ազդեցությունն ու իր հզորությունը տարածել Անդրկովկասի ամբողջ տերիտորիայի վրա»[1]։

Բաքվի բոլշևիկները հասկանում էին, որ զինված գոտեմարտ սպասվում է ամենից առաջ հենց Բաքվում, որտեղ մուսավաթիստներն ու դաշնակներն անընդհատ ընդլայնում և ամրապնդում էին իրենց ուժերը։ Այդ պայքարին պատրաստվելով, բոլշևիկները մերկացնում էին բուրժուա-նացիոնալիստական կուսակցությունների պրովոկացիոն դերը և սիստեմատիկորեն ինտերնացիոնալ աշխատանք էին տանում ադրբեջանցիների և հայերի մեջ։ Բալախանում՝ բոլոր ազգությունների բանվորների մեծ ժողովում զեկուցումով հանդես եկավ Միկոյանը։ Պահանջելով անհապաղ ցրել Անդրկովկասի կոմիսարիատը և յերկրամասում ամբողջ իշխանությունը տալ խորհուրդներին, ժողովը հայտարարեց. «Մենք, մուսուլման, լեզգի, վրացի, հայ և ռուս բանվորներս, մենք բոլորս յեղբայրներ ենք, մենք չենք յենթարկվի ունևոր դասակարգերի և նացիոնալիստների պրովոկացիային և մեր ձեռքերը չենք բարձրացնի իրար դեմ»։ Միկոյանի զեկուցումով հենց այդպիսի մի ժողով տեղի ունեցավ նաև Սաբունչիում։

Մարտի 2-ին Բաքվի խորհուրդը հանձնարարեց «Գործադիր կոմիտեյին՝ հոգալ Բաքվի նահանգի մուսուլման բանվորների ու մուսուլման գյուղացիության մեջ և ամբողջ Անդրկովկասում տարվող հատկապես ագիտացիոն և կազմակերպական աշխատանքի մասին, պարզաբանել նրանց, որ Բաքվի պրոլետարիատը մուսուլման բանվորներին ու գյուղացիներին իր յեղբայրներն է համարում և կողմնակից է ամբողջ աշխատավորական ժողովրդի յեղբայրության ընդհանուր իդեալների՝ առանց ազգությունների խտրության»[2]։ Ալյոշա Ջափարիձեն հետագայում ասում էր. «Մեր ամբողջ նախկին քաղաքականությունը հանգում էր այն բանին, որպեսզի գյուղացիներին կազմակերպելու համար անհրաժեշտ ժամանակ շահեյինք։ Մենք գիտեյինք, որ մենք հարկադրված կլինենք դուրս գալու հակահեղափոխության դեմ, և պատրաստվում եյինք դրան»[3]։

1918 թվի մարտին մուսավաթիստների գլխավորած ադրբե-

[1] «Бакинский Рабочий» № 51, 1918 թ. մարտի 7(20)։

[2] Նույն տեղում։

[3] «Известия Бакинского Совета» № 63, 1918 г.

ջանական հակահեղափոխությունը հարձակման անցավ։ Մարտի 17-ին Վայրենի դիվիզիայի զորամասերը բռնեցին «Եվելինա» շոգենավը, Ադրբեջանի գավառների հակահեղափոխության օգնության հասնելու համար։ Լսելով Վայրենի դիվիզիայի գործողությունների մասին, խորհրդի Գործկոմը նավահանգիստը ջոկատ ուղարկեց։ Զինված մուսավաթիստները նրան հրակոցներով դիմավորեցին։ Միքանի մարդ սպանվեց և վիրավորվեց։ Խորհրդային ջոկատին գնդակոծելը հակահեղափոխական լկտի մարտակոչ էր։ Բաքվի խորհուրդը «Եվելինային» առաջարկեց անհապաղ զենքը հանձնել։ Վայրենի դիվիզիայի զորամասերը հարկադրված յեղան յենթարկվել։

Սակայն, չնայած դրան, մարտի 18-ի առավոտվանից մզկիթներում սկսվեցին բողոքի միտինգներ ընդդեմ կատարված զինաթափման։ Մուսավաթական հռետորները պահանջում եյին վերադարձնել զենքը և, ազգային կրքեր հրահրելով, ադրբեջանական բնակչությանը գրգռում եյին Բաքվի խորհրդի դեմ։ Բաքվի խորհուրդը բանակցությունների մեջ մտավ մուսավաթական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ։ Բայց դեռ բանակցությունների ժամանակ մուսավաթիստները կրակ բացին խորհրդային զորքերի վրա և զինված կռիվ սկսեցին Բաքվի փողոցներում։ Քաղաքի թաղերը ծածկվեցին խրամատներով։

Մարտի լույս 19-ի գիշերը կազմվեց Բաքվի հեղափոխական պաշտպանության Կոմիտե։ Նրա մեջ մտան ընկ. ընկ. Շահումյանը, Կորգանովը, Ջափարիձեն և ուրիշները։ Կոմիտեն իրեն հայտարարեց Բաքվի բոլոր խորհրդային կազմակերպությունները միավորող բարձրագույն ռազմա-քաղաքական օրգան։ Կոմիտեն մի կոչով դիմեց քաղաքի բնակչությանը։ «Խորհրդային իշխանության թշնամիները Բաքվում գլուխ են բարձրացրել,—գրված էր կոչի մեջ,—բանվորների, զինվորների և նավաստիների դեպուտատների Բաքվի խորհրդի Գործադիր կոմիտեն և Կովկասյան բանակի ռազմա-հեղափոխական կոմիտեն բոլոր ընկերներին և քաղաքացիներին հայտարարում են, որ խորհրդային իշխանությունը Բաքվում վտանգի մեջ է, և բոլորին կոչ են անում զենքը ձեռքին պաշտպանել այն ժողովրդի թշնամիներից... Մուսուլմաններին և հայերին, բանվորներին և բոլոր ազգությունների դեմոկրատական տարրերին մենք կոչ ենք անում չենթարկվելու շովինիստական տարրերի պրովոկացիային և ներկա վճռական մոմենտին անվեհեր կերպով, զենքը ձեռքին կանգնելու Բաքվի հեղա-

փոխական պաշտպանության կոմիտեյի կարմիր դրոշի տակ»[1]։

Հեղափոխական պաշտպանության կոմիտեն իր տրամադրության տակ ուներ բոլշևիկյան դրուժինան, Կարմիր գվարդիան, ինտերնացիոնալ գունդը և ուրիշ զորամասեր։ Կասպիական կարմիր նավատորմի նավաստիները նույնպես խորհրդային իշխանության կողմը դուրս յեկան։ Հայկական ազգային խորհուրդն սկըզբում բանակցություններ եր վարում մուսավաթիստների հետ համատեղ պայքար մղելու մասին ընդդեմ խորհրդային իշխանության, բայց համաձայնությունը չկայացավ։ Հայ բանվորների մասսան պաշտպանեց խորհրդային իշխանությանը, և դաշնակ ղեկավարները հարկադրված յեղան միանալու նրանց։ Բոլշևիկները հասկանում եյին, վոր դաշնակցական զորամասերի մասնակցությունը խորհրդային իշխանության կողմը՝ պայքարին մասամբ կարող ե ազգային բնույթ տալ։ Բայց խորհրդային իշխանությունը ուժ չուներ, վորպեսզի ինքնուրույն կերպով ջախջախեր մուսավաթական հակահեղափոխությունը կամ հանդես գար մուսավաթական-դաշնակցական միավորված զորամասերի դեմ։ Բաքվում խորհրդային իշխանությունը փրկելու և ամրապնդելու համար բոլշևիկները հարկադրված յեղան ոգտագործելու հայկական ազգային ջոկատները։

Յերեք որվա ընթացքում, մարտի 18—20-ը, Բաքվի փողոցներում կատաղի ռազմական գործողություններ եյին տեղի ունենում։ Խորհրդային ջոկատների վրա կրակում եյին կտուրներից, պատուհաններից, անկյուններից։ Հարկ եր լինում կռվով վերցնել յուրաքանչյուր տուն։ Առանձնապես հերոսաբար եյին կռվում բոլշևիկյան դրուժինան և Կարմիր գվարդիայի ջոկատները։ Նրանցից մեկին ղեկավարում եր ընկ. Միկոյանը։ Նա իր հետևից տարավ կարմիր-գվարդիականների փոքրիկ խումբը և «առա՛ջ» կոչելով նետվեց դեպի բերդի դարպասը։ Խիզախորդներին դիմավորեց հրացանային դաժան կրակը։ Թշնամու դեմ մղած գոտեմարտում կարմիր-գվարդիականներից մեկը սպանվեց, իսկ ընկ. Միկոյանը վիրավորվեց վոտքից։ Ջոկատը նահանջեց բերդի դարպասի մոտ յեղած քարե բարիկադի հետևը։ Բայց կռիվը շարունակվում եր։ Ոգտագործելով բոլոր ուժերը—հետևազորը, հրետանին, ավիացիան, հեղափոխական պաշտպանության կոմիտեն վճռական հարձակում կազմակերպեց հակառակորդի վրա։

[1] Աղբ. Կ(բ)Կ Կենտկոմի միացյալ կուսարխիվ Շահումյանի անվան ինստիտուտին կից, հավաքածու 18, գործ 825, թ. 1։

Հակառակորդի կարևորագույն օբյեկտները հրետանու ռմբակոծման յենթարկվեցին։

Խորհրդային ջոկատների հարձակումը և հրետանու գործողությունը սարսափ և շփոթվածություն մտցրին մուսավաթիստների բանակը։ Սկզբում նրանք հույսը դրել եյին ամենամոտակա գյուղերի և Դաղստանի ոգնության վրա։ Բայց ոգնություն չեր գալիս, մուսավաթական ջոկատների դիմադրությունը թուլանում եր։ Այն ժամանակ մուսավաթիստներն առաջարկեցին բանակցություններ սկսել զինադադարի մասին։ Հեղափոխական պաշտպանության կոմիտեն նրանց ուլտիմատում ներկայացրեց, այն ե՝ անառարկելիորեն ճանաչել Բաքվի խորհրդի իշխանությունը, Բաքվից դուրս բերել Վայրենի դիվիզիան և միջոցներ ձեռք առնել մինչև Թիֆլիս և Պետրովսկ տանող յերկաթգիծը բանալու համար։ Ծանր պարտություն կրելով, մուսավաթիստներն ընդունեցին ուլտիմատումը։ Կռիվը վերջացավ խորհրդային իշխանության հաղթությամբ։

Մարտյան որերի ադրբեջանցի բանվորների մեծամասնությունը չպաշտպանեց մուսավաթական հակահեղափոխությունը։ Միայն Սուրախանիում մուսավաթիստներին հաջողվեց գրավել իշխանությունը։ Նրանց դեմ զինված ջոկատ ուղարկվեց։ Այն կազմված եր գլխավորապես դաշնակներից, վորոնք սկսեցին նեղել ադրբեջանցի բանվորներին։ Այն ժամանակ հեղափոխական պաշտպանության կոմիտեն գործուղեց այնտեղ ընկ. Ազիզբեկովին։ Նա արագորեն վերականգնեց հեղափոխական կարգը և ինտերնացիոնալ միասնությունը բանվորների միջև։ Ռոմանիում, Բալախանիում, վորտեղ բանվորների մեծամասնությունը ադրբեջանցիներ եյին, հաջողվեց միանգամայն կանխել արյունհեղությունը։ Ամենուրեք նորմալ կերպով շարունակվում եր աշխատանքը։ «Մուսուլմանական դեմոկրատիայի ճնշող մեծամասնությունը,—գրում եր «Бакинский Рабочий»-ն,—նացիոնալիստների հետևից չգնաց, իսկ Բաքվի ռայոնում կենտրոնացած մուսուլմանական պրոլետարիատը վճռականապես յերես դարձրեց նրանցից...»[1]։

Բաքվի խորհրդի մարտյան հաղթությունը վերջնականապես ամրապնդեց խորհրդային իշխանությունը Բաքվում։ Ժողկոմխորհի անունով ուղղված դեկուցման մեջ ընկ. Շահումյանը գրում եր. «Անդրկովկասը մտել ե խորհրդային իշխանության

[1] «Бакинский Рабочий» № 63, 1918 թ. ապրիլի 12-ին։

համար ակտիվ զինված պայքար մղելու շրջանը... Խորհրդային իշխանությունը Բաքվում՝ միշտ օդում էր կախված" մուսավաթական նացիոնալիստական կուսակցությունների դիմադրության հետևանքով: Այդ կուսակցությունները ֆեոդալական (բեկերի և խաների) ինտելիգենցիայի գլխավորությամբ՝ ամրապնդվելով Գանձակում և Թիֆլիսում, մենշևիկների սուր և յերկչոտ քաղաքականության շնորհիվ վերջին ժամանակը դարձել են շատ ագրեսիվ նաև Բաքվում: Յեթե նկատի ունենանք նրանց քաղաքական նպատակները—Անդրկովկասի անջատումը Ռուսաստանից և Թուրքական պրոտեկտորատին յենթարկվելը, պարզ է, վոր նրանց հաղթությունը Բաքվում կհասցներ Անդրկովկասի կորուստին Ռուսաստանի համար... Մենք պետք է հակահարված տայինք: Մենք օգտվեցինք առիթից՝ մեր հեծյալ ջոկատի վրա զինված հարձակում գործելու առաջին փորձից և հարձակում սկսեցինք ամբողջ ֆրոնտով մեկ»:

Ապրիլի 8-ի նիստում[1] Բաքվի խորհուրդը հավանություն տվեց հեղափոխական պաշտպանության կոմիտեյի քաղաքականությանը: Խորհուրդը լավ գիտեր, վոր չի կարելի հանգստանալ: Հաղթված, բայց չվոչնչացված թշնամու հետ նոր գոտեմարտեր են սպասվում, իսկ «յեթե մենք ռեալ ուժ չունենանք—ասում էր Ջափարիձեն,—ապա ինչքան էլ վոր լավ հաշտություն կնքելու լինենք, այն միայն թղթի կտոր կլինի»[2]:

V

Մարտյան հաղթանակի հետևանքով Բաքվի խորհուրդը քաղաքի լիիշխան տերը դարձավ: Նա լայնորեն ծավալեց իր հեղափոխական աշխատանքը: Հեղափոխական պաշտպանության կոմիտեն շարունակում էր գոյություն ունենալ մարտյան կռիվներից հետո էլ: Զազրելի պրովոկատորները բնակչության մեջ լուրեր եյին տարածում, իբր թե Բաքվում ազգային կոտորած է սպասվում: Այդ կապակցությամբ սկսվեցին մասսայական մեկնումները քաղաքից: Հեղափոխական պաշտպանության Կոմիտեն արգելեց տղամարդկանց ազատ մեկնումը Բաքվից: «Ո՞ւր եք դուք փախչում,—գրում էր կոմիտեն:—Մի՞թե դուք ուզում եք բոլորովին լքել Բաքու քաղաքը, վորը հսկայական նշանակություն ունի ռուսական ամբողջ արդյունաբերության համար... Հեղափոխական պաշտպանության Կոմիտեն չի կարող թույլ տալ այդպիսի խայտառակ փախուստ, այդպիսի դավաճանություն»[1]: Վճռական միջոցներով Կոմիտեն դադարեցրեց մասսայական մեկնումները քաղաքից:

[1] Տվյալ և հետագա թվականները տրվում են նոր տոմարով:

[2] «Бакинский Рабочий» № 62, 1918 թ. ապրիլի 11-ին:

Հեղափոխական պաշտպանության Կոմիտեն փակեց «Баку» և «Каспий» բուրժուական լրագրերը և մենշևիկների «Наш Голос» լրագիրը: Կոմիտեն ցրեց Բաքվի քաղաքային դուման: Կոմիտեյի դեկրետում ասված էր. «Նկատի ունենալով այն, վոր այժմյան քաղաքային դուման լիովին անհամապատասխան է Բաքու քաղաքի կամքին և շահերին, և նկատի ունենալով, վոր դուման քաղաքային ինքնավարության բարդ և պատասխանատու գործը վարելու անընդունակություն է ցուցաբերել,—Բաքվի քաղաքային դուման ցրել: Ինքնավարության ֆունկցիաները հանձնել բանվորների, զինվորների և նավաստիների դեպուտատների խորհրդին, վորը իրեն կից կհիմնի քաղաքային տնտեսության հատուկ օրգան:

Կոմիտեյի անդամներ՝ Շահումյան, Կորգանով»:

Կոմիտեն բոլոր նավթարդյունաբերողներին, բանկերին, վարկային և առևտրա-արդյունաբերական ընկերություններին և ուրիշներին տուրքադրեց 50 միլիոն ռուբլի գումարով «Կարմիր բանակ կազմակերպելու և վերջին դեպքերի ժամանակ տուժած չքավորությանը օգնելու համար»: Կապիտալիստները հրաժարվեցին պահանջվող գումարը մուծելուց, այն ժամանակ Բաքվի խորհուրդը վորոշեց ձերբակալել առավել խոշոր նավթարդյունաբերողներին: Շահումյանը, Ջափարիձեն և Կորգանովը Պաշտպանության կոմիտեյի անունից մանդատ հանձնեցին Անաստաս Միկոյանին՝ ձերբակալություններ կատարելու համար: Նավթարդյունաբերական ֆիրմաների հինգ ներկայացուցիչներ—Թաղիանոսովը, Ղուկասովը և ուրիշները ձերբակալվեցին: Այդ՝ հարկ յեղած ներգործությունն արեց: Հիսուն-միլիոնանոց հարկը լիովին մուծվեց:

Կոմիտեն զբաղվեց քաղաքի զինված ուժերը վերակազմելով: Բաքվի խորհուրդն ընդունեց Շահումյանի առաջարկությունը՝ ուժեղացնել պայքարը նացիոնալիզմի դեմ, «մանավորապես հայկական նացիոնալիզմի դեմ, վորը Բաքվում հենվում է ազգային խորհրդի և ազգային զորամասերի վրա: Հայկական ազ-

[1] Ադր. ԽՍՀ Կենտրոնական արխիվային վարչություն (ЦАУ), Բալախ.-Սաբուն. միլիցիայի ֆ., հավաքածու 5, գործ 222, թ. 55:

գային խորհուրդը պետք է վերացվի, ազգային գնդերը լուծվեն և ձուլվեն խորհրդային ինտերնացիոնալ Կարմիր բանակի հետ»: Հայկական ազգային զորամասերն իսկապես վերակազմվեցին: Ազգային խորհրդին արգելվեց բռնագրավումներ, տուրքագրումներ, ձերբակալություններ անել և իշխանության այլ ֆունկցիաներ կատարել: Ցավոք սրտի, այդ վերակազմումը մինչև վերջը չանցկացվեց: Հայկական զորամասերը փաստորեն մնացին ինքնուրույն միավոր, և այդ վորոշակի դեր խաղաց հետագա դեպքերում:

Բաքվում խորհրդային իշխանության վերջնական ամրապնդումն առաջ քաշեց նոր որգան ստեղծելու հարցը: Ապրիլի 19-ին Բաքվի խորհուրդը վորոշեց կազմել Բաքվի նահանգի Ժողովրդական կոմիսարների խորհուրդ, վորը պատասխանատու լինի բանվորների, զինվորների և նավաստիների դեպուտատների խորհրդի առաջ: Մեծ պայքար եր տեղի ունենում Ժողկոմխորհի կազմի շուրջը: Դաշնակներն ու եսերներն ամեն կերպ փորձում եյին խցկվել Ժողկոմխորհ: Նրանք ասում եյին, վոր խորհուրդների կողմնակիցներն են և զայրանում եյին, թե ինչու իրենց հեռացնում են իշխանությունից: Բայց Բաքվի խորհուրդը մերժեց դաշնակների և եսերների հավակնությունները:

Ապրիլի 25-ին բանվորների, զինվորների և նավաստիների դեպուտատների խորհուրդն ընտրեց Բաքվի ժողովրդական կոմիսարների խորհուրդ: Նրա մեջ մտան Բաքվի պրոլետարիատի լավագույն ղեկավարները: Ժողկոմխորհի նախագահ ընտրվեց Ստեփան Շահումյանը, ռազմական և ծովային գործերի կոմիսար—Կորգանովը, ներքին գործերի—Ջափարիձեն, ժողովրդական տնտեսության—Ֆիոլետովը, նահանգական կոմիսար—Ազիզբեկովը, աշխատանքի կոմիսար—Զևինը, ժողովրդական լուսավորության—Կոլեսնիկովան: Բաքվի Ժողկոմխորհի կազմը, ինչպես գրում եր «Бакинский Рабочий»-ն,—«լիովին յերաշխավորում է մեզ այն, վոր այսուհետև կվարվի բանվորա-գյուղացիական հեղափոխության իսկական քաղաքականություն, սոցիալական լայն բարեփոխումների քաղաքականություն, վորոնք արմատապես փոխում են աշխատավորների և չքավորների միջև յեղած փոխհարաբերությունները»[1]:

Աշխատանքի անցնելով, Բաքվի Ժողկոմխորհը հրապարակեց մի դեկլարացիա, վորի մեջ շեշտում եր, վոր Ժողկոմխորհը

[1] «Бакинский Рабочий» № 76, 1918 թ. ապրիլի 27-ին,

«յուրաքանչյուր րոպեյի և իր յուրաքանչյուր քայլի համար պատասխանատու կլինի բանվորների, զինվորների և նավաստիների դեպուտատների առաջ»: Դրա հետ մեկտեղ Ժողկոմխորհը պարտավորվեց ամենասերտ կերպով կապված լինել Համառուսաստանյան խորհրդային իշխանության հետ և կենսագործել բանվորա-գյուղացիական կառավարության բոլոր դեկրետներն ու կարգադրությունները: Ժողկոմխորհը խնդիր դրեց՝ առավել սերտ միավորում սահմանել Բաքվի բանվորների ու Ադրբեջանի գյուղացիական չքավորության և ամբողջ Ռուսաստանի բանվորների ու գյուղացիների միջև:

Բաքվում խորհրդային իշխանության ամրապնդումը հնարավորություն եր տալիս սկսելու սոցիալիստական բարեփոխությունների կիրառումը: Ժողկոմխորհի դեկլարացիան հարց դրեց՝ անհապաղ իրականացնել նավթային արդյունաբերության, բանկերի, քաղաքային տնտեսության, ջրային տրանսպորտի բնագավառում նշված միջոցառումները: Դեկլարացիան առաջարկում եր անհապաղ իրականացնել կալվածատիրական բոլոր հողերի հանձնումը գյուղացիության ձեռքը: Նա աշխատավորներին կոչում եր դեպի ընդհանուր համերաշխ աշխատանք:

«Բաքվի ամբողջ պրոլետարիատի ամենաակտիվ և կազմակերպված աջակցությունը միայն հնարավոր կդարձնի կենսագործելու անհրաժեշտ միջոցառումները: Իշխանության և ինքնավարության կոչված մասսաների ստեղծագործական աշխատանքը խորհրդային քաղաքականության հաջողության և հաղթության միակ գրավականն է: Ժողովրդական Կոմիսարների Խորհրդից, մեզնից, յուրաքանչյուրից պահանջեցեք յեռանդուն և անդուլ աշխատանք, քննադատեցեք մեր ամեն մի քայլը, դատապարտեցեք, հեռացրեք նրանց, ովքեր անարժան և անպետք կլինեն բարձր դիրքում, բայց մեզ վրա մի՛ բառնաք իշխանության ամբողջ պատասխանատվությունը: Չվերաբերվեք մեզ այնպես, ինչպես դուք վերաբերվում եյիք և ինչպես դուք պետք է վերաբերվեյիք բուրժուական իշխանություններին: Ժողովրդական Կոմիսարների իշխանությունը, ինչպես և Գործադիր Կոմիտեյի ու դեպուտատների խորհրդի իշխանությունը ձեր սեփական ընտրովի իշխանությունն է... Բանվորների լայն մասսաները և նրանց ընտրյալ ներկայացուցիչները նոր են սկսում սովորել պետություն կառավարելու և յերկրի տնտեսական կյանքը սարքելու դժվարին և բարդ գործը: Սխալներն ու անհաջողությունները միանգամայն բնական են և անխուսափելի: Միայն պետք է ընդ-

համար պատասխանատվության գիտակցություն և համերաշխ ընդհանուր աշխատանք տանել խորհրդի շուրջը՝ հանուն աշխատանքի ազատագրության այն մեծ իդեաների, որ հայտարարել է Հոկտեմբերյան բանվորա-գյուղացիական հեղափոխությունը: Հուսալով բանվորական մասսաների լայն աջակցության և նրանց կենդանի ստեղծագործական ինքնագործունեության վրա՝ Բաքվի Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդն անցնում է աշխատանքի»[1]:

Նշելով սոցիալիստական միջոցառումների լայն ծրագիրը, Բաքվի խորհուրդը և Ժողկոմխորհն ամբողջ սրությամբ դնում էին ռազմական հարցը: Չեր կարելի վոչ մի րոպե դայթակղվել մարտյան հաղթանակով: Քաղաքացիական պատերազմը շարունակվում էր: Մարտյան կռիվներից անմիջապես հետո պրոլետարական Բաքուն թշնամական օղակում գտնվեց: Խուրդալանիի մոտերքում, Բաքվից 10 կիլոմետր հեռու, կանգ առան Բաքվում ջախջախված Վայրենի դիվիզիայի մնացորդները: Այստեղ հենց յեկավ նաև դաղստանյան հակահեղափոխականների մի խոշոր ջոկատ իմամ Գոցինսկու և ռուս սպաների գլխավորությամբ: Լսելով Բաքվում տեղի ունեցող մարտերի մասին, նրանք օգնության էին գնում մուսավաթիստներին: Ապրիլի առաջին թվերին Խուրդալանիի մոտ համառ մարտ էր տեղի ունենում: Հարկավոր էր ինչ էլ վոր լիներ պաշտպանել հենց նոր հաղթանակած խորհրդային իշխանությանը:

Հեղափոխական պաշտպանության կոմիտեն բանվորներին և կարմիր-գվարդիականներին զենքի կոչեց: «Դաղստանի գնդի հակահեղափոխական բանդաները կենտրոնացել են Խուրդալանիում և հարձակվում են քաղաքի վրա,—գրում էր Կոմիտեն,—նրանք արյան և ավարի յեն ծարավի: Նրանք հարձակվում են հրետանիով, հեծելազորով և հետևազորով: Անհրաժեշտ է, վոր նրանց հակահարված տանք քաղաքից դուրս,—նրանց չթողնենք մեզ մոտենալու... ընկերնե՛ր և քաղաքացինե՛ր: Բաքվի մոտ վճռվում է Անդրկովկասի բախտը: Մեր պարտությունը՝ մեր յերկրամասում հեղափոխության կործանում կնշանակի և կհասցնի միջնադարյան խանությունների ստեղծելուն ու թուրքական լծին: Մեր հաղթանակը կլինի բանվորա-գյուղացիական հեղափոխության հաղթությունը, կլինի Կովկասի ազատության և կուլտուրական ծաղկման գրավականը»: Հեղափոխական պաշտ-

[1] «Бакинский Рабочий» № 79, 1918 г.

պանության կոմիտեն Խուրդալանիի մոտ տեղափոխեց ամբողջ ուժերը: Թունդ ընդհարումից հետո Գոցինսկու և մուսավաթիստների բանդաները ջախջախվեցին և նահանջեցին:

Բաքվում պարտություն կրելով, մուսավաթիստները վրացական նացիոնալ-մենշևիկների հետ մեկտեղ սկսեցին իրենց ուժերը հավաքել Գանձակում և Թիֆլիսում, վորպեսզի գերման-թուրքական հրոսակախմբերի օգնությամբ նորից շարժվեն խորհրդային իշխանության դեմ: Ապրիլի 1-ին Բաքվի մարտյան դեպքերի հարցը քննարկվում էր Անդրկովկասի սեյմի նիստում: Կառավարության հանձնարարությամբ Ն. Ռամիշվիլին հաղորդեց, վոր յերկաթգծով զրահագնացք է ուղարկված, վորին կարգադրված է շարժվել առաջ և հրահանգների սպասել: Մուսուլմանական ֆրակցիայի անունից ճառ արտասանեց Սաֆիքյուրդսկին: Նա ցավակցություն հայտնեց, վոր ադրբեջանական հակահեղափոխությանը խանգարեցին՝ Շամխորում ռուս բոլշևիկ զինվորների վերջնական դատաստանն անելուն: Նա առաջարկում էր այժմ շտապ կերպով ուղղել սխալը և պահանջում էր, վորպեսզի «անհապաղ միջոցներ ձեռք առնվեն ինքնապաշտպանության և բոլշևիզմը լիկվիդացիայի յենթարկելու համար...»: «Մեր պատմության մեջ շատ արյուն կա, այն ամբողջ արյունով է գրված, և մենք այնտեղ դեռ շատ արյունալի տառեր կգրենք»[1]: Սաֆիքյուրդսկուն միացավ մուսավաթիստների ղեկավար Ռասուլ Զադեն: Նշելով, վոր, «ցավոք սրտի», առանձնահատուկ պայմանների ուժով Բաքու քաղաքը միշտ բոլշևիկների կողմն էր կանգնած, նա ամբողջ հակահեղափոխությանը կոչ արեց դուրս գալ «հյուսիսից յեկող գրոհի» դեմ: Այսպիսի պահանջներից հետո Ռամիշվիլին հարկադրված յեղավ կառավարության անունից հանդես գալ կրկնվող հայտարարությամբ: «Շատ պատճառներով, վորոնք սեյմին միանգամայն հասկանալի յեն,—ասաց նա,—մենք հնարավոր չգտանք հանգամանորեն խոսելու այն ամենի մասին, ինչ կառավարությունը ձեռնարկում է այդ ուղղությամբ»[2]:

Այս հայտարարությանը կոմենտարիաներն ավելորդ էին:

Ճիշտ է, դրանից հետո էլ վրացական նացիոնալ-մենշևիկները շարունակում էին գոռալ, թե իրենք «չեզոքության» քաղա-

[1] Անդրկովկասի սեյմի 1918 թվի մարտի 20-ի նիստի սղագրական հաշվետվությունը:

[2] Նույն տեղում:

քականություն են պահպանում: Ժորդանիան Բաքու ուղարկեց մի հեռագիր, վորի մեջ հաղորդում եր, թե Բաքվի դեմ ուղղված շարժման մեջ իբր թե վոչ կառավարությունը, վոչ ել երկրամասային կենտրոնը մասնակցություն չեն ունեցել: Մենշևիկները Բաքվի խորհրդին առաջարկեցին Թիֆլիսից ընդունել «հաշտարար» պատվիրակությունը՝ Իսիդոր Ռամիշվիլու գլխավորությամբ: Բայց Բաքվի բոլշևիկներն ու պրոլետարները լավ գիտեյին մենշևիկների կեղծավոր հայտարարությունների գինը: Ի պատասխան հաշտարար պատվիրակություն ուղարկելու առաջարկին Բաքվի Հեղափոխական պաշտպանության կոմիտեն գրեց Թիֆլիս, վոր սեյմի այսպես կոչված սոցիալ-դեմոկրատական ֆրակցիան «ինքն է հակահեղափոխական այն հրդեհի հանցավորը, վորն սկսվեց Գանձակի նահանգում և անցավ Բաքու»: Ռամիշվիլու գլխավորած պատվիրակությունն «ուզում է, ինչպես երևում է, նոր ծառայություններ մատուցել բեկերի և խաների բանդաներին, վորոնք զինվել են Անդրկովկասյան կոմիսարիատի ջանքերի շնորհիվ և այժմ գնում են Բաքվի խորհրդային իշխանության դեմ»: «Բաքվի պրոլետարիատը հաշտարար պատվիրակությանը կընդուներ խորը զայրույթի և արհամարհանքի զգացմունքով, այդ իսկ պատճառով Բաքվի և նրա ռայոնների հեղափոխական պաշտպանության կոմիտեն պատվիրակությանը խնդրում է չանհանգստանալ և նեղություն չկրել գալու»[1]: Հեղափոխական պաշտպանության Կոմիտեն իրավացի յեր: Առաջարկելով ընդունել «հաշտարար» պատվիրակությունը, մենշևիկները մուսավաթիստների հետ մեկտեղ հակահեղափոխական արշավանք կազմակերպեցին խորհրդային Բաքվի վրա:

Մարտ—մայիսի ընթացքում Անդրկովկասի կառավարության նիստերում բազմիցս քննարկվում եր խորհրդային Բաքվի դեմ զորքեր ուղարկելու հարցը: Ապրիլի 15-ին այդ կառավարությունը վորոշեց «ռազմական և ներքին գործերի մինիստրներին առաջարկել, վոր ձեռք առնեն բոլոր միջոցները՝ Բաքուն գրավելու ճանապարհով ամենաշտապ կերպով լիկվիդացիայի ենթարկելու Բաքվի դեպքերը»: Ապրիլի 17-ին Անդրկովկասի կառավարությունը ռազմական մինիստրին առաջարկեց կարգադրություն անել, վոր Բաքու ուղարկելու համար նախորոշված բոլոր զորամասերը մեկնեն մայիսի 1-ին: Վորոշվեց նույնպես ուղարկել նորակազմ գերմանական զորամասերը, նրանց զենք տալով.

[1] «Бакинский Рабочий» № 72, 1918 г.

ուղարկել յերկու սավառնակ: Ֆինանսների մինիստրին առաջարկվեց ջոկատի պետի տրամադրության տակ դնել լրացուցիչ կերպով 300 հազ. ռուբլի, վորը թույլատրել է կառավարության մարտի 21-ի վորոշումը:

Բաքվի վրա կազմակերպվող հակահեղափոխական արշավին հարկավոր եր ջախջախիչ հակահարված տալ: Ինչ ել վոր լինի պաշտպանել նավթային Բաքուն անգլիական և գերման-թուրքական իմպերիալիստների վոտնձգություններից և պահպանել այն Խորհրդային Ռուսաստանի համար, խորհրդային իշխանությունը տարածել մնացած Ադրբեջանի վրա—այս եր Բաքվի բոլշևիկների և պրոլետարների կարևորագույն խնդիրը: Բաքվի Ժողկոմխորհի դեկլարացիան գրում եր. «Խորհրդային իշխանության վերջնական հաղթանակի, այդ իշխանությունն ամբողջ Անդրկովկասի վրա տարածելու, ինչպես և վերը մատնանշված միջոցառումները կյանքում կենսագործելու համար անհրաժեշտ է շարունակել հաղթականորեն սկսված քաղաքացիական պատերազմը, իսկ դրա համար ամենից առաջ ունենալ ուժեղ Կարմիր բանակ: Այդ բանակն ստեղծելու աշխատանքն սկսված է, հարկավոր է, վորպեսզի այն ամբողջ յեռանդով շարունակվի սրանից հետո ել»[1]:

Խորհրդային իշխանության մյուս կարևորագույն խնդիրն եր՝ սերտ կապ հաստատել ադրբեջանական գյուղացիության մասսաների հետ: Մարտի 31-ին Շահումյանին և Ջափարիձեյին գրած նամակում ընկեր Ստալինը բացառիկ կարևոր ցուցումներ տվեց Բաքվի բոլշևիկներին: Ընկեր Ստալինը մատնանշեց, վոր յեթե մուսուլմանները պահանջում են ավտոնոմիա, հարկավոր է այն տալ: «Հարկավոր է Բաքվի սովդեպին կից հիմնել մուսուլմանական բաժին, լայնորեն զարգացնել մուսուլմանական գրականությունը, հարկավոր է հիմնել հենց նույնպիսի հայկական բաժին և ընդհանրապես մուսուլման-հայ ստորին խավերին Խորհրդի շուրջը համախմբելու քաղաքականություն տանել՝ իրենց վերնախավերի դեմ նրանց մղած պայքարում»[2]:

Արդեն ապրիլի 18-ին խորհրդի նիստին Շահումյանը նշում եր Ադրբեջանի աշխատավորների տրամադրություններում տեղի ունեցած բեկումը: Սուրախանիի ռայոնի բանվորները, վորը մուսավաթիստներին հաջողվել եր խլել մարտյան որերին, բողոքում

[1] «Бакинский Рабочий» № 79, 1918 г.

[2] Քաղված է Բաղիրովի «Պայքարի և հաղթանակների ուղին» հոդվածից, «Правда», 1935 թ. դեկտեմբերի 30:

էին վճռագործ «Մուսավաթ» կուսակցության գլխավորած հակահեղափոխության դեմ: Նրանք հայտարարեցին, որ պատրաստ են զենքը ձեռքին պաշտպանելու խորհրդային իշխանությունը: Թաղիևի Ֆաբրիկայի հինգհարյուր ադրբեջանցի բանվորները հայտնելով, որ լիովին ճանաչում են Բաքվի Ժողկոմխորհի ինտերնացիոնալ իշխանությունը, «պատրաստակամություն» էին հայտնում «իրենց միջից մարտական և գիտակից ընկերներին կարմիր բանակ ուղարկելու՝ մեր խորհրդային իշխանությունը պաշտպանելու համար...»[1]:

Ապրիլի 21-ին Բիբի-Էյբաթում կայացավ մարտյան դեպքերին նվիրված միտինգ: Ավելի քան 600 բանվորներ—ադրբեջանցիներ, հայեր և ռուսներ—հավաքվեցին այդ միտինգին: Ելույթ ունեցող ընկերները կոչ էին անում ամրապնդել խորհրդային իշխանությունը: Բոլշևիկ բանվոր Ղուլի-Մամեդն ասում էր, որ անհրաժեշտ է «միավորվել միասին և կռվել ընդհանուր թշնամու բոլոր ազգությունների կապիտալի դեմ»: «Կեցցե՛ բանվորա-պրոլետարական միասնական ազգը»: Միտինգը միաձայն հավանություն տվեց խորհրդային իշխանության գործողություններին և խոստացավ նրան ամեն տեսակի աջակցություն ցույց տալ:

Առանձնապես կարևոր էր խորհրդային իշխանության կողմը գրավել Ադրբեջանի գյուղացիությանը: Դեռ 1918 թ. հունվարին ընկ. Միկոյանը գրում էր, որ անհրաժեշտ է «թաթար գյուղացիությունը պոկել բեկերից և դասակարգային կապերով միավորել հարևան գյուղացիության հետ: Այդ ինտերնացիոնալ միավորման և հենց «իրենց» բեկերի ու աղալարների դեմ մղած դասակարգային անողոք պայքարում թաթար գյուղացիները գործնականում, կյանքում կհամոզվեին, կճանաչեին և կգիտակցեին, թե ով է իսկապես իրենց բարեկամը և ով է իրենց թշնամին. արդյոք «իրենց» կալվածատերը, որն անգթորեն ծծում է նրանց արյունը և բողոքում է իր հողերը գյուղացիներին հանձնելու դեմ, թե հայ գյուղացին, ռուս բանվորը, որոնք ոչ միայն չեն շահագործում նրան, այլ, ընդհակառակը, օգնում են պայքարելու բեկերի դեմ և իրենց ուժով նրան հող ու ազատություն են տալիս»[2]:

Խորհրդային իշխանությունն իրականացրեց գյուղացիների ամենակենսական պահանջները: Բաքվի Ժողկոմխորհը հրատա-

[1] «Бакинский Рабочий» № 75, 1918 г.

[2] «Известия Бакинского Совета» № 9, 1918 г.

րակեց «դեկրետ հողի սոցիալիզացիայի մասին» Անդրկովկասում և Դաղստանի մարզում: Բեկերի, խաների, կալվածատերերի, մելիքների, իշխանների, նրանց փոխանորդների և անաշխատ վարձակալների բոլոր հողերն անհապաղ բռնագրավվում էին և հանձնվում էին օգտագործելու աշխատավորական հողագործական բնակչությանը: Կենտրոնական Ժողկոմխորհի դեկրետի հիման վրա առմիշտ վերացվում էր «հողի, ընդերքի, ջրերի, անտառների և բնության կենդանի ուժերի ամեն տեսակի սեփականության իրավունքը»: Հողը հանվում էր առևտրային շրջանառությունից և դարձվում էր համաժողովրդական սեփականություն: Անաշխատ սեփականատերերի—կալվածատերերի և վարձակալների ագարակներն ու շենքերը պետք է խլվեին և տրվեյին հասարակական կարիքների համար՝ սոցիալական ապահովագրության և կուլտուր-լուսավորական նպատակներով (հիվանդանոցների, սանատորիաների, դպրոցների, ժողովրդական տների և այլնի համար), իսկ այդ կարիքները բավարարելուց հետո պետք է հանձնվեին չքավորագույն հողագործական բնակչությանը: Հողային ռեֆորմը կիրառելու համար կազմակերպվում էին հողային կոմիտեներ:

Խորհրդային իշխանությունը միաժամանակ մեծ աշխատանք էր տանում գյուղացիությանը կազմակերպելու գծով: Այդ աշխատանքը ղեկավարեց Մեշադի Ազիզբեկովը, որը նշանակված էր ներքին գործերի ժողկոմի տեղակալ և նահանգական կոմիսար: «Бакинский Рабочий»-ն գրում էր, թե «որպես նահանգական կոմիսար նշանակված մեր ընկեր Մեշադի Ազիզբեկովն իրեն հատուկ յեռանդով ձեռնամուխ յեղավ մուսուլմանական գյուղերում գյուղացիներին կազմակերպելու գործին: Միքանի օրվա ընթացքում նա շրջեց արդեն մի ամբողջ շարք գյուղեր, որտեղ նա, հանդես գալով խորհրդային իշխանության անունից, ստրկացված մուսուլմանական մասսային կոչում էր պայքարելու իր դասակարգային հակառակորդների դեմ և համերաշխորեն աշխատելու ռուսաստանյան դեմոկրատիայի հետ: Ընկեր Ազիզբեկովի յեռուն գործունեությունն արդեն մեծ արդյունքներ է տվել: Գործադիր կոմիտեյում մեկը մյուսի հետևից ստացվում են խորհուրդների իշխանությունը ճանաչող գյուղական հասարակությունների վճիռներ»[1]:

Գյուղացիների բանաձևերն ընդունվում էին բազմամարդ

[1] «Бакинский Рабочий» № 68, 1918 г.

միտինգներում, մեծ մասամբ հենց ընկ. Ազիզբեկովի ներկայությամբ: Ցաթմա գյուղի գյուղացիների ժողովը հայտարարեց, որ ինքը «ճանաչում է Գործադիր կոմիտեի—գյուղացիների և ամբողջ աշխատավորական ժողովրդի պաշտպանի իշխանությունը»: Մարդաքյան գյուղի գյուղացիների ժողովը ճանաչեց խորհրդային իշխանությունը կենտրոնում և տեղերում և խնդրեց հավատացած լինել՝ խորհրդին լիովին յենթարկվելուն: Գյուղացիների՝ ադրբեջաներեն և ռուսերեն լեզուներով գրած 332 ստորագրություն վավերացրին այդ բանաձևը:

Բանը չսահմանափակվեց խորհրդային իշխանությունը ճանաչելով: Մեշադի Ազիզբեկովի ղեկավարությամբ մեծ աշխատանք սկսվեց գյուղացիների դեպուտատների խորհուրդների կազմակերպման և գյուղացիական համագումար գումարելու գծով: Հրապարակվեցին հրահանգներ գյուղացիական խորհուրդների աշխատանքի մասին և ցուցումներ, «թե ինչ պետք է իմանա և ներկայացնի յուրաքանչյուր գյուղի գյուղացիների պատվիրակը գյուղացիների դեպուտատների համագումարում: Ներքին գործերի կոմիսարիատի լրագրը, որն այցելել էր ադրբեջանական շրջակա գյուղերը, հաղորդեց, որ այնտեղ խորհրդային իշխանությունն արդեն առկա է: «Գյուղացիների դեպուտատների խորհուրդները հսկայական հեղինակություն են վայելում: Գյուղացիական չփլախների լայն խավերն ակտիվացել են»[1]:

Մայիսի 26-ին նախապատրաստական մեծ աշխատանքից հետո բացվեց Բաքվի գավառի գյուղացիների դեպուտատների խորհուրդների համագումարը: Նա վերածվեց հեղափոխական ուժերի—պրոլետարիատի և գյուղացիական չքավորության մի հզոր յեղբայրացման: «Առաջին անգամ Կովկասում,—գրում էր «Бакинский Рабочий»-ն,—ամենից ավելի ծեծկված և ստրկացված գյուղացիությունը հավաքվում ու կազմակերպվում է ազատորեն, որպեսզի պաշտպանի իր դասակարգային աշխատավորական շահերը: Այս օրը, ինչ էլ որ պատահի հետագայում, կհիշի մուսուլմանական գյուղացիությունը»[2]:

Ժողկոմխորհի անունից համագումարը ողջունեց Ստեփան Շահումյանը: Նա հայտարարեց, որ բոլշևիկների ջերմ ցանկությունն էր ունենալ գյուղացիների ներկայացուցչություն, որպեսզի նրանց մասնակից դարձնեն իշխանությանը: Շահումյանը

[1] «Бакинский Рабочий» № 90, 1918 г.

[2] «Бакинский Рабочий» № 97, 1918 г.

հույս հայտնեց, որ շուտով ամբողջ նահանգով մեկ «կլինի մի կառավարություն—բանվորների և գյուղացիների կառավարություն»: Շահումյանը գյուղացիներին կոչում էր «միավորվել՝ բանվորների և հայ գյուղացիների հետ մեկտեղ խորհրդային իշխանությունը պաշտպանելու համար: Որպես միասնական ընտանիք, որպես միասնական բանակ, դուք զինված ուժով պետք է պաշտպանեք բանվորա-գյուղացիական կառավարությունն ընդդեմ բեկերի ու խաների և ընդդեմ նրանց պաշտպանի—Թուրքիայի»[1]:

Համագումարը նշեց, որ «բանվորների, զինվորների և նավաստիների դեպուտատների Բաքվի խորհուրդը, Ռուսաստանյան բանվորա-գյուղացիական հեղափոխության խնդիրների իրականացման ճանապարհին կանգնելով Անդրկովկասի աշխատավորական մասսաների գլուխ՝ Անդրկովկասի բոլոր ազգությունների բանվորների և գյուղացիների համար ճանապարհ է հարթում բոլոր ազգերի հակահեղափոխականների և կեղեքողների դեմ պայքարելու համար... Գյուղացիների դեպուտատների համագումարը, իր կողմից, խոստանում է բոլոր ջանքերը գործադրել՝ տեղերում խորհրդային իշխանությունը հաստատապես կազմակերպելու համար»[2]:

Համագումարն ընտրեց գյուղացիների դեպուտատների խորհրդի գործադիր կոմիտե: Նրա մեջ մտավ 15 մարդ, նրանցից 11-ը բոլշևիկ-«հումմեթիստներ»: Գյուղացիների դեպուտատների գործկոմի նախագահ ընտրվեց Մեշադի Ազիզբեկովը: Գյուղացիների դեպուտատների խորհրդի ներկայացուցիչները մտան Բաքվի խորհրդի Գործադիր կոմիտեի կազմի մեջ:

Իրենց տեղերը ցրվելուց առաջ գյուղացիների ներկայացուցիչները հավաքվեցին բանվորների ներկայացուցիչների հետ: Բաց անելով բանվորների, զինվորների և նավաստիների դեպուտատների Բաքվի խորհրդի և Բաքվի գավառի գյուղացիների համագումարի միացյալ նիստը, Ջափարիձեն ասաց, որ այս օրը կլինի բանվորների և գյուղացիների դաշինքի նշանակալից օր, դաշինք, որը կհասցնի ամբողջ Կովկասում բանվորների և գյուղացիների դեպուտատների միասնական խորհուրդ ստեղծելուն:

Միացյալ նիստն արտահայտեց «իր զայրույթն ընդդեմ Թիֆ-

[1] Ստեփան Շահումյան, Հոդվածներ և ճառեր, էջ 165:

[2] «Бакинский Рабочий» № 99, 1918 г.

լիսի սեյմում նստած բեկերի և խաների խմբի և նրանց լակեյ-մենշևիկների ու հայկական նացիոնալիստների—դաշնակցականների» և ժողովրդի թշնամիներ հայտարարեց բոլոր նրանց, ովքեր քվեարկել էին Անդրկովկասը Ռուսաստանից անջատելու օգտին: «Ռուսաստանի Ֆեդերատիվ մեծ Հանրապետության անբաժանելի իշխանություն կազմելով, մենք մեր բախտը սերտորեն կապում ենք հեղափոխական Ռուսաստանի բախտի հետ» [1]:

Բաքվի գավառի գյուղացիների հետ մեկտեղ կազմակերպվում էին Ադրբեջանի այլ գավառների գյուղացիները: «Бакинский Рабочий»-ն հաղորդում էր, թե գյուղացիների դեպուտատների խորհուրդներ ստեղծվել են Ղուբայի գավառի 71 գյուղերում, Լենքորանի գավառի 67 գյուղերում, Ջևադի գավառի 27 գյուղերում և այլն: Դեռ Բաքվի համագումարից առաջ հենց այդպիսի համագումարներ գումարվեցին Շամախու, Լենքորանի և Սալյանի գավառներում: Շամախու համագումարը ներկայացնում էր 280 հազար գյուղացիական բնակչություն: Շամախեցի մի ընկեր պատմում էր, որ համագումարն անցել է կազմակերպված ձևով, իրենք գյուղացիները ջերմ մասնակցություն էին ունենում նրա աշխատանքում: Համագումարում չկար ոչ մի կուլակ, և պատվիրակները քննարկում էին այն հարցերը, թե ինչպես հեռացնեն նրանց ընդհանրապես զանազան հավաքույթների և համագումարների մասնակցելուց: Գյուղացիները որոշեցին, որ կուլակներն իրավունք չունեն մասնակցելու գյուղական գործերին:

VI

Բաքվի բոլշևիկների պայքարն անմիջականորեն ղեկավարում էր ընկեր Ստալինը: Մարտական տագնապալից օրերին, երբ խորհրդային Բաքուն շրջապատված էր թշնամիներով, Ադրբեջանի գավառներում գործում էին հակահեղափոխական բանդաները և ինտերվենտները հարձակվում էին քաղաքի վրա, Բաքվի բոլշևիկները ստանում էին ընկեր Ստալինի նամակներն ու հեռագրերը: Նա քաջալերում էր Բաքվի ընկերներին դժվար և կարևոր աշխատանքում: Նա նրանց պարզորոշ կոնկրետ ցուցումներ էր տալիս:

Մայիսի 24-ին ընկեր Ստալինը Շահումյանին հաղորդում էր, որ Բաքվի բոլշևիկների պահանջները բավարարված են:

[1] «Бакинский Рабочий» № 100, 1918 г.

Ընկեր Ստալինն առաջարկում էր բամբակ ուղարկել Մոսկվա՝ ժողտնտխորհի հասցեյով, ինչպես նաև Տաշքենտի և Աստրախանի միջոցով ավելի հաճախ ինֆորմացիա տալ Անդրկովկասի գործերի մասին:

Ցարիցին գալով, ընկեր Ստալինն ավելի մոտիկացավ Բաքվի գործերին: Այստեղից նա կազմակերպում էր Բաքվին հացով օգնելու գործը և ղեկավարում էր խորհրդային իշխանության ռազմական և տնտեսական քաղաքականությունը:

Հունիսի 29-ին Լենինը գրում էր Շահումյանին. «Հղում եմ լավագույն ողջույններ և ցանկություններ: Ստալինը Ցարիցինումն է: Նամակներն ուղարկեք ավելի լավ է Ստալինի միջոցով: Ողջո՛ւյն: Ձեր Լենին» [1]:

Լենինի և Ստալինի ցուցումներին հետևելով, խորհրդային իշխանությունը Բաքվում մեծ աշխատանք ծավալեց սոցիալիստական շինարարության բոլոր բնագավառներում: Ներքին գործերի ժողկոմատը Ալյոշա Ջափարիձեի ղեկավարությամբ վոչընչացրեց քաղաքապետության կառավարչությունը, նահանգական վարչությունն ու մինչև 1918 թվի մարտյան օրերը պահպանված՝ հին հիմնարկների այլ մնացորդները և վերակազմեց ներքին վարչության ապարատը: Կոմիսարիատը հեռացրեց Բաքվի քաղաքային միլիցիայի ամբողջ անձնական կազմը: Ջափարիձեն առաջարկում էր նոր կադրեր հավաքելու ժամանակ «ամենախիստ պահանջներ ներկայացնել» «նոր ընդունվող անձերին, իբրև մարդկանց, վորոնք կոչված են պաշտպանելու հեղափոխական կարգուկանոնն այնչափ պատասխանատու ժամանակում»:

Մայիսի 26-ին Բաքվի ժողկոմխորհը հրապարակեց դեկրետ դատարանի մասին: Դատական հին ապարատը վերացվում էր, կազմակերպվում էին տեղական և օկրուգային ժողովրդական դատարաններ: Կողոպտչության, հափշտակության, սաբոտաժի, ծառայության գծով արած չարարկությունների, չարաշահման և հակահեղափոխության դեմ պայքարելու գործերը հանձնվում էին հեղափոխական տրիբունալին:

Հատուկ դեկրետ հրապարակվեց պաշտոնատար անձերի կաշառակերության և չարարկությունների դեմ պայքար մղելու մասին: «Պաշտոնատար անձերի կաշառակերության և չարարկությունների հին խոցը,—ասված էր նրա մեջ,—տեղ-տեղ թափանցում է նոր հասարակական հիմնարկությունները, ոգտվելով

[1] Վ. Ի. Լենինի կենտրոնական թանգարան:

անցողիկ մոմենտից։ Հանցագործ տարրը, Խորհրդային իշխանության կողմնակիցների դիմակի տակ, շարունակում է իր քայքայիչ աշխատանքը և վարկաբեկում է բանվորական իշխանության նոր օրգանները։ Բաքվի Ժող. Կոմ. Խորհն այսու հայտարարում է, վոր նա դաժանորեն կպատժի բոլոր նրանց, ովքեր կբռնվեն կաշառակերության և պաշտոնեական չարարկությունների մեջ, և կոչ է անում իրեն լայն աջակցություն ցույց տալ այդ հասարակական խոցի դեմ պայքարելու համար»[1]։

Մեծ գործունեություն ծավալվեց ժողովրդական լուսավորության բնագավառում։ Խորհրդային իշխանությունը ձեռնարկեց դպրոցը վերակազմելուն, ձեռնամուխ յեղավ ծրագրերի և դասագրքերի փոփոխմանը և մանկավարժական կազմը ստուգելուն։ Առաջին անգամ դրվեց նախադպրոցական դաստիարակության և արտադպրոցական կրթության խնդիրը։ Դժվարին պայմաններում, բոլոր կողմերից թշնամիներով շրջապատված, խորհրդային իշխանությունը հոգում եր չքավորության յերեխաների համար մանկատներ և հրապարակներ ստեղծելու մասին, կազմակերպում եր ժողովրդական համալսարաններ և ձգտում եր արվեստը ի սպաս դնելու ժողովրդին։ «Այսուհետև թատրոնի և կինեմատոգրաֆիայի բոլոր գործիչները կոչվում են աչալուրջ լինելու,—գրում եր լուսավորության ժողկոմը։—Այսուհետև խիստ պատիժ կկրեն բոլոր նրանք, ովքեր կբեմադրեն բանվորական ժողովրդի դեմ ուղղված նկարներ և շովինիստական վոգով համակված պիեսաներ»[2]։

Բաքվի խորհրդային իշխանության լուսավորական աշխատանքը դեմ եր առնում բուրժուական ինտելիգենցիայի համառ դիմադրությանը։ Ուսուցիչների մի մասը բացահայտ կերպով սաբոտաժի յեր յենթարկում լուսավորության կոմիսարիատի բոլոր միջոցառումները։ Բայց Բաքվի ժողկոմխորհը յեռանդով ոժանդակում եր իր ժողկոմ ընկ. Կոլեսնիկովային։ Բաքվի խորհրդի մայիսի 21-ի նիստում ընկ. Շահումյանը հայտարարեց. «Յես յենթադրում եմ, վոր ընկ. ընկ. բանվորները պետք է հայտարարեն. «Յեթե դուք սողում եյիք ցարական չինովնիկների առաջ, ապա բարեհաճեցեք հաշվի առնել այժմ նորին մեծություն պրոլետարիատի ներկայացուցչուհուն։ Ընկ. Կոլեսնիկովան այդ ընկերության կողմից վորքան շատ դժվարությունների

[1] «Бакинский Рабочий» № 82, 1918 г.

[2] «Известия Бакинского Совета» № 99, 1918 г.


СОВѢТЪ НАРОДНЫХЪ КОМИССАРОВЪ

Москва

29/VI 18 г.

№

Дорогой тов. Шаумян!

Шлю горячий привет и поздравления.

Сталин в Царицыне.

Письма шлите лучше через Сталина.

Привет!

Ленин

Վ. Ի. Լենինի նամակը Ստեփան Շահումյանին

«Թանգագին ընկ. Շահումյա՛ն։

Հղում եմ լավագույն վողջույններ և ցանկություններ։ Ստալինը Ցարիցինումն է։ Նամակներն ուղարկեք ավելի լավ է Ստալինի միջոցով։

Վողջո՛ւյն։ Ձեր Լենին»։

հանդեպ, այնքան ավելի մեծ աջակցություն պետք է ցույց տաք դուք նրան»[1]:

Խորհրդային իշխանությունը շատ ուշադրություն էր հատկացնում բանվորների կարիքներին: Ընկ. Զևինի գլխավորած՝ Աշխատանքի կոմիսարիատին կից ստեղծվել էր աշխատանքային գործերի ժամանակավոր դատարան: Կոմիսարիատն առաջարկում էր նաև կազմակերպել բժշկա-սանիտարական և տեխնիկական հանձնաժողովներ: Ընկ. Զևինը նշում էր, որ «բժշկա-սանիտարական հանձնաժողովները կկատարեն հանքերի և գործարանների, բնակարանների և հանրակացարանների քննություն՝ ներկա պայմաններում նրանց հնարավոր առողջարանական պայմաններ տալու նպատակով»: Տեխնիկական հանձնաժողովների առաջ խնդիր է դրված՝ «տեխնիկական տարրական բարելավումներ մտցնել արդյունաբերության մեջ, որ առաջին հերթին կպակասեցնի բանվորների հաշմանդամության տոկոսը և կբարելավի աշխատանքի պայմանները»[2]:

Բաքվի խորհուրդը զբաղվում էր բնակարանային հարցով: Ապրիլի վերջին՝ Բաքվի խորհրդի բռնագրավման հանձնաժողովի և Կովկասյան բանակի ՌՀԿ ներկայացուցիչների միացյալ նիստը քննարկում էր «Կարմիր բանակի զինվորների ընտանիքներին և չքավոր բնակչությանը բնակարաններ մատակարարելու» հարցը: Վորոշվեց ճշգրիտ տեղեկություններ հավաքել բնակարանների ծավալի և քաղաքում ապրող բնակիչների թվի մասին՝ բնակարանային տարածությունը հավասարաչափ բաշխելու համար: «Հաշվի առնելով առանձնապես մուսուլմանական բնակչության և զինվորների ընտանիքների աղետալի վիճակը, վորոշված է անհապաղ բռնագրավել առաջին հերթին քաղաքի կենտրոնում յեղած մեծ տները, դրանցում բնակեցնելով բնակարան չունեցող չքավորությանը»[3]:

Հետագայում ընդունվեց «դեկրետ քաղաքային անշարժ գույքերի մասնավոր սեփականությունը վերացնելու մասին»: Դեկրետի համաձայն քաղաքային բոլոր հողերն ու շենքերը հայտարարվում էին ամբողջ ժողովրդի սեփականություն և անցնում էին Բաքվի բանվորների, զինվորների ու նավաստիների դեպու-

---

1 Ստեփան Շահումյան, Հոդվածներ և ճառեր, էջ 162:

2 Ադր. Կ(բ)Կ Կենտկոմի միացյալ կուսարխիվ Շահումյանի անվան ինստիտուտին կից, հավաքածու 10, գործ 80, թ. 329—330:

3 Ադր. Կ(բ)Կ Կենտկոմի միացյալ կուսարխիվ Շահումյանի անվան ինստիտուտին կից, հավաքածու 2, գործ 30, թ. 115:

Մ. ԱԶԻԶԲԵԿՈՎ

Ի. ՖԻՈԼԵՏՈՎ

տաների Բաքվի խորհրդի տրամադրության տակ: Իշխանության որգանները կարող եյին քաղաքային անշարժ գույքերից ստացված յեկամուտների մինչև մեկ յերրորդը գործածել քաղաքային տնտեսության ընդհանուր կարիքների համար: 10%-ը հատկացվում եր համապետական ֆոնդին՝ բնակարանային նոր շինարարության համար:

Խորհրդային իշխանությունը Բաքվում կիրառեց նույնպես բանկերի ազգայնացում: Այս աշխատանքն անցնում եր ընկ. Միկոյանի մասնակցությամբ: Պահվել է նրա անունով գրված հետևյալ մանդատը: «Սույնը ներկայացնող Անաստաս Միկոյանին Բաքվի Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը հրամայում է ապրիլի 29/16-ի ցերեկվա ժամը 12-ի մոտերքը գրավել արտաքին (առևտրի) համար Ռուսական բանկի և մասնավորապես մառանի մուտքերն ու յելքերը, վորտեղ պահվում են սեյֆերը, և սպասել Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի ներկայացուցիչների ժամանելուն: Բաքվի Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի նախագահ՝ Ս. Շահումյան»[1]:

Հենց այսպիսի մանդատներով ընկերներ ուղարկվեցին նաև մնացած բանկերը: Այնուհետև Ժողկոմխորհի ներկայացուցիչները շրջեցին բանկերը, կնքեցին և անհրաժեշտ հաշվառում անցկացրին: Սեյֆերում պահվող բոլոր արժեքները բռնագրավվեցին հօգուտ պրոլետարական պետության:

Մեծ աշխատանք կատարվեց արդյունաբերության բնագավառում: Բաքվի Ժողկոմխորհը կազմվելուց անմիջապես հետո կազմակերպվեց Բաքվի Ժողովրդական տնտեսության խորհուրդը: Նրա մեջ մտան խորհրդի, պրոֆմիությունների և հանքագործարանային հանձնաժողովների ներկայացուցիչներ, ինչպես նաև ինժեներներ և տեխնիկներ: Ժողտնտխորհի նախագահ ընտրվեց ընկ. Ֆիոլետովը: Այստեղ ծավալվեցին Ֆիոլետովի մեծ ընդունակություններն ու անխոնջ յեռանդը և պետք յեկավ պրոֆմիութենական կազմակերպություններում նրա տարած աշխատանքի բազմամյա փորձը:

Բաքվի Ժողտնտխորհն իր աշխատանքը տանում եր՝ ինժեներների և տեխնիկների միությունն իր ձեռքը գցած բուրժուական մասնագետների վերնախավի կատաղի դիմադրության և սաբոտաժի պայմաններում: Կատարելով իրենց տերերի կամքը, նրանք ամեն կերպ վիժեցնում եյին Ժողտնտխորհի աշխատանքը,

1 Սուրեն Շահումյան, Բաքվի կոմունան, եջ 107:

դեկլարացիաներ եյին հրապարակում, պահանջներ, ուլտիմատումներ եյին ներկայացնում, հեռանում եյին պոստերից... Կապիտալի ծառաների այդ խմբի հակառակ՝ բոլշևիկները կազմակերպեցին խորհրդային իշխանության տեսակետին կանգնած ինժեներների և տեխնիկների միություն: Նոր միության առաջին ժողովում ընկ. ընկ. Ջափարիձեն և Ֆիոլետովը ջերմորեն ողջունեցին այդ նախաձեռնությունը: Ինժեներներն ու տեխնիկները նրանց հավաստիացնում եյին, վոր նոր միությունը Բաքվի բանվորներին աշխատավոր-ինտելիգենտների հետ միավորելու յերաշխիք կհանդիսանա:

Չնայած աշխատանքի դժվար պայմաններին, Բաքվի Ժողտնտխորհը Ֆիոլետովի ղեկավարությամբ անշեղորեն կիրառում եր իր քաղաքականությունը՝ արդյունաբերության բոլոր ճյուղերում: Ժողտնտխորհն իրականացրեց ադրբեջանցի և հայ խոշոր կապիտալիստներ Թաղիևին, Մայիլովին և ուրիշներին պատկանող ձկնորսարանների ազգայնացումը: Ժողտնտխորհը կազմակերպեց բամբակի մեծ մթերումներ: Ընկեր Ստալինն առաջարկում եր Ժող. տնտ. գեր. խորհրդի հասցեյով Մոսկվա բամբակ ուղարկել, վորի սուր կարիքն եր զգում կենտրոնի տեքստիլ արդյունաբերությունը: Բաքվի Ժողտնտխորհը յեռանդով կատարում եր ստալինյան այդ առաջադրանքը: Մայիսի 9-ին հրապարակվեց Բաքվի Ժողտնտխորհի դեկրետը բամբակի ամեն տեսակի գործարքներն արգելելու մասին (գնել, վաճառել, գրավ և այլն): Մայիսի 30-ին Ֆիոլետովը Ժողկոմխորհին զեկուցեց, վոր Ժողտնտխորհը հաշվի յե առել 350 հազ. փութ բամբակ: Հենց նույնքան ել մթերվում եր Մուղանում: Այժմ հարկավոր եր շտապ կերպով կազմակերպել բամբակի արտահանումը Բաքվից: Ժողկոմխորհը վորոշեց. «Բամբակի հաշվառման, գնման և առաքման ամբողջ գործը կենտրոնացնել Ժողտնտխորհում, հանձնարարելով նրան արագացնել բամբակի առաքումը դեպի Մոսկվա»[1]: Հունիսի 11-ին Բաքվի Ժողկոմխորհի նիստում Ֆիոլետովը հաղորդեց, վոր արդեն Մոսկվա յե ուղարկված 153 հազ. փութ բամբակ, իսկ 200 հազ. փութ կուղարկվի մոտակա օրերում:

Առանձնապես մեծ նշանակություն ուներ Բաքվի Ժողտնտխորհի աշխատանքը նավթային արդյունաբերությունն ազգայնացնելու գործում: Նավթային արդյունաբերության ազգայնաց-

[1] Ադր. Կ(բ)Կ Կենտկոմի միացյալ կուսարխիվ Շահումյանի անվան ինստիտուտին կից, հավաքածու 2, գործ 30, թ. 39:

ման նախաձեռնողներն ու ղեկավարողները Լենինն ու Ստալինն եյին: Դեռ 1917 թվի սեպտեմբերին Լենինը գրում եր. «Վերցրեք նավթային գործը: Այդ գործը «հանրայնացվել ե» արդեն կապիտալիզմի նախորդող զարգացումով վիթխարի չափերով: Մի զույգ նավթարքաներ,—ահա թե ով ե տնօրինում միլիոններն ու հարյուրավոր միլիոնները. զբաղվելով կուպոններ խուզելով, հեքիաթային շահույթներ հավաքելով «գործից», վորն արդեն կազմակերպված ե փաստորեն, տեխնիկապես, հասարակականորեն համապետական չափերով, վորն արդեն կատարում են հարյուրավոր և հազարավոր ծառայողներ, ինժեներներ և այլն: Նավթային արդյունաբերության ազգայնացումը հնարավոր ե միանգամից և պարտադիր ե հեղափոխական-դեմոկրատական պետության համար, հատկապես յերբ նա մեծագույն ճգնաժամ ե ապրում, յերբ հարկավոր ե ինչ ել վոր լինի խնայել ժողովրդական աշխատանքը և ավելացնել վառելիքի արտադրությունը»[1]: Լենինն առաջարկում եր «պատերազմ հայտարարել նավթարքաներին և ակցիոներներին, դեկրետավորել նրանց գույքի բռնագրավումը և բանտով պատժելը նավթային գործի ազգայնացումը ձգձգելու, յեկամուտները և հաշվետվությունները թաքցնելու, արտադրությունը սաբոտաժի յենթարկելու համար»[2]:

Բաքվի բոլշևիկները լավ եյին հասկանում Բաքվի նավթի համապետական նշանակությունը: Գրոզնու նավթահանքերը և Դոնեցի ածխի ավազանն այդ ժամանակները զավթել եյին հակահեղափոխական բանդաները: Բաքուն մնում եր ամբողջ յերկրի համար վառելիքի միակ աղբյուր: Ապրիլի կեսերին Բաքու ժամանեց Ժողովրդական տնտեսության գերագույն խորհրդի պատվիրակությունը: Ընկերները պատմեցին յերկրի տնտեսական ծանր վիճակի և, մասնավորապես, վառելիքի ճգնաժամի մասին: Պետրոգրադի բանվորների ներկայացուցիչը հայտարարեց, թե Պիտերի պրոլետարները Բաքվի բանվորների վրա հուսով են նայում և նրանց կոչում են գիտակից վերաբերմունք ունենալ դեպի այն վիթխարի պատասխանատվությունը, վոր իրենք են կրում:

Ավելի նավթ տալ Խորհրդային Ռուսաստանին—այս եր Բաքվի խորհրդային իշխանության կարևորագույն խնդիրը: «Բաքվից ուղարկվող նավթի քանակությունից ե կախված Ռուսաստանի բախտը,—գրում եր Բաքվի Ժողկոմխորհը:—Առանց վառելիքի, առանց մեր մազութի, առանց մեր քսաձեթերի չի կարելի բանեց-

[1] Լենին, հ. XXI, եջ 169:

[2] Նույն տեղում, եջ 170:

նել Մոսկվայի և Իվանովո-Վոզնեսենսկի ֆաբրիկաները, Պիտերի և Պուտիլովյեյի գործարանները, չի կարելի գյուղերին մատակարարել չիթեր, մեխեր, գյուղատնտեսական գործիքներ, չի կարելի հացը բերքատու վայրից տեղափոխել սոված վայրը, չի կարելի ստիպել, վոր ճիշտ աշխատեն յերկաթուղիները, չի կարելի ժամանակին և պատշաճ արագությամբ տեղաշարժել մեր հեղափոխական Կարմիր բանակը հանրապետությունը պաշտպանելու համար»[1]:

Այնինչ նավթարդյունաբերողները սիստեմատիկորեն քայքայում եյին նավթի արտադրությունը: Նրանց նվիրված՝ բուրժուական մասնագետների վերնախավը ընդհատակյա քայքայիչ աշխատանք եր տանում բանվորական վերահսկողության դեմ: Նավթի հանույթը նվազում եր. 1918 թ. 5 ամսվա ընթացքում կրճատվեց $2\frac{1}{2}$ անգամ: Նավթի արտահանումը ձախողվում եր: Մինչդեռ ամբողջ յերկիրը վառելիքի խիստ կարիք ուներ, Բաքվում կազմվել եյին նավթի վիթխարի պաշարներ: Մայիսին նրանք կազմեցին 18 միլիոն փութ: Պարզ եր, վոր Բաքվի նավթարդյունաբերողները չեն ուզում նավթ տալ Խորհրդային Ռուսաստանին:

Այդպիսի պայմաններում մնում եր մի բան—խլել նավթային արդյունաբերությունը կապիտալիստներից և հանձնել պրոլետարական պետության ձեռքը: Մայիսի 28-ին ընկեր Ստալինը ընկ. ընկ. Շահումյանի, Ջափարիձեյի և Ֆիոլետովի անունով տված հեռագրի մեջ հաղորդեց, վոր ժողովրդական կոմիսարների խորհուրդը հաստատել ե նավթային արդյունաբերության ազգայնացումը: Ստանալով ընկեր Ստալինի հեռագիրը, Բաքվի բոլշևիկները սկսեցին գործել: Հունիսի 2-ին հրապարակվեց Բաքվի ժողկոմխորհի դեկրետը նավթային արդյունաբերությունն ազգայնացնելու մասին: «Բաքվի նավթային արդյունաբերությունը,— գրում եր ժողկոմխորհը,—հայտարարված ե Ռուսաստանի Խորհուրդների հանրապետության սեփականություն: Այսուհետև բոլոր հանքերի, գործարանների, արհեստանոցների, ամբողջ սարքավորման միակ տերը դառնում ե ամբողջ ժողովուրդն ի դեմս բանվորա-գյուղացիական Խորհրդային իշխանության: Նավթային արդյունաբերության մեջ այլևս կապիտալիստներ չկան, ել մասնավոր տերեր չկան»:

Ժողկոմխորհի դեկրետը Բաքվի պրոլետարիատն ընդունեց

[1] «Вестник Бакинского СНК» № 1—2, 1918:

վիթխարի խանդավառությամբ: «Կատարվեց այն, ինչ միշտ Բաքվի պրոլետարիատի յերազն ու մարտական լոզունգն եր,— գրում եր «Бакинский Рабочий»-ն,— նորին մեծություն՝ Բաքվի պրոլետարիատի կամքով ժողովրդական աշխատանքով ստեղծված վիթխարի հարստությունները խլված են հասարակական գործի պարազիտներից և հանձնված են աշխատավոր ժողովրդին ի դեմս նրա խորհուրդների Հանրապետության. անուղղելի հարված ե հասցված Բաքվի բուրժուազիայի կապիտալիստական տիրապետությանը»[1]:

Ազգայնացման մասին դեկրետը լիակատար անսպասելիություն դուրս յեկավ նավթարդյունաբերողների համար: Բոլորովին նորերս նրանք համոզված եյին, վոր «բոլշևիկները վոչ բավականաչափ վճռականություն, վոչ ել ուժ կունենան կիրառելու այդ միջոցը», իսկ այստեղ հանկարծ՝ «դեկրետ ազգայնացման մասին»: Բաքվի նավթարդյունաբերողների կոմիտեյի արտակարգ նիստը վորոշեց դիմել ժողկոմխորհ՝ բողոքելով դեկրետի դեմ: Պետրոգրադ, նավթարդյունաբերական ֆիրմաների գլխավոր վարչությանն ուղարկվեցին շտապ հեռագրեր: Նավթարդյունաբերողները ճարպկորեն ոգտագործեցին Ֆինժողկոմատի և ժողտնտեսխորհրդի միքանի աշխատողների ոպորտունիստական գիծը: Այս մարդիկ Բաքու ուղարկեցին մի շարք հեռագրեր, վորոնց մեջ գրում եյին, թե անհրաժեշտ ե հետաձգել ազգայնացումը մինչև նախահաշիվ ներկայացնելը և նավագնացությունը փակելը: Այս հեռագրերի վրա հիմնվելով՝ նավթարդյունաբերողները հայտարարում եյին, իբր թե Բաքվում հայտարարված ազգայնացմանը չի աջակցում կենտրոնական խորհրդային իշխանությունը: Բայց նրանք հարկ յեղած հակահարվածը ստացան:

Հենվելով Լենինի և Ստալինի ցուցումների վրա, Բաքվի բոլշևիկները վճռական պայքար մղեցին իրենց դեկրետն իրականացնելու համար: Ի պատասխան արդյունաբերողների բողոքներին, Ժողտնտխորհի նիստում ընկ. Ֆիոլետովն ասում եր, վոր նավթային արդյունաբերության ապազգայնացման մասին խոսք անգամ չի կարող լինել: Հունիսի 14-ին Շահումյանը հեռագիր ուղարկեց Ժողկոմխորհ. «Յերեկ, հունիսի 13-ին ստացանք Վինարսկողնեֆտի՝ հունիսի 4-ի հեռագիրն այն մասին, թե ազգայնացման կիրառումը հետաձգվում ե: Վճռական բողոք եմ հայտնում այդպիսի քաղաքականության դեմ: Վինարսկողնեֆտն, ըստ յերևույթին

[1] «Бакинский Рабочий», 1918 թ. հունիսի 2-ին:

չգիտե, թե ինչ է անում։ Նավթային արդյունաբերության և առևտրական նավատորմի ազգայնացումը, չնայած սովին, խանդավառություն առաջացրեց և բարձրացրեց նավթի հանույթն ու արտահանումը»[1]։ Խորհրդի նիստում Շահումյանը Բաքվի բանվորներին կոչում էր «խստիվ պաշտպանել ազգայնացման կիրառումը հօգուտ ժողովրդի և Ռուսաստանի արդյունաբերության»։

Լենինը և Ստալինը աջակցեցին Բաքվի ընկերների տոկուն պայքարին։ Հունիսի 20-ին ՌՍՖՍՀ Ժողկոմխորհը հաստատեց նավթային արդյունաբերությունն ազգայնացնելու մասին յեղած դեկրետը։

Այդպես վճռականորեն եյին գործում Բաքվի բոլշևիկները նաև Կասպից ծովի առևտրական նավատորմն ազգայնացնելու հարցում։ Խորհրդային Ռուսաստանին նավթ տալ հնարավոր եր միայն այն ժամանակ, յերբ այստեղ ևս միակ տերերը դառնային բանվորները։ Նավթային արդյունաբերությունն ազգայնացնելու դեկրետից անմիջապես հետո, հունիսի 6-ին, Բաքվի Ժողկոմխորհը հրատարակեց դեկրետ՝ Կասպիական առևտրական նավատորմն ազգայնացնելու մասին։ «Յերկրորդ վճռական քայլը»—այսպես եր վերնագրված այս հարցի շուրջը ընկեր Միկոյանի գրած հոդվածը, վորը զետեղվեց «Известия Совета»-յում։

Կասպից առևտրական նավատորմն ազգայնացնելու հարցում կատարվում եր նույն բանը, ինչ վոր եր նավթային արդյունաբերությունն ազգայնացնելու ժամանակ։ Նավատերերը բողոքում եյին Ժողկոմխորհի դեկրետի դեմ, համառորեն դիմադրում եյին իշխանության բոլոր միջոցառումներին, հեռագրեր եյին ուղարկում Մոսկվա և այլն։ Բոլշևիկները նորից ստիպված յեղան կռիվ տալ կենտրոնի հենց նույն խմբակի հետ։ Լենինին և Ստալինին ուղղած հեռագրում Շահումյանը գրում եր. «Ժողկոմխորհի կողմից նավթարդյունաբերության ազգայնացման դեկրետն ընդունելու և Գլավկոնեֆտի յերկու հեռագրերը վերացնելու մասին յեղած հեռագիրը ստացանք,—գրում եր Շահումյանը։—Այդ հեռագիրը հանգստություն մտցրեց։ Այժմ հենց այդպիսի պատմություն է սկսվում Կասպից նավատորմի ազգայնացման հետ։ Մախրովսկու ստորագրությամբ այստեղ ստացված հեռագիրն անտեղյակություն և անըմբռնողություն է հայտաբերում։ Ամենախոշոր խնդիրս է՝ ժամանակին կանգնեցնել, վորպեսզի չխանգարեն մեզ աշխատելու»[1]։

Նորից Լենինն ու Ստալինն աջակցեցին Բաքվի ընկերներին։ Հունիսի 8-ին ընկեր Ստալինը գրում եր Շահումյանին. «Կասպից նավատորմն ազգայնացնելու հարցում կարող եք գործել վճռականորեն, ուշադրություն չդարձնելով հեռագրի վրա։ Կարող եք հավատացած լինել, վոր Ժողկոմխորհը ձեզ հետ կլինի... Ամեն ասածս ընդունեք վոչ թե վորպես իմ անձնական կարծիքը, այլ վորպես Լենինի առաջարկությունը, վորի հետ յես յերեկ խոսեցի շոշափված բոլոր հարցերի շուրջը ուղիղ հաղորդալարով»[2]։

Նավթային արդյունաբերության և առևտրական նավատորմի ազգայնացում հայտարարելով, Բաքվի բոլշևիկները յեռանդով ձեռնամուխ յեղան դրանք նոր, սոցիալիստական հիմունքներով վերակառուցելու գործին։

Նավթային արդյունաբերության ազգայնացման որը ընկ. Շահումյանը յելույթ ունենալով ասաց. «Յես յերջանիկ եմ, ընկերներ, վոր շնորհավորում եմ ձեզ՝ Բաքուն աշխատավորական կոմունա հայտարարելու առթիվ։ Նավթային արդյունաբերության դերն ու նշանակությունը ռուսական ամբողջ հեղափոխության յելքի համար, ազգայնացման ստեղծած՝ աշխատանքի և կապիտալի նոր հարաբերությունները Բաքվի աշխատավորական կոմունայի հեղափոխական պրոլետարիատի համար առաջ են քաշում հետևյալ խնդիրները։ Բանվորի հոգեբանության արմատական փոփոխում՝ հասարակության տնտեսական կառուցվածքի մեջ առաջացած հեղափոխության կապակցությամբ։ Սոցիալիստական նոր կարգերին պետք է համապատասխանի սոցիալիստական մտածելակերպը, զգացմունքներն ու հոգեբանությունը։ Դեպի շրջապատը յեղած մանր-սեփականատիրական վերաբերմունքը պետք է տեղը զիջի հասարակական, պետական սկզբունքին»։ Շահումյանը հույս հայտնեց, վոր «ամբողջ Անդրկովկասի բանվորների և գյուղացիների աջակցությամբ, ամբողջ Ռուսաստանի պրոլետարիատի աջակցությամբ Բաքվի աշխատավորական կոմունան կամրապնդվի այստեղ, Բաքվում, և ամբողջ Անդրկովկասի աշխատավոր ժողովրդի ազատարարուհին կհանդիսանա»[3]։

[1] Հոկտեմբերյան Հեղափոխության Կենտրոնական Արխիվ (ЦАОР), ֆ. 130, ոպ. 12, գործ 6, թ. 6—7։

[1] ЦАОР, ֆ. 130, ոպ. 12, գործ 109, թ. 56։

[2] Կ. Յե. Վորոշիլով, Ստալինը և Կարմիր բանակը, եջ 40—41, Պարտհրատ, 1937 թ.։

[3] Ստեփան Շահումյան, Հոդվածներ և ճառեր, եջ 186։

Հունիսի 7-ին Շահումյանը հաղորդում էր Լենինին Բաքվում կիրառված սոցիալիստական միջոցառումների մասին։ «Վերջին շաբաթվա ընթացքում, Գյանջակի վրա արշավ գործելու տենդագին նախապատրաստման հետ միաժամանակ, մենք զբաղված էինք մի շարք դեկրետներ նախապատրաստելով։ Հունիսի 2-ին, կիրակի օրը, մենք հրատարակեցինք դեկրետ նավթային ձեռնարկությունների ազգայնացնելու մասին։ Յերեկ հրատարակեցինք դեկրետ առևտրական նավատորմն ազգայնացնելու մասին։ Մենք հրատարակել ենք նույնպես դեկրետ դատական հիմնարկությունների ռեֆորմի մասին։ Պատրաստված է աղքատությունը վոչնչացնելու դեկրետ. Նախապատրաստվում են դեկրետներ բանկերը և տներն ազգայնացնելու մասին։ Մեր ներքին դրությունն այնպես է, վոր այդ բոլոր միջոցառումները մենք կկարողանայինք անհիվանդագին և նույնիսկ փայլուն կերպով իրագործել։ Չնայած բանվորների ծանր վիճակին՝ պարենի տեսակետից (ավելի քան յերկու ամիս է, ինչ բանվորները կատարելապես սովի յեն մատնված), մենք մեզ շատ ամուր ենք զգում։ Բայց տեսնենք, թե ինչպես կլինի մեր ռազմական դրությունը մոտակա օրերում։ Յեթե մենք հաղթենք, Բաքուն օրինակելի աշխատավորական կոմունայի կվերածվի»[1]։

Ազգայնացման դեկրետի հիման վրա Բաքվի Ժողկոմխորհը մշակեց և հրապարակեց «Կանոնադրություն Բաքվի ռայոնի նավթի և հորատման ազգայնացված ձեռնարկությունները կառավարելու մասին»։ Վարչա-տնտեսական տեսակետից բոլոր նավթահանքերը բաժանվել էին 7 խմբի։ Ձեռնարկություններում մնում էր հին ադմինիստրացիան, բայց նա մեծ մասամբ թշնամաբար էր տրամադրված դեպի խորհրդային իշխանությունը։ Նավթարդյունաբերական ֆիրմաների միքանի կառավարիչներ, վորոնք այժմ դարձել էին ձեռնարկությունները կառավարելու կոլեգիայի անդամներ, պահպանել էին հին կապերը ձեռնարկությունների նախկին տերերի և ֆերմաների վարչությունների հետ և ի հաճույս նրանց սաբոտաժ և վնասարարություն էին կազմակերպում նավթային արդյունաբերության մեջ։ Նրանց դեմ մղվող պայքարը սուր ձևեր էր ընդունում։ Հունիսի 18-ին Նոբելի վարչության դիրեկտոր Լեսները և Ռուսաստանի նավթարդյունաբերական ընկերության վարչության դիրեկտոր Սարգսյանը աքսորվեցին Բաքվից «Նավթային արդյունաբերու-

[1] ЦАОР, ф. Ա. Մ., գործ 215։

թյան ազգայնացումը կիրառելու գործում դիմադրություն ցույց տալու կապակցությամբ»։

Այսպիսի պայմաններում հանքագործարանային հանձնաժողովների աշխատանքն առանձնապես մեծ նշանակություն էր ստանում։ Ժողկոմխորհի հրահանգի հիման վրա հանքա-գործարանային հանձնաժողովները հսկում էին, վորպեսզի «ձեռնարկության ադմինիստրացիայի գործունեությունը համապատասխանի Ժողկոմխորհի խնդիրներին և պլաններին», հետևում էին միջոցները ծախսելուն, ընդունելուն և հեռացնելուն, գույքի պահպանմանը, նայում էին ձեռնարկության հաշիվները, գրքերը, գրականությունը։

Բաքվի Ժողկոմխորհում հենց ազգայնացմանը բացահայտ դիմադրություն էր ցույց տալիս ինժեներների և տեխնիկների խումբը։ Ի նշան ազգայնացման դեմ բողոքելուն այդ խումբը հրաժարվեց Ժողկոմխորհում ամեն տեսակի աշխատանքից և հայտարարեց, թե մնում է այնտեղ «ինֆորմացիայի նպատակով»։ Իրոք, նա Ժողկոմխորհի մեջ մնաց նրա համար, վորպեսզի ներսից վիժեցներ ազգայնացումը և գլուխ բերեր ձեռնարկություններն իրենց նախկին տերերին վերադարձնելը։ Հենց նույնպիսի քաղաքականություն էին վարում էսէռները, մենշևիկները, դաշնակները, մուսավաթիստները։ Նրանք փորձում էին օգտագործել բանվորների պարենային ծանր դրությունը՝ խորհրդային իշխանության դեմ պայքարելու համար։ Նրանք ձըգտում էին գործադուլներ առաջացնելու ազգայնացված ձեռնարկություններում և թուլացնելու աշխատանքային կարգապահությունը, վորպեսզի վիժեցնեյին նավթի արտահանումը Խորհրդային Ռուսաստան և Բաքվի հանքերում ու գործարաններում վերականգնեյին կապիտալիստական շահագործումը։

Բաքվի բոլշևիկները մերկացնում էին սաբոտաժնիկներին և կազմալուծողներին։ Ընկ. Միկոյանը գրում էր, վոր գործադուլըն այժմ «ընդունում է ռեակցիոն, վնասակար բնույթ, վորովհետև հիմա այն ուղղված է վոչ թե կապիտալիստների—բանվոր դասակարգի թշնամիների դեմ, այլ կազմակերպված պրոլետարիատի դեմ, նրա Խորհրդի իշխանության դեմ»[1]։

Վորպես որվա կարևորագույն խնդիր բոլշևիկներն առաջ քաշեցին աշխատանքային կարգապահության և ազգայնացված ձեռնարկություններում աշխատանքի արտադրողականության

[1] «Известия Бакинского Совета» № 105, 1918 г.

բարձրացնելու հարցը: Բանվորներին ուղղված կոչի մեջ ընկ. Ֆիոլետովը գրում եր. «Ընկերնե՛ր, հիշենք, մեր ուղեղների մեջ հրեղեն տառերով դրոշմենք հետևյալ կանոնները, վորոնք ձեր մեծամասնությունը վաղուց արդեն ընդունել ե վորպես ամենակարևոր բանը հեղափոխության գործի համար. անհրաժեշտ ե մեր միջավայրում մտցնել աշխատանքային յերկաթե կարգապահություն, յուրաքանչյուրը մնում ե իր տեղում, յուրաքանչյուրն անառարկելիորեն յենթարկվում ե ընտրված ընկերների և այդ ընկերների կողմից դրված անձերի կարգադրություններին, յուրաքանչյուրն աշխատանքային ժամերին անում ե իր գործը, վորն առաջին հայացքից քիչ ե նկատելի, բայց վորը կազմում ե մի ողակ՝ հեղափոխության նվաճումներն ամրապնդելու մեծ շղթայի մեջ»:

Ժողտնտխորհը հանքագործարանային հանձնաժողովներին առաջարկում եր «ամեն միջոցի դիմել, վորպեսզի բարձրացվի աշխատանքի արտադրողականությունը՝ Խորհրդային հանրապետությանը պատկանող ձեռնարկություններում»: Հանքարդյունաբերական հանձնաժողովները պետք ե հսկեյին արտադրության ընթացքին, բանվորների միջև յեղած կարգապահությանը: Հանքա-գործարանային հանձնաժողովներին միաժամանակ առաջարկվում եր չփոխարինել ադմինիստրացիային, «վորի կարգադրությունները անհապաղ և ճշտորեն պետք ե կատարեն բանվորներն ու ծառայողները»:

Բաքվի բոլշևիկների և խորհրդային իշխանության հաստատուն քաղաքականությունը նավթային արդյունաբերության մեջ դրական արդյունքների հասցրեց: Նավթարդյունաբերողների և տեխնիկական բարձր անձնակազմի համառ դիմադրության, ֆինանսական և պարենային ծանր ճգնաժամի ու քաղաքացիական կատաղի պատերազմի պայմաններում անշեղորեն զարգանում և ամրանում եր Բաքվի խորհրդային նավթային արդյունաբերությունը: Աճում եր նավթի հանույթը: Մինչ ազգայնացումը, մայիսին հանվել եր միայն 11,4 միլիոն փութ նավթ: Ազգայնացումից հետո, հունիսին—17,89 միլիոն փութ նավթ:

Առավել աչքեցուցիչ հաջողությունների հասավ խորհրդային իշխանությունը նավթ արտահանելու գործում: Այդ աշխատանքն անմիջականորեն ղեկավարում եր ընկեր Ստալինը: Գտնվելով Ցարիցինում, նա ապահովում եր նավթի փոխադրումը Վոլգայով և յերկաթուղով դեպի յերկրի կենտրոնը: Հունիսի 26-ին Ստալինը գրում եր Պարենժողկոմատ, վոր դեպի Մոսկվա յե դուրս յեկել յերեք մարշրուտային գնացք 84 ցիստերն բենզինով: Հունիսի 29-ին Ստալինը հաղորդում եր, վոր Աստրախանում բոլոր ամբարները լիքն են նավթամթերքներով, վորոնք էլ տեղ չկա լցնելու: Ստալինը խնդրում եր շտապ կերպով ազատել Սարատովում և Սամարայում յեղած բաքերը, այլապես արտահանումը Բաքվից կդադարեցվի:

Աստրախանը նավթից բեռնաթափելու միջոցների դիմելով, Ստալինն առաջարկում եր ամեն կերպ ավելացնել Բաքվից նավթ արտահանելը: Յերկաթուղային հաղորդակցությունը Բաքվի հետ ընդհատվել եր, նավատորմը պետք ե իր վրա վերցներ բեռների տեղափոխումը, վորոնք սովորաբար յերկաթուղով եյին փոխադրվում: Բաքվի բոլշևիկները և խորհրդային իշխանությունը դիմեցին Կասպից նավատորմի նավաստիներին, կոչելով մոբիլիզացիայի յենթարկել բոլոր ուժերը՝ նավթի արտահանումն ուժեղացնելու համար: «Ռուսաստանի կարմիր պրոլետարիատը,—գրում եր ընկ. Միկոյանը,—վորը տանջված ե սովից, վորը հպարտ ե իր կոմունիստական գիտակցությամբ, պրոլետարական կոմունիզմի համար պայքարող անձնազոհ մարտիկի իր բարձր պարտքի գիտակցությամբ, մեզ վրա նայում ե, վորպես միակ հույսի վրա: Ռուսաստանի մեր բոլոր ընկերների հայացքները մեզ են ուղղված, Բաքվի ռայոնի հարուստ նավթարդյունաբերությանը...մեծ խնդրին—նավթի պաշարի անհապաղ արտահանմանը—պետք ե յենթարկվի ամեն ինչ»[1]:

Բաքվի Ժողկոմխորհի նիստում ընկ. Ֆիոլետովը հայտարարեց, վոր յենթադրվում ե ամեն որ Բաքվից արտահանել 1-ական միլիոն փութ նավթ: Բաքվի բանվորները բոլշևիկների ղեկավարությամբ պատվով գլուխ բերին այդ խնդիրը: Մինչդեռ ապրիլին արտահանվել եր 5 միլիոն փութ նավթ, մայիսին—11 միլիոն փութ, հունիսին—արտահանվեց 28,3 միլիոն փութ, հուլիսին—30 միլիոն փութ: Բաքվի բանվորները կատարում եյին իրենց պրոլետարական պարտքը Ռուսաստանի հերոսական պրոլետարիատի առաջ, վորը սովված եր ինտերվենցիայի և բլոկադայի հրե ողակում: Բաքվի տասնյակ-միլիոնավոր փութ նավթն աշխուժացնում եր Խորհրդային Ռուսաստանի արդյունաբերությունն ու տրանսպորտը ամենադժվար, ամենածանր ժամանակում:

[1] «Известия Бакинского Совета» № 107, 1918 г.

VII

Խորհրդային իշխանությունը Բաքվում իրականացրեց իր սոցիալիստական միջոցառումները պարենային ծանր ճգնաժամի և քաղաքացիական լարված պատերազմի պայմաններում: 1917—1918 թվականների ընթացքում քաղաքի պարենային վիճակը անընդհատ վատանում էր: Մարտի 21-ին կազմակերպվեց պարենային դիրեկտորիա, վորը հետագայում փոխարինվեց Պարենի ժողովրդական կոմիսարիատով: «Բաքվի խորհուրդը,—գրում էր դիրեկտորիան,—իր վրա հսկայական խնդիր է վերցրել՝ պահել Նավթաբեր շրջանը, վորը հսկայական նշանակություն ունի Ռուսաստանի խորհրդային հանրապետության տնտեսական կյանքում, իր իշխանության մեջ: Պարենային դիրեկտորիան իր կողմից ամեն ջանք թափում է բոլոր միջոցներով ինչ վոր հնարավոր է անելու, թեթևացնելու համար սովահար յեղած բնակչության վիճակը»:

Պարենային դիրեկտորիան ձգտում էր ապահովել հացի հայթայթումը Հյուսիսային Կովկասից: Այնտեղ գնվել էր մեծ քանակությամբ հաց, բայց Դաղստանի և Հյուսիսային Կովկասի հակահեղափոխության գործողությունները խանգարում եյին այդ խնդիրը կատարելուն: Յերկաթուղային հաղորդակցությունը խանգարվել էր: Այն ժամանակ վորոշեցին հացը Ղզլարով փոխադրել մինչև Շենդրիկովսկայա և Բրյանսկայա նավահանգիստները (Պետրովսկից ավելի հյուսիս), իսկ այնտեղից շոգենավերով մինչև Բաքու: Նավահանգիստներում կատարվեցին անհրաժեշտ կառուցումները: Բայց այս ճանապարհն էլ չափազանց անհարմար էր: Ղզլարից մինչև ծովի ափը 60 վերստ էր: Այս տարածությունը հացը փոխադրվում էր ձիերով: Շենդրիկովսկայա նավահանգիստը ծանծաղ տեղումն էր, շոգենավերը կանգ եյին առնում ափից հեռու, և հացը նրանց մոտեցվում էր նավակներով: Այդ յեղանակով հաջողվում էր օրական բեռնել 2—3 հազար փութ հաց, ըստվորում քամիների հետևանքով յերբեմն միքանի օրվա ընթացքում բեռնում ամենևին չէր լինում:

Այս կապակցությամբ պարենային ճգնաժամը Բաքվում ամբողջ մայիսի ընթացքում խիստ սրվում էր: Ոգտվելով դրանից, թշնամին փորձում էր սովի մատնված բանվորներին գրգռել խորհրդային իշխանության դեմ: Բուրժուազիայի լակեյները, եսերներն ու մենշևիկները, սովի կմախքացած ձեռքով ձգտում եյին խեղդել պրոլետարական դիկտատուրան: Բաքվի բոլշևիկները

պարզաբանում եյին ստեղծված դրությունը և բանվորներին կոչում եյին չենթարկվել թշնամու պրովոկացիային: «Ընկերներ,—գրում էր Բաքվի Ժողկոմխորհը,—պարենային դժվարությունները շարունակվում են: Զինված բանվորների ու զինվորների դեպուտատների խորհուրդների և նրանց գործադիր օրգանների բոլոր ջանքերին, հսկայական քանակությամբ գնված հացը չնչին քանակներով է հասնում: Ընկերներ, այս հողի վրա, սովի հողի վրա յեն դժգոհությունն ու հուզմունքը թափանցում ձեր հոգիները: Կրկին ու կրկին անգամ մենք ձեզ կոչ ենք անում հուսահատության չհասնել: Սովը լավ հող է պրովոկացիայի համար: Մի՛ յենթարկվեք, ընկերնե՛ր, մեր թշնամիների ագիտացիային»[1]:

Մայիսի 15-ին հանքագործարանային կոմիտեների կոնֆերենցիան քննարկում էր պարենային հարցը: Մենշևիկներն ու եսերները փորձում եյին այդ կոնֆերենցիան դարձնել դատ բոլշևիկյան կուսակցության գլխին: Բայց նրանք մերկացվեցին: Ալյոշա Ջափարիձեյի առաջարկությամբ կոնֆերենցիան նշեց, վոր Բաքվի խորհուրդն ամեն միջոցի դիմում է, վորպեսզի հաց ձեռք բերի բնակչության համար: Նա դիմեց՝ կոչ անելով «չհուսահատվել և չենթարկվել Խորհրդային իշխանության թշնամիների ագիտացիային, վորոնք ուզում են ոգտագործել բանվորների սովահար տրամադրությունը և յերկպառակություն գցել պրոլետարական ընտանիքի մեջ»[2]:

Այս կոնֆերենցիայի հանրագումարները տալով, Միկոյանը գրում էր. «Դատը կայացավ: Ժողովրդական դատ, բանվորական դատ: Մեղադրյալների աթոռներին եյին նստել վոչ թե նրանք, ում ցեխակոլոլ եյին անում, վորոնց դեմ եյին գրգռում սովահար մասսաներին: Դատվում եյին վոչ թե Խորհրդային իշխանությունն ու նրա անձնվեր կրողները, վորոնք առանց ձեռքերը ծալելու աշխատում են բանվորների իշխանությունն ամրապնդելու համար: Վոչ թե նրանք, ովքեր այսպիսի կարճ ժամկետում Խորհրդային իշխանության տակը ամուր հիմք դրին, հետ մղեցին վայրենի բանդաների հարձակումը նրա վրա դրսից, կոտրեցին կապիտալիստների համառ դիմադրությունը ներսից և, շրջանում ամրացնելով իրենց քաղաքական իշխանությունն ու ուժը, անցնում են շահագործող դասակարգերի տնտեսական տիրապետության վոչնչացմանը... Դատվում եյին վոչ թե Խորհրդային իշ—

[1] «Известия Бакинского Совета» № 44, 1918 г.

[2] «Бакинский Рабочий» № 89, 1918 г.

խանությունն ու պրոլետարական կոմունիզմի մարտիկները: Ոչ, մեղադրյալների աթոռներին ժողովրդական դատարանը նստեցրեց Խորհրդային իշխանությունը «մեղադրող» հարություն առած մեռելներին. գրպարտիչներն ու ստախոսները, ինչպես հանցագործներ, անարգանքի սյունին են գամված: Կեղծավորությունը մերկացվեց: Ճշմարտությունը վերականգնվեց»[1]:

Հացի համար մղվող պայքարի այս ծանր օրերին պրոլետարական Բաքվին օգնության հասավ ընկեր Ստալինը: Հունիսի 11-ին Բաքվում ստացվեց այս հեռագիրը. «Հաղորդեցեք ռադիոյով Բաքու՝ Շահումյանին, որ ես, Ստալինս, գտնվում եմ հարավում և շուտով կլինեմ Հյուսիսային Կովկասում: Խասավ-Յուրտ—Պետրովսկ գիծը կուղղվի ինչ էլ որ լինի: Բաքվին օգնելու համար ուղարկված է և կանոնավոր կերպով կուղարկվի ամեն բան: Այսօր Ցարիցինից մեկնում է հատուկ սուրհանդակ, հետն ունենալով Շահումյանին գրած նամակը: Հաց կուղարկենք ինչ էլ լինի: Խնդրում ենք ամրացնել Հաջիքաբուլ Ֆրոնտը և չվհատվել: Ստալին»[2]:

Միևնույն օրը, իրականացնելով Ստալինի խոստումը, Սերգո Օրջոնիկիձեն Վլադիկավկազից Բաքու հաղորդում էր. «Վաղը ջրային ճանապարհով ուղարկում ենք տաս հազար փութ հաց: Կարգադրված է անհապաղ մարշրուտային գնացքներ ուղարկել Ստավրոպոլի նահանգից և Թերեքի մարզից: Ողջույն Բաքվի ընկերներին, որոնք հերոսական պայքար են մղում բանվորների և պրոլետարիատի դավաճանների դեմ: Ս. Օրջոնիկիձե»[3]:

Ընկեր Ստալինը, կազմակերպելով Ցարիցինից առաջին հերթին Մոսկվային և Պետրոգրադին պարենային օգնություն ցույց տալը, մեծ քանակությամբ հաց էր հատկացնում Բաքվին: Միաժամանակ ընկեր Ստալինի ղեկավարությամբ սկսվեց Կզլար կայարանից մինչև Ստարո-Թերեչնայա նավահանգիստը տանող երկաթգծի շինարարությունը: Այն կառուցում էին Վլադիկավկազի երկաթգծի բանվորների, Բաքվի և Ցարիցինի կազմակերպությունների օժանդակությամբ: Այդ երկաթգծի ավարտումը կարող էր նշանակելիորեն բարելավել Բաքվի պարենային վիճակը:

Խորհրդային Բաքուն հացի մեծ պաշարներ կարող էր ստանալ նաև ադրբեջանական գյուղից: Ադրբեջանի գավառներում, առանձնապես Մուղանում, շատ բարձր բերք էր, բայց հացահատիկը հավաքող չկար: Խորհրդային իշխանությունը հացահատիկի հավաքը կազմակերպելու գծով միջոցներ էր ձեռնարկում: Գավառներն ուղարկված ընկերներն այդ աշխատանքի համար կազմակերպում էին տեղական ռուս և մուսուլման բնակչությանը: Այդ իսկ նպատակով Բաքվից մեկնում էին բանվորների արտելներ և ուղարկվում էր անհրաժեշտ գյուղատնտեսական ինվենտար: Միքանի տեղերում բանը հաջող էր գնում: Բայց գործը մեծ մասամբ վատ էր կազմակերպված. աշխատանքային ձեռքերը և ինվենտարը չէին բավականացնում, և բերքը կորչում էր:

Հունիսին և հուլիսին պարենային վիճակը Բաքվում շարունակում էր վատթարանալ: Խորհրդային Ռուսաստանը, որը ինքն էր սուր սով քաշում, չէր կարող մեծ օգնություն ցույց տալ: Ադրբեջանի գավառներից հաց համարյա չէր ստացվում: Բանվորները սնվում էին գլխավորապես ընկույզներով և արևածաղկով: Նման դրությանն ամենից առաջ նպաստում էր Բաքվի պարենային կազմակերպությունների մեծ աղտոտվածությունը: Պարենի ժողկոմը ձախ էսեր Ցիրուլսկին էր: Պարենային ապարատում ծվարել էին մենշևիկներն ու էսերները, որոնք գիտակցաբար վիժեցնում էին բնակչությանը մատակարարելու գործը: Հափշտակումներն ու չարաշահությունները վիթխարի չափեր ընդունեցին: Լայնորեն զարգանում էր սպեկուլյացիան: Գիտակցաբար սրելով պարենային ճգնաժամը, էսերներն ու մենշևիկները շարունակում էին վարել իրենց պրովոկացիոն կամպանիան:

Սովահար բանվորների շարքերը մեծ քայքայում մտցրեց հացի խմբական գնումներ կատարելու համար մղվող կամպանիան: Խմբական գնումներ թույլատրելը նշանակում էր հացի մենաշնորհի խախտում և ամբողջ պարենային գործի կազմալուծում: Բոլշևիկները վճռական պայքար մղեցին դրա դեմ: Ընկ. ընկ. Շահումյանը, Ջափարիձեն և ուրիշները կատեգորիկ կերպով առարկում էին խմբական գնումների դեմ: Բայց սովահար յեղած բանվորների նշանակալից մասն ընկավ էսեր-մենշևիկյան ուռկանը: Հանքա-գործարանային կոմիտեների կոնֆերենցիան երկու անգամ քննարկեց այս հարցը և երկու անգամն էլ խմբական գնումներ թույլատրելու կողմն արտահայտվեց: Երկար ջանքերից հետո միայն հաջողվեց անցկացնել մի շարք սահմանափակումներ, որոնք գնումների բոլոր օպերացիաները դրին պարենի կոմիսարիատի հսկողության տակ:

Մերկացնելով էսերների ու մենշևիկների վարքագիծը, բոլ-

[1] «Известия Бакинского Совета» № 92, 1918 г.

[2] «Бакинский Рабочий» № 110, 1918 г.

[3] Նույն տեղում:

շևիկները շարունակում էին պաշտպանել խորհրդային պարենային քաղաքականության սկզբունքները։ Նրանք նոր ուժով պայքար ծավալեցին հացի համար։ Բոլշևիկներն այս ֆրոնտ ուղարկեցին իրենց լավագույն կազմակերպիչներին։ Հունիսի 20-ին Ցիբուլսկու փոխարեն պարենի ժողկոմ նշանակվեց Ալյոշա Ջափարիձեն։ Մնալով Բաքվի խորհրդի նախագահ և ներքին գործերի ժողկոմ, անխոնջ Ալյոշան յեռանդուն աշխատանք ծավալեց։ Ագիտատորներ, գնորդներ, բանվորական արտելներ գործուղվեցին Լենքորանի և Ջևադի գավառները, Հյուսիսային Կովկաս, Պովոլժյեյի և Ռուսաստանի այլ ռայոնները։ Զինված ջոկատներ ուղարկվեցին յերկաթուղային ճանապարհը մաքրելու համար։

Ջափարիձեյի խնդրով Բաքվի ժողկոմխորհը նրան տեղակալ հատկացրեց բոլշևիկ Կոստանդյանին։ Մասնագիտությամբ ինժեներ, նա հեղափոխության առաջին որերից գլխովին խրվեց ակտիվ քաղաքական պայքարի մեջ։ Կոստանդյանն աշխատում էր Բալախանում և սերտորեն կապված էր հանքային բանվորների մասսայի հետ։ Նշանակվելով ռայոնական կոմիսար պարենի գծով, նա կարողացավ լավ դնել այդ գործը հանքերում։

Սակայն, չնայած այս ամենին, պարենային դրությունը չէր բարելավվում։ Փոխվեց պարենային գործի ղեկավարությունը։ Բայց Բաքվի և տեղերի պարենային ապարատում մնում էին էսէր-մենշևիկյան սաբոտաժնիկներ և վնասարարներ։ Ջափարիձեն ասում էր, թե «ստիպված ենք լինում կասկածանքով նայել կազմակերպության յուրաքանչյուր աշխատողին, և յեթե հնարավորություն լիներ փոխարինել նրանց նորերով, ապա այդ շատ ավելի լավ կլիներ»։ Խորհրդային իշխանությունը Բաքվում ուժ և ժամանակ չուներ պարենային ապարատի արմատական զտում անցկացնելու։ Մյուս կողմից, պարենային ճգնաժամի առավել ծանր ժամանակաշրջանը զուգադիպեց ֆրոնտի դրության վատթարացմանը։

Իր գոյության առաջին որերից Բաքվի խորհրդային իշխանությունը մտավ քաղաքացիական պատերազմի շրջանը։ «Մենք գտնվում ենք անընդհատ պատերազմի վիճակում,—գրում էր Ստեփան Շահումյանը Ժողկոմխորհին։—Յերեկ ստացվեց հաղորդագրություն, վոր Գանձակից շարժվել են մուսուլմանական զորքերի յերկու նոր էշելոններ՝ վրացի իշխան Մաղալովի գլխավորությամբ... Ողակը սեղմվում է Բաքվի շուրջը, և, հավանական է, որերս տեղի կունենան նոր մարտեր»։

Այդպիսի պայմաններում Բաքվի ռազմական դրության ամրապնդումը խորհրդային իշխանության կարևորագույն խնդիրն էր։ Ռազմական բոլոր գործերը վարում էր Կովկասյան բանակի Ռազմա-հեղափոխական կոմիտեն։ Ընկ. Կորգանովը, այդ կոմիտեյի նախագահը և ռազմա-ծովային գործերի ժողկոմը, անմիջականորեն ղեկավարում էր Կարմիր բանակի կազմակերպումն ու նրա մարտական գործողությունները։ Այստեղ հենց ՌՀԿ մեջ աշխատում էին ընկ. ընկ. Մալիգինը, Բոգդանովը, Բերգը և ուրիշները։ Թիկունքում մեծ աշխատանք էր տանում ընկ. Ավակյանը, վորը նշանակված էր քաղաքի պարետ։

Խորհրդային իշխանության առավել հաստատուն հենարանը Կարմիր գվարդիայի ջոկատներն էին։ Բայց Կարմիր գվարդիայի ուժերը հերիք չէին։ Բաքվի ժողկոմխորհը և Կովկասյան բանակի ՌՀԿ-ն կենտրոնական խորհրդային կառավարության առաջ դնում էին Բաքու զորամասեր ուղարկելու հարցը։ Սակայն Խորհրդային Ռուսաստանը չէր կարող անհապաղ ոգնություն ցույց տալ։ Ուստի ժամանակավորապես, մինչև կենտրոնից ոգնություն գալը, հարկավոր էր ոգտագործել հայկական ազգային զորամասերը։

Հին բանակի շատ հայ զինվորներ, վորոնք վերադարձել էին արևմտյան ֆրոնտից, մնացել էին Բաքվում, հնարավորություն չունենալով հայրենիք մեկնելու։ Նրանք բոլորը մտան ազգային զորամասերի մեջ։ Մարտյան կռիվներից հետո այդ զորամասերը վերակազմվեցին և միացվեցին իբրև խորհրդային Կարմիր գումարտակներ։ Գումարտակները միավորվեցին իբրև բրիգադներ։ Հրամանատարական կազմը զգալի մասով կազմված էր դաշնակցական սպաներից, բայց բոլոր խոշոր ստորաբաժանումներում նշանակվեցին բոլշևիկ կոմիսարներ։ Ընկ. Միկոյանը նշանակվեց 3-րդ բրիգադի կոմիսար։ Ֆրոնտում, կատաղի պայքարի որերին նա հսկայական աշխատանք ծավալեց։

Զրահագնացքներից մեկի կոմիսարը բոլշևիկ Սամսոն Կանդելակին էր։ Հին ընդհատակյա հեղափոխական, նա անձնվեր կերպով պայքարում էր խորհրդային իշխանության համար, հետագայում բանտ նստեց Բաքվի կոմիսարների հետ մեկտեղ և 1919 թվին հերոսաբար զոհվեց պրոլետարիատի դիկտատուրայի համար։

Թշնամին Բաքվի վրա հարձակվում էր յերեք կողմից. հարավում, Լենքորանի գավառում, գործում էին մուսավաթիստների և պարսկական ավազակներ—շախսեվանների բազմաթիվ շայկաները։ Նրանք ներխուժում էին Մուղանի գյուղերը և անողոքա-

քար կոտորում ամբողջ բնակչությանը: Այստեղ ուղարկվեցին խորհրդային զորքերի խոշոր ուժեր: Նրանց հաջողվեց ջախջախել թշնամուն Լենքորանում և մոտակա գյուղերում, բայց առավել հեռավոր կետերում կռիվը ձգձգվեց:

Մայիսի 1-ին Լենքորանում գումարվեց մի մեծ միտինգ: Ներկա յեր ավելի քան 2 հազար մարդ: Հավաքվածները միաձայն վորոշեցին՝ «ճանաչել խորհրդային իշխանությունն ինչպես Բաքվի կենտրոնում, այնպես էլ Լենքորան քաղաքում կազմակերպվող խորհրդային իշխանությունը, վորին ամեն կերպ աջակցել և յենթարկվել նրա կարգադրություններին: Խորը շնորհակալություն հայտնել բանվորների, զինվորների և նավաստիների դեպուտատների Բաքվի խորհրդին՝ մեզ ցույց տված ռազմական ոգնության համար, վորի շնորհիվ դուրս քշվեց մինչև այժմ Լենքորանում տեր ու տիրական հակահեղափոխական ավազակային բանդան... Խորը զայրույթ ենք հայտնում հակահեղափոխական «Մուսավաթ» կուսակցության գործողությունների առթիվ, նրա վրա յենք դնում Գանձակի, Բաքվի, Լենքորանի և այլ արյունահեղությունների ամբողջ պատասխանատվությունը»[1]:

Հյուսիսում խորհրդային զորքերը գործում էին ընդդեմ Դաղստանի հակահեղափոխության, վորը Բաքուն կտրել էր հացառատ շրջաններից: Այստեղ ամենից առաջ հարկավոր էր գրավել Պետրովսկը: «Մենք այսոր պետք է ուժեր ուղարկեյինք Պետրովսկը նվաճելու համար, վորը հետ է պահում Բաքվին հատկացված պարենի բեռները»,—գրում էր Շահումյանը Ժողկոմխորհ՝ ապրիլի 19-ին: Ապրիլի կեսերին կարմիր-գվարդիականների ջոկատները հավաքվեցին Ազատության հրապարակը: Նրանց պարզաբանեցին, վոր ռազմական մեծ գործողություն է սպասվում, և առաջարկեցին ՌՀԿ-յում ստանալ հրացաններ, փամփուշտներ և զգեստավորում: Միքանի որից հետո կարմիր-գվարդիականները հավաքվեցին Պետրովսկ նավահանգիստը: Նավահանգիստը լիք-լեցուն էր ժողովրդով: Բաքվի շատ բանվորներ էին յեկել ճանապարհելու Կարմիր գվարդիային և Բաքվի ուրիշ զորամասերին դեպի նրանց առաջին արշավը: Կորգանովը դիմեց կարմիր-գվարդիականներին մի ճառով: «Ուռա» բացականչությունների տակ ծովը մտավ «Արդահան» հրետաձիգ նավակը և կարմիր-գվարդիականներով ու զորամասերով լցված հինգ նավ:

Պետրովսկից վոչ հեռու խորհրդային զորքերը ափ դուրս յե-

---

[1] «Бакинский Рабочий» № 79, 1918 г.

կան: Անսպասելի հարվածով ցամաքից և ծովից նրանք հարձակվեցին հակառակորդի վրա, և Պետրովսկը վերցվեց: Քաղաքի համար մղվող մարտերում առանձնապես աչքի ընկան կարմիր-գվարդիականները, ցույց տալով արիության և հերոսության որինակներ: Հակառակորդի կատաղի կրակի տակ նրանք առաջինը մտան քաղաք: Ինչպես հաղորդում էր ջոկատի պետը, «Դաղստանի և Չեչնիայի տեղական գիտակից դեմոկրատիայի մեծ մասը անջատվեց Դաղստանի հակահեղափոխական պարագլուխներից»: Պարտություն կրելով, հակահեղափոխականները հանձնեցին մյուս կարևոր կետը—Դերբենտը: Բաքվի Ժողկոմխորհի ազդեցությունն այսուհետև տարածվեց նաև Դաղստանի մարզի վրա: Բաքվի ժողկոմխորհն այստեղ կոմիսար նշանակեց Վիկտոր Նանեյշվիլուն:

Միաժամանակ խորհրդային իշխանությունն իր ազդեցությունը տարածեց Ադրբեջանի Ղուբայի գավառի վրա: Այստեղ գործում էին Բաքվի բոլշևիկ Գեորգի Ստուրուայի ղեկավարած ջոկատները: Նրանք նախ գրավեցին Խաչմասը և այստեղից ուժերն ուղղեցին դեպի Ղուբա: Բնակչությունը ջերմորեն վողջունում էր խորհրդային իշխանության գալուստը: Ղուբայում գործում էր Կարմիր գվարդիայի ջոկատը Միր Ջաֆար Բաղիրովի գլխավորությամբ: Բաքվի ժողկոմխորհի կոմիսարը ընկ. Շահումյանին հաղորդում էր, վոր ապրիլի 23-ին Ղուբայի հրապարակում ինքը ընկ. Բաղիրովի հետ մեկտեղ հանդիսավոր կերպով հռչակել է խորհրդային իշխանության հաստատումը: Խորհուրդներին ճանաչելու ակտը ստորագրել են ժողովրդի ներկայացուցիչները: 115 գյուղացի ազատվել են Ղուբայի բանտից: Հակահեղափոխության պարագլուխները փախել են:

Ռազմական խոշոր գործողություններ էին ծավալվում կենտրոնական ֆրոնտում: Հակահեղափոխական բանակն այստեղ կազմված էր միավորված մուսավաթական-մենշևիկյան ուժերից, վորոնք կազմակերպվել էին Անդրկովկասի կառավարության վորոշմամբ: Դրանք էին թաթարական հեծելազունդը, վրացական վարժական գումարտակը և ուրիշ զորամասեր՝ Մաղալովի հրամանատարությամբ: Նրանք գրավեցին Բաքվից 120 կիլոմետր հեռավորության վրա գտնվող կարևորագույն կետը—Հաջիքաբուլը: Հաջիքաբուլի շուրջը համառ պայքար էր տեղի ունենում: Միայն ապրիլի 20-ին չորսժամյա կռվից հետո մուսավաթական-մենշևիկյան բանդաները նահանջեցին Թիֆլիսի ուղղությամբ, գազանային ավերմունքի յենթարկելով թողած կայարանը:

Հաջիքաբուլի գրավումը հնարավորություն էր բացում, որպեսզի խորհրդային զորքերը հետագա առաջշարժում կատարեին երկաթուղու ճանապարհով դեպի Գանձակ: Այդ բանը հարկավոր էր օգտագործել: Պաշտպանել Բաքվի խորհրդային իշխանությունը և այն տարածել ամբողջ Ադրբեջանի վրա կարելի էր հակառակորդին վճռականորեն ջախջախելով: Միայն ակտիվ հարձակումը կարող էր ապահովել հաղթանակը: Ադրբեջանի գյուղացիներին կալվածատերերի և կապիտալիստների լծից ազատելու և ամբողջ Անդրկովկասում ազատության դրոշը բարձրացնելու համար Կարմիր բանակը շարժվեց դեպի Գանձակ:

Բաքվի Ժողկոմխորհը կոչով դիմեց Անդրկովկասի բոլոր ազգություններին: «Մուսուլմանական բեկերն ու խաները, վրացական իշխաններն ու ազնվականները և հայկական բուրժուազիայի սպասավորները, որոնք նստել էին սեյմում, կործանեցին Անդրկովկասը: Նրանք դեմ դուրս եկան իրենց գյուղացիներին ու բանվորներին և մեր երկրամասը ծախեցին թուրքերին ու գերմանացիներին: Թուրք փաշաների և գերմանացի գեներալների օգնությամբ նրանք ուզում են գյուղացիներից խլել բեկերի և իշխանների հողերը և պատերազմով գնում են Բաքվի բանվորների դեմ... Մենք, Բաքվի բանվորներս, Անդրկովկասի բոլոր բանվորներին և գյուղացիներին կոչ ենք անում կանգնել մեր կարմիր դրոշի ներքո, զենքը ձեռքին դուրս գալ իրենց դահիճների—խաների և բեկերի, վրացի իշխանների և ազնվականների, հայկական բուրժուազիայի և նացիոնալիստների դեմ: Մենք ձեզ կոչ ենք անում զենքը ձեռքին վտարել մեր երկրից թուրքական ու գերմանական բանդաներին: Բանվորներն ու գյուղացիներն իսկական, և՛ դասակարգային և՛ ազգային ազատություն կունենան, երբ նրանք կստեղծեն իրենց խորհրդային բանվորագյուղացիական իշխանությունն ամբողջ Անդրկովկասում»[1]:

Գրիգորի Կորգանովը Կովկասյան Կարմիր բանակին տված հրամանի մեջ գրում էր. «Կովկասյան Կարմիր բանակի ընկե՛ր զինվորներ: Բոլոր աշխատավորների—Անդրկովկասի բանվորների և գյուղացիների հայացքները հառած են Բաքվի պրոլետարիատին և նրա Կարմիր բանակին ու նավատորմին... Բաքվի Կարմիր բանակին սպասում են ինչպես ազատարարի: Ձեզ կհարեն բոլոր նրանք, ով զենք ունի իր ձեռքում: Դուք, ընկեր զինվորներ, ուժեղ կլինեք ոչ միայն քանակով, բայց այժմ էլ դուք նշանակե-

¹ «Известия Бакинского Совета» № 132, 1918 г.

լորեն ավելի ուժեղ եք ձեր թշնամիներից՝ ձեր գիտակցության և հեղափոխական ոգու ուժով, նրանով, որ դուք աշխատավոր ժողովրդին, այլ ոչ թե կալվածատերերի ու կապիտալիստների շահերը պաշտպանող բանակ եք հանդիսանում: Ցեվ իմացեք, ընկեր զինվորներ, եթե դուք կռվում խնայեք ու պաշտպանեք մուսուլման, հայ և վրացի գյուղացիների կյանքն ու տնտեսությունը, եթե դուք օգնեք նրանց զենքի ուժով տապալելու իրենց կալվածատերերին և տիրելու նրանց հողերին, այն ժամանակ փաշաների, բեկերի և ազնվականների ոչ մի հրոսախումբ ձեզ սարսափելի չի լինի: Դե՛ համարձակ դեպի առաջ, դեպի արյունահեղ, բայց «սրբազան ու արդար» կռիվ: Ձեզ հետ մեկտեղ կգնան նաև ձեր հեղափոխական ավագ ընկերները:

Առա՛ջ դեպի հաղթանակ»[1]:

Կարմիր բանակի գործողությունները սկզբում շատ հաջող էին: Նա արագորեն առաջ շարժվեց: Հունիսի սկզբին Ադրբեջանի տերիտորիայի նշանակալից մասն ազատվեց կապիտալիստների և կալվածատերերի իշխանությունից: Հունիսի 12-ին Կարմիր բանակը գրավեց Քյուրդամիրը:

Խորհրդային զորքերի ճնշման տակ նահանջելով, մուսավաթիստները խաղաղ բնակիչներին ստիպում էին թողնել գյուղերը և հեռանալ իրենց հետ: Մինչդեռ պրոլետարական Բաքուն սով էր քաշում, հասած հացահատիկը մնում էր չհավաքված: Բոլշևիկ-կոմիսարները հարկադրված եղան շատ միջոցների դիմելու դրությունը փրկելու համար: Ընկ. Միկոյանը կազմակերպեց Շամախու և Գյոկչայի գավառների բերքահավաքը: Այդ նպատակով նա առաջարկեց հայտարարել պարտադիր աշխատանքային պարհակ և Բաքվի կազմակերպություններին խնդրեց գյուղատնտեսական անհրաժեշտ գործիքներ ուղարկել:

Միաժամանակ կարևոր էր բացատրական աշխատանք տանել մուսավաթիստների կողմից խաբված ադրբեջանական գյուղացիների մեջ: Այդ ուղղությամբ մեծ գործունեություն ծավալեցին Ռազմա-հեղափոխական կոմիտեի ագիտատորները: Ագիտատորների աշխատանքի պայմանները ամենադժվարն էին: Խաները և բեկերը շատ ադրբեջանցի-բնակիչների հարկադրում էին փախչել և թաքնվել: Դաշնակցական ջոկատները բնակչության վրա հաճախ բռնություններ ու վոճրագործություններ էին գործում, ազգային երկպառակություն հրահրելով ադրբեջանցիների և հա-

¹ «Бакинский Рабочий» № 106, 1918 г.

ցերի միջև։ Բոլշևիկ ագիտատորները յենթարկվում եյին բեկերի հրոսակախմբերի հարձակման։ Բայց չնայած այս ամենին, նրանք աներկյուղ կերպով գնում եյին գյուղից գյուղ, գյուղացիական մասսաներին կազմակերպելով խորհրդային իշխանության շուրջը։

Մուսուլման ագիտատորների ազդեցության տակ ադրբեջանական գյուղերի բնակիչները, վորոնք ահաբեկված եյին մուսավաթիստների կողմից, դուրս եյին գալիս իրենց ապաստարաններից, հավաքվում և գյուղական ժողովներ եյին սարքում։ Նրանք միաբանորեն ճանաչում եյին խորհրդային իշխանությունը, պատրաստակամություն եյին հայտնում նրան ամեն տեսակի ոժանդակություն ցույց տալու։ Ագիտատորների ոգնությամբ գյուղացիները կազմակերպում եյին իրենց գյուղական խորհուրդները։ Հունիսի 21-ին «Бакинский Рабочий»-ի մեջ զետեղված եր հաղորդագրություն ճակատամերձ շրջանում գյուղացիների պատգամավորների խորհուրդներ կազմակերպելու մասին։ Արաբ-Մեհտի-բեկլի, Արաբ-Սեյլան և ուրիշ գյուղերի գյուղացիները միաձայն վորոշեցին ճանաչել խորհրդային իշխանությունը, ընտրել գյուղացիների պատգամավորների խորհուրդ և Բաքվի խորհրդին խնդրել համակողմանի աջակցություն ցույց տալ։ Ջիգնի, Ախունի և ուրիշ գյուղերի գյուղացիները հայտարարեցին. «Ճանաչում ենք մեր սեփական խորհրդային իշխանությունը և կաշխատենք բոլոր միջոցներով ամրապնդել այն։ Աջակցություն ենք խնդրում Բաքվի խորհրդի գյուղացիների պատգամավորների, մեր յեղբայր-ընկերների կողմից»[1]։

Ընկ. Սոլնցևը, վորը նշանակվել եր Գյուրդամիրի և նրա շրջանների կոմիսար, հրավիրեց Շարբեղլի, Ռախայլի, և Արափչար գյուղերի պատգամավորների խորհրդակցություն։ Պատվիրակները հայտարարեցին, վոր «գյուղացիները սթափվել են բեկերի, աղալարների և խաների առաջացրած այն կոշմարից, իբր թե, սա ազգային պատերազմ է, իսկ քանի վոր այդ այդպես չէ, սա բոլոր ազգությունների պայքարն է բուրժուազիայի, բեկերի, աղալարների և խաների դեմ, ուստի ամբողջովին յենթարկվում են խորհրդային իշխանությանը, պատրաստ են ամեն կերպ ոգնել Խորհուրդներին և մտնել Կարմիր բանակի շարքերը»[2]։ Նրանք խնդրում եյին իրենց գյուղերն ուղարկել ագիտատորներ՝ կարգ ու կանոնը վերականգնելու, գյուղացիական խորհուրդներ և

[1] «Бакинский Рабочий» № 128, 1918 г.

[2] «Известия Бакинского Совета» № 131, 1918 г.

գյուղական միլիցիա կազմելու համար։ Գյուղացիները գանգատվում եյին «վայրենի դիվիզիայի» զինվորներից, վորոնք բռնի կերպով խլում եյին նրանցից հացն ու անասունը։

Ընկ. Սոլնցևը գյուղացիներին բացատրեց, վոր բոլշևիկները «չքավոր դասակարգի իսկական բարեկամներն են, նրանք պատերազմ են մղում բեկերի, խաների և աղալարների դեմ՝ նրանցից խլելու համար այն բոլոր հողերը, վորոնք պատկանում են նրանց, և աշխատավորական բնակչությանը հանձնելու համար, իսկ հողը հավասարաչափ բաշխելու համար գյուղացիները պետք է իրենց իսկ չքավոր գյուղացիներից կազմեն գյուղացիական խորհուրդներ»[1]։ Ընկ. Սոլնցևը գյուղացիներին առաջարկեց, յեթե նրանք գիտեն, թե վորտեղ են գտնվում բեկերն ու խաները, բռնել նրանց՝ վորպես աշխատավոր ժողովրդի չարանենգ թշնամիների։ Պատվիրակների հետ մեկտեղ նա Ֆրոնտային հեղափոխական կոլեգիայի անդամներին գործուղեց շրջակա գյուղերը՝ գյուղացիական խորհուրդներ և գյուղական միլիցիա կազմակերպելու համար։

Կարմիր բանակի հաջողությունները և գյուղացիական շարժման աճումը խիստ տագնապեցրեց մուսավաթիստներին։ Պարզ եր, վոր խորհրդային Բաքուն ջախջախելու և գյուղացիական շարժումը ճնշելու համար միայն մենշևիկ-մուսավաթական ուժերն անբավարար են։ Դեռ Տրապիզոնի կոնֆերենցիայի ժամանակ մուսավաթիստները թուրքական իմպերիալիստների հետ գաղտնի համաձայնություն եյին կնքել Անդրկովկասում համատեղ գործողություններ կատարելու մասին։ Մայիսի 25-ին Անդրկովկասի կառավարությունը կազմալուծվեց։ Հայտարարվեցին Վրաստանի, Հայաստանի, Ադրբեջանի «անկախ» հանրապետությունները։ «Ումնի՞ց է անկախ Գեգեչկորու կառավարությունը,—գրում եր Լենինը։—Խորհրդային հանրապետությունից նա անկախ է, բայց գերմանական իմպերիալիզմից նա փոքր ինչ կախում ունի...»[2]։

Յեվ իրոք, «անկախ» Անդրկովկասի լիակատար տերերը դարձան գերմանական և թուրքական իմպերիալիստները։

Յերբ այսպես կոչված ադրբեջանական կառավարությունը դեռ ուրիշ տերիտորիայի վրա—Թիֆլիսում եր գտնվում, իր շտաբով Գանձակ ժամանեց Կովկասի թուրքական բանակի հրա-

[1] «Известия Бакинского Совета» № 131, 1918 г.

[2] Լենին, հ. XXIII, եջ 12։

մանդատար Նուրի-փաշան: Նուրի-փաշան արագ կերպով իր ձեռքի մեջ մտավ և սկսեց կարգադրություններ անել, ինչպես նվաճված յերկրում: Նա ազգային խորհրդին ներկայացրեց ադրբեջանական կառավարության նոր անդամների ցուցակը: Հունիսի 17-ին խորհուրդն անառարկելիորեն ընդունեց Նուրի-փաշայի ցուցակը և նրա պահանջով եվ իրեն ցրված հայտարարեց:

VIII

Թուրք իմպերիալիստներն ու մուսավաթիստներն իրենց համատեղ գործունեությունը սկսեցին՝ հեղափոխության օրերին կալվածատերերի խախտված «իրավունքները» վերականգնելուց: Հունիսի 22-ին ադրբեջանական կառավարությունը վորոշեց. «Մինչև այժմ կատարված՝ ինչպես մասնատիրական, այնպես եվ պետական հողերի գրավումը վերացնել... Ամենամոտիկ ժամանակի ընթացքում ներկայացնել մի զեկուցում՝ հողային կոմիտեները վերակազմելու կամ վերացնելու մասին»:

«Դաշնակիցները» միաժամանակ ձեռնամուխ յեղան ակտիվ ռազմական գործողությունների խորհրդային Բաքվի դեմ: Հարձակվող Կարմիր բանակի դեմ կռվելու համար շտապ կերպով փոխադրվում եյին Թուրքական զորքեր. խորհրդային իշխանությունը կործանելու համար մենշևիկյան Վրաստանը ծառայակամորեն անցկացրեց նրանց իր տերիտորիայի վրայով: Հունիսի 4-ի պայմանագրի համաձայն նա թույլատրեց «Օսմանյան բանակին կատարելու ամեն տեսակ ռազմական փոխադրումներ, տրանսպորտ և այլն՝ հանրապետության ստրատեգիական գլխավոր յերկաթուղիներով»: Այդ ժամանակից սկսած Թուրքական զորքերի փոխադրումն սկսվեց ուժեղ տեմպով:

Թուրքիայի հետ միասին խորհրդային Բաքվի դեմ դուրս յեկան գերմանական իմպերիալիստները: Լկտիաբար խախտելով մոտիկ անցյալում ստորագրված՝ Բրեստի հաշտության պայմանագիրը, գերմանական իմպերիալիզմը ձգտում եր գրավել խորհրդային տերիտորիան: Վրաստանն իր գաղութը դարձնելով, նա այժմ իր կեղտոտ թաթերը մեկնում եր Ադրբեջանի նավթային հարստություններին: Անդրկովկասում ռազմական մեծ ուժեր չունենալով, գերմանական իմպերիալիստները գործում եյին Թուրքական զորքերի և մուսավաթական-մենշևիկյան ջոկատների օգնությամբ: Թուրքական կանոնավոր բանակին գլուխ եյին կանգնած գերմանական հրահանգիչները:

Գերման-թուրքական զորքերի սկսված հարձակման կապակցությամբ ընկեր Ստալինը հուլիսի 1-ին Ցարիցինից հաղորդում եր Մոսկվա. «Բաքվի ռայոնը լուրջ սպառնալիքի տակ է, Թուրքական զորքերը գերմանական սպաների գլխավորությամբ իսկական պատերազմ են մղում Բաքվի զորամասերի դեմ: Պետք է կարծել, վոր այսպես կոչված համաձայնությունը գերմանացիների հետ՝ մի քող է Բաքվի վրա հարձակվելու համար: Ինչ խոսք, վոր ամբողջ բուրժուազիան Թուրքերի կողմն է... Բաքվի վիճակը և Տիխորեցկայայի ֆինալը փչացնում են ամբողջ պատկերը: Մենք ձեռք ենք առնում շտապ միջոցներ, վորոնց մասին ձեզ կհաղորդի ձեզ մոտ ուղարկվող հատուկ սուրհանդակը: Հուսով ենք, վոր դուրս կհանենք: Ստալին»[1]:

Բաքվի խորհուրդը նոր հակառակորդի դեմ պայքարելու իր վճռականության մասին հայտարարում եր. «Լսելով ընկեր Շահումյանի զեկուցումը Անդրկովկասում տիրող դրության և այն մասին, վոր գերմանական գիշատիչները ձգտում են զավթել Բաքուն՝ նպատակ ունենալով մասնավորապես այստեղից նավթ արտահանելը, բանվորների, զինվորների, նավաստիների և գյուղացիների դեպուտատների խորհուրդն ամբողջովին հավանություն է տալիս Բաքվի ժողովրդական կոմիսարների խորհրդի հեղափոխական ծրագրին, կրկին անգամ հայտնում է Բաքվի պրոլետարիատի ու խորհրդային Կարմիր բանակի պատրաստակամությունը՝ մինչև վերջը պայքարելու հարձակվող գերման-թուրքական բանդաների դեմ, պաշտպանելու մեր ազատությունն ու անկախությունը և մեր անքակտելի կապը Ռուսաստանի Խորհրդային Հանրապետության հետ»: Խորհուրդը հայտարարեց. «Գերմանական գիշատիչներին մենք չենք տա ժողովրդական աշխատանքով ձեռք բերած վոչ մի կաթիլ նավթ»:

Հունիսի վերջին խորհրդային զորքերը առաջին անգամ ֆրոնտում բախվեցին գերման-թուրքական զորամասերի հետ: Սակայն, այդպիսի թշնամու հայտնվելուն չնայած, Կարմիր բանակը շարունակում եր հաջող կերպով զարգացնել իր գործողությունները: Հաղորդելով, վոր Թիֆլիս և Փոթի յեն ժամանել գերմանական զորքեր, վորոնք կուղարկվեն Բաքվի վրա, Շահումյանը գրում եր. «Մեր զորքերում տրամադրությունը կայտառ է, կարգ ու կանոնը օրինակելի, նավատորմը հերոսաբար կպաշտպանի խորհրդային իշխանությունը. բանվորների տրամադրու-

[1] Սուրեն Շահումյան, Բաքվի կոմունան, եջ 38:

թյունը, մոտ յերեքամսյա սովին չնայած, շատ բարձր է, կկռվեն մինչև վերջին հնարավորությունը: Կենդանի չենք հանձնվի և գերմանական գիշատիչներին վոչ մի նավթ չենք թողնի,—ասում են բանվորները»[1]:

Խորհրդային զորքերն առաջին պարտությունները կրեցին վոչ թե գերման-թուրքական զորամասերից, այլ սեփական շարքերում յեղած դավաճանության և մատնչության հետևանքով: 7-րդ գումարտակը, կատարելով հրամանատարության կարևոր առաջադրանքը, անցնում եր ճահճով: Թշնամին անսպասելիորեն կրակ բացեց գումարտակի վրա: Այդպիսի ծանր մոմենտում վաշտերից մեկը հրաժարվեց հրամանին յենթարկվելուց և, բախտի քմահաճույքին թողնելով ընկերներին, յերկչոտաբար հեռացավ դիրքերից: Բռնված լինելով հակառակորդի խաչաձև կրակով, դավաճանված լինելով ներսից, խորհրդային զորամասը հարկադրըված յեղավ նահանջել: Զոհվեց 60 կարմիր-բանակային:

Այդպիսի դավաճանությունը զայրույթի ալիք առաջացրեց: Ամբողջ վաշտը ֆրոնտից հետ կանչվեց և կալանքի տակ առնվեց Նարգեն կղզում: Կորգանովը հրամանով դիմեց բանակին. «Այսուհետև ամեն մեկին, ով կհրաժարվի կատարել մարտական հրամանը, կամ տեղում գնդակահարել, կամ զենքի ուժով ստիպել գնալու դեպի առաջավոր դուրս յեկող շղթան... Կարմիր բանակում չեն կարող լինել վո՛չ հրձիգներ, վո՛չ կողոպտիչներ, վո՛չ բռնացողներ: Կարմիր բանակում պետք է վոչնչացվեն վողորմելի յերկչոտները, հեղափոխության մատնիչները»: Բաքվի խորհուրդը, քննարկելով այս հարցը, «վրդովմունք հայտնեց հանցագործներին և լիակատար վստահություն ռազմական կոմիսարիատին ու շտաբին... Խորհուրդը ռազմական կոմիսարիատին առաջարկում է այսուհետև էլ դավաճանների դեմ պայքարել ամենառեպրեսիվ միջոցներով»[2]:

Հունիսի 27—30-ը Գյոկչայի շրջանում տեղի յեր ունենում չորսորյա համառ կռիվ գեներալ Նազիմ-փաշայի թուրքական մեծ ուժերի դեմ: Այդ կռիվը խորհրդային զորքերի համար սկսվեց հաջող կերպով: Կարմիր-բանակայինները հերոսաբար հետ եյին մղում հակառակորդի գրոհը, բայց գերազանց ուժերի ճնշման տակ պետք է նահանջեյին: Աջ թևում կրած պարտությունը կենտրոնական քյուրդամիրյան խմբին հարկադրեց հեռանալ: Մի-

[1] ЦАОР, ֆ. 130, ց. 12, գործ 6, թ. 6—7:

[2] «Известия Бакинского Совета» № 122, 1918 г.

քանի զորամասերում թշնամական ագիտացիայի ազդեցության տակ սկսվեց կազմալուծում ու դասալքություն:

Բոլշևիկները ամեն միջոցի դիմում եյին ֆրոնտում դըրությունը վերականգնելու համար: Հունիսին անցկացվեց զենքի բոլոր տեսակների վարժական խմբերի դասընթացն անցած բոլոր նախկին սպաների ու զինվորների զորահավաք: Ապա հայտարարվեց 1893—1897 թվերին ծնված բոլոր քաղաքացիների զորակոչ: Ռազմական գործերի ժողկոմատը, ժողկոմխորհի ցուցումների համաձայն, առաջարկում եր զորահավաքից ազատել բանվորների խիստ սահմանափակ մի քանակություն, «ուշադրության առնելով միայն պաշտպանությունն ու նավթի արտահանումը»:

Ավագյանը վորպես քաղաքի պարետ կոչով դիմեց բնակչությանը. «Այն զորահավաքը, վոր խորհրդային իշխանությունը հայտարարել է Բաքվի պրոլետարիատի՝ և ամեն կողմից խորհըրդային Բաքվի վրա շարժվող հակահեղափոխության ճակատագրական գոտեմարտի ժամին, պետք է անցնի որինակելիորեն... Խորհրդային իշխանությունը, հեղափոխական ազատությունը, կարգ ու կանոնն ամրապնդելու նպատակները հրամայաբար պահանջում են, վոր խորհրդային իշխանության որգաններն առանց տատանվելու ամեն կերպ պայքարեն անարգ կողոպտչության, դասալքության, սաբոտաժնիկների և ժողովրդական գործի դավաճանների դեմ»[1]:

Բոլշևիկները մեծ աշխատանք եյին տանում այդ ծանր որերին: Բանակի կապի պետն եր ընկ. Բերգը: Վիթխարի դժվարություններ հաղթահարելով՝ նա կազմակերպեց Մարաղա և Շամախի գյուղերի միջև հեռագրային գծի անցկացնելը: Մնում եր գիծը յերկարացնել մեկուկես վերստով, յերբ խորհրդային զորամասերն սկսեցին նահանջել այդ շրջանից: Տեղական բնակչությունը դիմադրություն եր ցույց տալիս հարձակվող թուրք-մուսավաթական բանդաներին: Մարաղա գյուղի բնակիչները հաջողությամբ կռվում եյին թշնամու դեմ, չնայած վոր զորքերի մի մասին ղեկավարող դաշնակ Համազասպը հրաժարվեց նրանց օգնելուց: Այդ բանն իմանալով՝ Բերգն անհապաղ օգնության հասավ գյուղացիներին, գնդացիր ձեռք բերեց և ինքն սկսեց գնդացրային կրակով ցրել հարձակվող մուսավաթական բանդաներին:

Թուրքերի հարձակման յեռուն շրջանում Բաքվի խորհրդա-

[1] «Известия Бакинского Совета» № 131, 1918 г.

յին իշխանությունը Պարսկաստանից, „ընդալես Բիչերախովից ստացավ մի նամակ: Լ. Բիչերախովն առաջարկում էր իր ծառայությունները մատուցել թուրքերի դեմ մղվող կռվում: Կորգանովը նրա առաջ դրեց մի շարք պայմաններ. ճանաչել խորհրդային իշխանությունը, լիովին յենթարկվել նրա բոլոր կարգադրություններին, Բաքուն մի կողմ թողնելով՝ Ալյաթ կայարանով անցնել ֆրոնտ, և այլն: Բիչերախովը Բաքվի ժողկոմխորհին պատասխանեց, թե Կորգանովի առաջարկած բոլոր պայմաններն ընդունում է և յուրաքանչյուր յելույթ խորհրդային իշխանության դեմ՝ դավաճանություն է համարում:

Բաքվի բոլշևիկները յերկար ժամանակ տատանվում էին, համաձայնվե՞լ արդյոք Բիչերախովի առաջարկին: Անգլիացիների հետ նրա կնքած պայմանագրի մասին վոչ վոք չգիտեր, բայց բոլշևիկները կռահում էին այդպիսի կապի հնարավորությունը: «Մենք վախենում էինք,—ասում էր Ստեփան Շահումյանը,—վոր յեթե այդ որինակելի ջոկատն ուղղակի անգլիական կառավարության մոտ ծառայության է մտել, ապա, Բաքվում հայտնվելով, նա կարող է Խորհրդային իշխանությունը ճանաչելը հայտարարելուց հետո փոխել քաղաքականությունը...»[1]: Սակայն ֆրոնտի դրությունը ծանր էր: Բիչերախովն ամեն կերպ յերդվում էր խորհրդային իշխանությանը հավատարիմ լինել: Նրա ջոկատը լավ էր զինված, ռազմական լուրջ ուժ էր ներկայացնում,—այս ամենը Բաքվի խորհրդային իշխանությանը դրդեց համաձայնվել Բիչերախովի առաջարկին: Բիչերախովի ջոկատը մտցվեց Կովկասյան Կարմիր բանակի կազմի մեջ: Հուլիսի սկզբին նա հասավ ֆրոնտ: Բաքվի բոլշևիկների յերկյուղները հետագայում ճիշտ դուրս յեկան: Հարմար մոմենտի սպասելով, Բիչերախովը դավաճանեց խորհրդային իշխանությանը:

Իր գալուստից հետո միայն առաջին որերին Բիչերախովի ջոկատը մասնակցություն ունեցավ թուրքերի դեմ մղած կռիվներին: Այդ բանը չբարելավեց ֆրոնտի դրությունը: Կարմիր բանակի նահանջը շարունակվում էր: Յերեք որվա ընթացքում, հուլիսի 7—9-ը, կռիվներ էին տեղի ունենում Քյուրդամիրի համար: Թուրքերի կատաղի գրոհներից հետո խորհրդային զորքերը թողին այդ կարևորագույն կետը: Միևնույն ժամանակ կռիվ էր տեղի ունենում Շամախու շուրջը: Խորհրդային զորքերն իրենք հարձակման անցան այս ճակատամասում, բայց Քյուրդամիրը վերցնելուց հետո թուրքերն այնտեղ փոխադրեցին գլխավոր ուժերը, և Կարմիր բանակը հարկադրված յեղավ նահանջել:

1 Ստեփան Շահումյան, *Հոդվածներ և ճառեր*, էջ 204:

Խորհրդային զորքերի նահանջը շատ ծանր պայմաններում էր կատարվում: Անտանելի շոգ էր: Պակասում էր պարենը, ջուրը: Բուժական ոգնությունը բացակայում էր: Զինվորների մեջ սկսվեց համաճարակ: Յերկարատև մարտերից և չվերթներով տանջված զորքերը թարմ համալրումներ չէին ստանում:

Այդպիսի դրությունը ճարպկորեն ոգտագործեցին իմպերիալիստների ագենտները—դաշնակները, էսէռներն ու մենշևիկները: Նրանք գիտակցաբար քայքայում էին ֆրոնտը, արհեստականորեն դժգոհություն էին առաջացնում զինվորների շրջանում, ոժանդակում էին մասսայական դասալքությանը: Մի ամբողջ շարք գործողություններում, ինչպես պատմում էր Սուրեն Շահումյանը, «դաշնակները հեռացնում էին զորքերին, յերբ այդ ամենևին չէր պահանջվում, գիտակցաբար լուրեր էին տարածում այն մասին, թե հակառակորդը մեծ ուժեր ունի, վոր նրանք ունեն գազեր, ավիացիա և այլն... Դաշնակները գործում էին դավաճանորեն, իրենց նպատակ դնելով մեր կառավարությանը հարկադրել, վոր հրավիրի վայրագ-անգլիացիներին»[1]:

Աշխատելով հոգուտ անգլիական իմպերիալիստների, դաշնակները միաժամանակ դավաճանական բանակցություններ էին վարում թուրքերի հետ: Այդ բանակցություններն սկսվել էին դեռ հունիսին: Թուրքական հրամանատարությունը հայկական ազգային խորհրդին առաջարկում էր հաշտություն կնքել՝ խորհրդային իշխանության դեմ համատեղ պայքարելու համար: Շուտով պարզվեց, վոր Թիֆլիսից Բաքու յե մեկնում Թիֆլիսի հայկական ազգային խորհրդի և թուրքերի հաշտության հատուկ պատվիրակությունը: Խորհրդային իշխանությունը շարունակ մերժում էր հակառակորդի հետ բանակցություններ վարելու ամեն տեսակ փորձերը, և այդ պատվիրակությունը ներս չթողնվեց:

Բազմաթիվ թշնամիների դեմ կռվելու ծանր որերին Ադրբեջանի և Անդրկովկասի բանվորներն ու գյուղացիներն իրենց հայացքներն ուղղում էին հյուսիս, Խորհրդային Ռուսաստանին: Աշխատավորների ազատագրության դրոշն առաջինը բարձրաց-

1 Սուրեն Շահումյան, *Բաքվի կոմունան*, էջ 37:

րած ռուս մեծ ժողովրդի օգնությամբ միայն նրանք կարող էին պաշտպանել իրենց անկախությունն իմպերիալիստների վոտնձգություններից և, ամրացնելով խորհրդային իշխանությունը, նոր հասարակություն կառուցել: Բանվորների, զինվորների և նավաստիների դեպուտատների Բաքվի խորհուրդը՝ գյուղացիների դեպուտատների հետ միասին հայտարարեց, վոր «ամբողջ Անդրկովկասի բանվորներն ու գյուղացիները վոչ մի դեպքում չեն հաշտվի Անդրկովկասը հեղափոխական Ռուսաստանից անջատելու հետ»:

Բաքվի բանվորները կոչ էին անում վճռական պայքար մղել Անդրկովկասն իմպերիալիստներին ծախող դավաճանների և մատնիչների դեմ: «Կովկասի ազատության համար, խորհրդային իշխանության համար մեր մղած պայքարում,—գրում էր «Известия Совета» լրագիրը,—ռուս բանվորներն ու գյուղացիները կլինեն մեզ հետ: Նրանց օգնությամբ մենք կջախջախենք մեր թշնամիներին, կալվածատերերին ու բուրժուազիային, և դուրս կքշենք մեզ սորկացնողներին—թուրքերին ու գերմանացիներին»[1]:

Ֆրոնտի դրության վատթարացման կապակցությամբ Բաքվի բոլշևիկներն օգնություն էին խնդրում կենտրոնից: «Դրությունը ֆրոնտում վատանում է,—գրում էր Շահումյանը Լենինին հուլիսի 13-ին:—Մենակ մեր ուժերը բավական չեն: Անհրաժեշտ է սոլիդ ռազմական օգնություն Ռուսաստանից: Յես հեռագրել եմ Աստրախան և Ցարիցին՝ Ստալինին: Կարգադրություն արեք դուք»[2]:

Խորհրդային կենտրոնական կառավարությունը—Լենինն ու Ստալինն ամեն միջոցի դիմում էին՝ Բաքուն գերման-թուրքական և անգլիական իմպերիալիստների հարձակումից պաշտպանելու համար: Ռուսաստանի բանվորներն ու գյուղացիները յեղբայրական օգնություն էին ցույց տալիս Ադրբեջանի աշխատավորներին: Հունիս—հուլիսի ընթացքում Խորհրդային Ռուսաստանը Բաքու ուղարկեց շատ զենք, հանդերձանք, դրամ: Մայիսի 22-ին ՌԽՖՍՀ ժողկոմխորհը վորոշեց 100 միլիոն ռուբլի բաց թողնել Բաքվի նավթային արդյունաբերության կարիքների համար: Հունիսի 23-ին Մոսկվայից ժամանեցին զրահավորված ավտոմոբիլներ: Հուլիսի 20-ին Բաքու ժամանեց ընկ. Պետրովի ջոկատը:

[1] «Известия Бакинского Совета» № 132, 1918 г.

[2] ЦАОР, ֆ. 130, ոպ. 12, գործ 25, թ. 245:

Ջոկատը հանվել էր ուկրաինական ֆրոնտից: Նա կազմված էր մի հեծյալ եսկադրոնից (100—120 թուր), 6 հրանոթից բաղկացած մի մարտկոցից, Բալտիկ և Սևծովյան նավատորմերի նավաստիների մի վաշտից և հեծյալ հետախույզների զորախմբից: Սա մեծ օգնություն էր Բաքվի խորհրդային զորամասերի համար: Պետրովի լավ զինված ջոկատը մեծ դեր խաղաց քաղաքի պաշտպանության մեջ:

Միաժամանակ կենտրոնական խորհրդային կառավարությունը Գերմանիայից պահանջեց պահպանել Բրեստի պայմանագիրը և դադարեցնել հարձակումը խորհրդային Բաքվի վրա: Խորհրդային դեսպանը Բեռլինում՝ այս հարցի առթիվ բանակցություններ էր վարում գերմանական կառավարության հետ: Հուլիսի 7-ին Լենինը գրում էր Ցարիցին՝ Ստալինին, վոր անհրաժեշտ է անընդհատ կապ ունենալ Շահումյանի հետ և նրան տեղյակ պահել Բեռլինի բանակցություններին: Լենինի հեռագիրը ստանալով՝ Ստալինն անհապաղ նամակ ուղարկեց Շահումյանին, հաղորդելով նրան խորհրդային կառավարության գործողությունների մասին:

Բանակցությունները շարունակվում էին հուլիսին և օգոստոսին, և ընկեր Ստալինն այս հարցերի առթիվ բազմիցս կապվում էր արտաքին գործերի ժողկոմի հետ: Սկզբում գերմանացիները պատճառաբանում էին, իբր թե Բաքվի ռայոնում գործում են ինչ-վոր բանդաներ, այլ վոչ թե կանոնավոր գերման-թուրքական զորքեր, այնուհետև նրանք խոստացան դադարեցնել Բաքվի դեմ տարվող ռազմական գործողությունները: Սակայն իրականում հարձակումը շարունակվում էր: «Խաղաղասիրության» մասին ճիչերով քողարկվելով, գերմանական իմպերիալիստներն իրենց դաշնակիցների հետ միասին ձգտում էին, խեղդելով խորհրդային իշխանությունը Բաքվում, հափշտակել ամենահարուստ նավթային շրջանը: Դրա համար նրանք Կովկաս էին փոխադրում մեծ միջոցներ և ուժեր:

Հուլիսի վերջին ֆրոնտի դրությունը դարձավ սպառնալից: Ֆրոնտը մոտեցավ հենց Բաքվին: Քյուրդամիրի և Շամախու ուղղության զորքերի մնացորդները կենտրոնացան Բալաջարում: Բիչերախովը վորոշեց, վոր հասել է հարմար մոմենտը բացահայտ դավաճանության համար: Հուլիսի 29-ին, անցնելով աջ

թեր, նա թողեց ֆրոնտը և իր ջոկատով գնաց Սումղաիտ կայարանը՝ այնտեղից Հյուսիսային Կովկաս գնալու համար:

Զազրելի դավաճանները գործում եյին նաև թիկունքում: Բաքվում խորհրդային իշխանություն հաստատվելու առաջին իսկ որերից դաշնակները, եսերներն ու մենշևիկներն ամեն միջոցներով ձգտում եյին տապալելու այն: Քողարկվելով խորհրդային իշխանությունը ճանաչելու կեղծ ֆրազներով, գաղտնի բանակցություններ եյին վարում անգլիական իմպերիալիստների հետ: Նրանք իրենց ներկայացուցիչներին ուղարկում եյին Պարսկաստան, գեներալ Դենստերվիլի մոտ, վորպեսզի համաձայնության գային համատեղ գործողություններ կատարելու խորհրդային իշխանության դեմ: Դենստերվիլը պատմում եր, վոր դեռ ապրիլի 23-ին իրեն մոտ Համադան «եր գնացել մի հայ բժիշկ Բաքվից՝ լուրեր բերելով այնտեղի հայկական ազգային խորհրդից, վորը խնդրում եր մեր ոգնությունը, մեզ խորհուրդ տալով հենց անհապաղ շարժվել դեպի աշխարհի այդ մասը»[1]:

Կապ եր հաստատվել վոչ միայն հայկական ազգային խորհրդի հետ: «Կապը Բաքվի հետ,—գրում է Դենստերվիլը,—ես հաստատել եյի համարյա ամենորյա սուրհանդակների միջոցով, և մեր բարեկամները—սոցիալ-հեղափոխականները, թվում եր, ի վիճակի եյին մոտ ժամանակում coup d'état կատարելու, այսինքն՝ բոլշևիկներին տապալելու, Բաքվում կառավարման նոր ձև հաստատելու և ոգնության հրավիրելու անգլիացիներին: Հարմար մոմենտից ոգտվելու համար, մի մոմենտ, վորը կարող եր ներկայանալ յուրաքանչյուր որ, ինձ դեռևս պակասում եր ուժը[2]: Ցես բազմիցս բանակցություններ եյի վարում ս.-հ. կուսակցության ներկայացուցիչների հետ, վորոնց ծրագիրն անհամեմատ ավելի յե համապատասխանում մեր նպատակներին... Նրանք ուզում են մեր, առանձնապես ֆինանսական ոգնությունը: Ցես բարեկամական կապեր եմ պահպանում ս.-հ. հետ, և նրանք գիտեն, վոր շատ բանում կարող են հույսը մեզ վրա դնել, յեթե իշխանությունը վերցնեն իրենց ձեռքը»[3]:

---

1 Դենստերվիլ, Բրիտանական իմպերիալիզմը Բաքվում և Պարսկաստանում, եջ 101:
2 Նույն տեղում, եջ 159:
3 Նույն տեղում, եջ 163—164:

Բանը միայն բանակցություններով չսահմանափակվեց: Հունիսի առաջին որերին բացվեց դավադրությունը խորհրդային իշխանության դեմ: Այդ դավադրությունը գլխավորել եյին եսերներ Իվանովն ու Կիրիչենկոն: «Արդահան» հրետաձիգ նավակի բլանկների վրա նրանք ծանուցագրեր եյին ուղարկել գործարաններին և կոմիտեներին՝ Կասպիական նավատորմի անունից հրավիրելով ներկայանալ միտինգին: Պարզվեց, վոր ծանուցագրերը կոպիտ կեղծագրեր եյին: Կասպիական նավատորմը վոչ մի միտինգ չեր գումարում: Դավադիրները ձերբակալվեցին: Նրանց մոտ հայտաբերվեցին պատրաստված հրամաններ Բաքվի խորհուրդը ցրելու և Շահումյանին ձերբակալելու մասին, բանակին ուղղված մի կոչ և նամակ անգլիական հյուպատոսին:

Դավադիրները կարմիր-բանակայիններին և նավաստիներին առաջարկում եյին «անկեղծորեն և մեծ ուրախությամբ դիմավորել անգլիացիներին, վորոնք որերս Բաքու յեն ժամանելու»: Անգլիական հյուպատոսին նրանք «խոնարհաբար խնդրում եյին» հայտնել «անգլիական ուժերի հրամանատարին, վոր Բաքու քաղաքը և Բաքվի նահանգի ամբողջ տերիտորիան կարող է անգլիական հրամանատարության կողմից ոգտագործվել Թուրքական բանդաների դեմ ռազմական գործողություններ կատարելու համար»: Հետագայում հաստատվեց, վոր դավադրության գլխավոր կազմակերպիչն եր վոմն Զունկովսկին: Նա կարողացավ թաքնվել, բայց նրա թղթերում գտնվեցին միքանի դիվանագիտական ներկայացուցիչների քարտեր:

Հունիսյան դավադրության թելերը ձգվում եյին դեպի անգլիական իմպերիալիստներն ու նրանց եսերական ագենտները: Սակայն դավադիրների առավել լայն շրջանը այնպես էլ չհաջողվեց հայտաբերել: Դավադրության գործում տապալվելով, եսերները, դաշնակներն ու մենշևիկները սկսեցին այլ մեթոդներով գործել: Դեռ մայիսին Բաքու յեկավ անգլիական ագենտ Ջիգիթյանը, Բիչերախովի հակահետախուզության պետը: «Մետրոպոլ» հյուրանոցում նրա մասնակցությամբ կայացավ դաշնակների, եսերների և մենշևիկների ներկայացուցիչների խորհրդակցությունը, վորտեղ մշակվել եր հակահեղափոխական աշխատանքի պլան: Վորոշվել եր ամեն միջոցներով ոժանդակել թիկունքի և ճակատի քայքայմանը, վորպեսզի բարենպաստ պայմաններ ստեղծվեն անգլիացիներին Բաքու հրավիրելու համար: Այդ խորհրդակցությունից հետո դաշնակների, եսերների ու մենշևիկների հակահեղափոխական գործունեությունն առանձնապես մեծ

չափեր ընդունեց: Կատարելով անգլիական իմպերիալիստների առաջադրանքները, նրանք քայքայում եյին ֆրոնտը և վիժեցնում եյին քաղաքի պարենային մատակարարումը: Այս ամբողջ քայքայիչ աշխատանքը ղեկավարում եր Բաքվի անգլիական հյուպատոս Մակ-Դոնելը:

Հուլիսի սկզբին անգլիական իմպերիալիստները և նրանց ագենտներն ակտիվ գործողությունների անցան: Անգլիական իմպերիալիստների յելույթը Բաքվում՝ Խորհուրդների յերկրի դեմ Անտանտի ուղղած ինտերվենցիայի մի մասն եր: Հենց այդ ժամանակները ինտերվենցիան ընդունեց առանձնապես մեծ չափեր: Անգլո-ֆրանսիական իմպերիալիստները զավթեցին Հյուսիսը, կազմակերպեցին չեխոսլովակների ապստամբությունը և մի շարք հակահեղափոխական խռովություններ յերկրի կենտրոնում: Միաժամանակ նրանք հարձակում սկսեցին հարավում:

Բուն Բաքվում տիրող դրությունը նպաստում եր դրան: Բանակը նահանջում եր, սովը չտեսնված չափերի հասավ, այս հողի վրա բանվորների առանձին խավերում աճում եր դժգոհությունը: Անգլիական կապիտալի ագենտները վորոշեցին, վոր սեփական աշխատանքի պտուղները քաղելու և տերերի պատվերը կատարելու ժամանակն ե: Քաղաքը, հանքերը, գործարանները, զորանոցներն ու նավերը ողողեցին չարագուշակ պրովոկացիոն լուրեր, իբր խորհրդային իշխանությունը դուրս չի հանում դժվարություններից, իսկ Խորհրդային Ռուսաստանից ոգնություն չի գալիս: Բաքուն անկման նախօրյակին ե: Բաքվում սով ե: Դաշնակները, եսերներն ու մենշեվիկները Բաքուն թուրքերից և սովից միակ «փրկողներ» համարում եյին անգլիացիներին:

Վոլգայում և Հյուսիսային Կովկասում պրովոկատորները լուրեր եյին տարածում, թե իբր Բաքվի խորհրդային իշխանությունն արդեն համաձայնության ե յեկել անգլիացիների հետ և նրանց զորքերը իջել են Բաքու: Բաքվի խորհուրդը և Ժողկոմխորհը հունիսի 23-ին այդ առթիվ հրապարակեցին Պետրովսկի, Յեկատերինոդարի, Աստրախանի, Ցարիցինի և Սարատովի դեպուտատների խորհուրդներին ուղղված մի նամակ՝ «Ի հերքումն այդ պրովոկացիոն լուրերի հայտարարում ենք, վոր Բաքվում վոչ մի անգլիական զորամաս չկա: Բաքվի Խորհրդային իշխանության և անգլիացիների միջև՝ Բաքուն համատեղ պաշտպանելու մասին վոչ մի համաձայնություն չկա և չի ել կարող լինել: Իմպերիալիստական ձգտումները, վորտեղից ել վոր նրանք բխեն, միշտ ել կհանդիպեն Բաքվի պրոլետարիատի ու Կովկասի խորհրդային

Կարմիր բանակի վճռական հակահարվածին: Բաքվի ժողովրդական կոմիսարների խորհրդի նախագահ և Կովկասի գործերի արտակարգ կոմիսար Ս. Շահումյան: Բաքվի դեպուտատների խորհրդի նախագահ Ս. Ջափարիձե»[1]:

Անգլիացիներին հրավիրելու համար մղվող ագիտացիան կազմալուծում եր մտցնում Բաքվի պրոլետարիատի շարքերը: Դավաճանների ճարպիկ մանյովրին յենթարկվեց Բաքվի հյուծված, հոգնած բանվորների [illegible]ների մի մասը: Եսերներն իրենց համար հաստատուն [illegible]նեյին Կասպից ծովի ռազմական նավատորմում: 1918 թվականի սկզբին կատարվեց նավատորմի վերակազմումը, նավաստիների հիմնական կադրերը զորացրվեցին: Նավատորմը լցվեցին կամավորներ, գլխավորապես բնակչության մանր-բուրժուական խավերից: Եսերների ագիտացիան նրանց շրջանում՝ առանձնապես բարենպաստ հող եր գտնում: Կասպից ծովի նավատորմի առանձին կոմիտեներն անգլիացիներին հրավիրելու կողմն արտահայտվեցին:

Հուլիսի 16-ին կայացավ Բաքվի խորհրդի ընդլայնված նիստը: Անդրկովկասի և Ռուսաստանի քաղաքական դրության մասին ընկ. Շահումյանի արած զեկուցման շուրջը բուռն բանավեճեր բորբոքվեցին: Բանվորների մի մասի և նավաստիների պաշտպանությունը գտած՝ դաշնակների, եսերների ու մենշեվիկների լիդերները դրին անգլիացիներին հրավիրելու հարցը: Ամբողջ բուրժուական բլոկը միավորվեց այդ դիրքում: Յեվ միայն բոլշեվիկները խստորեն դեմ դուրս յեկան: Ստեփան Շահումյանը բացեց այն ինտերվենցիայի եյությունը, վոր Ռուսաստանում սկսել եյին գերմանական ու անգլո-ֆրանսիական իմպերիալիստները, և այդ կապեց Բաքվում տեղի ունեցող դեպքերի հետ: «Մեր կուսակցությունը, մեր կառավարության գլխավորությամբ,—հայտարարեց նա,—պայքար ե մղում հանուն Ռուսաստանի անկախության ու ազատության՝ ամենադժվարին, ծանր և վտանգավոր պայմաններում: Իսկ դաշնակիցներին հրավիրելու քաղաքականությունը խաչ ե դնում անկախ Ռուսաստանի վրա: Այդ քաղաքականությունը սկսում ե բաժանումը մի կողմից գերմանական իմպերիալիստների և, մյուս կողմից, անգլիական, ֆրանսիական ու ճապոնական իմպերիալիստների միջև»[2]:

---

1 «Бакинский Рабочий» № 120, 1918 г.

2 Ստեփան Շահումյան, Հոդվածներ և ճառեր, եջ 210:

Նշելով, թե ինչ հսկայական նշանակություն ունի Բաքուն Ռուսաստանի համար, ընկ. Շահումյանը կոչ եր անում պաշտպանել այն բոլոր ուժերով: Նա նշեց, թե Բաքվի պրոլետարիատին ինչ օգնություն ե ցույց տալիս և ցույց կտա կենտրոնական խորհրդային կառավարությունը զենքով, հանդերձանքով, զորամասերով և այլն: Ընդսմին նա վկայակոչեց ընկեր Ստալինից ստացված հաղորդագրությունները: Շահումյանը մոտ օրերս եր վերադարձել ֆրոնտից, առաջավոր դիրքերից, վորտեղ մանրամասնորեն ծանոթացել եր զորամասերի վիճակին: Խորհրդի նիստում ընկ. Շահումյանը հայտարարեց, վոր դրությունը ֆրոնտում ամենևին ել անհուսալի չե, Բաքուն պաշտպանելու բոլոր հնարավորությունները կան, նույնիսկ յեթե Խորհրդային Ռուսաստանից յեկող օգնությունը ուշանա: Ընկ. Շահումյանը վստահ եր Բաքվի հերոսական բանվորներին. «Բաքվի պրոլետարիատը,—ասաց նա,—իր մեջ կգտնի ուժեր, վորպեսզի միքանի հազար մարդ ջոկե՝ կազմելու համար այն զորքը, վորը օգնության կշարժվի ֆրոնտում գտնվող մեր ընկերներին»[1]:

Խորհրդի հուլիսի 16-ի նիստը ձայների աննշան մեծամասնությամբ ընդունեց բոլշևիկների բանաձևը: Բայց հետո սկսվեց վերաքվեարկում, վորը վոչ մի արդյունք չտվեց: Բաքվի խորհուրդը հետաձգեց հարցի լուծումը և հանձնաժողով կազմեց՝ ֆրոնտում տիրող դրությանը ծանոթանալու համար: Խորհրդի նիստից հետո Բաքվի բոլշևիկները շարունակում եյին հաստատուն կերպով կանգնել գրաված դիրքերին՝ անողոք պայքար մղել իմպերիալիստների յերկու խմբի և նրանց սպասավորների դեմ :

Մյուս օրը, հուլիսի 17-ին, Բաքվի ժողկոմխորհի նիստում Շահումյանը հաղորդեց, վոր իր՝ վերջին անգամ ֆրոնտ ուղևորվելու ժամանակ դեպի մեզ փախչելով շտապ մտավ յերկաթգծի մի ծառայող, բերելով Թիֆլիսի հայկական ազգային խորհրդից մի նամակ, վորից կարելի յե յեզրակացնել, վոր հաշտության պատվիրակություն ե գալիս՝ տեղական հայկական ազգային խորհրդի հետ բանակցություններ վարելու համար: Ընկ. Շահումյանը հայտարարեց, թե «այդպիսի դիվանագիտությունը վոչ մի դեպքում չի կարող թույլատրելի լինել: Նրանց նպատակը մի բան ե՝ բարոյալքում մտցնել մեր զորքերի մեջ, վորպեսզի միանգամից վերջ տան խորհրդային իշխանությանն այստեղ՝ Բաքվում»[1]: Ժողկոմխորհը վորոշեց պատվիրակությանը Բաքու չթողնել, հայկական ազգային խորհուրդը հայտարարել ցրված և նրա ամբողջ ունեցվածքը հանձնել Բաքվի դեպուտատների խորհրդին՝ ի սեփականություն:

1 Ստեփան Շահումյան, Հոդվածներ և ճառեր, եջ 215:

Բաքվի ժողկոմխորհը կոչով դիմեց բանվորներին ու կարմիրբանակայիններին. «Մեր հոգնած, տանջված զորքերը հերթափոխություն և օգնական ուժեր չստանալով՝ նահանջում են աջ թևում: Բայց մի՞թե այդ բանը պետք ե մեր մեջ հուսալքում առաջացնի: Մի՞թե մենք այն տեղը կհասնենք, վոր ցած կդնենք զենքը և թշնամուն ներս կթողնենք մեր քաղաքը··· Բայց մեր շարքերը թափանցել ե, ընկերներ, մի ուրիշ խոց: Մեր շարքերում գործում են ուրիշ թշնամիներ, գործում են ստոր կերպով, դավաճանորեն, բարեկամների տեսքով: Արդեն վաղուց ե անգլիական վոսկին աշխատում Բաքվում: Այժմ, մահացու վտանգի այն րոպեին, վոր ապրում ենք մենք, անգլիական իմպերիալիստները կողմնակիցներ են գտել մեր ներսում, ամբողջ կուսակցությունների շրջանում··· Բաքվի ժողկոմխորհը, յենթարկվելով բանվորա-գյուղացիական կառավարությանը, լիովին միավորված մեր մեծ յերկրի ամբողջ հեղափոխական պրոլետարիատին ու գյուղացիական չքավորությանը, Բաքվի պրոլետարիատին կոչ ե անում վերջ տալ անգլիացիների համար մղվող դավաճանական ագիտացիային և համախմբվելով իր հեղափոխական խորհրդի շուրջը, ուժեր պատրաստել թշնամուն դիմադրելու և մեր ազատությունն ու անկախությունը պաշտպանելու համար»[2]:

Բաքվի առաջավոր բանվորների ու զինվորների շրջանում այս կոչը ջերմ աջակցություն գտավ: «Ցեյդել» քիմիական գործարանի բանվորները բողոքեցին «անգլո-ֆրանսիական իմպերիալիզմի զազրելի գործակիցների ու բուրժուազիայի նողկալի ագենտների, պրոլետարիատի իսկական թշնամիների» գործողությունների դեմ, «վորոնք վճռել են ամենածանր հանցագործությունը կատարել Բաքվի ռայոնի բանվորների և Ռուսաստանի սոցիալիստական ամբողջ հեղափոխության դեմ»[3]: 19-րդ գումարտակի կարմիր-բանակայինների ժողովը «խայտառակեց բոլոր նրանց, ով վարյագ-անգլիացիներին Բաքու հրավիրելու իրենց ճիչերով դանակ են խրում մեր մեջքը, մեր, վոր այստեղ կռվում ենք հե-

1 Ադրբ. Կ(բ)Կ Կենտկոմի միացյալ կուսարխիվ Շահումյանի ինստիտուտին կից, «26-ի» ֆոնդ, հավաքածու 5, գործ 71:

2 «Известия Бакинского Совета» № 145, 1918 г.

3 «Бакинский Рабочий» № 146, 1918 г.

դավոխական դիրքերում... Չնայած վոր մենք հարկադրված ենք կռվել ամենասոսկալի պայմաններում, մենք այնուամենայնիվ շարունակում ենք կանգնած լինել խորհրդային իշխանության պաշտպանելու պլատֆորմին, աշխատավորների իրավունքները պաշտպանելու պլատֆորմին, և մեր հայացքները, մեր հույսերն ուղղում ենք միայն Խորհրդային Ռուսաստանի վրա»[1]: Համահավաք ջոկատը հուլիսի 22-ին Դերբենտից հայտարարեց. «Մենք, գորշ շինել հագած բանվորներս ու գյուղացիներս, աշխատավորական մասսաների համար իշխանությունը նվաճեցինք արյունով և կյանքով: Յեվ մենք մինչև արյան վերջին կաթիլը կպաշտպանենք այդ իշխանությունը և թույլ չենք տա, վոր բանվորա-գյուղացիական իշխանության թշնամիները հրավիրեն անգլիական իմպերիալիստներին՝ կապիտալի լուծը վերականգնելու նպատակով»[2]:

Առաջավոր բանվորներն ու գյուղացիները խիստ բողոք եյին հայտնում վոչ միայն աջ եսերների, մենշևիկների ու դաշնակների, այլև «ձախ» եսերների դավաճանական գործողությունների դեմ: Մոսկվայում «ձախ» եսերների բարձրացրած խռովարարության ժամանակվանից Բաքվի «ձախ» եսերների խմբակները վերջնականապես անցան հակահեղափոխության բանակը: Նա ամեն կերպ պաշտպանում եր խռովություն բարձրացրած մարդասպանների գարշելի բանդային: Մանթաշևի, Ասադուլլի և ուրիշների նավթի ֆիրմայի բանվորները Սաբունչիում հայտարարում եյին. «Խորհրդային Ռուսաստանը կպաշտպանենք ընդդեմ ամեն տեսակ հակահեղափոխականների, իսկ այժմ այսպես կոչված «ձախ» եսերների: Կեցցե՛ կոմունիստների-բոլշևիկների միակ իսկական պրոլետարական կուսակցությունը»[3]:

IX

Այն մոմենտին, յերբ վճռվում եր Բաքվի խորհրդային իշխանության բախտը, բոլոր կողմերից թշնամիներով շրջապատված՝ Բաքվի բոլշևիկները ոգնություն ու աջակցություն խնդրելով դիմեցին իրենց ղեկավարներին—Լենինին ու Ստալինին: Շահումյանը ընկեր Ստալինին հեռագիր ուղարկեց ստեղծված իրադրության մասին և հարցնում եր, թե ինչ անել: Նա հաստատ

[1] «Известия Бакинского Совета» № 150, 1918 г.
[2] «Бакинский Рабочий» № 144, 1918 г.
[3] «Известия Бакинского Совета» № 137, 1918 г.

պատասխան ստացավ խորհրդային կառավարության անունից:

Հուլիսի 20-ին ընկեր Ստալինը գրում եր. «Վերջին տեղեկությունների համաձայն, Բաքվի դեպուտատների խորհրդի նարոդնիկական ֆրակցիաները գլուխ են բերում վարյագ-անգլիացիներին հրավիրելը՝ իբր թե ընդդեմ թուրք զավթողների:

Ուշադրության առնելով այն, թե Մուրմանում ու Հեռավոր Արևելքում անգլո-ֆրանսացիներն ինչպիսի ոգնություն եյին ցույց տվել, վստահ կարելի յե ասել, վոր նարոդնիկական ֆրակցիաները, իրենք այդ չգիտակցելով, հող են պատրաստում Բաքուն և նրա շրջանները ոկուպացիայի յենթարկելու համար: Դրա հետ մեկտեղ անկասկած է նարոդնիկական կուսակցությունների փորձը՝ անայնագործ կերպով լուծելու միջազգային քաղաքականության հարցն այն ժամանակ, յերբ խորհուրդների Համառուսաստանյան հինգերորդ համագումարը վորոշակիորեն արտահայտվեց Ռուսաստանի խորհրդային հանրապետության անկախ, ինչպես գերմանացիներից, այնպես էլ անգլիացիներից անկախ քաղաքականության ոգտին:

Նարոդնիկական կուսակցությունների տակտիկան Ռուսաստանի ժողովուրդների կամքի կոպիտ խախտումն է ի հաճույս մի բուռ անգլո-ֆրանսական իմպերիալիստների:

Համառուսաստանյան կենտգործկոմի և ժողովրդական կոմիսարների Խորհրդի անունից յես Բաքվի ամբողջ խորհրդից, բանակից և նավատորմից պահանջում եմ լիովին յենթարկվել համայն Ռուսաստանի բանվորների և գյուղացիների կազմակերպված կամքին: Ի կատարումն խորհուրդների V համագումարի վորոշումների, յես Բաքվի ժողկոմխորհից պահանջում եմ անառարկելիորեն կենսագործել անկախ միջազգային քաղաքականությունը և վճռական պայքար մղել ոտարերկրյա կապիտալի ագենտների դեմ՝ ընդհուպ մինչև համապատասխան միսիաների անդամների ձերբակալումը:

Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի լիազորությամբ՝ ժողովրդական կոմիսար՝ Ի. Ստալին»[1]:

Մյուս որը, հուլիսի 22-ին, Լենինը Բաքու՝ Շահումյանին հաղորդեց. «Կարող եմ միայն լիովին պաշտպանել Ստալինի հեռագիրը՝ Բաքվի դեպուտատների խորհրդի նարոդնիկական ֆրակ-

[1] «Бакинский Рабочий № 143, 1918 г.

ցիայի դեմ և խորհուրդների հինգերորդ համագումարի կամքի վերաբերյալ: Ժողկոմխորհի նախագահ՝ Լենին»[1]:

Հուլիսի 23-ին Համառուսաստանյան Կենտգործկոմի կողմից Բաքու հեռագիր ուղարկեց Սվերդլովը. «...Հաստատում ենք Ստալինի հեռագիրը, կատեգորիկ կերպով պահանջում ենք, վոր Բաքվի խորհուրդը, բոլոր բանվորները, բանակն ու նավատորմը անպայման յենթարկվեն համագումարի վորոշումներին և Համառուսաստանյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի ու Ժողկոմխորհի ցուցումներին: Համառուսաստանյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի նախագահ՝ Յա. Սվերդլով»[2]:

Բաքվի բոլշևիկները ջերմորեն հավանություն եյին տալիս ստացված հեռագրերին: «Հավասարում դեպի Հյուսիս»—գրում եր «Бакинский Рабочий»-ն: «Ժողովրդական կոմիսար Ստալինը Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի և Համառուսաստանյան Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի անունից, ի կատարումն Խորհուրդների V համագումարի վորոշումների՝ Բաքվի Ժողկոմխորհից պահանջում է անառարկելիորեն կենսագործել միջազգային անկախ քաղաքականություն...Մեր հայացքներն ուղղված են վոչ թե դեպի հարավ, այլ դեպի մեր հարազատ հյուսիսը, վորտեղից մեզ ամեն որ ոգնության են հասնում զենքով, իսկ վերջին որերը նաև մարդկանցով»[3]:

Հուլիսի 25-ին ընկ. Ջափարիձեյի նախագահությամբ կայացավ Բաքվի խորհրդի արտակարգ նիստը՝ ռայոնական խորհուրդների, նավային կոմիտեների, ուրիշ կազմակերպությունների հետ միասին: Ներկա յեր 500 մարդ: Առաջին հաղորդագրությունն արեց ընկ. Շահումյանը: Անգլիացիներին հրավիրելու հարցի կապակցությամբ նա հրապարակեց ընկեր Ստալինի հեռագիրը և Խորհուրդների Համառուսաստանյան V համագումարի վորոշումները: Շահումյանը հայտարարեց, թե քանի վոր խորհրդային Բաքուն Ռուսաստանի Ֆեդերատիվ Հանրապետության մի մասն է, ապա այս ցուցումները պարտադիր են Բաքվի խորհրդի համար: Այդ պատճառով անգլիացիներին հրավիրելու հարցը պետք է լուծված համարել և հանել խորհրդի քննարկումից: Դրա փոխարեն նա առաջարկեց քննարկել Ֆրոնտն ամրապնդելու միջոցները:

1 ЦАОР, ֆ. 130, ոպ. 12, գործ 115, թ. 98:
2 Սուրեն Շահումյան, Բաքվի կոմունան, եջ 47:
3 «Бакинский Рабочий» № 143, 1918 г.

257 ձայնի մեծամասնությամբ ընդդեմ 208-ի խորհուրդը մերժեց Շահումյանի առաջարկը: Նա վորոշեց քննարկել ֆրոնտ մեկնած հանձնաժողովի հաղորդագրությունը, վորը հանգամ հենց նույն չարաբաստիկ հարցին—անգլիացիների մասին: Զեկուցողը մանրամասն շարադրեց գնդապետ Բիչերախովի և շտաբի պետ դաշնակ Ավետիսովի կարծիքը: Բիչերախովն ու Ավետիսովը հայտարարեցին, վոր ունեցած ուժերով յոլա գնալ չի կարելի և պետք է հրավիրել անգլիացիներին: Սկսվեցին բանավեճերը:

Եսերների, մենշևիկների ու դաշնակների ներկայացուցիչները նորից զազրելի պրովոկացիոն ագիտացիա մղեցին: Նրանց դեմ համարձակ կերպով և վճռականորեն դուրս յեկան ընկ. ընկ. Ջափարիձեն, Ազիզբեկովը, Զևինը և ուրիշ բոլշևիկներ: «Մենք խոսում ենք յերկու լեզվով և այդ պատճառով չենք հասկանում իրար,—ասաց Ազիզբեկովը:—Վոմանք խոսում են Խորհրդային Ֆեդերատիվ Հանրապետության լեզվով, իսկ մեր հակառակորդները—Սահմանադիր ժողովի լեզվով»:

Յերկու բանաձև մտցվեց խորհրդի նիստը: Բոլշևիկներն առաջարկեցին դիմել բանակի մարտունակությունն ամրապնդելու մի շարք կոնկրետ միջոցների, նոր զորահավաք հայտարարել և ոգնության խնդրով դիմել Խորհրդային Ռուսաստանին: «Բաքվի Խորհուրդը վորոշում է պաշտպանել Բաքուն իր հեղափոխական ուժերով ու հեղափոխական Ռուսաստանի ուժերով և վերջ դնել անգլիացիներին հրավիրելու համար մղվող ամեն տեսակ պղծող ու կազմալուծող ագիտացիային»: Եսերների բանաձևն առաջարկում եր՝ հրավիրել անգլիացիներին և իշխանությունը Բաքվում հանձնել կոալիցիոն կառավարությանը:

Ամբողջ դահլիճի լարված ուշադրության տակ Ալյոշա Ջափարիձեն հրապարակեց քվեարկության արդյունքները. 259—եսերների բանաձևի կողմը, 236—բոլշևիկների բանաձևի կողմը—23 ձայնով պակաս: Այս բանը ցնծության փոթորիկ առաջացրեց դավաճանների ու մատնիչների բանակում: Շահումյանի յելույթից հետո կայացան ֆրակցիաների նիստերը: Տրամադրությունը բարձր եր: Փողոցում, գլխավոր դռան մոտ հավաքվել եր մի հսկայական ամբոխ, վորն սպասում եր խորհրդի վորոշմանը:

Արդեն գիշերվա 12 ժամ 40 րոպեն եր, յերբ խորհրդի նիստը վերսկսվեց: Ստեփան Շահումյանը բոլշևիկյան ֆրակցիայի անունից կատեգորիկ բողոք հայտնեց ընդունված բանաձևի դեմ. «Մեր անհաջողությունից ոգտվելով, այս պայմաններում, դուք այս

բանաձևն ընդունելով, խզեցիք ամեն տեսակ կապ՝ ձեր, դաշնակցական տեսակետին կանգնածներից և մեր միջև: Մենք դեն ենք նետում ձեր սկսած հանցագործ քաղաքականության պատասխանատվությունը և հրաժարվում ենք ժողովրդական կոմիսարների պոստերից»[1]:

Հրապարակելով Փրակցիայի հայտարարությունը, Շահումյանը նստեց իր տեղը, ապա նորից վերկացավ և, մոտենալով տրիբունային, ավելացրեց. «Ինչ վերաբերում է ինձ, վորպես կենտրոնական իշխանության լիազորի, ապա յես իրազեկ կդարձնեմ կառավարությանը, վոր խորհրդային աջ Փրակցիաները, օգտվելով Բաքվում տիրող խառնաշփոթությունից, սև յերախտամոռության և դավաճանության ակտ կատարեցին հեղափոխական Ռուսաստանի նկատմամբ»[2]:

Նիստի վերջում Շահումյանն ու Ջափարիձեն հայտարարեցին, վոր, հեռանալով կառավարությունից, բոլշևիկները մնում են խորհրդում, վորպեսզի ե՛լ ավելի մեծ յեռանդով պայքարեն թե՛ ինտերվենտների դեմ, թե դավաճանական այն դիրքի դեմ, վորի վրա կանգնեց խորհրդի մեծամասնությունը:

Բաքվի բոլշևիկների՝ անգլո-Ֆրանսական իմպերիալիստների հետ վորևիցե համաձայնություն կնքելուց վճռականապես հրաժարվելու գիծը, անգլիական ագենտների դեմ պայքարելու գիծը հավանություն գտավ Լենինի ու Ստալինի կողմից: Բաքվի խորհրդի նիստից յերեք որ հետո Համառուսաստանյան Կենտգործկոմում յելույթ ունենալով՝ Լենինը մատնանշում եր, «վոր Բաքվում անգլո-Ֆրանսական իմպերիալիզմին շատ եֆեկտավոր ընթացք հաջողվեց: Նրանց հաջողվեց Բաքվի խորհրդում ստանալ մեծամասնություն, մոտ 30 ձայն, ընդդեմ մեր կուսակցության... Մենք գիտենք, վոր Կովկասում մեր կոմունիստ ընկերների դրությունն առանձնապես դժվարին եր, վորովհետև չորս կողմից նրանց մատնում եյին մենշևիկները, վորոնք ուղղակի դաշինքի մեջ մտան գերմանական իմպերիալիստների հետ, իհարկե, Վրաստանի անկախությունը պաշտպանելու պատրվակով:

Դուք բոլորդ լավ գիտեք, վոր Վրաստանի այդ անկախությունը ամենամաքուր խաբեյության վերածվեց,—իրականում այդ օկուպացիա յե և Վրաստանի լիակատար գրավում գերմանական իմպերիալիստների կողմից, գերմանական սվինների ու

[1] Ստեփան Շահումյան, Հոդվածներ և ճառեր, էջ 286:

[2] Նույն տեղում, էջ 287:

մենշևիկյան կառավարության դաշինքն է բոլշևիկյան բանվորների ու գյուղացիների դեմ, ուստի և հազար անգամ իրավացի եյին մեր Բաքվի ընկերները, վորոնք, ամենևին աչք չփակելով դրության վտանգի հանդեպ, ասացին իրենց՝ մենք յերբեք դեմ չեյինք լինի հաշտություն կնքելու իմպերիալիստական տերության հետ՝ մեր տերիտորիայի մի մասը նրանց զիջելու պայմաններով, յեթե այդ հարված չհասցներ մեզ, մեր գործերը չխաչկանդեր բռնացողների սվինների հետ կապված դաշինքով և չզրկեր մեզ մեր բանվորագյուղական սոցիալիստական գործունեությունը շարունակելու հնարավորությունից: Իսկ յեթե հարցն այնպես է դրված, վոր, անգլիացիներին իբր թե Բաքուն պաշտպանելու համար հրավիրելով, հրավիրենք այն տերությունը, վորն այժմ կերել է ամբողջ Պարսկաստանը և վաղուց ի վեր իր ռազմական ուժերով գաղտագողի մոտենում է Կովկասի հարավը գրավելու համար, այսինքն հանձնվել անգլո-գերմանական իմպերիալիզմին, ապա այս դեպքում մենք վոչ մի բոպե չենք կասկածի ու տատանվի, վոր, վորքան էլ դժվարին է մեր Բաքվի ընկերների դրությունը, նրանք, այդպիսի հաշտություն կնքելուց հրաժարվելով, սոցիալիստներին միակ արժանի քայլն արին վոչ թե խոսքով, այլ գործով: Անգլո-Ֆրանսական իմպերիալիստների հետ վորևէ համաձայնություն կնքելուց վճռականապես հրաժարվելը՝ Բաքվի ընկերների միակ ճիշտ քայլն է, վորովհետև չի կարելի հրավիրել նրանց, առանց իմպերիալիստական պատերազմի ստրուկ դարձնելու ինքնուրույն սոցիալիստական իշխանությունը, թեկուզ այն լինի կտրված տերիտորիայում»[1]:

Բաքվի խորհրդի հուլիսի 25-ի նիստը ե՛լ ավելի թևավորեց իմպերիալիզմի սպասավորներին: Խորհրդային իշխանության թշնամիները չարախնդում եյին բոլշևիկների պարտության առթիվ: Հրաժարվելու մասին Շահումյանի արած հայտարարության մեջ նրանք տեսնում եյին իրենց այնքան ատելի խորհրդային իշխանության լիկվիդացիան: Բայց բոլշևիկները շուտով հասկացան այդ քայլի սխալականությունը: Նույնիսկ միտինգներից ու խորհրդի նիստից հետո հարկավոր եր, մնալով իշխանության գլուխ, կռվել մինչև վերջին հնարավորությունը: Հուլիսի 27-ին հավաքվեց ամբողջ Բաքվի կուսակցական կոնֆերենցիան: Նա «խորհրդի Փրակցիայի վորոշմանը հակառակ վորոշեց իշխանությունն առանց կռվի չհանձնել, շտապ կերպով կազ-

[1] Լենին, հ. XXIII, էջ 153—156:

մակերպել Բաքվի պաշտպանությունը՝ Ժողկոմխորհի ղեկավարությամբ, ընդհանուր զորահավաք հայտարարել, բանվորներին կոչ անել պաշտպանելու քաղաքն ու խորհրդային իշխանությունը և այլն»[1]:

Բաքվի խորհրդային իշխանությունն այժմ ձգտում էր ձեռքից հանածի տեղը հանել: Բաքվի խորհրդի գործկոմը Հակահեղափոխության դեմ պայքարելու արտակարգ հանձնաժողովին հանձնարարեց ամեն միջոցի դիմել հակահեղափոխական ագիտացիա մղող անձերի դեմ: Նա վորոշեց «Բաքու քաղաքի բնակչությանը տեղեկացնել, վոր Գործադիր կոմիտեն իր լրիվ կազմով առաջվա պես շարունակում է պաշտպան կանգնել բանվորա-գյուղացիական խորհրդային իշխանությանը և Խորհրդի դեմ ուղղված յուրաքանչյուր փորձ անողոք կերպով կճնշվի Խորհրդի կողմից»: Գործադիր կոմիտեն դիմեց բոլոր զորամասերին, նավաստիներին ու զինվորներին, կոչ անելով «պատշաճ հակահարվածը տալ այս կրիտիկական մոմենտում գլուխ բարձրացնել համարձակված Խորհրդի թշնամիներին ու արժանավայել կերպով դիմավորել մեզ վրա յեկող լկտիացած թշնամուն»[2]:

Հուլիսի 28-ին Բաքվի ժողովրդական կոմիսարների խորհուրդը 10 տարվա (1892-ից մինչև 1883 թ. ներառյալ ծնվածների) զորահավաք հայտարարեց: «Ընկերնե՛ր և քաղաքացինե՛ր, —գրում էր Բաքվի ժողկոմխորհը,—թշնամին քաղաքի դարպասների մոտն է: Մենք պատերազմ ենք մղում թուրքական կանոնավոր զորքերի ու Գանձակի խաների ու բեկերի բազմաթիվ բանդաների դեմ: Մեր առաջին կամավորական Կարմիր բանակը հերոսական մարտեր ունեցավ հակառակորդի հետ, բայց, պատերազմի ծանր պայմաններից ուժասպառ յեղած ու հոգնած, նա նահանջեց և մոտեցավ քաղաքին: Նրան են հետևում հակառակորդի զորքերը: Մեր հոգնած բանակին անհապաղ օգնություն է հարկավոր: Յեթե մենք չկատարենք մեր պարտքը, քաղաքը թուրքերը կվերցնեն: Հեղափոխական Ռուսաստանին ամենածանր հարվածը կհասցվի.., Բաքվի ժողովրդական կոմիսարների խորհուրդը 1892-ից մինչև 1883 թիվը ներառյալ ծնվածների 10 տարվա նոր զորահավաք է հայտարարում: Նախատինք և արհամարհանք նրանց, ովքեր չեն ներկայանա այս զորակոչին»[3]: Ժողկոմ-

---

[1] Միկոյան, *Բոլշևիկների Բաքվի կազմակերպությունը* 1917—1919 *թվերին: «Անցյալից» ժողովածու*, 1923 *թ.*, *էջ* 35:

[2] «Известия Бакинского Совета» № 149, 1918 г.

[3] «Бакинский Рабочий» № 148, 1918 г.

խորհը մատնանշում էր, վոր վոչ մի ոտարերկրացի չի կարող վերցնել պրոլետարական Բաքուն: «Հույսը կդնենք ամենից առաջ հենց մեզ վրա, այնուհետև հեղափոխական Ռուսաստանի վրա, մեր բանվորա-գյուղացիական կառավարության վրա»[1]: Հենց նույն օրը Բաքվի ժողկոմխորհը քաղաքում ռազմական դրություն հայտարարեց:

Այդ օրերին բոցավառ կոչով մասսաներին էր դիմում բոլշևիկյան մամուլը: «Известия»-յի առաջին էջում հսկայական տառերով տպված էր. «Դեն քշեցեք, արհամարհանքով խարանեք կաշառված հուդաներին, բուրժուազիայի ստոր ծառաներին, անգլիացիների վարձկաններին, ժողովրդի դավաճաններին... Կեցցե՛ Ռուսաստանի և ամբողջ աշխարհի բանվորների ու գյուղացիների հետ ունեցած դաշինքը»:

Դեպի զե՛նք, ընկերներ: Դեպի կռիվ ընդդեմ թուրքական-մուսավաթական բանդաների: Դեպի զե՛նք: Հանու՛ն Բաքվի պրոլետարիատի և Ռուսաստանի բոլոր աշխատավորների ազատության և անկախության: Դեպի զե՛նք: Հանու՛ն պանծալի Հոկտեմբերյան հեղափոխության նվաճումների պահպանման[2]:

Արսեն Ամիրյանը «Бакинский Рабочий»-ի էջերում կոչ էր անում կռվելու ներսից նյութվող դավաճանության և մատնչության դեմ: «Մենք ցանցված ենք մատնիչներով,—գրում էր նա,—մենշևիկներ, էսերներ, դաշնակցականներ—ահա թե վորտեղ է թաքնված մեր ֆրոնտի ու մեր թիկունքի թուլությունը... Յեվ մեր հակառակորդներին արտաքին ֆրոնտում հաղթելուց առաջ մենք պետք է հաղթահարենք այդ մատնիչներին թիկունքում»[3]: «Մեր անհաջողությունների պատճառների մասին» հոդվածում Ամիրյանն ասում է, թե «մեր սխալն այն է, վոր մենք ժամանակին չկարողացանք իրականացնել դիկտատուրան, գիտակից պրոլետարիատի հենց այն դիկտատուրան, վորի միջոցով միայն մենք կարող ենք իրականացնել մեր խնդիրները: Այդ դիկտատուրան այժմ մոմենտի հրամայական պահանջն է»[4]:

Բաքվի բանվորների և զինվորների առաջավոր մասը մինչև վերջը պաշտպանում էր խորհրդային իշխանությունը և վողջունում էր հայտարարված զորահավաքը: Քաղաքի զանազան մա-

---

[1] «Бакинский Рабочий» № 148, 1918 г.

[2] «Известия Бакинского Совета» № 172, 1918 г.

[3] «Бакинский Рабочий» № 139, 1918 г.

[4] «Бакинский Рабочий» № 146, 1918 г.

ներում Հումմեթի կազմակերպած՝ ադրբեջանցի բանվորների միտինգները, որտեղ հանդես էին գալիս Մեշադի Ազիզբեկովը, Սարդարովը և ուրիշները, ընդունեցին բոլշևիկյան բանաձևեր: «Անգլիացիներին Բաքու հրավիրելն անկասկած նշանակում է Բաքվի խորհրդի և ամբողջ բանվոր դասակարգի քաղաքական նվաճումների կործանում,—ասվում էր այդ բանաձևերի մեջ:... Բաքվի ռայոնը համարելով Ռուսաստանի Ֆեդերատիվ Հանրապետության անքակտելի մասը և մեր բախտը սերտորեն կապված համարելով Ռուսաստանի ամբողջ պրոլետարիատի բախտի հետ, մենք, բանվորներս, մերժում ենք ամեն տեսակի կոալիցիոն իշխանություն, որը նշանակում է կապերը խզել մնացած Ռուսաստանի հետ, և պատրաստ ենք պաշտպանել Բաքվի խորհուրդը»: № 3 գրահագնացքի կարմիր-բանակայինների ժողովը որոշեց «ոչ մի կերպ չթողնել Ռուսաստանի Խորհրդային հանրապետության սահմանները ներխուժելու բոլոր յերկրների իմպերիալիստներին ու ազգերին, մասնավորապես անգլիացիներին»[1]:

Հուլիսի 28-ին բոլշևիկները խորհրդային իշխանությանը հավատարիմ զինված ուժերի ցույց կատարեցին: Նրանք ուզում էին «իրենց վիճակված փորձություններից դես ու դեն ընկնել և ստանձնել սկսած՝ Բաքվի պրոլետարիատին ցույց տալ հեղափոխական Կարմիր բանակի զինված հզորությունը» (Շահումյան): Քաղաքի փողոցներով անցան հետևակ զորամասերը, հրահանգչական դպրոցը, նավաստիները, ընկ. Պետրովի ջոկատը: Ցուցարարները կրում էին այս լոզունգները. «Նախատի՛նք զորահավաքից խուսափող վախկոտներին», «Ամե՛ն ինչ ֆրոնտի համար», «Բաքուն մի՛այն Խորհրդային Ռուսաստանի համար», «Կորչե՛ն դավաճանները, որոնք ուզում են Բաքուն հանձնել անգլիացիներին», Կորչե՛ն գերման-թուրքական և անգլո-ֆրանսական իմպերիալիստները»: Բոլշևիկները բոլոր նրանց, ովքեր կարող են հրացան բռնել, կոչ էին անում անհապաղ ֆրոնտ գնալ: Ընկ. Կորգանովը վստահություն էր հայտնում, որ, «չնայած դրությունը լուրջ լինելուն, հաղթանակը մեր կողմը կլինի»:

Հուլիսի 28-ի յերեկոյան կայազորի զորամասերը հավաքվեցին Մայիլովի թատրոնում: Շահումյանը ողջունեց Կովկասյան Կարմիր բանակի զինվորներին: Նա մատնանշեց հայտարարված զորահավաքի նշանակությունը: Բաքվի բանվորները, ասում էր

[1] «Бакинский Рабочий» № 147, 1918 г.

նա, «կռվում են ոչ միայն իրենց քաղաքի ու իրենց տան համար, այլև ամբողջ Ռուսաստանի համար: Այս պատմական միսսիան պետք է հպարտությամբ լցնի Բաքվի բանվորներին և կոչի նրանց պանծալի կռիվ մղելու մինչև վերջ—հաղթել կամ մեռնել պատվով»: Ընկ. Պետրովը շնորհակալություն հայտնեց Շահումյանին նրա անխոնջ, մեծ և անգնահատելի աշխատանքի համար: Նա հիշեցրեց, որ Շահումյանի՝ դեռևս պատանի յերկու որդիները անվեհեր կերպով կռվում են Կարմիր բանակի շարքերում: Ժողովը կոչ էր անում վճռականորեն կռվելու գերման-թուրքական և անգլո-ֆրանսական իմպերիալիզմի դեմ և օրինակելիորեն անցկացնելու Բաքվի Ժողկոմխորհի կողմից հայտարարված զորահավաքը:

Սակայն այս որոշումը հավանություն գտավ բանակի փոքրամասնության մեջ միայն: Հայկական ազգային զորամասերը գտնվելով դաշնակների ազդեցության տակ, անգլիացիներին հրավիրելու կողմն էին: Խորհրդի հուլիսի 25-ի նիստից հետո, չնայած որ բոլշևիկյան կուսակցությունն ու խորհրդային իշխանությունը մեծ աշխատանք էին տարել, կազմալուծումը թիկունքում և ֆրոնտում շարունակվում էր: Էսէռները, դաշնակները, մենշևիկները վիժեցնում էին հայտարարված զորահավաքը:

Դեռ հուլիսի 23-ին Շահումյանը հաղորդել էր Մոսկվա՝ Լենինին, որ հայկական զորամասերը «քայքայվել են՝ հրամանատարական կազմի մի մասի վախկոտության և անգլիական ագիտացիայի պատճառով: Անհրաժեշտ է Ռուսաստանից ուղարկել թարմ ուժեր և քաղաքականապես վստահելի հրամանատարական կազմ...»[1]: Հուլիսի 27-ին Շահումյանը մի նոր հեռագիր ուղարկեց Լենինին և Ստալինին. «Ֆրոնտում դրությունը օրեցօր վատթարանում է: Շամախու ուղղությամբ մեր զորքերը նահանջել են մինչև Բաքու և վերակազմվում են յերկաթգծի ուղղությամբ... Քաղաքում խիստ լարված մթնոլորտ է տիրում: Քաղաքացիական պատերազմի հոտ է փչում: Անգլիական օգնությունը մեծ կասկածի տակ է, բայց նրանց հրավիրելու բանաձևը վերջնականապես քայքայել է բանակը և կազմալուծել է թիկունքը, ավելացնելով քաղաքը հանձնելու վտանգը: Փրկել Բաքուն Ռուսաստանի համար, անհրաժեշտ է, որ շտապ օգնության հասնեն Ռուսաստանի զորքերը: Հարկադրաբար խնդրում

[1] ЦАОР, ֆ. 130, ցուց. 12, գործ 25, թ. 257:

եմ ամեն միջոցի դիմել՝ անհապաղ կանոնավոր զորամասեր տեղափոխելու համար»[1]:

Կենտրոնական խորհրդային կառավարությունը ձեռնարկում եր ամեն հնարավոր յեղածը՝ խորհրդային Բաքուն փրկելու համար: Բաքու յեր ուղարկվում մեծ քանակությամբ զենք: Հենց այդ ծանր օրերին, հուլիսի վերջին օրերին, Ռուսաստանից ժամանեցին 5 շխունա, վորոնց վրա կար 3 զրահապատ ավտոմոբիլ, 80 թնդանոթ, 160 գնդացիր, հազար հրացան, 20 հազ. փամփուշտ, զգեստավորում և այլն: Ահագին արդելքներով այդ բեռը յերկաթուղով տեղափոխվում եր մինչև Սարատով, իսկ այնտեղից ջրային ճանապարհով մինչև Բաքու: Բեռանը ուղեկցում եյին Բաքվի բոլշևիկյան դրուժինայից մի խումբ ընկերներ, վորի մեջ մտնում եյին Սուրեն և Լևոն Շահումյանները և ուրիշները, ինչպես նաև կենտրոնից յեկած կարմիր-բանակայինների զինված ջոկատը: Բայց Բաքվի խորհրդային իշխանությանը հարկավոր եր վոչ միայն զենք: Հարկավոր եյին վստահելի զորամասեր, վորոնք ընդունակ լինեյին խեղդելու դավաճանությունը քաղաքի ներսում և ջախջախելու Բաքվի վրա յեկող թշնամուն: Սակայն ինտերվենցիայի և բլոկադի կրակե օղակով բռնված խորհրդային Ռուսաստանը չեր կարող Բաքու փոխադրել ռազմական մեծ ուժեր:

Ռուսաստանի խորհրդային հանրապետության դրությունը ծայրահեղորեն դժվարին եր: Նրա վրա յեր հարձակվում վոչ միայն ներքին հակահեղափոխությունը, այլև միջազգային իմպերիալիզմի միավորված ուժերը: Գերմանական հրոսակախմբերը գրավել եյին ամբողջ Ուկրաինան, Հյուսիսային Կովկասի մի մասը, Ղրիմը, դրանք վերածելով գերմանական իմպերիալիզմի գաղութների: Ճապոնիան սկսել եր ինտերվենցիան Հեռավոր Արևելքում: Անգլիական իմպերիալիստները գրավել եյին Մուրմանսկը, Արխանգելսկը: Անգլո-ֆրանսական իմպերիալիստների առաջադրանքով ապստամբած չեխոսլովակները գրավել եյին Սիբիրը, Ուրալը, Պովոլժյեյի մի մասը, սպառնալով յերկրի կենտրոնին: Հյուսիսային Կովկասը հակահեղափոխության ձեռքումն եր: Դոնում և Կուբանում տիրապետում եր գերմանական հովանավորյալ Կրասնովը:

Կատաղի կռիվ եր տեղի ունենում Ցարիցինի համար, վորը ընկեր Ստալինի ղեկավարությամբ հերոսաբար պաշտպանվում եր

---

2 ЦАОР, ֆ. 130, գործ 6, թ. թ. 16—18:

բոլոր կողմերից վրա յեկող թշնամուց: Հակահեղափոխական ապստամբությունների մի ամբողջ ցանց բռնկվեց թիկունքում— Յարոսլավլում, Մուրոմում և ուրիշ քաղաքներում, «ձախ»-եսերական խռովությունը Մոսկվայում, անհատական տեռորը կուսակցության և կառավարության լավագույն ղեկավարների դեմ, եսերների, դավաճաններ՝ Բուխարինի, Տրոցկու, Զինովյևի զազրելի հակախորհրդային դավադրությունը: Խորհրդային իշխանության դեմ մղվող կռվում թշնամին օգտագործում եր յերկրի տնտեսական և պարենային ծանր դրությունը:

Հուլիսի 29-ին Լենինը պատասխանեց Շահումյանին. «Խորհուրդների V համագումարի վորոշման և կենտրոնական խորհրդային իշխանության դեմ ուղղված՝ դաշնակների ամեն տեսակի գործողությունները կդիտվեն վորպես ապստամբություն և դավաճանություն: Զորքեր ուղարկելու վերաբերյալ միջոցներ ձեռք կառնենք, բայց հավաստի խոստանալ չենք կարող: ԼԵՆԻՆ»[1]: Միաժամանակ Լենինը Աստրախանին խնդրում եր ռադիոյով հաղորդել, թե ճի՞շտ ե արդյոք, վոր Բաքվի ժողկոմխորհը հրաժարական ե տվել, իսկ յեթե ճիշտ չե, ապա վո՞րքան ժամանակ հույս ունի դիմանալու բոլշևիկների իշխանությունը Բաքվում:

Հուլիսի 30-ին լրագրերում տպագրվեց մի դրադրություն, վորը ցույց եր տալիս բոլշևիկների՝ մինչև վերջը կռվելու անսասան վճռականությունը: Կովկասյան 8-րդ Կարմիր գումարտակի 1-ին և 3-րդ վաշտերի ընդհանուր ժողովը քննարկում եր «Բաքվի խորհուրդների, վորպես թե արդեն գոյություն չունեցող իշխանության կրիտիկական դրության» հարցը: Ժողովը յերկու պատվիրակ ուղարկեց Բաքվի խորհուրդը՝ հարցում անելու, թե իրո՞ք գոյություն ունի խորհրդի իշխանությունը և ի՞նչպես վարվել հետագայում հօգուտ այդ իշխանության շահերի: Զինվորներին Շահումյանի տված պատասխանը զետեղվեց «Бакинский Рабочий»-ի մեջ. «Խորհրդի իշխանությունը գոյություն ունի և գոյություն կունենա: Ներքին հակահեղափոխական ամեն տեսակի յելույթները... անողոքաբար կճնշվեն... Յեթե դուք, ընկերներ, դիմանաք, ամեն ինչ լավ կլինի: Մեր բոլոր հոգսերն ուղղված են ֆրոնտն ուժեղացնելու կողմը: Շնորհակալություն աջակցության և խորհրդային իշխանության մասին հոգալու համար»[2]:

Հենց նույն օրը խորհրդային իշխանության դրությունը

---

1 ЦАОР, ֆ. 130, ցուց. 12, գործ 115, թ. 101-а:

2 «Бакинский Рабочий» № 148, 1918 г.

Բաքվում խիստ վատացավ։ Հակառակորդը ընդհուպ մոտեցավ քաղաքին։ Բոլշևիկյան զորամասերը և ընկ. Պետրովի ջոկատը շարունակում էին հերոսաբար պաշտպանել Բաքուն, բայց դաշնակցական ազգային զորամասերը հրաժարվեցին թշնամու դեմ դուրս գալուց և, Բիչերախովի օրինակին հետևելով, մերկացրին ֆրոնտը։ Ավելի քան յերեք հազար հայ զինվոր զգեստավորում չունենալու պատրվակի տակ հեռացավ ֆրոնտից։ Շտաբի պետ դաշնակ Ավետիսովը պահանջում էր անհապաղ սպիտակ դրոշ պարզել և հաշտության բանակցություններ սկսել։ Հայկական զորամասերի ղեկավար դաշնակների խորհրդակցությունը միացավ նրա պահանջին։ Դաշնակների կուսակցությունն արդեն նշել էր հաշտության պատվիրակության կազմը։

Բոլշևիկները վճռական կռիվ հայտարարեցին դաշնակների դավաճանությանը։ Ամեն տեսակի հաշտության բանակցությունների դեմ արտահայտվելով, Բաքվի ժողովրդական կոմիսարների խորհուրդը բոլոր բանվորներին կոչ արեց զենք վերցնել և պաշտպանել քաղաքը մինչև վերջին հնարավորությունը։ Ժողկոմխորհը հայկական զորամասերի պետերից պահանջեց իրենց զորքերն անհապաղ դուրս բերել ֆրոնտ։

Վերջին անգամ կոչով դիմեց «Бакинский Рабочий»-ն։ «Ի զե՛ն»— այսպես էր վերնագրված հոդվածը։ «Հնչել է ժամը, յերբ գործն արդեն չի կարող հապաղում հանդուրժել։ Հնչել է ժամը, յերբ բոլոր ազնիվ հեղափոխականները պետք է անհապաղ դիմեն զենքի՝ պաշտպանելու համար Բաքվի պրոլետարիատի հեղափոխական պատիվը... Ընկերնե՛ր, ո՞ւմ եք ուզում դուք անձնատուր լինել։ Ծանր է այդ ասել։ Ի զե՛ն, բոլոր ազնիվ պրոլետարներ»[1]։

Հուլիսի 31-ին հակառակորդը շարունակում էր հարձակվել, բայց ֆրոնտում ուժերը չէին ավելանում։ Դաշնակների խոստացած զորքերից յեկավ միայն 300 մարդ, դրանք էլ չէին մասնակցում մարտերին։ Ընկ. Պետրովի ջոկատը, վորը հերոսաբար կռվում էր ձախ թևում, հակառակորդի ճնշման տակ հուլիսի 31-ին նահանջեց դեպի քաղաք, կորցնելով իր կազմի ավելի քան յերկու յերրորդը։ Պետրովի ջոկատի շտաբի պետը ժողկոմխորհին հաղորդեց, վոր միայն իր ուժերով ջոկատն ի վիճակի չէ դիմանալու։ Հայկական ազգային խորհրդի ներկայացուցիչները հաստատեցին սպիտակ դրոշակ պարզելու և հաղթողների դրագրու-

[1] «Бакинский Рабочий» № 148, 1918 г.

թյունը հանձնելու վորոշումը։ Բանակի շտաբի պետ Ավետիսովը հաղորդեց, վոր քաղաքի անկումը մի քանի ժամից հետո անխուսափելի յե։

Նա սպառնում էր ինքը հաշտության պատվիրակություն ուղարկել թուրքերի մոտ, յեթե ժողկոմխորհն առաջվա պես համառի։ Բանակի շտաբին կից գործող զինվորական կոմիսարներ՝ ընկ. ընկ. Միկոյանը, Գանինը և Գաբիշևը տեղեկացրին, թե Ավետիսովը զինված ուժ գործադրելու սպառնալիքով իրենցից պահանջում է սպիտակ դրոշով դուրս գալ հակառակորդի առաջ ու նրան զինադադար առաջարկել։ Կոմիսարները դրան պատասխանել էին, թե ավելի շուտ կհամաձայնվեն գնդակահարվել, քան այդպիսի խայտառակ քայլի դիմել։ Շահումյանը ժողովրդական կոմիսարների խորհրդի անունից հավանություն տվեց նրանց գծին։

Դաշնակների դավաճանությունը նպատակ ուներ գլուխ բերել խորհրդային իշխանության տապալումը Բաքվում և քաղաքը հանձնել անգլիական իմպերիալիստների ձեռքը։ Շահումյանը ժողկոմխորհ կանչեց դաշնակների ներկայացուցիչներին և նրանցից բացատրություն պահանջեց նրանց գործողությունների համար։ Այդ ժամանակ դաշնակ Գյուլխանդանյանը բաց արեց խաղաթղթերը. «Ինչո՞ւ իշխանությունը չեք հանձնում։ Մենք առանց ձեզ յոլա կգնանք», լկտիաբար հայտարարեց նա։ Խոսելու բան չկար։ Դաշնակների ամբողջ քաղաքականությունը հանգում էր այն բանին, վորպեսզի տապալեն խորհրդային իշխանությունը և անգլիական իմպերիալիստների օգնությամբ բուրժուազիայի դիկտատուրա հաստատեն։

Շահումյանը գրում էր, վոր Բաքվի ժողովրդական կոմիսարների խորհուրդը կանգնած էր կրկնակի դավաճանության փաստի առաջ. «Նա չէր կարող համաձայնության գալ անգլիական իմպերիալիզմի հետ հենց այնպես, ինչպես վոր չէր կարող հաշտության բանակցություններ սկսել գերման-թուրքական իմպերիալիզմի հետ։ Նա կարող էր դիմել միայն պրոլետարիատին, նրան վոտքի հանելով, բայց ակներև էր, վոր աջակողմյան կուսակցությունների և բանակի հրամանատարական կազմի բռնած նման դիրքի հետևանքով արդեն ուշ է, վոր դա արդեն չի փրկի Բաքուն թշնամու ներխուժումից»[1]։

Հուլիսի 31-ին Բաքվի խորհրդի արտակարգ նիստում ժող-

[1] Ստեփան Շահումյան, Հոդվածներ և ճառեր, էջ 138։

կոմխորհը Ստեփան Շահումյանի ղեկավարությամբ հրաժարվեց իր լիազորություններից:

Բաքվի բանվորներին բացատրելով այդ քայլը, Ստեփան Շահումյանը գրում էր. «Ժողովրդական կոմիսարների խորհուրդը գերադասեց թշնամին քաղաք ներխուժելու րոպեյին քաղաքացիական կռիվ չսկսել, այլ դիմել իշխանությունից հրաժարվելու պառլամենտական ձևին, վորպեսզի հետագայի համար պատասխանատվությունը իրենց վրա վերցնեն նրանք, ովքեր կարող են հաշտվել թուրքերի հետ կամ Բաքու հրավիրել անգլիացիներին: Մենք չէյինք կարող լինել վոչ այն մարդկանց թվում, ովքեր անձնատուր են լինում թուրքական փաշաների վողորմածությանը, փրկում են իրենց կաշին, բոլշևիկներին ու ռուսական զորքերը մատնելով թուրքական բանդաների ձեռքը՝ հոշոտելու, և վոչ էլ նրանց թվում, ովքեր, չնայած հայրենասիրության մասին արած կեղծավոր ֆրազներին, պատրաստ են Բաքուն հանձնել անգլիացիներին: Մենք վորոշեցինք փրկել Ռուսաստանի Խորհրդային իշխանության հավատարիմ հեղափոխական զորքերը, վորպեսզի, սպասելով Աստրախանից յեկող զորքերին, նրանց հետ միասին կռիվ հայտարարենք յերկու ֆրոնտում—թուրքական ու անգլիական իմպերիալիզմին—և պաշտպանենք Բաքուն հեղափոխական Խորհրդային Ռուսաստանի համար» [1]:

Ընկեր Ստալինը գրում էր, թե «1918 թ. ոգոստոսին, յերբ թուրքական զորքերն ընդհուպ մոտեցան Բաքվին, իսկ Բաքվի Խորհրդի եսեր-մենշևիկյան անդամները՝ հակառակ բոլշևիկներին՝ իրենց հետևից տարան Խորհրդի մեծամասնությանը և ոգնության կանչեցին անգլիական իմպերիալիստներին, Բաքվի բոլշևիկները Շահումյանի և Ջափարիձեյի ղեկավարությամբ, մնալով փոքրամասնություն, վայր դրին իրենց լիազորությունները և դաշտը մաքրեցին քաղաքական հակառակորդների համար» [2]:

Բաքվի խորհրդային իշխանությունն ընկավ գերման-թուրքական և անգլիական իմպերիալիստների ճնշման ներքո: Այդ իշխանությունը կարող էր անպայմանորեն ջախջախել ներքին հակահեղափոխությանը, բայց նա ուժեր չուներ հաղթահարելու յերկու իմպերիալիստական խմբավորումների միաժամանակյա

[1] Ստեփան Շահումյան, Հոդվածներ և ճառեր, էջ 139—140:

[2] Ստալին, Անգլիական իմպերիալիզմի գործակալների կողմից Բաքվի 26 ընկերների գնդակահարվելու շուրջը. «Известия ВЦИК», 1919 թ. ապրիլի 23-ին:

գրոհը: Իմպերիալիստները գործում էյին վոչ միայն զինված ուժով: Դավաճանություն, մատնություն, կաշառք, լրտեսություն,—ամեն ինչ գործի յեր դրվել: Նրանք իրենց ագենտներին ու լրտեսներին ուղարկում էյին թիկունք, նրանք տեղում հավաքագրում էյին դրանց: Խորհրդային իշխանության դեմ մղած բացահայտ կռվում պարտություն կրած՝ բոլոր ազգերի բուրժուազիան, բոլոր յերանգների բուրժուական կուսակցությունները,—մուսավաթիստներն ու դաշնակները, եսերներն ու մենշևիկները—նավթային Բաքուն, Ադրբեջանը, ինչպես նաև ամբողջ Խորհրդային յերկիրը ծախում էյին ուզածդ իմպերիալիստական ավազակին, վորպեսզի նրա ոգնությամբ վերականգնեյին բուրժուազիայի դիկտատուրան:

Իր գոյության կարճ ժամանակամիջոցում խորհրդային իշխանությունը Բաքվում վիթխարի աշխատանք կատարեց սոցիալիստական շինարարության բոլոր բնագավառներում—արդյունաբերության մեջ, տրանսպորտում, լուսավորության, աշխատանքի, դատական և այլ բնագավառներում: Ազգայնացնելով նավթային արդյունաբերությունը և առևտրական նավատորմը, Բաքվի պրոլետարները ճգնաժամի ու քայքայման ծանր որերին Խորհրդային յերկրին տվին տասնյակ-միլլիոնավոր փութ նավթ:

Այդ աշխատանքը կատարվեց սուր պարենային դրության ու դաժան քաղաքացիական պատերազմի պայմաններում: Բաքվի բոլշևիկները լավ էյին հասկանում Բաքվի՝ վորպես արդյունաբերական խոշորագույն կենտրոնի նշանակությունը: Նրանք գիտեյին, վոր պայքարը հանուն խորհրդային Բաքվի—դա պայքար է հանուն պրոլետարական հեղափոխության և պրոլետարական դիկտատուրայի՝ Ադրբեջանում, Անդրկովկասում, ամբողջ յերկրում: Բացառիկ բարդ պայմաններում Բաքվի բոլշևիկներն արիաբար պաշտպանվում էյին բոլոր կողմերից վրա յեկող թշնամուց և անում էյին ամեն բան, վորպեսզի Բաքուն փրկեն Խորհրդային յերկրի համար:

Բավականաչափ սեփական զինված ուժեր չունենալով, բոլշևիկները կիրառում էյին ճկուն տակտիկա: Նրանք հիշում էյին 1918 թ. փետրվարի 14-ին Շահումյանին գրած նամակում Լենինի տված ցուցումներն այն մասին, վոր անհրաժեշտ է հաստատակամությունն ու վճռականությունը միացնել դիվանագիտությանը և հակառակորդի բանակում յեղած կոնֆլիկտներն ու հակասություններն ոգտագործելու ունակությանը: Բաքվի բոլշևիկները հայկական ազգային զորամասերն ոգտագործեցին խոր-

հըրդային իշխանության համար մղվող պայքարում մարտյան կռիվների և Բաքվի վրա գերման-թուրքական հարձակում գործելու օրերին: «Մենք յերբեք դոկտրինյորներ չենք յեղել,—արդարացիորեն նշում էր Շահումյանը:—Այս ուղղությամբ մենք վորոշ զիջումներ կանենք մինչև վորոշ սահման, մինչև այն ժամանակ, յերբ կկարողանանք պաշտպանել Բաքուն և Անդրկովկասը՝ հանուն Խորհրդային հեղափոխության»[1]:

Կիրառելով այդ ճիշտ տակտիկան, բոլշևիկները ժամանակ չունեյին արագորեն իրենց զինված ուժն ստեղծելու, վորպեսզի այն հակադրեյին դաշնակցական զորամասերին: Քանակական տեսակետից հայկական ազգային զորամասերը մեծ ուժ եյին կազմում: Կասպից ծովի նավատորմի նավաստիները գտնվում եյին եսերների ազդեցության տակ: Ահա թե ինչու դաշնակների, եսերների, մենշևիկների, Բիչերախովի դավաճանությունը կարողացավ այդպիսի մեծ դեր խաղալ Բաքվում խորհրդային իշխանության անկման մեջ:

Հակահեղափոխական կուսակցությունների քայքայիչ վնասարարական աշխատանքն իր ժամանակին չմերկացվեց և չխափանվեց պրոլետարական դիկտատուրայի հեղափոխական միջոցառումներով: Անգլիացիներին հրավիրելու համար մղած ագիտացիայով թշնամուն հաջողվեց կազմալուծել Բաքվի պրոլետարիատի նշանակալից մասը:

«Բանվորները յերերացին,—գրում էր Միկոյանը:—Հաց չըկար: Բաքուն Հյուս. Կովկասից արդեն կտրված էր կազակային բանդաներով: Սովը շրջում էր բանվորների թաղամասերը: Բաքուն կտրված էր լավորակ ջրի աղբյուրից: Քաղաքի պարիսպների մոտ հակահեղափոխական ավելի ու ավելի մեծ հրոսակախմբեր եյին կուտակվում: Հրետանային կրակի դղրդոցը խլացնում էր գործարանային լուռ մնացած շչակները: Հակահեղափոխության հնարավոր դատաստանի սարսափը ջլատում էր բանվորների ուժերը: Ոգտվելով լեգալ լինելուց, եսեր-մենշևիկյան սրիկաներն անպատիժ կերպով թունավորում եյին բանվորների գիտակցությունն այն մտքով, թե բավական է մենք ցանկանանք, և անթիվ քանակությամբ «կուլտուրական» անգլիական զորքեր ոգնության կգան իրենց «դաշնակից յեղբայրներին» ընդդեմ Թուրքերի, կփրկեն քաղաքը»[2]:

---

[1] Ստեփան Շահումյան, *Հոդվածներ և ճառեր*, եջ 229:

[2] Միկոյան, *Բաքվի 26 կոմիսարները*, «Правда», 1933 *թ. սեպտեմբերի* 20:

Պրոլետարական Բաքուն կտրված էր ադրբեջանական գյուղից: Բաքվի բոլշևիկները վորոշ հաջողություններ ձեռք բերին ադրբեջանական գյուղացիների մեջ տարած աշխատանքում: Սակայն գյուղացիության հիմնական մասսաների հետ ամուր զոդում հաստատել այնպես էլ չհաջողվեց: Ընկ. Միկոյանը մատնանշում էր. «Ագրարային հեղափոխության ալիքները չկարողացան ճեղքել նացիոնալ-շովինիստական պատվարը, վորը բուրժուազիան ու կալվածատերերն եյին կանգնեցրել գյուղի և պրոլետարական Բաքվի միջև: Բանից դուրս յեկավ, վոր Բաքուն պատշաճ կապ և ազդեցություն չուներ Թուրքական գյուղի վրա: Բաքվի պրոլետարիատն այն ժամանակ չկարողացավ Թուրքական գյուղացիության հետ զոդում հաստատել և ադրբեջանական կալվածատերերի ձեռքերից խլել ազգային ազատագրության դրոշը»[1]:

Ադրբեջանական բուրժուազիան և կալվածատերերն առաջ քաշեցին Ադրբեջանի ավտոնոմիայի հարցը: Նրանց «ավտոնոմիան» նշանակում էր վերականգնել բեկերի ու խաների տիրապետությունը և յերկիրը վերածել գերման-թուրքական իմպերիալիզմի գաղութի: «Մինչև այժմ,—գրում էր Շահումյանը, դիմելով ադրբեջանական գյուղացիներին,—ձեր բեկերն ու խաները խաբում եյին ձեզ: Նրանք ուզում են մի անգամ էլ խաբել: Նրանք իրենց կոմիտեների միջոցով մուսուլմանական զորքեր են ստեղծում և ուզում են Բաքվի, Գանձակի ու Յերևանի նահանգներում մուսուլմանական մի նոր պետություն հայտարարել: Բանվորա-գյուղացիական նոր կառավարությունը դեմ չե մուսուլմանների ազատությանն ու անկախությանը: Ընդհակառակը, նա բոլոր ժողովուրդներին իրավունք է տալիս տնորինելու իրենց բախտն ազատ, ինչպես իրենք են ուզում, բայց ձեր խաներն ու բեկերը կխաբեն ձեզ, կվերականգնեն հին խանությունները և առաջվա պես կխեղդեն ձեզ»[2]:

Ընկեր Ստալինը մատնանշում էր, վոր ծայրամասերում անհրաժեշտ են «այդ ծայրամասերի աշխատավորներին և շահագործվող մասսաներին հեղափոխական զարգացման պրոցեսի մեջ առնելու հատուկ յեղանակներ: Անհրաժեշտ է մասսաներին բարձրացնել մինչև Խորհրդային իշխանությունը, իսկ նրանց լավագույն ներկայացուցիչներին—ձուլել վերջինիս հետ: Բայց այդ անհնարին է առանց այդ ծայրամասերի ավտոնոմիայի... ավտո-

---

[1] Միկոյան, *Բաքվի 26 կոմիսարները*, «Правда», 1933 *թ. սեպտեմբերի* 20:

[2] Ստեփան Շահումյան, *Հոդվածներ և ճառեր*, եջ 89:

նոմիան վոչ թե բացասելը, այլ այն ճանաչելն է հանդիսանում Խորհրդային իշխանության հերթական խնդիրը: Անհրաժեշտ է միայն այդ ավտոնոմիան կառուցել տեղերի Խորհուրդների բազայի վրա: Իշխանությունը միայն այս ճանապարհով կարող է ժողովրդական և հարազատ դառնալ մասսաների համար, այսինքն, անհրաժեշտ է միայն, վորպեսզի ավտոնոմիան ապահովի տվյալ ազգի վոչ թե վերնախավերի, այլ նրա ստորին խավերի իշխանությունը: Այս է ամբողջ եյությունը»[1]: 1918 թ. մարտի 18 (31)-ին Շահումյանին և Ջափարիձեյին գրած նամակում ընկեր Ստալինը հատկապես առաջ քաշեց Ադրբեջանի մուսուլմանների համար ավտոնոմիա ստեղծելու հարցը:

«Այս ցուցումը,—գրում էր ընկ. Միկոյանը,—Բաքվում չիրագործված մնաց: Այնինչ միայն այդ ճանապարհով կարելի յեր խախտել ադրբեջանական ու անդրկովկասյան հակահեղափոխության շարքերը, թշնամիների ձեռքից խլել ազգային ազատագրության դրոշը: Միայն «նրանցից ավտոնոմիան վերցնելով, նախապես այն մաքրելով բուրժուական աղտեղությունից, այն բուրժուականից խորհրդայինի վերածելով» (Ստալին), Բաքվի պրոլետարիատը կկարողանար հաստատել պրոլետարական Բաքվի և գյուղացիական Ադրբեջանի դաշինքը, ամրացնել և պաշտպանել պրոլետարական դիկտատուրան Բաքվում»[2]:

X

Օգոստոսի 1-ին Բաքվում կազմավորվեց հակահեղափոխական կառավարություն: Նա կազմվեց Կասպից ծովի նավատորմի Գործադիր կոմիտեյի և եսեռա-մենշևիկյան ժամանակավոր գործադիր կոմիտեյի ներկայացուցիչներից և կրճատ կոչվում եր «Ցենտրոկասպիայի դիկտատուրա»: Նրա մեջ մտան Բաքվի բանվորների զազրելի մատնիչներ—մենշևիկները, եսերները և դաշնակները—Այոլլոն, Սադովսկին, Ումանսկին, Մելիք Յոլչյանը և ուրիշները: Բաքվի խորհուրդը ցրվեց: Բիչերախովը նշանակվեց գլխավոր հրամանատար: «Бакинский Рабочий» և «Известия» լրագրերը փակվեցին:

Բաքվում՝ եսերներից, մենշևիկներից ու դաշնակներից հակահեղափոխական կառավարություն ստեղծելը՝ Ռուսաստանի

1 Ստալին, Նարկոմնացի դիմումը, «Правда» № 67, 1918 թ. ապրիլի 9-ին (մարտի 27-ին):

2 Միկոյան, Բաքվի 26 կոմիսարները, «Правда» 1933 թ. սեպտեմբերի 20:

խորհրդային իշխանությունը խեղդելու այն միասնական պլանի մի մասն եր, վոր իրականացնում եյին 1918 թ. ամառը իմպերիալիստներն ու նրանց դաշնակիցները: Ընկեր Լենինը գրում եր. «Մուրմանը հյուսիսում, չեխոսլովակյան ֆրոնտը արևելքում, Թուրքեստանը, Բաքուն և Աստրախանը հարավ-արևելքում—մենք տեսնում ենք, վոր անգլո-ֆրանսական իմպերիալիզմի կառուցած շղթայի համարյա բոլոր օղակները միացած են իրար հետ»[1]:

Անգլիական իմպերիալիստների ագենտներն իրենց գործունեությունը սկսեցին բոլշևիկների գլխին դատաստան տեսնելու փորձից: Իշխանությունը հանձնելուց հետո—հուլիսի 31-ին կուսակցության Բաքվի կոմիտեն վորոշեց հիմնական ուժերը եվակուացիայի յենթարկել խորհրդային Աստրախան: Պետրովի ջոկատը և խորհրդային իշխանությանը հավատարիմ մնացած մյուս զորամասերը սկսեցին քաշվել դեպի ծովի մոտ գտնվող Պետրովսկայա հրապարակը: Հենց այստեղ մոտեցան առևտրական նավերը: Վերցնելով պատասխանատու աշխատողներին, նրանց ընտանիքներին, զորքերի մի մասին և խորհրդային իշխանության ունեցվածքը, նավերը ծով մտան, վերցնելով Աստրախանի ուղղությունը: Բայց նրանք դեռ չորս մղոն չեյին անցել, յերբ նրանց հասավ «Արդահան» հրետանավը: «Ցենտրոկասպիայի» ներկայացուցիչները բոլոր նավերին առաջարկեցին վերադառնալ, սպառնալով կրակ բանալ չենթարկվելու դեպքում: Դիմադրել անհնարին եր, և, իրար հետ խորհրդակցելով, ընկերները վորոշեցին յենթարկվել: Բոլշևիկյան նավերը վերադարձան Պետրովսկայա հրապարակի մոտ:

Հենց նույն ժամանակ տեղի ունեցավ Ստեփան Շահումյանի առաջին ձերբակալությունը: Մոտեցած կատերից «Ցենտրոկասպիայի» ներկայացուցիչները պահանջեցին հանձնել Շահումյանին: Շոգենավը ջրասույզ անելու սպառնալիքից հետո Շահումյանը հարկադրված յեղավ յենթարկվել և բարձրանալ «Աստրաբադ» նավը:

Շահումյանին ձերբակալելու լուրը հասավ բանվորներին: Սկսվեցին բողոքները: Ջափարիձեն վոտքի հանեց ընկ. Պետրովի ջոկատը: Կարմիր-բանակայինները և բանվորները պահանջեցին անհապաղ ազատել Շահումյանին: «Ցենտրոկասպին» հարկադրված յեղավ զիջել, և Շահումյանն ազատվեց:

1 Լենին, հ. XXIII, եջ 156:

Բոլշևիկները Պետրովսկայա հրապարակում զինվորական ճամբար կազմեցին: Այստեղ կային զենքի բոլոր տեսակների զորքեր: Նրանք պատրաստ կանգնած եյին ամեն տեսակի անակնկալ դեպքի համար: Հրապարակին մոտ գտնվող՝ քաղաքի ամբողջ մասը նույնպես գտնվում եր բոլշևիկների իշխանության տակ: Հրապարակում և շոգենավերի վրա հավաքվեց համարյա ամբողջ կուսակցական կազմակերպությունը: Տեղի եյին ունենում Բաքվի կոմիտեյի և կուսակցական կոնֆերենցիայի նիստեր:

Օգոստոսի 5-ին թուրքերը Վոլչի դարպասների կողմից ներխուժեցին քաղաք: Դրությունը կրիտիկական եր: «Ցենտրոկասպին» շփոթվեց, դաշնակցական զորամասերը խուճապահար յեղած նահանջեցին: Այն ժամանակ Շահումյանը Պետրովի ջոկատին առաջարկեց օգնություն ցույց տալ քաղաքին: Արագորեն շոգենավերից դուրս բերվեցին թնդանոթները և կրակ բացեցին հարձակվող թուրքական զորքերի վրա: Այդ կռվին մասնակցում եյին վոչ միայն մարտիկները, այլև ժողկոմխորհի անդամները. նրանք հրապարակ եյին դուրս բերում արկղներով ռումբեր, ռումբերը մոտեցնում եյին թնդանոթներին: Պետրովի մարտիկների դաժան կրակը այնպիսի ուժեղ ներգործություն արեց, վոր թուրքերը խուճապահար յեղած նահանջեցին: Պետրովի հեծելազորի և հետևազորի կողմից հալածվելով, նրանք հեռացան մի ամբողջ չվերթ: Բոլշևիկների և Պետրովի ջոկատի օգնության շնորհիվ հակառակորդը չկարողացավ գրավել քաղաքը:

Բոլշևիկները բանվորներին կոչ եյին անում աջակցել Պետրովի ջոկատին և մտնել նրա շարքերը. նրանք բանվորներին նորից ու նորից եյին մատնանշում, թե վորտեղից պետք է օգնություն սպասել: Շահումյանը գրում եր, թե Բաքուն «կփրկվի վոչ Կարմիր բանակը քայքայող, իսկապես յերկչոտ Ավետիսովների ու Համազասպների սպիտակ դրոշակով և վոչ էլ անգլիացիների ու նրանց սպասավորների առասպելական օգնությամբ, այլ մեզ օգնության հասնող բանվորա-գյուղացիական Ռուսաստանի զորքերով... Միայն նրանք պրոլետարիատի հետ միասին կպաշտպանեն Բաքուն խորհրդային Ռուսաստանի համար, թե գերման-թուրքական և թե՛ անգլիական իմպերիալիստների դեմ: Կենտրոնական իշխանությունից նշանակված ռազմական կոմիսար ընկ. Պետրովի ջոկատը արդեն այդպիսի կռիվ մղում է: Ընկե՛ր բանվորներ: Անցեք ընկ. Պետրովի ջոկատի դրոշակների տակ, մեր սիրելի բանվորա-գյուղացիական Ռուսաստանի դրոշակների

տակ, վորտեղից ուղարկված է նա.. Կեցցե՛ Ռուսաստանից անբաժան և իմպերիալիստներից անկախ Բաքու քաղաքը»[1]:

Հրապարակում յեղած ճամբարը և Պետրովի ջոկատը նշանակալից ուժ եյին: «Շահումյանական միջնաբերդ»,—ասում եյին այդ ուժի մասին եսեր-մենշևիկները: «Ցենտրոկասպի դիկտատուրան» չեր կարող լիիրավ իշխանություն լինել, քանի դեռ գոյություն ուներ այդպիսի մի միջնաբերդ: Բայց այն ջախջախելու համար «Ցենտրոկասպին» ուժեր չուներ: «Դիկտատորները» հարկադրված յեղան նույնիսկ բանակցությունների մեջ մտնել բոլշևիկների հետ: Նրանց միակ հույսը անգլիական իմպերիալիստների գալն եր, վորպեսզի նրանց օգնությամբ ամրապնդեյին բուրժուազիայի դիկտատուրան:

Անգլիական կապիտալի սպասավորներ, նրանք իրենց տիրապետության հենց առաջին որն իրենց տերերին հաղորդեցին, թե առաջադրանքը կատարված է և Բաքվի ճանապարհը բաց է: Դենստերվիլն ուրախությամբ գրում է, թե վերջապես «Բաքվում պայթեց յերկար ժամանակ սպասվող հեղաշրջումը. բոլշևիկյան կառավարությունը տապալվել է և փոխարինվել է նոր խմբով... Նոր կառավարությունը նոր եր միայն իր ձեռքը վերցրել կառավարման սանձերը, յերբ, արդեն մշակված պլանի համաձայն, մեզ մոտ սուրհանդակներ ուղարկեց՝ խնդրելով օգնության հասնել»[2]: Դենստերվիլը քիչ թե շատ նշանակալից ուժեր չուներ Բաքու ուղարկելու համար: Նա այնտեղ ուղարկեց միայն մի փոքր ջոկատ՝ գնդապետ Ստոկսի գլխավորությամբ:

Օգոստոսի խաղաղ գիշերներին բանվորներն ու կարմիրբանակայինները պահպանում եյին Պետրովսկայա հրապարակում յեղած մարտկոցները: Իսկ վոչ հեռվում, Պրիմորսկի բուլվարում հավաքվում եր մյուս բանակի հասարակությունը: Բուրժուական քաղքենիները խմբերով ուշադրությամբ նայում եյին ծովի հեռուն, սպասելով իրենց փրկիչներին—անգլիացիներին: Օգոստոսի 4-ին անգլիացիների առաջին ջոկատը ժամանեց Բաքու: Եսերները, դաշնակներն ու մենշևիկները հանդիսավորապես դիմավորեցին «հյուրերին», բայց բնակչության լայն մասսաները, ինչպես խոստովանում է ինքը Դենստերվիլը «Դառնորեն հիասթափվեցին՝ տեսնելով յերկու-յերեք սպա և մի բուռ անգլիական զինվորներ,

1 Ստեփան Շահումյան, Հոդվածներ և ճառեր, եջ 234:

2 Դենստերվիլ, Բրիտանական իմպերիալիզմը Բաքվում և Պարսկաստանում, եջ 183—184:

մինչդեռ նրանց անզուսպ յերևակայությունը նրանց պատկերում եր անթիվ-անհամար նավեր, վորոնք գալիս են նավահանգիստ և ափ են իջեցնում անգլիացիների ամբողջ բանակներ...»[1]:

Օգոստոսի 8-ին «Ցենտրոկասպիի դիկտատուրան» կազմակերպեց հանդիսավոր ընդունելություն՝ անգլիական հրամանատարության ներկայացուցիչների պատվին: «Հարգելի հյուրեր և դաշնակիցներ,—ասում եյին «դիկտատորները»,—մեր և ձեր նպատակները ընդհանուր են»: Բոլորովին մոտիկ անցյալում մենշևիկների, եսերների ու դաշնակների լիդերները աղաղակում եյին այն մասին, թե իրենք անգլիացիներին հրավիրում են, վորպեսզի Բաքուն պահպանեն Ռուսաստանի համար: Բայց անգլիացիների հանդիսավոր ընդունելությանը նրանք արդեն ծպտուն չհանեցին այդ մասին: Այժմ նրանք ուղղակի ասում եյին, թե անհրաժեշտ է շարունակել իմպերիալիստական սպանդը:

—Մենք պետք է կապվենք Անգլիայի ու Ֆրանսիայի հետ և նորից պատերազմ հայտարարենք կենտրոնական կայսրություններին,—հայտարարեց Մելիք Յոլչյանը:

Օգոստոսի 17-ին ժամանեցին անգլիական զորքերի մնացած մասերը՝ գեներալ Դենստերվիլի գլխավորությամբ: Եսեր-մենշևիկները հավատացնում եյին, վոր անգլիացիները Բաքու ափ կհանեն 25—30 հազ. զինվոր, շատ հրետանի, ռազմական հանդերձանք և այլն: Բայց յեկավ ընդամենը միայն 800—900 անգլիացի: Այդպիսի ուժերով քաղաքը պահելու հույս չունեյին անգլիացիները: Դրա փոխարեն նրանք լավ ոգտագործեցին իրենց Բաքվում լինելը, փաստորեն քաղաքի տերեր դառնալով:

Անգլիացիները իրենց ձեռքը դցեցին Կասպից ծովի նավատորմը: Միքանի նավ գրավելով, նրանք այդ նավերից ամենամեծի, «Կրյուգերի» մեջ տեղավորեցին իրենց շտաբը: Դեռ Բաքվի հողը վոտք չդրած, նրանք արդեն հոգ եյին տանում, ինչպես գրում է Դենստերվիլը, «Բաքուն դատարկվելու դեպքում փոխադրական միջոցների բավականաչափ քանակություն ունենալու մասին»:

Անգլիացիները Բաքվից նավթ եյին դուրս քաշում: Այն ժամանակվա պայմաններում, յերբ Բաթումի նավահանգիստը, նավթամուղը, յերկաթուղին գտնվում եյին գերման-թուրքերի ձեռքին, նավթի արտահանումը մեծ չափեր չեր կարող ընդունել:

[1] Դենստերվիլ, Բրիտանական իմպերիալիզմը Բաքվում և Պարսկաստանում, եջ 184:

Բայց այնուամենայնիվ նավթ արտահանվում եր: Այն ուղարկվում եր գլխավորապես Պարսկաստան՝ անգլիական բանակի կարիքների համար: Օգոստոսի 21-ին անգլիական շտաբը «Ցենտրոկասպից» պահանջում եր Մեծ-Բրիտանիայի կարիքների համար Ենզելի ուղարկել 15 հազ. փութ մեքենայի յուղ. 600 հազ. փութ մազութ, 300 հազ. փութ բենզին և այլն: Հենց այսպիսի պահանջներ եյին ներկայացնում անգլիացիները ոգոստոսի 29-ին, սեպտեմբերի 2-ին և 13-ին:

Անգլիացիներն անողոք պատերազմ սկսեցին Բաքվի բոլշևիկների դեմ: Յեթե մինչև նրանց գալը «Ցենտրոկասպին» հարկադրված եր հաշվի առնել բոլշևիկյան ճամբարը և նույնիսկ բանակցություններ վարել նրա հետ, ապա այժմ դրությունը փոխվեց: Դենստերվիլը գրում է, վոր «Ցենտրոկասպին» «շշմած լինելով իր անսպասելի հաջողությունից, քիչ մնաց ամբողջ գործը փչացներ, գործին չվերաբերող հակաճառություններ սկսելով Շահումյանի ու Պետրովի հետ, և միայն մեր՝ թատերաբեմում դուրս գալը նրան վճռականություն տվեց...»[1]: Հենվելով անգլիական իմպերիալիստների սվինների վրա, «դիկտատորները» հարձակման անցան: Խորհրդային զորքերին առաջարկեցին զինաթափվել: Լրագրերում զրպարտիչ կամպանիա սկսեցին բոլշևիկների դեմ: Բաքվի խորհրդի անդամներին մեղադրում եյին քրեական հանցագործությունների մեջ:

Բոլշևիկները վորոշեցին մերկացնել այդ հալածանքը մամուլում, բայց «Бакинский Рабочий» լրագիրը փակված եր: Բոլշևիկները տպարան չունեյին: Այն ժամանակ Բաքվի կոմիտեն ընկ. Միկոյանին հանձնարարեց գրավել Բաքվի տպարաններից մեկը և այնտեղ տպագրել լրագիրը: «Бакинский Рабочий»-ի հերթական համարի նյութը պատրաստ եր: Օգոստոսի 10-ի գիշերը բոլշևիկների ջոկատը, վորի մեջ մտնում եյին Սուրեն Շահումյանը և ուրիշ ընկերներ, Միկոյանի գլխավորությամբ ուղղվեց դեպի «Կոոպերացիա» ընկերության, նախկին Կուլինջիի տպարանը: Կտրելով հետնադռան կողպեքները, ջոկատը մտավ տպարան: Միքանի բոլշևիկ-դրաշարների ոգնությամբ աշխատանքի անցան: Լրագիրը լույս եր տեսնում բանվորների զինված պահպանության ներքո, տան դարպասների մոտ և մոտակա փողոցների խաչմերուկներում պոստեր սահմանվեցին: Վոչ-

[1] Դենստերվիլ, Բրիտանական իմպերիալիզմը Բաքվում և Պարկաստանում, եջ 183—184:

հեռվում լիակատար պատրաստականությամբ հերթապահում էր զրահակիրը։

Իշխանությունները, ըստ յերևույթին, իմացան տպարանը գրավելու մասին։ Յերբ 200 օրինակ լրագիր արդեն տպագրված էր, դադարեցվեց հոսանքի հաղորդումը, տպարանի մեքենաները կանգնեցին։ Բայց ընկերները չշփոթվեցին։ Նրանք սկսեցին ձեռքերով պտտեցնել մեքենայի անիվը, և լուսադեմին լրագիրը տպագրված էր։ Մոտեցավ բեռնատար ավտոմոբիլը, նրա վրա բարձեցին «Бакинский Рабочий»-ի տպագրված համարները, ինչպես նաև միքանի գրաշարական կասսաներ, մի փոքրիկ դազգյահ և տպագրական այլ պիտույքներ։

Այսպես լույս տեսավ «Бакинский Рабочий»-ն։ Դա բոլշևիկյան լրագրի վերջին համարն էր, որ տեսան Բաքվի բանվորները 1918 թ.։ Այդ համարում եյին Ստեփան Շահումյանի վերջին հոդվածները։

Զայրույթով և ատելությամբ լցված լինելով դեպի բուրժուազիայի սպասավորները, հոդվածները մերկացնում եյին նրանց ստոր քաղաքականությունը։ «Նոր իշխանության կերպարանքը»—այսպես էր վերնագրված Շահումյանի հոդվածը։ Շահումյանը մատնանշում էր, որ իրենց տիրապետության տաս օրվա ընթացքում դաշնակները, էսէրներն ու մենշևիկները լիովին մերկացրին իրենց՝ որպես խորհրդային իշխանության դավաճանների, որոնք այդ իշխանությունը մատնեցին անգլիական իմպերիալիստներին և Բիչերախովին։ Շահումյանը մերկացնում էր զրպարտության և խաբեության պրովոկացիոն այն պրիոմները, որոնց դիմում եյին նրանց լիդերները։ Ստեփան Շահումյանը նրանց անվանում էր քաղաքական շառլատաններ և անազնիվ զըրպարտիչներ։ «Այո, պարոններ,—գրում էր նա,—պատմական ծանր րոպեյին դուք կարող եյիք դավաճանության և խաբեության միջոցով մոլորեցնել բանվորական մասսաներին, բայց զըրպարտությամբ ու խաբեությամբ պահպանել գոյություններդ՝ դուք յերկար չեք կարող։ Յեվ որքան ավելի հանցավոր էր ձեր խաբեությունը ներկայումս, այնքան ավելի խիստ է լինելու բանվորների դատաստանը ձեր նկատմամբ ապագայում։ Անազնիվ զրպարտիչների կնիքը, համենայն դեպս, ձեզ չի հաջողվի սրբել ձեր ճակատից... Դաշնակցականների լրագիրը հատկապես ջանում է անձամբ իմ դեմ գրգռել մոլորվող մութ մասսաներին և ինձ ինքնադատաստանի յենթարկել տալ։ Այդ՝ դժվար գործ չէ։

Այդ, դուցե, ձեզ հաջողվի, բայց այդ ձեզ չի օգնի, պարոններ։ Գիտակից բանվորների դատաստանը, պատմության դատաստանը մեզ համար ավելի կարևոր է, և այն ավելի սոսկալի կլինի ձեզ համար, քան ամբոխի ինքնադատաստանը, որին կոչում եք դո՛ւք»[1]։

Օգոստոսի 10-ին Բաքվի բոլշևիկների կոնֆերենցիան քննարկում էր ստեղծված դրությունը։ Խորհրդային իշխանության անկմանը հաջորդող առաջին օրերը Շահումյանը և մյուս ընկերները յենթադրում եյին, հավաքելով ունեցած բոլոր ուժերը և կապ հաստատելով նավաստիների հետ, քաղաքը նորից իրենց ձեռքը վերցնելու փորձ անել։ Բայց անգլիացիների գալու կապակցությամբ ուժերի հարաբերակցությունը փոխվեց։ Օգոստոսի 10-ի կոնֆերենցիայում յերկու բանաձև հանվեց։ Առաջինը յելնում էր այն բանից, որ անգլիական և գերման-թուրքական իմպերիալիզմի դեմ միաժամանակ պայքար մղելու ուժեր չկան, միայն Խորհրդային Ռուսաստանից յեկող նոր զորքերը կարող են փրկել դրությունը։ Ուստի բանաձևը պահանջում էր խորհրդային ուժերը հետ տանել Աստրախան, որպեսզի, օգնական ուժեր ստանալով, վերադառնան Բաքու։ Յերկրորդ բանաձևը սխալ էր համարում իշխանությունից առանց որևէ դիմադրության հեռանալը, առաջարկում էր մնալ, օգտագործել բանվորական մասսաներում սկսվող բեկումը և, Պետրովսկից օգնական ուժեր ստանալով, կռիվ սկսել իշխանության համար։ 22 ձայնի մեծամասնությամբ ընդդեմ 8-ի ընդունվեց առաջին բանաձևը։

Կոնֆերենցիայից հետո բոլշևիկներն սկսեցին պատրաստվել եվակուացիայի։ Ռազմական նավերն իրենց կողմը գրավելու միջոցների դիմելով, նրանք միաժամանակ «Ցենտրոկասպիի» հետ բանակցություններ սկսեցին Բաքվից անարգել հեռանալու մասին։ «Ցենտրոկասպին» պահանջում էր, որպեսզի բոլոր զենքերը, զրահակիրները, հանդերձանքը թողնվի Բաքվում։ Բայց Շահումյանը և ընկերների մեծամասնությունը թույլ չտվին Խորհրդային հանրապետության ռազմական գույքն անգլիացիներին ու նրանց դաշնակիցներին հանձնել։ Այնուամենայնիվ մեկնելու համար համաձայնությունը ստացված էր։ Ինչպես հետո պարզվեց, «Ցենտրոկասպիի» կողմից դա կանխամտածված պրովոկացիոն քայլ էր։ Հնարավորություն չունենալով խորհրդային

[1] Ստեփան Շահումյան, Հոդվածներ և ճառեր, էջ 143—144։

ճամբարը Բաքվում ջախջախելու, նրանք բոլշևիկներին թույլ տվին էվակուացիայի յենթարկվել, վորպեսզի նրանց դատաստանը ծովում տեսնեյին։

Էվակուացիայի յենթարկելով իրենց զինված ուժերը, Բաքվի բոլշևիկները Բաքվում աշխատելու թողին մի խումբ կուսակցական աշխատողներ՝ Անաստաս Միկոյանի գլխավորությամբ։ Բաքվի բանվորներին ուղղված մի կոչ լույս ընծայվեց, վորը պարզաբանում եր բոլշևիկների վերաբերմունքը տեղի ունեցող դեպքերին և բացատրում եր էվակուացիայի պատճառը։

Կոչը մատնանշում եր, վոր այն ժամանակվանից, յերբ Բիչերախովի ու դաշնակների դավաճանությամբ ծանր պայմանների մեջ դրված և անգլիական իմպերիալիզմի վարձկաններից մոլորության մեջ գցված՝ Բաքվի պրոլետարիատը Բաքու կանչեց անգլիական զորքերին, «Բաքվի պրոլետարական, սոցիալիստական պաշտպանությունը վերածվեց պատերազմի՝ յերկու իմպերիալիստական կոալիցիաների միջև։ Բաքվում այլևս հեղափոխական ֆրոնտ չկա, այլ կա իմպերիալիստական ֆրոնտ։ Կռվում են յերկու ուժեր, վորոնք հավասարաչափ թշնամի յեն Ռուսաստանի Բանվորա-Գյուղացիական Խորհրդային իշխանությանը... Ռուսաստանի խորհրդային իշխանության քաղաքական ու ռազմական ներկայացուցիչները չեն կարող մնալ Բաքվում և գործակցել անգլիական իմպերիալիստներին, մասնակից լինել աջ եսերների, մենշևիկների ու դաշնակների ազդեցությամբ կատարված դավաճանության... Քանի դեռ մենք բավականաչափ զորք չունենք հակահարված տալու վրա յեկող թուրքերին, իսկ հիմա նաև գերմանացիներին՝ մի կողմից, և անգլիական գիշատիչներին՝ մյուս կողմից, նրանք չեն կարող մնալ Բաքվում։

Սրտի կսկիծով, նզովքը շուրթերին հարկադրված են Բաքուն թողնել նրանք, ովքեր յեկել եյին այստեղ՝ Բաքվի բանվորների հետ միասին կռվելու և մեռնելու հանուն Խորհրդային իշխանության։ Բայց, թողնելով այս քաղաքը, վորի կորուստը ճակատագրական նշանակություն կարող ե ունենալ ամբողջ Խորհրդային Ռուսաստանի համար, նրանք չեն կորցնում այն հույսը, վոր Բաքվի բանվորներն ու Կասպից նավատորմի նավաստիները կհասկանան, թե նրանց ինչպիսի դավաճանության են դրդել աջ եսերները։ Նրանք հուսով են, վոր բանվորա-գյուղացիական Ռուսաստանը նորից կգա Բաքու։ Բաքվի պրոլետարիատը նորից կկապվի բանվորա-գյուղացիական Ռուսաստանի հետ և նորից

կկանգնի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության դրոշի տակ»[1]։

Օգոստոսի 14-ին Կորգանովի ղեկավարությամբ ճանապարհ ընկան։ Տրվեց հրամանը, և 16 շոգենավ, մեկը մյուսի հետևից, հեռացան նավահանգիստներից և դանդաղ մտան ծովը։ Ծովում փոթորիկ սկսվեց։ Նավերի մեծ մասը նավթալից եյին, թեք տախտակամածով և ցածր յեզրերով։ Նրանց վրա կային հրետանի, գումակներ, ձիեր... Փոթորիկն ամեն րոպե սպառնում եր ծովը քշել այդպիսի անսովոր բեռը։ Ժիլոյ կղզու մոտ հարկ յեղավ կանգ առնել, վորպեսզի վատ յեղանակն անցներ։ Օգոստոսի 15-ի ամբողջ որը փոթորիկը շարունակում եր մոլեգնել, և միայն 16-ին, յերբ փոթորիկն սկսեց հանդարտվել, շոգենավերը կարողացան ճանապարհ ընկնել։

Բայց հորիզոնում յերևացին Կասպիական ռազմական նավատորմի «Արդահան», «Գյոկ-Թեփե» և «Աստրաբադ» նավերը։ Մոտենալով մինչև թնդանոթային մեկ ձիգի հեռավորություն, նրանք ուղարկեցին մի բարկաս՝ «Ցենտրոկասպիի» ներկայացուցիչներով։ Բարկասից հաղորդեցին, թե «Ցենտրոկասպին» բոլորին առաջարկում ե վերադառնալ Բաքու և զինաթափվել, իսկ Շահումյանին, Ջափարիձեյին, Կորգանովին և Ֆիոլետովին՝ անհապաղ անցնել «Գեոկ-Թեփե» նավը։ «Ցենտրոկասպիի» առաջարկությունը մերժվեց։ Մեկուկես ժամից հետո բարկասը մի անգամ ևս մոտեցավ շոգենավերին, և այնտեղից հայտարարեցին, վոր չենթարկվելու դեպքում կրակ կբացվի։ Այն ժամանակ Շահումյանը, Ջափարիձեն, Պետրովը, Ֆիոլետովը և ուրիշները «Լեյլյա» բարկասով շրջեցին շոգենավերը և հաղորդեցին ներկայացված ուլտիմատումի մասին։ Նրանք կոչ եյին անում տոկուն կերպով դիմանալ և չընդունել «դիկտատորների» ուլտիմատումը։ Բոլորը միահամուռ կերպով հավանություն տվին այդ վորոշմանը։

Մերժում ստանալով, «Ցենտրոկասպին» սկսեց գործել։ Ռազմական նավերից անշտապ կրակոցներ լսվեցին։ Ապա կրակը հաճախացավ։ Կրակոցներն ուղղվում եյին առաջին հերթին «Իվան Կոլեսնիկով» շոգենավին, վորովհետև յենթադրվում եր, թե հատկապես այնտեղ են գտնվում պատասխանատու ընկերները։ Յերկու ռումբ դիպավ շոգենավին։ Յերկու մարդ սպանվեց, ութը կարմիր-բանակային վիրավորվեցին։ Շոգենավում խուճապ

1 Ստեփան Շահումյան, Հոդվածներ և ճառեր, եջ 243—244։

սկսվեց: Այն ավելի ուժեղացավ, յերբ ռումբերն ընկան մեքենաների բաժանմունքը: Շատերն սկսեցին ծովն ընկնել՝ հույս ունենալով լողալով ափ հասնել: Բոլորը չե, վոր լողալ գիտեյին և ոգնություն չստանալով խեղդվում եյին: Կանանց և յերեխաներին նստեցրին նավակները և ուղարկեցին Ժիլոյ կղզու կողմը, բայց թշնամու կրակոցներն այստեղ ել եյին նրանց վրա հասնում: Սկսված խուճապի ժամանակ մի քանի մարդ փորձում եյին սպիտակ դրոշակ պարզել և անձնատուր լինել: «Իվան Կոլեսնիկով» շոգենավում Կորգանովը, Սուրեն և Լևոն Շահումյանները և ուրիշները վճռականորեն խեղդում եյին այդպիսի փորձերը և կայմի վրայից հանեցին արդեն վեր հանած սպիտակ սավանը: Բայց դրությունը քանի գնում ավելի անհուսալի յեր դառնում: Ռումբերի դիպչելը դժվարացնելու համար Կորգանովը հրաման տվեց խարիսխները քաշել և շարժվել զանազան կողմեր: Բայց շոգենավերի կոմանդաները չփոթվեցին, շատերը հեռացան իրենց տեղերից: Շոգենավերը տարուբերվում եյին ալիքների կամքով: Այդ ե՛լ ավելի յեր վատացնում դրությունը:

Պետրովի ջոկատն ուներ դաշտային հրետանի, բայց նավթալից նավերի տախտակամածներից, այն ել այդ տարածության վրա, հնարավոր չեր կրակել: Այդ նպատակի համար ավելի պակաս պետքական կարող եյին լինել մնացած միջոցները: «Ցենտրոկասպին» անպատիժ կերպով գնդակահարում եր հարյուրավոր մարդկանց, վորոնք չեյին կարող դիմադրել: Այդպիսի պայմաններում վոչինչ չեր մնում, քան յենթարկվել: Շոգենավերը վերադարձան քաղաք, կարողանալով ունեցած ռումբերի և փամփուշտների, հրանոթների փականների մի մասը ծովը գցել:

Այդ նույն ժամանակ դեպի Աստրախան ճեղքելով անցնելու մի փորձ ևս արվեց: Շահումյանը, Ջափարիձեն, Ֆիոլետովը և ուրիշները «Լեյլյա» բարկասով ծովը մտան: «Ցենտրոկասպի» նավերից գցած լուսարձակների կուրացուցիչ ճառագայթները խուզարկում եյին ծովը, վորպեսզի վոչ վոքի բաց չթողնեն: Բայց բարկասին հաջողվեց աննկատելիորեն անցնել: Սակայն շուտով բարկասի անձնակազմն ապստամբեց: Նավաստիները հայտարարեցին, վոր Բաքվում են մնացել իրենց ընտանիքները և իրենք Աստրախան չեն գնա: Հորդորանքները չոգնեցին: Կոմիսարները հարկադրված յեղան վերադառնալ Բաքու և մյուսների հետ մեկտեղ ափ իջնել:

Ափ իջնելը կատարվեց ոգոստոսի 17-ին: 16 շոգենավերը հերթով մոտեցվում եյին Պետրովսկայա նավահանգստին: Նրանց

դիմավորում եյին դաշնակների, եսեռների ու մենշևիկների զինված ջոկատները: Ջոկատները ղեկավարում եր եսեռ Վասինը, վորը ման եր գալիս նավահանգստում նագայկան ձեռին: Ջոկատները գիշատիչների նման հարձակվում եյին ժամանածների վրա, ամեն կերպ ծաղրում եյին նրանց, խլում եյին զենքը, պարենը, իրեղենները: Թալանված և զինաթափ արված կարմիրբանակայիններին նորից նստեցրին շոգենավերը և մի քանի որից հետո թողին Աստրախան: Այլ կերպ վարվեցին պատասխանատու ընկերների հետ: 35 հոգի, այդ թվում Շահումյանը, Ջափարիձեն, Ազիզբեկովը, Ֆիոլետովը, Սուրեն Շահումյանը և ուրիշները, ձերբակալվեցին: Նրանց դրին Շեմախինկայի բանտը, հետո փոխադրեցին Բաիլով:

Բաքվի կոմիսարները համարյա մի ամիս նստած եյին բանտում: «Ռեժիմը ծանր եր,—պատմում եր Սուրեն Շահումյանը: Մենք սովում եյինք, և յեթե չլինեյին դրսի ազատ ընկերները, մենք սովից կմեռնեյինք»: Բաքվի կոմիսարների գործի քննությունը հանձնարարվեց ցարական քննիչ Ժուկովին: Արտակարգ հանձնաժողով եյին գալիս պրովոկատորներ և խաբեբաներ՝ Բաքվի կոմիսարներին քրեական գործերում մեղադրելու համար իրենց ծառայությունները առաջարկելու: Նրանց բոլորին ուղարկում եյին Ժուկովի մոտ:

Մի անգամ Ժուկովը յեկավ բանտ և Շահումյանին կանչեց գրասենյակ: Քննիչը փորձեց Շահումյանին հարցաքննել դեպի թուրքերն ունեցած վերաբերմունքի մասին, ֆինանսների մասին և այլն: Շահումյանը կատեգորիկ կերպով հրաժարվեց այդ հարցերին պատասխանելուց և հայտարարեց, վոր այդպիսի ժանդարմի և ցարական ռեժիմի ժամանակ բացատրվելու կարիք չկար: Վերադառնալով կամերա, Շահումյանը ընկերներին վորդովված պատմեց Ժուկովի հետ ունեցած խոսակցությունը:

—Յես վռնդեցի այդ սրիկային,—ասաց նա:

Այս եր կոմիսարների միակ «հարցաքննությունը»: Ժուկովն ինքը խոստովանվեց, վոր նրանց դեմ վոչ մի մեղադրանք չեր ստացվում: Բայց չնայած դրան, Բաքվի կոմիսարները շարունակում եյին բանտում նստել: Այդ ծանր որերին Բաքվի բոլշևիկներն առաջվա պես հաստատապես հավատում եյին իրենց գործի վերջնական հաղթանակին: Բաիլովի բանտում ընկ. Միկոյանի հետ ունեցած տեսակցության ժամանակ ընկ. Շահումյանը ասում եր, թե եսեռ-մենշևիկների տիրապետությունը ժամանակավոր ե, թե «լկտի կեղծիքով և զրպարտանքով մասսային իր հետևից

տանել կարելի յե մեկ-յերկու օր, բայց վոչ ավելի. չուտով կբացվի ճշմարտությունը և այդպիսի սուտ յեղանակով տարած հաղթանակը կփոխվի խաբեբաների և ստախոսների ցնցող կրախի և սոսկալի տապալման»:

Կենտրոնական խորհրդային կառավարությունը, Լենինն ու Ստալինը լարված հետևում էին Բաքվի դեպքերին: Նրանք ամեն միջոցի դիմում էին Բաքվում խորհրդային իշխանությունը վերականգնելու համար:

Օգոստոսի 9-ին Լենինը գրում էր Աստրախան. «Բաքվի դրությունը ինձ համար այնուամենայնիվ պարզ չէ: Ո՞վ է իշխանության գլուխ կանգնած: Վո՞րտեղ է Շահումյանը: Հարցրեք Ստալինին և գործեցեք բոլոր հանգամանքների նկատառումով: Դուք գիտեք, վոր յես լիովին վստահում եմ Շահումյանին: Այստեղից չի կարելի դրությունը հասկանալ և չուտով օգնելու հնարավորություն չկա: Լենին»[1]:

Օգոստոսի 31-ին Ստալինը հաղորդում էր Լենինին՝ Բաքվի և Կասպիի համար մղվող կռվի ընթացքի մասին: Նա խնդրում էր Կասպից նավատորմից ուղարկել թեթև տիպի միքանի ականանավ և յերկու սուզանավ՝ դրանք Բաքվում և Թուրքեստանում խորհրդային իշխանություն հաստատելու համար մղվող կռվում օգտագործելու համար: Սակայն 1918 թ. օգոստոս—սեպտեմբերի ծանր պայմաններում՝ չհաջողվեց Բաքու ուղարկելու համար անհրաժեշտ ուժերը կազմակերպել:

Խորհրդային կառավարությունը նմանապես բանակցություններ էր վարում անգլիական իշխանությունների հետ՝ Բաքվի ձերբակալված կոմիսարներին ազատելու մասին: Համառուսաստանյան Կենտգործկոմը Արտգործժողկոմատին հանձնարարեց «անհապաղ ռադիոյով բանակցություններ սկսել ընկ. ընկ. Շահումյանին, Ջափարիձեյին և Բաքվի մյուս ընկերներին մեզ մոտ ձերբակալված անգլիացիներով և ֆրանսիացիներով փոխանակելու պայմանների մասին»[2]: Ընկեր Ստալինը գրում էր. «Թուրքեստանի խորհրդային կառավարությունը դրանից հետո միքանի անգամ դիմեց անգլիական հրամանատարությանը, պահանջելով գերի անգլիացիների փոխարեն ազատել Բաքվի ընկերներին և նրանց ընտանիքներին, բայց անգլիական հրամանատարությունը ամեն

[1] ЦАОР, ֆ. 130, ցուց. 12, գործ 115, էջ 102:
[2] ЦАОР, ֆ. 12, 35, ցուց. 52, գործ 397, թ. 34:

անգամ լուռ էր մնում»[1]: Նույնպիսի պահանջներ էին ներկայացվում նաև «Ցենտրոկասպիին»:

Ազատ մնացած ընկերները՝ Միկոյանի գլխավորությամբ յեռանդով պայքարում էին «Ցենտրոկասպիի» հակահեղափոխական քաղաքականության դեմ: Նրանք մերկացնում էին «դիկտատորների» դավաճանական դերը: Միկոյանը մատնանշում էր, վոր «դիկտատուրան» ինքը թույլատրեց Բաքվի ժողկոմխորհին և Պետրովի ջոկատին մեկնել, վորպեսզի ավելի հարմար դատաստան տեսներ նրանց նկատմամբ: «Այդ վորոշ քաղաքականություն է,—ասում էր Միկոյանը,—այդ պրովոկացիոն, հակահեղափոխական գործ է»: Դաշնակները, էսէռներն ու մենշևիկները ուզում էին փակել Միկոյանի և ուրիշ ընկերների բերանը, վորոնք համարձակ կերպով մերկացնում էին Բաքվի բոլշևիկների դեմ ուղղված պրովոկացիոն կամպանիայի իսկական էությունը: Յերբ Միկոյանը օգոստոսի 18-ին համքագործարանային հանձնաժողովների կոնֆերենցիայում մերկացրեց անգլիական իմպերիալիստների գործունեությունը, նրանց սպասավոր էսէռները աղմուկ բարձրացրին և նրան հնարավորություն չտվին ճառը վերջացնելու:

Սակայն այսպիսի պայմաններում էլ բոլշևիկյան խոսքը հասնում էր Բաքվի բանվորներին: Բաքվի պրոլետարիատը սկսում էր հասկանալ, թե ինչ դավաճանություն կատարեցին էսէռներն ու մենշևիկները, Բաքուն անգլիացիներին տալով: Բոլշևիկների ազդեցությունն աճում էր: Բաքվի բանվորներն ավելի հաճախ էին նայում բաիլովյան բանտի կողմը, վորտեղ նստած էին ձերբակալված կոմիսարները:

Օգոստոսի 28-ին տեղի ունեցան Բաքվի խորհրդի ընտրությունները: Դրանք անցան բոլշևիկների դեմ ուղղված չտեսնված տեռորի ու զրպարտանքի պայմաններում, բայց չնայած դրան, նոր խորհրդի անդամ ընտրվեցին 27 բոլշևիկ: Ընտրվածների թվում էին Միկոյանը, Գեորգի Ստուրուան և Բաքվի ձերբակալված կոմիսարներ՝ Շահումյանը, Ազիզբեկովը, Ջափարիձեն, Ֆիոլետովը, Զևինը, Բասինը, Կորգանովը, Մալիգինը, Բոգդանովը: Նրանց, վոր բանտ էին գցված, ցեխակոլոլ արված ու զրպարտված, Բաքվի պրոլետարներն այդ օրերին արտահայտեցին իրենց վստահությունը:

[1] Ստալին, Անգլիական իմպերիալիզմի գործակալների ձեռքով Բաքվի 26 ընկերների գնդակահարվելու շուրջը: «Известия ВЦИК», 1919 թ. ապրիլի 23-ին:

Սեպտեմբերի 5-ին հավաքվեց Բաքվի նոր ընտրված խորհուրդը: Նրա առաջին նիստն անցավ շատ աղմկալի: Ընկ. Միկոյանի գլխավորած՝ Բաքվի բոլշևիկները Խորհրդի նիստում վճռական մարտ տվին էսեռ-մենշևիկներին: Նրանք պնդում եյին, վոր անհրաժեշտ է անհապաղ ազատել ձերբակալված կոմիսարներին: Նրանց վստահություն հայտնելով, Բաքվի պրոլետարիատը պահանջեց ազատել նրանց: Ի պատասխան դրան «Ցենտրոկասպիի» ներկայացուցիչները հանդես յեկան Բաքվի կոմիսարների դեմ ուղղված նոր մեղադրանքով: Նրանք Բաքվի խորհրդին խոստացան համապատասխան փաստաթղթեր ներկայացնել: Բաքվի խորհուրդն առաջարկեց արագացնել քննությունը և Խորհրդին Բաքվի կոմիսարների գործի մասին զեկուցում ներկայացնել ի քննություն: Սակայն «դիկտատորները» վոչ մի զեկուցում և փաստաթուղթ ներկայացնել չկարողացան: Անգլիացիները և «դիկտատորները» վորոշել եյին այլ կերպ տեսնել Բաքվի բոլշևիկների դատաստանը:

Սեպտեմբերի 7-ին արտակարգ քննիչ հանձնաժողովը վորոշում կայացրեց՝ Շահումյանին, Ջափարիձեյին և ուրիշներին «պետական դավաճանության համար» պատասխանատվության յենթարկելու մասին: Չորս որ հետո «Бюллетени Центрокаспия»-ն հաղորդեցին, թե Բաքվի կոմիսարների գործը հանձնվում է ռազմադաշտային դատարանին: Հենց նույն որը հրապարակվեց ռազմադաշտային դատարանի հաստատված կանոնադրությունը: Նախնական քննությունը և վկաներին կանչելը վերացվում եյին: Դատական նիստը պետք է կայանար գաղտնի: Դատավճիռը ուժի մեջ եր մտնում դատարանում այն հայտարարելուն պես: Հանցավորները «յենթարկվում եյին մահապատժի՝ գնդակահարության միջոցով»:

Դրան համապատասխան սարքվեց մեղադրական ակտ՝ ընդդեմ Բաքվի կոմիսարների: Անգլիական իմպերիալիստները և «Ցենտրոկասպիի դիկտատուրայի» նրանց ագենտները փաստորեն արդեն կայացրել եյին Բաքվի կոմիսարների մահվան դատավճիռը: Բայց այն ի կատար ածել նրանք չհասցրին: «Ցենտրոկասպիի» որերը հաշված եյին:

Սեպտեմբերին «Бюллетени Центрокаспия»-յի եջերում առաջվա պես «թնդում եր հաղթանակի վորոտը»: Սեպտեմբերի 3-ին Բիչերախովը գրավեց Պետրովսկը: Դաշնակները, էսերներն ու մենշևիկներն ուրախանում եյին անգլիական իմպերիալիստների ու Բիչերախովի հաջողություններով: «Бюллетени Центрокаспия»-ն սեպտեմբերի 11-ին գրում եյին. «Թեև դանդաղ, բայց անդադար կերպով ուժեղանում են այստեղ նաև մեր դաշնակից անգլիացիները, վորոնց շահերը վոչ մի բանում չեն տարբերվում մեր շահերից ու վորոնք գերազանցապես հաշվի յեն առել այժմյան կոնյունկտուրան և իրենց ուժերը միացրել են մեր ուժերին: Բիչերախովի կողմից Պետրովսկը գրավելը նշանակում է մեծ քայլ դեպի առաջ՝ մեր նշած նպատակներին հասնելու իմաստով և գլխավորեն նրան ու մեզ մոտեցնում է Հյուսիսային Կովկասի մեր համախոհներին, վորոնցից մենք այժմ կարող ենք ռեալ ոգնություն ստանալ՝ պարենի ու մարտական ուժի ձևով, մեր հերթին ոգնելով նրանց նրանով, ինչ մենք ունենք առատորեն»:

Մինչդեռ «Бюллетени»-ում զետեղվում եյին նման առաջնորդողներ, Բաքուն արդեն թուրքերի կողմից գրավվելու նախորյակին եր: Դեռ սեպտեմբերի 1-ին Դենստերվիլը վորոշեց, «վոր Բաքվի հետագա պաշտպանությունն անօգուտ է և վոր անգլիական զորքերը պետք է եվակուացիայի յենթարկվեն»[1]: Մյուս որը ամեն ինչ պատրաստ եր եվակուացիայի համար: «Դիկտատորները» կշտամբում եյին անգլիացիներին, վոր նրանք «ոգնություն ցույց չտվին այն չափով, ինչ չափով մենք իրավունք ունեյինք սպասելու այդ», և աղերսում խնդրում եյին նրանց՝ «անհապաղ Բաքու բերել բավականաչափ թվով զորքեր կամ Պարսկաստանից, կամ Բաղդադից»: Բայց զորքեր չեյին գալիս:

Ընկ. Որջոնիկիձեն այն ժամանակ աշխատում եր վորպես Հյուսիսային Կովկասի արտակարգ կոմիսար: Զգալով ամեն տեսակի ոգնություն ցույց տալ Բաքվի պրոլետարներին, նա սիստեմատիկորեն հետևում եր ծավալվող դեպքերին: Սեպտեմբերի 10-ին Վլադիկավկազից նա հեռագրեց Լենինին ու Ստալինին. «Բաքվում դրությունը հուսահատական է: Քաղաքը թուրքերը թնդանոթներով գնդակոծում են: Թուրքերը պահանջում են անպայման հանձնել քաղաքը: Հաշտվողականների և դավաճան մենշևիկների ու դաշնակների միությունը պատրաստում է քաղաքի հանձնումը: Անգլիական խոստումները բավականաչափ դուրս յեկան լոկ Բաքվի պրոլետարիատին դավաճանելու համար»[2]:

Սեպտեմբերի լույս 14-ի գիշերը թուրքերը հարձակման անցան, իսկ «քաջարի» անգլիացիները փախան Բաքվից: Հենց

1 Դենստերվիլ, Բրիտանական իմպերիալիզմը Բաքվում և Պարսկաստանում, եջ 246:

2 ЦАОР, ֆռ. 130, ոպ. 12, գործ 6, թ. 31:

Նույն ժամանակ «Ցենտրոկասպին» շտապ կերպով պատրաստվում եր Պետրովսկ փախչելու։

Այնինչ Բաքվի կոմիսարները շարունակում եյին նստել բանտում։ «Ցենտրոկասպի» պլանը բացվում եր չարագուշակ պարզությամբ։ Կոմիսարներին թողնում եյին, վոր թուրքերը հոշոտեն։ Բոլշևիկներն ընկ. Միկոյանի ղեկավարությամբ զուր փորձում եյին ազատել Բաքվի կոմիսարներին։ Ընկ. Միկոյանը յերկու անգամ դիմեց «Ցենտրոկասպի դիկտատուրային»՝ պահանջելով ազատել կամ եվակուացիայի յենթարկել ձերբակալվածներին։ Բայց զզվելի դահիճներ Սադովսկին և Բաղատուրովը նրան պատասխանեցին, վոր «Ցենտրոկասպին» վորոշում ե կայացրել Բաքվի բանտում թողնել կոմիսարներին, չնայած եվակուացիային։ Այս վորոշումը հավասարազոր եր սպանության։

Սեպտեմբերի 14-ին, յերբ «Ցենտրոկասպին» արդեն բեռնվում եր շոգենավերի վրա, յերիտասարդ բոլշևիկների մի խումբ, վորոնց թվում եր Սուրեն Շահումյանը, վորը դրանից մի քիչ առաջ բանտից յերաշխավորությամբ հանվել եր, առանց կուսակցության Բաքվի Կոմիտեյի առաջադրանքը՝ ազատել կոմիսարներին։ Ատրճանակներով և ձեռքի նռնակներով զինվելով, նրանք մեկնեցին Բայիլով, բանտի վրա զինված հարձակում գործելու համար։ Բայց նավաստիների պահակը շրջապատեց և բռնեց բոլոր ընկերներին։ Բանտի վրա հարձակվելու պլանը խափանվեց։

Հենց այդ օրը ընկ. Միկոյանը յեկավ «Ցենտրոկասպի» դատարկված շենքը։ Նա սպասեց, մինչև յեկավ եսեր Վելունցը, և նորից սուր կերպով դրեց ձերբակալվածների բախտի հարցը։ Ընկ. Միկոյանի յեռանդուն ճնշման տակ Վելունցը և քննիչ հանձնաժողովի նախագահի տեղակալ Դալինը համաձայնվեցին, ձերբակալվածներին ազատ չարձակելով, ուղեկցող պահակախմբով նրանց եվակուացիայի յենթարկել Բաքվից։ Դալինը Միկոյանին տվեց բանտի պետին գրած մի գրություն և մի խումբ զինվորներ ուղարկեց՝ կոմիսարներին ուղեկցելու համար։ Ընկ. Միկոյանը համաձայնության յեկավ «Սևան» շոգենավի հրամանատարության հետ՝ կոմիսարներին Աստրախան ուղարկելու մասին։ Այդ շոգենավը հատկապես այնտեղից եր յեկել, վոր իմանա Բաքվի կոմիսարների դրությունը և նրանց փրկելու միջոցների դիմի։

Ուշ գիշերին ընկ. Միկոյանը Բաքվի կոմիսարներին դուրս քաշեց Բայիլովի բանտի դաժան պատերից, վորը մի քանի ժամից հետո կարող եր նրանց գերեզմանը դառնալ։ Միկոյանի ուղեկցությամբ՝ ուղեկցող պահակախմբով կոմիսարները շարժվեցին

գեպի նավահանգիստը։ Չարագուշակ խավարը ծածկել եր քաղաքը... Թուրքերը շարունակում եյին ուժեղ գնդակոծումը։ Կոմիսարներն ընկան գնդակոծման հենց կենտրոնը։ Ուղեկցող պահակախումբը փախավ։ Ազատ մնալով, կոմիսարները շարունակում եյին գնալ դեպի ափը։ Բայց Բայիլովի մոտ պայմանավորված տեղում «Սևան» շոգենավը չկար... Շոգենավը չգտնելով, Թուրքերի անդադար կրակի տակ նրանք գնացին քաղաք։

Այդ ժամանակ Բաքուն բռնվել եր ընդհանուր փախուստի քաոսով։ «Թուրքերը քաղաքումն են»—այս լուրը կայծակի արագությամբ տարածվեց ամենուրեք։ Րոպե առ րոպե ուժեղանում եր խուճապը։ Մեկ միապաղաղ դղրդոցի մեջ եյին խառնվում կանանց հառաչանքներն ու ճիչերը, յերեխաների լացը, թնդանոթների թնդյունը, գնդացիրների ճարճատյունը, հրացանաձգությունը... Խմբերով և մենակ՝ քաղաքից փախչում եյին խելակորույս մարդիկ, տանելով իրենց հետ ինչ վոր կարող եյին։ Վազում եյին դեպի նավահանգիստները, վորպեսզի հասնեյին հեռացող շոգենավերին։ Միմյանց հրելով և վոտնատակ տալով, նետվում եյին դեպի նավամատույցները։

Մյուսների թվում նավահանգստի մոտ եր գտնվում «Թուրքմեն» շոգենավը։ Շոգենավում՝ գցված կամրջակի մոտ կանգնած եր վոտքից-գլուխ զինված մի մարդ, վորն ապարդյուն կերպով փորձում եր նստելու ժամանակ վորևե կարգուկանոն սահմանել։ Դա պարտիզանական ջոկատի հրամանատար Թադևոս Ամիրովն եր, «Бакинский Рабочий» լրագրի խմբագրի յեղբայրը։ Իր ջոկատի հետ մեկտեղ նա նահանջում եր գրավված քաղաքից։ Յերբ կոմիսարները յեկան քաղաք, Թադևոս Ամիրովը նրանց առաջարկեց նստել «Թուրքմեն» շոգենավը, վորպեսզի միասին մեկնեյին Աստրախան։ Ուրիշ շոգենավ չկար։ Բաքվի կոմիսարները համաձայնվեցին և Միկոյանի, Ս. Կանդելակու, Շահումյանի վորդիների, Ջափարիձեյի կնոջ, Ցիոլեոովի կնոջ և ուրիշների հետ մեկտեղ նստեցին շոգենավ։ «Թուրքմենը» մտավ ծով։

XI

Սեպտեմբերի 15-ին Բաքու մտան թուրքական զորքերը։ Նրանց վողջունեցին մուսավաթիստներն ու վրացական մենշևիկները։ Վրաստանի ռազմական մինիստրը Նուրի-փաշային շնորհավորեց Բաքվում թուրքերի «դեմոկրատական» իշխանության հաստատելու առթիվ։ Յերեք որ թուրք-մուսավաթական բանդաները սպանում և կողոպտում եյին քաղաքի խաղաղ բնակ-

չությանը, չտեսնված տեռորի ռեժիմ սահմանելով: Բաքվի կոմիսարները դուրս պրծան Բաքվից և հեռացան գերման-թուրքերի գազանային դատաստանից, բայց նրանք ընկան հենց նույնպիսի դահիճների—անգլիացիների և նրանց դաշնակիցների ձեռքը:

«Թուրքմեն» շոգենավում, վորտեղ գտնվում եյին կոմիսարները, կար խայտաբղետ հասարակություն—Ամիրովի ջոկատի մարտիկներ, դաշնակ սպաներ, խաղաղ բնակիչներ, կանայք, յերեխաներ... Նույնիսկ գտնվեցին անգլիական յերկու սպա: Ծով դուրս գալով, շոգենավը բռնեց խորհրդային Աստրախանի ուղին: Բայց անգլո-դաշնակցական ագենտների գրգռած՝ անձնակազմի և ճանապարհորդների մի մասը բողոքեց: Ամիրովը և ուրիշ ընկերներ իզուր եյին փորձում շոգենավի անձնակազմին համոզել, վոր շարունակեն դեպի Աստրախան տանող ճանապարհը: Նա հայտարարեց, վոր այդքան հեռու գնալ չի կարող վառելիքի և խմելու ջրի պակասության պատճառով և նավը կհասցնի մինչև մոտակա նավահանգիստը: Այդպիսի նավահանգիստներ կարող եյին լինել Պետրովսկը, Ենզելին, Կրասնովոդսկը: Պետրովսկը նորերս գրավել եր Բիչերախովը: Ենզելիում տիրակալում եյին անգլիացիները: Կրասնովոդսկում գոյություն ուներ եսերական անդրկասպյան կառավարություն, վորը ծառայում եր հենց նույն անգլիացիներին: «Թուրքմենն» ուղևորվեց Կրասնովոդսկ:

Սեպտեմբերի լույս 17-ի գիշերը շոգենավը Կրասնովոդսկի մոտ խարիսխ գցեց: Անհապաղ մոտեցավ նավահանգստի պետի «Բուդաս» բարկասը: Պատրվակ բերելով, թե անհրաժեշտ ե, վոր բոլոր զինվորներն ու փախստականները կարանտին անցնեն, առաջարկվեց բեռնաթափումը կատարել առավոտյան: Յերկու անգլիական սպաները անհապաղ ափ իջնելու թույլտվություն խնդրեցին: Նրանց միացավ մի դաշնակ սպա՝ միքանի Գևորգյան խաչերը կրծքին: Նա հայտարարեց, թե տեղական իշխանություններին կարևոր տեղեկություններ պետք ե հաղորդի: Կրասնովոդսկի ներկայացուցիչները չառարկեցին: Նրանց վերցնելով, բարկասը հեռացավ:

Սեպտեմբերի 17-ի առավոտյան «Թուրքմենը» մոտեցավ նավահանգստին: Նրան ընդունեցին ահեղորեն: Ափին գտնվում եյին անգլիական հրետանի, թուրքմենական մի վաշտ, միլիցիայի ջոկատ և ուրիշ զորամասեր: Նավահանգստում կանգնած եյին Կրասնովոդսկի ղեկավարները—Ալանյան, Կոնդակովը և ուրիշները: Նրանց մեջ եր գտնվում այն սպան, վորը նախորյակին իջել եր շոգենավից: Կողքին կանգնած եր անգլիական սպաների մի խումբ,

վորոնց հետ հարգալից խորհրդակցում եյին Կրասնովոդսկի իշխանությունները... Նրանց հետ եյին նաև անգլիական յերկու սպաները, վորոնք ժամանել եյին «Թուրքմեն» շոգենավով: Ավելի ուշ Կրասնովոդսկի ղեկավարների խմբին միացան շոգենավի մեխանիկը և Ամիրովի ադյուտանտը:

Պրովոկատորների կողմից նախազգուշացված լինելով, Կրասնովոդսկի իշխանությունները գիտեյին, թե ով ե ընկել իրենց ձեռքը: Անդրկասպյան կառավարության անունից բոլոր յեկածներին առաջարկեցին զինաթափվել: Սկսվեց խուզարկությունը: Բոլշևիկներից զենք գտան միայն Միկոյանի մոտ, բանտից հենց նոր դուրս յեկած ընկերները զենք չեյին կարող ունենալ: Այնուհետև անցան ձերբակալություններին: Մատնիչներն ու դավաճաններն ոգնում եյին ճանապարհորդների ընդհանուր մասսայից կոմիսարներին վորսալուն:

Շոգենավում գտնվող մի բանվոր հետագայում հիշում եր. «Մատնացույց արեք մեզ կոմիսարներին,—բղավեց մեկը,—այն ժամանակ մենք բոլորիդ կազատենք»: Տախտակամածի վրա մեռելային լռություն ե: Յուրաքանչյուրը դեմքով ճանաչում ե կոմիսարներին, բայց վոչ վոք չի ուզում մատնիչ լինել: Լռում են նավաստիները: Լռում են կարմիր-բանակայինները: Լռում են կանայք: Յեվ հանկարծ կարծես դանակով կտրեցին. «Ահա Շահումյանը»,—ծղրտաց ինչ-վոր մեկի ձայնը: Դավաճանը գտնվեց: Ամբոխի միջից առաջ անցավ մի սպա Գևորգյան խաչով և թուրը գոտուն կապած: «Ահա՛ նա,—շարունակեց Գևորգյան կավալերը,—ահա՛ Շահումյանը»: Հարյուրավոր աչքեր սևեռվեցին Շահումյանին: Չորս կողմը լռություն տիրեց: Ստեփանը կանգնած եր հանգիստ: Արհամարհանքով գլուխը տարավ-բերեց և հանգիստ մոտեցավ մատնիչին: Պողպատի պես փայլփլեցին պահնորդների հրացանները: Շահումյանը կիպ մոտեցավ: «Մի՛ կարծիր,—ասաց Շահումյանը,—վոր իմ մահը կտապալի այն գործը, վորի համար մենք կռվում եյինք: Այդ դուք չեք տեսնի... » Շահումյանին տարան:

Ձերբակալվեց ընդամենը 35 մարդ: Նրանց տարան քաղաք: 17 մարդու տարան կալանատուն, մնացածներին—բանտ: Կալանատանը տեղավորվեցին Շահումյանն ու նրա յերկու վորդիները—Սուրենն ու Լևոնը, Ջափարիձեն, Միկոյանը, Ֆիոլետովը, Ջևինը, Ամիրյանը, Վարո Ջափարիձեն, Ոլգա Ֆիոլետովան և ուրիշները: Նրանք բոլորը ճանաչվեցին վորպես «պետական հանցագործներ»: Ինչպես հետո պարզվեց, այդ հրամանը յելնում եր

անգլիական գնդապետ—Կրասնովոդսկի փաստական տեր Բատենից:

26 կոմիսարների բախտը ամենայն հավանականությամբ վճռվել եր դեռ Բաքվում: Կրասնովոդսկի կոմիտեի նախագահ Կունը Բաքվի անկման օրերին այնտեղ եր և բանակցություններ եր վարում անգլիական հրամանատարության և «Ցենտրոկասպի դիկտատուրայի» հետ: Նա գիտեր, թե նրանք ինչպես եյին ուզում վարվել բոլշևիկյան ղեկավարների հետ: Կունը Կրասնովոդսկ ժամանեց «Թուրքմենից» անմիջապես հետո:

Նա անհապաղ հաղորդեց Աշխաբադ՝ անգլիական հրամանատարությանը և անդրկասպյան կառավարության նախագահ Ֆունտիկովին՝ Բաքվի կոմիսարների և Ամիրովի ջոկատի ժամանելու մասին: Միաժամանակ Կունը հեռագիր ուղարկեց Պետրովսկ՝ գնդապետ Բիչերախովին. «Խնդրում ենք շտապ հեռագրել, թե ինչպես վարվել նախկին կոմիսարների և Ամիրովի հետ, ընդ-վորում յենթադրում ենք, յեթե ձեր կողմից առարկություններ չեն լինի, նրանց հանձնել ռազմա-դաշտային դատարանին»[1]: Կունը ստացավ պարզ պատասխան. «Հավանություն եմ տալիս Բաքվի կոմիսարների ձերբակալման ուղղությամբ կատարած ձեր գործողություններին: Նրանց՝ ռազմա-դաշտային դատարանին հանձնելու ձեր առաջարկությանը համամիտ եմ: Իմ կարծիքը պաշտպանում է Ցենտրոկասպի դիկտատուրան: Բիչերախով»:

Միջին Ասիայի բրիտանական միսիայի գլուխ գեներալ Մալեսոնը հետագայում հիշում եր, թե ինչպես սեպտեմբերին առավոտը վաղ ռադիոկայանը հայտարարեց Բաքվի կոմիսարների՝ Կրասնովոդսկ ժամանելու մասին: «Պարզ է, վոր դա առաջնակարգ կարևորություն ունեցող լուր եր,—գրում է նա:—Մեր ափերին անսպասելիորեն յերևաց Ռուսաստանի խոշորագույն ագիտատորների մի խումբ: Տատանվող և քաղաքականապես անկայուն բնակչության առկայությամբ հանդերձ միանգամայն հնարավոր եր, վոր նրանք շուտով յերկիրը նորից բոլշևիկյան կդարձնեն, և այն ժամանակ ի՞նչ կլինեյին մեր բոլոր պլանները... Ճիշտ է, կոմիսարները անզեն են այն իմաստով, վոր նրանց հրազենները վերցված եյին: Բայց նրանք ունեյին հրազենից առավել ահեղ զենք,—փորձված ագիտատորի ուժ, մի ուժ, վորն իշխում է ամբոխին և բոլշևիկյան նոր ապստամբություններ է առաջացնում»:

---

[1] Ադր. Կ(բ)Կ Կենտկոմի միացյալ կուսարխիվ Շահումյանի անվան ինստիտուտին կից, գործ 152, հավաքածու 3, թ. 1:

Գեներալ Մալեսոնն ու նրա ներկայացուցիչն Աշխաբադում— անգլիական կապիտան Տիգ Ջոնսը անդրկասպյան կառավարության իր բարեկամներ եսերներ Ֆունտիկովի և Կուրիլևի և եսեր անգլիական հետախուզության պետ Դրուժկինի հետ մեկտեղ վորոշեցին գազանային դատաստան տեսնել Բաքվի կոմիսարների հետ: Իր ցուցմունքներում Ֆունտիկովն ասում եր, թե Բաքվի կոմիսարների գնդակահարությունը կազմակերպվել եր անգլիական հրամանատարության և անդրկասպյան կառավարության ներկայացուցիչների միջև յեղած նախնական համաձայնությամբ: Անգլիական միսիայի ներկայացուցիչը Աշխաբադում՝ Տիգ Ջոնսը նրան և Դրուժկինին ասում եր, վոր գնդակահարությունն անհրաժեշտ է, իսկ գնդակահարությունից հետո գոհունակություն եր հայտնում, «վոր գնդակահարությունը անգլիական միսիայի նկատառումներին համապատասխան՝ կատարված է»:

Անգլո-եսերական դահիճները գործում եյին տենդագին շտապողականությամբ: «Քաղաքակիրթված» իմպերիալիստներն ու նրանց սպասավորները ժամանակ չունեյին քննությամբ և հարցաքննություններով զբաղվելու, մանավանդ վոր անգլիական հրամանատարությունը Բաքվում և «Ցենտրոկասպի դիկտատուրան» նախորոշել եյին կոմիսարների բախտը: Մնում եր արագորեն և ընդամին գաղտնի կազմակերպել նրանց սպանությունը:

Կունին առաջարկելով կալանավորվածներին պահել Կրասնովոդսկում, Ֆունտիկովը կարգադրեց կազմել արտակարգ գնացք № 049 շոգեքարշի կազմով, մեկ մարդատար և մեկ կալանավորական վագոնից: Տիգ Ջոնսը, Ֆունտիկովը, Դրուժկինը, անդրկասպյան կառավարության և եսերների «մարտական» դրուժինայի անդամները, հրացաններով և ատրճանակներով զինվելով ներկայացան Աշխաբադ կայարանը: Մեկնումից առաջ զորքերի տեղաշարժման պետի կաբինետում կերուխում կազմակերպեցին: Այնուհետև մարդասպանների հարբած բանդան նստեց գնացք և մեկնեց Կրասնովոդսկ: Գնացքը գնում եր արագ, վոչ մի կայարանում չկանգնելով: Միայն Կիզիլ-Արվաթում կանգնեցին յերկու ժամ:

Իսկ այդ ժամանակ Կրասնովոդսկի կալանատան և բանտի մութ կամերաներում նստած եյին նրանք, վորոնց բախտը գտնվում եր դեպի Կրասնովոդսկ սլացող զազրելի մարդասպանների ձեռքում: Բաքվի կոմիսարների կյանքի պայմաններն ամենածանր պայմաններն եյին: Սեպտեմբերի 19-ին Կորգանովն ու

բանտում նստած այլ ընկերներ Կրասնովոդսկի գործադուլային կոմիտեյին տվին մի դիմում, որի մեջ բողոքում եյին խուզարկության և ձերբակալման ժամանակ իրենց վրա գործած բռնությունների դեմ: «17-ի առավոտվանից մինչև այժմ (այսինքն՝ յերկու օր:—Ե·Բ·) մեզ ոչ մի ուտելիք չեն տվել և ընդհանրապես մեզ դրին ավելի ծանր պայմանների մեջ, քան նախկին ցարական բանտերում: Շենքերը նեղվածք են, չկան անկողնի պարագաներ, լվացարաններ և այլն»[1]: Կալանավորները բանտի ռեժիմը բարելավելու մասին ներկայացրին տարրական պահանջներ (զբոսանքներ թույլատրել, հաց մատակարարել, տեսակցություններ թույլ տալ և այլն): Բայց ի պատասխան հետևեց վարչական բաժնի պետի լկտի մակագրությունը. «1. Կալանավորներին հայտնել, որ բանտը կոմֆորտի համար չէ: 2. Կարելի է խնդրել, բայց ոչ պահանջել: Ընդհանրապես կալանավորներին ցուցում արեք, որ ավելի շատ մտածեն և ավելի քիչ գրեն 19/IX ստորագրություն»:

Բաքվի կոմիսարները գտնվում եյին զազրելի դահիճ Կունի տիրապետություններում, որին նույնիսկ գեներալ Մալեսոնը անվանեց «իշխել սիրող և անգութ մարդ»: Կունը այցելում եր կալանավորներին: Մտնելով կալանատան կամերան, Կունը բարձր հարցրեց. «Ձեզնից ո՞վ է գլավկովերխը:—«Գլավկովերխ չկա»:—«Դե այն ժամանակ ո՞վ է Շահումյանը»:—«Յես եմ Շահումյանը»,—պատասխանեց տախտի վրա պառկած Ստեփանը:—«Կանգնե՛լ: Մի՞թե դուք չգիտեք, թե ում հետ եք խոսում, յես—Կո՛ւնն եմ»: Բայց ոչ ոք վեր չելավ, և վիրավորված Կունը դուրս յեկավ կամերայից:

Հենց այդ դահճի ձեռքն ընկավ կալանավորների դիմումը՝ հասցեագրված «Ցենտրոկասպիի դիկտատուրային»: Այն կազմված եր ձերբակալման առաջին օրը և բոլոր կալանավորների անունից ստորագրել եյին ընկերներ Շահումյանը, Ջափարիձեն, Պետրովը, Կորգանովը և Զևինը: Բաքվի կոմիսարները շարադրում եյին իրենց ձերբակալման պատմությունը և պահանջում եյին անհապաղ ազատել: Կունը յերեք որ պահեց այդ դիմումն իր մոտ, չհանձնելով ըստ նշանակման: Իսկ յերբ Բաքվի 26 կոմիսարները գնդակահարվեցին, Կունը, որը մի քանի ժամ առաջ մասնակցություն եր ունեցել նրանց սպանության մեջ, զոհված ընկերների դիմումի վրա լկտիաբար գրեց. «Չափազանց ընդարձակ հեռագիր է

[1] Արխ. Կ(բ)Կ միացյալ կուսարխիվ Շահումյանի անվան ինստիտուտին կից, գործ 166, հավաքածու 10, թ. 4—5:

և ռադիոն այդպիսի հեռագրերով ծանրաբեռնել անհնարին է: Պետք է տեքստը կրճատել մինչև մինիմումը: Սեպտեմբերի 20: Կուն»:

Անգլո-եսերական մարդասպանների արտակարգ գնացքը Կրասնովոդսկ ժամանեց սեպտեմբերի 19-ին: Կրասնովոդսկի գործադուլային կոմիտեն Կունի գլխավորությամբ հանդիսավոր կերպով դիմավորեց անդրկասպյան կառավարության անդամներին: Իսկ յերեկոյան կայարանում այսպես կոչված յերկնագույն սենյակում կայացավ Աշխաբադի և Կրասնովոդսկի իշխանությունների գաղտնի խորհրդակցությունը: Այնտեղ քննարկվում եր առաջիկա գնդակահարության տեխնիկական կողմը և դրա վերջին պատրաստություններն եյին տեսնվում: Քաղաքով մեկ թիեր եյին հավաքում:

Մոտավորապես գիշերվա ժամը 2-ն եր, յերբ դահիճների և մարդասպանների բանդան յեկավ կալանատուն և բանտ: Յեկողների մեջ եյին անդրկասպյան կառավարության նախագահի տեղակալ Կուրիլևը, Կունը, Կրասնովոդսկի միլիցիայի պետ Ալանյան, նրա օգնական, նախկին թաղային հսկիչ Կոլոդկոն և ուրիշները: Նրանցից մի մասը հարբած եր՝ նագայկաները ձեռքներին: Կոլոդկոն բռնել եր 26 ազգանունով մի ցուցակ: Ըստ ցուցակի անուն-անուն կանչում և բակն եյին դուրս բերում: Ինչպես հետո պարզվեց, այդ նրանք եյին, ով նշված եր գնդակահարության:

Ի՞նչպես եր կազմվել «26-ի» ցուցակը: Իհարկե, Բաքվի բոլշևիկների գլխավոր ղեկավարներին—Շահումյանին, Ջափարիձեյին, Ազիզբեկովին, Ֆիոլետովին, Կորգանովին և ուրիշներին Կրասնովոդսկի դահիճները լավ եյին ճանաչում: Բայց բոլոր 26 կոմիսարներին նրանք ճանաչել չեյին կարող: Սուրեն Շահումյանը պատմում եր, որ կոմիսարները Բաքվի բանտում գտնվելու ժամանակ բանտի ավագ ընկ. Զևինի մոտ կար 25 հոգուց բաղկացած մի ցուցակ, որով նա բաժանում եր դրսից բերված մթերքը:

Այդ ցուցակում եյին նաև Կանդելակին և Սուրեն Շահումյանը, որոնք նստած եյին Բաիլովի բանտում: Բայց Կանդելակին՝ Բաքուն թուրքերի կողմից գրավվելուց միքանի որ առաջ հիվանդացավ, և նրան տեղավորեցին բանտի հիվանդանոցում, իսկ Սուրեն Շահումյանը ազատվեց յերաշխավորությամբ: Ուստի յերկու ազգանունները ջնջվել և կեղտոտվել եյին, այնպես որ

անհնարին էր կարդալ: Կրասնովոդսկում ձերբակալելու ժամանակ ցուցակը հայտաբերվեց: Դրան ավելացրին Թադևոս Ամիրովին, վորը մեղադրվում էր կոմիսարների՝ Աստրախան մեկնելուն օժանդակելու մեջ: Կրասնովոդսկի իշխանությունները, յերևի, այսպես եյին դատում. քանի վոր ցուցակում թվարկված անձերը ձերբակալվել են Բաքվում, նշանակում է—այդ նրանք են, ում պետք է վոչնչացնել: Մնացած ընկերներին, այդ թվում Միկոյանին, Կանդելակուն, Սուրեն և Լևոն Շահումյաններին, Վ. Ջափարիձեյին, Ո. Ֆիոլետովային և ուրիշներին, թողին բանտում:

Ահա թե ինչպես է պատմում ընկ. Միկոյանը սեպտեմբերի 20-ի կոշմարային գիշերվա մասին, յերբ տանում եյին Բաքվի կոմիսարներին. «Կրասնովոդսկի կալանատան փոքրիկ կեղտոտ կամերայում: Անցել է յերեք օր, ինչ մենք ընկել ենք այս զնդանը: Մեր կամերայումն եյին ընկ. ընկ. Շահումյանը, Ջափարիձեն, Ֆիոլետովը և ուրիշն., ընդամենը 16 մարդ: Սեպտեմբերի լույս 20-ի գիշերն է: Վոմանք պառկել եյին տախտի վրա, մյուսները հատակին: Վոմանք քնած են, մյուսները ննջում են: Պատուհանից նայում է նենգ լուսինը, պայծառ, լուսավոր: Գիշերվա ժամը յերկուսն է: Լսվում է աղմուկ, յերկաթի չխկոց: Բացվում է դուռը, ներս է խուժում «սոցիալիստական» դահիճների բանդան: Սկսում են անուն-անուն կանչել: Բոլոր բնակիչներին բաժանում են յերեք խմբի: Առաջին յերկու խմբերին դուրս են բերում կամերայից, նրանց խլում են մեր շրջանից: Այն հարցին, թե ուր են տանում, պատասխանում են. «Այստեղ տեղը քիչ է, տեղափոխում են Աշխաբադ, մարզային բանտը»: Հասնում է լավագույն ընկերներից, բանվորական գործի անձնվեր մարտիկներից, Բաքվի պրոլետարիատի հեղափոխական առաջնորդներից բաժանվելու ճնշող ժամը»[1]:

Բաքվի 26 կոմիսարներին Աշխաբադ չեյին տանում, և շատերն արդեն այն ժամանակ հասկանում եյին այդ: Սուրեն Շահումյանը պատմում էր, վոր Ամիրովը ամեն մի ազգանվան դիմաց տեսնելով զանազան մատիտներով արած նիշերը, սրախոսել է, վոր կարմիր մատիտով նշվածներին կկախեն, կապույտներին—կխեղդեն, իսկ սևերին—կգնդակահարեն: Ջերմորեն և լուրջ, կարծես գիտենալով, վոր առմիշտ, հրաժեշտ տվեց իր յերկու վորդիներին Ստեփան Շահումյանը: Իսկ Ֆիոլետովը, անցնելով

1 Միկոյան, Արյունոտ տարեդարձի շուրջը, «Бакинский Рабочий» № 110, 1926 թ.:

կանանց կամերայի մոտով, իր կնոջը բղավեց. «Մի անհանգստանա, Օլյա, յես կկարողանամ հանգիստ մեռնել»:

Հենց նույն օրը, սեպտեմբերի 20-ին տեղական «Голос Средней Азии» լրագրում լույս տեսավ մի հոդված, վորի մեջ արյունարբու դահիճներն ուղղակի արտահայտեցին իրենց մտադրությունները: «Բախտը մեզ նորից ժպտաց,—գրում եյին նրանք:— Մեր ձեռքն են ընկել Բաքվի բախտի նախկին տնօրինողները... Մեր վորսի մեջ է գտնվում հայտնի հերոսներից մեկը—Շահումյանը, վորի անունը վաղուց կնքել են «Կովկասի Լենին»: Դեպի մեր դաշնակից անգլիացիները, վորոնք ազնվաբար արձագանքեցին բաքվեցիների փրկության կանչին, անվստահության թունավոր սերմեր եյին ցանում նրանք: Նրանք շարունակ պնդում եյին, վոր անգլիական իմպերիալիստների կողքին կռվելը ազնիվ հեղափոխականների համար խայտառակություն է... Նրանց պատրաստվել են դատելու, և դատելու խստորեն: Բախտը վորոշեց այլ կերպ, և նրանք մեր ձեռքումն են: Մենք ապրում ենք բարբարոսության դարաշրջանում: Դեհ օգտվենք նրա օրենքներից: Աչքի տեղ աչք, արյան տեղ արյուն, գլխի տեղ գլուխ: Ամեն մի սպանված եսերի և բուրժուայի համար—բոլշևիկի գնդակահարություն... Այսուհետև պատասխան է տալու Շահումյանի, Պետրովի, Ջափարիձեյի, Կորգանովի և ուրիշների գլուխը: Մենք կանգ չենք առնի նույնիսկ սոսկալի տանջանքներ պատճառելու առաջ, մինչև սովմահություն և չորս կտոր անելը ներառյալ»:

Եսեր-անգլիական դահիճները կատարեցին իրենց մտադրությունը: Բաքվի 26 կոմիսարներին նստեցրին արտակարգ գնացքի կալանավորական վագոնը: Մարդատար վագոնում տեղավորվեցին անգլիական կապիտան Տիգ Ջոնսը և անդրկասպյան կառավարության անդամներ Ֆունտիկովը, Դրուժկինը և ուրիշները: Հանդցրած ճրագներով գնացքը սլացավ դեպի անապատ, ընդմիշտ տանելով Բաքվի պրոլետարիատի լավագույն ղեկավարներին: 207-րդ վերստի վրա, Ախչա-Կույմա և Պերեվալ կայարանների միջև, գնացքը կանգ առավ: Չորս կողմը տարածվում եյին անծայր ավազուտ բլուրները: Բնակության վոչ մի նշան: Տըրտում մեռած վայր: Դահիճները զուր չէր վոր այդ վայրն եյին ընտրել կոմունարների հավիտենական գերեզմանատեղ:

Վագոնից դուրս բերին կալանավորների առաջին խմբին: Նրանք դեռ չգիտեյին, թե իրենց ուր են տանում, և միքանիսն իրենց հետ վերցրին իրերը, բայց իրեր հարկավոր չեյին: Նրանց տանում եյին յերկաթուղային գծից 30 սաժեն հեռավորության

վրա և այնտեղ, ավազոտ լեռնանցքի յեզրին, գնդակահարում եյին: Վիթխարի հորը դարձավ նրանց յեղբայրական գերեզմանը: Այնուհետև դուրս բերին յերկրորդ, յերրորդ խմբին...

ԲԱԳՎԻ 26 ԿՈՄԻՍԱՐՆԵՐԸ

Ստեփան Շահումյանը,	Ա. Կոնստանդյանը,
Ալյոշա Ջափարիձեն,	Արմենակ Բորյանը,
Մեշադի Ազիզբեկովը,	Ի. Մետակսան,
Իվան Ֆիոլետովը,	Ֆ. Նիկոլայշվիլին,
Պավել Զևինը,	Բ. Ավագյանը,
Գրիգորի Կորգանովը,	Ա. Բոգդանովը,
Իվան Մալիգինը,	Մ. Բոգդանովը,
Գ. Պետրովը,	Վ. Պոլուխինը,
Արսեն Ամիրյանը,	Բերգը,
Սուրեն Հովսեփյանը	Մ. Կոգանովը,
Միր-Հասան Վեզիրովը,	Ի. Գաբիշևը,
Մ. Բասինը,	Ի. Միշնեն և
Ֆ. Սոլնցևը,	Թադևոս Ամիրյանը

—հերոսաբար ընկան այդ առավոտյան անգլիական իմպերիալիստների և նրանց եսերական գործակատարների ձեռքից:

Ընկեր Ստալինը նրանց կորստի առթիվ գրում եր. «Անգլո-ֆրանսական իմպերիալիստներին սովորաբար պատկերում են վորպես տեռորի և գնդակահարությունների թշնամիների: Բայց մի՞թե պարզ չե, վոր Խորհրդային իշխանությունը դեռ յերբեք իր հակառակորդների գլխին այնպես սառրաբար և անարգաբար դատ չի տեսել, ինչպես «քաղաքակրթված» և «մարդասեր» անգլիացիները, վոր միայն ամբողջովին փտած և ամեն տեսակ բարոյական ուժ կորցրած իմպերիալիստական մարդակերները կարող են գիշերային սպանությունների և հակառակ բանակի անզեն քաղաքական աշխատողների վրա ավազակային հարձակումներ կատարելու կարիք զգալ»[1]:

Անգլո-եսերական դահիճները վոչ միայն ստորագրեցին 26 կոմիսարների մահապատիժը, այլև իրենք այն ի կատար ածեցին: Մարդասպանները կատարեցին այն, ինչ գրում եր «Голос Средней Азии» լրագիրը, —նրանք վոչ միայն գնդակահարեցին, նրանք չորս կտոր արին 26 կոմիսարներին: «26»-ի կորստից մեկ տարի հետո բանվոր Կուզնեցովը մի խումբ ընկերների հետ մեկտեղ

1 Ստալին, 26-ի գնդակահարության շուրջը, «Известия», 1919 թ. ապրիլի 23-ին:

հանեց նրանց դիակները: Նա պատմում եր. «Պետք ե յենթադրել, վոր այդ ընկերների սպանությունը տեղի չե ունեցել ամեն տեսակի միջոցներով: Ցես այդ յեզրակացնում եմ նրանից, վոր գլուխները մասամբ բաժանված եյին մարմնից, մասամբ գտնվում եյին վոտների արանքին, կողքից և այլն: Գանգերի մի մասը ամբողջական չեյին, մաս-մաս եյին արվել և ջարդված եյին... Նրանց վոչ միայն կտրատել են, այլև սպանությունը տեղի չե ունեցել զանազան յեղանակներով: Խփել են ինչով վոր պատահել ե»: Հենց նույնպիսի յեզրակացության հանգեց բժշկական եքսպերտիզան:

Մարդասպանները փորձում եյին թաղել «26-ի» ճակատագրի մասին յեղած ճշմարտությունը: Նրանք անողոքաբար դատ եյին տեսնում իրենց չարաննենգ հանցագործության վկաների գլխին: Յերբ անգլո-եսերական դահիճները, շտապ կերպով թաղելով դիակները, արդեն պատրաստվում եյին հետ դառնալ, շոգեքարշին մոտեցավ ուղեկալահապանը: Նա հարցրեց, թե ինչու չե այստեղ գնացքը կանգ առել և ինչու նա ազդանշանի կրակներ չունի: Դրան ի պատասխան պահապանին շրջապատեցին զինված մարդիկ և տարան գնդակահարելու: Մյուս որը գծի ծառայության յերկրորդ տեղամասից հեռագիր ստացվեց «պահապանի կորչելու մասին»:

Հետքերը կորցնելու համար գնդակահարության կազմակերպիչները լուրեր եյին տարածում, իբր թե Բաքվի կոմիսարներին տարել են Հնդկաստան: Տիգ Ջոնսը ջերմորեն շնորհակալություն եր հայտնում անդրկասպյան կառավարության անդամներին 26 կոմիսարների գնդակահարությունը կազմակերպելու համար և խոստանում եր անգլիական հրամանատարության անունից նրանց տալ պաշտոնական տեղեկանք՝ կոմիսարներին Հնդկաստան տանելու մասին: Դրուժկինն արդեն ուներ պատրաստած մի փաստաթուղթ կոմիսարների ցուցակով, վորը պետք ե ստորագրեր գեներալ Մալեսոնը:

Բայց դահիճներին չհաջողվեց թաղցնել ճշմարտությունը: Ընկ. Միկոյանը հիշում ե «26-ին» տանելուց հետո բանտում մնալու տանջալից շաբաթները: «Վորտեղ են նրանք, ուր տարան նրանց, չենք կարող վորոշել... Մենք չգիտենք, թե վորտեղ են մեր լավագույն բարեկամները, —Բաքվի պրոլետարիատը, վորտեղ են նրա առաջնորդները, Խորհրդային իշխանությունը—վորտեղ են նրա լավագույն մարտիկները: Կասկածներ են սողոսկում սիրտը, մաշում են այն: Ծանր ե մտածելը, վոր այլևս կենդանի չեն

Ստեփանը, Ալյոշան, Վանիչկան... Հանկարծ անսպասելիորեն դրսից մեկը բանտը՝ մեզ հաղորդում է սարսափելի ճշմարտությունը, մեր առաջ բաց է անում եսերական դահիճների չլսված չարագործության կոշմարային պատկերը: Այդ մեզ անհայտ, մեզ չճանաչող յերկաթուղային մի բանվոր է Կրասնովոդսկից, կարծեմ, ուղեկցող... Նա իր աչքերով տեսել էր, թե ինչպես հեռավոր անապատում կանգնեցրել են գնացքը, վագոններից խմբերով դուրս բերել կոմունիզմի՝ գերի ընկած մարտիկներին և ուղեթըմբից վոչ հեռու գազանաբար հոշոտել: Գնդացիրների ճարճատյունի մեջ նա լսել էր սպիտակ տեռորի զոհերի վերջին խոսքերը. «Մենք մեռնում ենք կոմունիզմի համար: Կեցցե՛ կոմունիզմը...»: Լուսանում էր: Մարդասպանները շտապում էին և չկարողացան թաղել բոլոր դիակները»[1]:

26 կոմիսարների չարագործ գնդակահարության լուրը Բաքվի պրոլետարիատին հասավ նրանց մահապատժից կես տարի հետո, փետրվարյան հեղափոխության տարեդարձին: 1919 թ. փետրվարի 28-ին Բաքվի բանվորների պահանջով բանտից ազատվեցին Միկոյանը, Կանդելակին, Սուրեն և Լեոն Շահումյանները, Վ. Ջափարիձեն, Ռ. Ֆիոլետովան և ուրիշները: Նրանք ժամանեցին Բաքու: Նրանց մասնակցությամբ կայացան «26-ի» հիշատակին նվիրված՝ բանվորների ժողովներ ու միտինգներ:

Պանծալի ղեկավարների կորստի առթիվ խոր վշտի զգացմունք տիրեց Բաքվի ամբողջ պրոլետարիատին: Լավագույն մարդիկ խլվեցին նրա միջավայրից: Չկա այլևս իմաստուն Ստեփանը, բոցաշունչ Ալյոշան, արի Մեշադին, հարազատ Վանիչկան և նրանց ընկերները: Բայց Բաքվի պրոլետարիատը Ադրբեջանի և Անդրկովկասի աշխատավորների հետ մեկտեղ «26-ի» գնդակահարությունը ի պատասխան ե՛լ ավելի սերտորեն համախմբվեց Լենինի—Ստալինի մեծ կուսակցության շուրջը, վորի անվեհեր մարտիկներն էին զոհված ընկերները: Վողջույնի և լավագույն ապագայի հավատալու այն խոսքերը, վորով Շահումյանի 17-ամյա վորդին—Սուրենը դիմեց Բաքվի բանվորներին, հետագա պայքարի մարտական կոչ ծառայեցին: Ընկ. Միկոյանի ժամանումից միքանի որ հետո արդեն բոլշևիկները, հենվելով բանվորական մասսաների վրա, փոխել տվին Բաքվի բանվորական կոնֆերենցիայի ղեկավարությունը: Կոնֆերենցիայի նախագահությունը

[1] Միկոյան, Արյունալի տարեդարձի շուրջը, «Бакинский Рабочий» № 219, 1923 թ.:

ճնշող մեծամասնությամբ այժմ կազմված էր բոլշևիկներից:

1919 թ. մարտի 20-ին անգլո-մուսավաթական ռեժիմի ծանր օրերին Բաքվի պրոլետարները միորյա գործադուլ արին «26-ի» հիշատակին: Բաքվի բանվորական կոնֆերենցիան, լսելով ընկ. Միկոյանի զեկուցումը, կոչով դիմեց Բաքվի բանվորներին. «Ընկերնե՛ր, այսոր մենք պետք է նշենք 1918 թվի սեպտեմբերի 20-ի պատմական որը, նշենք զոհված առաջնորդների և ընկերների հիշատակը... Ընկերներ, տանք սրբազան յերդում, վոր նույնպես անձնազոհ և նվիրված կշարունակենք այն պայքարը, վորի փշոտ ճամբին հերոսաբար ընկան մեր առաջնորդներն ու ընկերները»:

Բաքվի պրոլետարիատը հավատարիմ մնաց այդ յերդմանը: «Բաքվի բանվորներին,—ասում էր Սերգեյ Միրոնովիչ Կիրովը,—բաժին ընկավ մի մեծագույն տրագեդիա,—լինել լուռ վկաներն այն բանի, թե ինչպես իրենց իսկ սիրտը, իրենց իսկ հզորությունը, տասը տարի հոգուտ կոմունիզմի հաղթանակի աշխատած, դաժան և ծանր մարտերում կոփված իրենց առաջնորդներին ինչ-վոր մի հեռու տեղում գերեզման են իջեցնում: Սիրտը պնդացնելով, ատամներն ամուր սեղմած, Բաքվի պրոլետարիատն իր մեջ խորը պահեց վոխն ու բորբոք ատելությունը դեպի իմպերիալիստական դահիճները: Բաքվի բանվորները գիտեյին, վոր այնտեղ հյուսիսում ճիշտ գործ է կատարվում: Այնտեղ խոր ձյունով պատած հարթավայրերում միլլիոնավոր մարդիկ արդեն գնում էին դեպի կյանք կամ դեպի մահ: Բաքվի բանվորը համբերատար նստել էր այստեղ, և անցյալի իր ամբողջ փորձից ոգտվելով, անում էր ամեն մատչելի բան՝ Բաքվում անխուսափելի մի նոր բռնկում պատրաստելու համար»[1]:

1917—1918 թ. թ. դեպքերը և «26-ի» կորուստը ծանր դաս յեղան Բաքվի բանվորների համար: Բաքվի պրոլետարիատը «մինչև վերջը պարզեց մանր-բուրժուական կուսակցությունների՝ վորպես բանվոր դասակարգի ներսում իմպերիալիզմի ու բուրժուազիայի ագենտների՝ էությունը: Բանվորների համար պարզ յեղավ, վոր սոցիալիզմի դրոշին մինչև վերջ հավատարիմ, պրոլետարիատին աննահանջորեն դեպի վերջնական հաղթանակ տանող միակ պրոլետարական կուսակցությունը կոմունիստներն են»[2] (Միկոյան): Բաքվի պրոլետարներն իրենց շրջանից առմիշտ քշեցին զազրելի դավաճաններին և մատնիչներին—եսերներին,

[1] «Бакинский Рабочий», 1937 թ. սեպտեմբերի 20-ին:

[2] «Правда» № 260, 1933 г.

մենշևիկներին, մուսավաթիստներին ու դաշնակներին: Բաքվի բոլշևիկները ընկ. Միկոյանի ղեկավարությամբ, Օրջոնիկիձեյի և Կիրովի ակտիվ օգնությամբ Ադրբեջանի պրոլետարիատին ու գյուղացիությանը տարան հերոսական պայքար մղելու ընդդեմ անգլիական օկուպանտների և մուսավաթական կառավարության:

«Զինված ապստամբության նախապատրաստման պայմաններում,—գրում եր ընկ. Միկոյանը,—նոր ձևով դրվեց գյուղացիության և ազգային քաղաքականության հարցը: Պարզ յեղավ, վոր Ադրբեջանի ու Անդրկովկասի պայմաններում առանց լենինյան ազգային քաղաքականությունը հետևողականորեն կիրառելու չի կարելի ապահովել պրոլետարական հեղափոխության հաստատուն հաջողությունը: Պարզ յեղավ, վոր առանց՝ ավտոնոմիայի մասին ընկեր Ստալինի ցուցումը կյանքում կիրառելու չի կարելի հաստատուն հաղթություն տանել: 1919 թվականին Բաքվի բոլշևիկները առաջ քաշեցին Խորհրդային Ադրբեջանի լոզունգը և ակսեցին Ադրբեջանի կոմունիստական կուսակցությունը կազմակերպել վորպես ՌԿ(բ)Կ բաղկացուցիչ մասը»[1]:

Բաքվի բոլշևիկները Ադրբեջանի աշխատավորներին միաժամանակ տանում եյին դեպի ավելի սերտ միավորում Ռուսաստանի բանվորների և գյուղացիների հետ: «Ուղղությունը դեպի հյուսիս»,—մատնանշում եյին Բաքվի կոմիսարները: Բաքվի պրոլետարիատը, ամուր բռնելով նրանց դրոշը, հետևում եր այդ պատգամին: «Ռուսաստանի հեղափոխության մահացու վտանգի օրերին,—գրում եր Օրջոնիկիձեն,—նա հպարտ կերպով արտահայտում եր իր համերաշխությունը ռուսաստանյան պայքարող պրոլետարիատի հետ»[2]: 1920 թ. ապրիլի 28-ին Ադրբեջանի աշխատավորները Խորհրդային Ռուսաստանի յեղբայրական օգնությամբ տապալեցին կալվածատերերի, կապիտալիստների դիկտատուրան և վերականգնեցին խորհրդային իշխանությունը: Կազմվեց Ադրբեջանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը: Այնուհետև ազատագրվեցին Հայաստանն ու Վրաստանը, և խորհրդային իշխանության կարմիր դրոշը ամուր կերպով կանգնեցվեց ամբողջ Անդրկովկասում:

1920 թ. սեպտեմբերին Բաքվի պրոլետարները խնամքով Բաքու տեղափոխեցին զոհված 26 կոմիսարների աճյունը և այն թաղեցին քաղաքի կենտրոնում, Ազատության հրապարակում: «Նկա-

1 «Правда» № 260, 1933 г.

2 «Бакинский Рабочий» № 211, 1922 г.

տի ունենալով Բաքվի գնդակահարված ընկերներ՝ Շահումյանի, Ջափարիձեյի, Ֆիոլետովի և ուրիշների անցյալ գործունեյության համառուսաստանյան նշանակությունը», Համառուսաստանյան Կենտգործկոմը իր վրա վերցրեց նրանց թաղման կազմակերպումն ու ծախսերը: Համառուսաստանյան Կենտգործկոմը՝ թաղմանը վորպես իր ներկայացուցիչ հաստատեց Սերգո Օրջոնիկիձեյին, «26-ի» թաղումը հարմարեցնելով Արևելքի ժողովուրդների համագումարին, վորն այն ժամանակ նիստեր եր ունենում Բաքվում:

Այն ժամանակվանից սկսած ամեն տարի սեպտեմբերի 20-ին Խորհրդային Ադրբեջանի և Անդրկովկասի աշխատավորները նշում են Բաքվի 26 կոմիսարների գնդակահարության վշտալի տարեթիվը:

Ընկ. Միկոյանը գրում եր. «Զոհված մարտիկների հիշատակին վայել չե արցունք թափել և հուսալքվել: Նրանց պայծառ հիշատակը Բաքվի պրոլետարիատից պահանջում ե հաստատ կերպով և աներեր գնալ նրանց արյունով ներկված հեղափոխական ուղիով. կարողանալ պայքարել և ծառայել բանվորական գործին այնպես տոկուն, ինչպես նրանք, յեթե պահանջվի, ընկնել հենց այնպիսի պանծալի մահով, ինչպես նրանք. իրենց պրոլետարական սրտերում սրբությամբ պահել նրանց պատգամները. իրենց կոշտուկավոր ձեռքերում ամուր պահել կոմունիզմի դրոշը, վորի ներքո նրանք ընկան»[1]:

«26-ի» կորստի հինգերորդ տարեդարձի օրը,—1923 թվին—Ադրբեջանի աշխատավորները ստացան մի նամակ, վորը մինչև օրս ել ծառայում ե վորպես նրանց պայքարի ու աշխատանքի ծրագիր:

«ՌԿԿ Կենտկոմը այսօր ձեզ հետ վշտակից ե 26 կոմիսարների կորստի առթիվ, վորոնք ընկան վորպես անգլո-եսերական դահիճների զոհ՝ Անդրկասպիայի հեռավոր անապատներում: ՌԿԿ Կենտկոմը գտնում ե, վոր այն զոհված ընկերների համար, վորոնց հեղափոխական ծառայությունները տպավորված են Բաքվի բանվորների սրտերում, լավագույն հուշարձան հանդիսանում ե համառ պայքարի միջոցով—գյուղացիության հետ սերտորեն՝ օրավուր ամրապնդվող դաշինք կնքած—ձեր կռած Խորհրդային Ադրբեջանական Հանրապետությունը: ՌԿԿ Կենտկոմը հավատում ե, վոր դուք այսուհետև ել կլինեք զոհված 26 ընկերների կտակած հեղափոխական մեծ հերոսության արժանավոր շարունակող-

1 «Бакинский Рабочий» № 219, 1922 г.

ներ և կկարողանաք Ադրբեջանի Խորհրդային Հանրապետությունը դարձնել Արևելքի գալիք խորհրդային հանրապետությունների համար մի նմուշ: ՌԿԿ Կենտրոնական Կոմիտեի քարտուղարություն: Ստալին, Մոլոտով»[1]:

Բաքվի 26 կոմիսարների արյունը, վորը թափվեց ժողովրդի յերջանկության և ազատության համար, իզուր չկորավ: 15 տարի յե անցել այն որից, յերբ ընկերներ Ստալինն ու Մոլոտովը իրենց նամակն ուղարկեցին Բաքվի ընկերներին: Այդ ժամանակվա ընթացքում Ադրբեջանն անճանաչելի յե դարձել: Մեծ Ստալինի ղեկավարությամբ, ռուս ժողովրդի յեղբայրական ոգնությամբ Խորհրդային Ադրբեջանը դարձավ ծաղկող չքանչանալիր խորհրդային հանրապետություն—նավթի և բամբակի յերկիր: Կեղեքողներից ազատագրված հողի վրա աղբյուրի նման հորդում է Ադրբեջանի ժողովուրդների յերջանիկ, ուրախ կյանքը:

Սերգո Որջոնիկիձեն նշում եր, վոր Անդրկովկասում շովինիստական խավարամոլության և մուսավաթիստների, մենշևիկների ու դաշնակների տիրապետության որերին «Բաքվի մազութային թագավորության մեջ վառ կերպով լուսավորում եր պրոլետարական համերաշխության ճառագայթը... Ինչպես վոր Ստեփանի, Ալյոշայի յեղբայրական գերեզմանը չգիտե վոչ հայ, վոչ վրացի, վոչ թաթար, վոչ հրեա, այնպես ել Բաքվի պրոլետարիատը չգիտե վոչ մի ազգային խտրություն...Թո՛ղ Ստեփանի, Ալյոշայի, Վանյայի, Մեշադի՝ բեկի— գերեզմանը նախատինք և անեծք լինի նրանց համար, ով գեթ մի վայրկյան դավաճանի ազգային խաղաղության և Անդրկովկասի աշխատավորական մասսաների համերաշխության այդ մեծ գործին: Պրոլետարական մեծ հեղափոխության մեծ ժամապահ՝ Բաքվի պրոլետարիատը թող հատու սուր լինի դավաճանների համար»[2]:

Ինչպես և ամբողջ ԽՍՀՄ ժողովուրդները, ադրբեջանական ժողովուրդը բարձր է պահում աշխատավորների ինտերնացիոնալ միասնության մեծ դրոշը: Բուրժուական նացիոնալիստների զազրելի բանդան, վորը փորձում եր Ադրբեջանը անջատել մեծ Խորհրդային Միությունից և այն վերածել միջազգային իմպերիալիզմի գաղութի, մերկացված է: Անքակտելի յե Ադրբեջանի և Անդրկովկասի աշխատավորների կապը ամբողջ Խորհրդային Միության ժողովուրդների հետ: Ադրբեջանի աշխատավորները այ-

1 «Бакинский Рабочий» № 212, 1922 г.

2 «Бакинский Рабочий», 1922 թ. սեպտեմբերի 20-ին:

ուհետև ել կվոչնչացնեն ժողովրդի թշնամիներին, ֆաշիզմի անարգ վարձկաններին:

20 տարի առաջ անգլիական իմպերիալիստները և նրանց եսեր—մենշևիկյան սպասավորները հանուն կապիտալիստական շահագործման հաղթանակի գնդակահարեցին Բաքվի 26 կոմիսարներին: Հին, մեռնող աշխարհը այդ սուր մարդասպանների ձեռքով դատաստան տեսավ կոմունիզմի համար պայքարող անվեհեր մարտիկների—Շահումյանի, Ջափարիձեյի, Ազիզբեկովի, Ֆիոլետովի, Կորգանովի, Մալիգինի և նրանց ընկերների գլխին: «Մենք մեռնում ենք կոմունիզմի համար, կեցցե՛ կոմունիզմը».— սրանք եյին Բաքվի կոմիսարների վերջին խոսքերը:

Այն ժամանակվանից ի վեր կոմունիզմը վերածվել է հզոր ուժի:

Ստալինյան մեծ Սահմանադրությունը ամրապնդեց կոմունիզմի առաջին ֆազի հաղթանակը յերկրագնդի մեկ վեցերորդ մասում և բացեց նոր, չտեսնված հեռանկարներ հետագա առաջշարժման համար: Հին աշխարհն ապարդյուն փորձում է կանգնեցնել կոմունիզմի հաղթական յերթը: Կապիտալիզմն այժմ գործում է ավելի սուր և նենգորեն, քան 20 տարի առաջ: Նա իր զինանոցը հարստացրել է դավաճանության, լրտեսության նոր մեթոդներով...

Մենշևիկների, եսերների, դաշնակների և մուսավաթիստների հետ մեկտեղ ֆաշիստական հետախուզությունների ոգտին գործում են տրոցկիստները, զինովյեվականները, բուխարինականները և մնացած ամբողջ մեռելոտին:

Կապիտալիզմը պատերազմ է պատրաստում ԽՍՀՄ դեմ և արդեն ակտիվ ռազմական գործողությունների յե անցնում խորհրդային սահմանի առանձին տեղամասերում:

Բայց աճել ու ամրապնդվել է բանվոր դասակարգի դիկտատուրան, վորը առաջ է գնում բոլշևիկյան կուսակցության և ընկեր Ստալինի իմաստուն ղեկավարությամբ: Նրա սրված սուրն իջնում է և կիջնի այն մարդկանց գլխին, ովքեր փորձում են խլել ազատագրված ժողովրդի յերջանկությունը: Բանվորա—Գյուղացիական Կարմիր Բանակն ու Նավատորմը և ամբողջ խորհրդային ժողովուրդը հերոսաբար պաշտպանում են և կպաշտպանեն հայրենիքի լավագույն զավակների արյունով վողոգված՝ խորհրդային հողի յուրաքանչյուր թիզը:

20 տարի առաջ զոհվեցին Բաքվի 26 կոմիսարները: Նրանց հիշատակն ապրում է միլիոնավոր աշխատավորների սրտերում:

Պայծառ լույսի պես վառվում է ժողովրդի շահերի համար տըրված նրանց հերոսական կյանքը։ Նա Լենինի—Ստալինի մեծ գործին անսահմանորեն նվիրված լինելու օրինակ, տոկունության և արիության օրինակ է ցույց տալիս։ Նա կանչում է վճռական կռիվ մղելու ժողովրդի թշնամիների դեմ, դավաճանների և մատնիչների, կործանվող կապիտալիզմի անարգ ագենտների դեմ։

Մենք հիշում ենք զոհված ընկերների մահամերձի բացականչությունները·

«Կեցցե՛ կոմունիզմը»։

Յեվ Վլադիմիր Մայակովսկու խոսքերով ասում ենք·

Ո, յերբե՛ք
　　և յերբե՛ք
　　　　արյունը ձեր չի սառչի,—
26—
　　Ջափարիձե և Շահումյա՛ն։
Արյամբ ձեր
　　շաղված
　　　　անապատնե՛րն անծիր
Ծփո՛ւմ են
　　դրոշներով կարմիր,
　　　　փողփողո՛ւմ մեզ վրա։

Գրադարան ... Гос. Библиотека ССР Арм. им. А. Мясникяна
А. 1939 г.
Акт № 197
Вкладн. л.

Թարգմանիչ Ռ. Վարդապետյան
Հայերեն թարգմ. խմբագիր Վ. Գուրգենյան
Տեխ. խմբագիր Հ. Մանվելյան
Սրբագրիչ Հ. Մանվելյան
Կոնտրոլ սրբագրիչ Լ. Աբովյան

Գլավլիտի լիազոր № Ն. 2840, հրատ. № 675
Պատվեր № 82, տիրաժ 5000
Հանձնված է արտադրության 19/IV 1939 թ.
Ստորագրվել է տպագրելու 21/V 1939 թ.
Գինը 1 ռ. 50 կ., կազմը կալենկորից 1 ռ. 10 կ., հատորակ 1 ռ.

Պետհրատ—Քաղաքական գրականության՝ հրատարակչության,
Յերևան, Ալլահվերդյան № 65

13

ՀՀ Ազգային գրադարան
NL0413490

381
Арм
3-30082